




178



Ferukhan, Barunak.

Առարարածան իւր ։
Babylon

305

ԲԱՐՈՒՆԱԿ ՊԵՅԻ

ՖԵՐՈՒՆԻՍ

Հ Յ ա ն ի ն ի ս ։


ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի ԲԱՐԵԼՈՆ

ԸՆԴ ՀԱՅԱՍՏԱՆ

260 p.

ՅԱՄԻ ՏԵՂՈՆ 1847.



ՅՊԵՐԱՐՈՒԹԵՐՆ

Ի ՎԱՆ Զ · Ս · ԱՍՈՒԱԾԱՆԻ ՅԱՐՄԱՇ

1876

Grad
EREN
370
• Buhr

GRAD

EREN

370

11 01 98



ԱՐՁԱՆ ՅԱԼԵՐԺԱԿԱՆ

Ի ՑԻՇԱՏԱԿ

ԱՆՄԱՀ ՀՈՊԻՈՅ ՍԻՐԵՑԵԼԻՈՅ ԻՒՐԵԱՆՑ


Վ Ս Ե Մ Ա Շ Ո Ւ Ք

ԲԱՐՈՒԵԱԿ ՊԵՑԻ

Փ Ֆ Բ Ո Բ Հ Թ Ա Ե

Կ Ա Ն Գ Ն Ե Ա Լ

ՅԱՄՈԼԻՑՆ Ն. ԵՒ Ս. ԱՄԼԱՆԵԱՆ



Բարեյիշատակ Ապտիս Մէջիս կայսրը՝ 1847 թուականին կամք ըրաւ այցելուրեան հանել իւր երրորդ սէնեկապետ Բաղուազ Պէյն, Ասիոյ գանազան կուսակալուրիները մինչեւ Պարսկաց ծոցը եւ միանգամայն Խըլը Խոջիւն մը դրկել Բարեյոնի ընդհանուր կառավարից Ալի Նէջիակ փաշային յատուկ նրովարտակով մը ՚ի քաջայերուրիսն եւ ՚ի շնորհակալուրիսն իր աջակուրջ կառավարուրեանը համար :


Այս առքին Բաղուազ Պէյին բժիշկ կարգեցայ, եւ միանգամայն Ապիոյ բոլոր մեր անցնելիք քաղաքներուն ու զիւղերուն հիւանդները դարմանելու եւ պատուաստելու պաշտօնն ալ ինձի յանձնուեցաւ :

Այն ատենեն միտքս դրած էի օր մը այն ճամբորդուրեան յիշատակազիրներս քաղելով՝ շուրջ եկած քաղաքներուս վրայ ծողոված տեղեկութիւններս ՚ի լոյս ընծայել . բայց գանազան պատճառներով ետ մնաց : Ահա այսօր իմ դիտաւորուրիսնս կը կատարեմ ուղեւորուրեամս նկարազրին միացնելով այն ամեն տեղեկութիւնները՝ որոնք ստոյգ աղբիւրներէ հետզիւտէ ինձի հասած են եւ որով կը յուսամքէ հետաքննին եւ բանասէր մարդկան փոքրիկ ծառայուրին մը ըրած կ'ըլլամ :

1868 Մայիս 1

՚ի Կոստանդնուպոլիս

ԲԱՐՈՒՆԱԿ ՖԵՐՈՒԶԻԱՆ



ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

••••••• •••••••

1847 Յունուարի 4^{րդ} օրն էր՝ որ Կ-Պօլսէն մեկնեցանք դէպ ’ի Ախնուալ՝ Նէմշէի լոյտ ընկերութեան Սրամանուանուն շոգենաւով, եւ հասանք ’ի կէտ եղեալ նաւահանգիստը յունուարի 6^{րդ} օրը ժամը 5^½ ին։

ՍԻՆՈԳ

Փոքր-Ասիոյ ձանիկ գաւառին գլխաւոր քաղաքնէ, որ չինուած է Աւե ծովուն եղրը՝ Պ:Շ:Ն:Ք: անուն ցամաքի բազուկի մը վրայ ձորի մէջ դէպ ’ի լեռն ՚ի վեր։ Ունի 8000 բնակիչ, 750 տուն։ 200 տաճկի, մնացածը յունաց։ Կան նաեւ քանի մը Հայեր եւ օտարներ։ Երկու մզկիթ, երկու եկեղեցի յունաց, քանի մը փայտաշէն պանդոկներ, բաղնիքներ ու սրճարաններ։ Մէկ ողջապահիկ բնակարան, մեծ նաւահանգիստ մը ծանծաղուտ, մէկ փոքրիկ նաւարան ու ծովեղբին վրայ գեղեցիկ տուն մը՝ որ Ուստաց հիւպատոսարանն էր։ Հինատենէն մնացած միջնաբերդ մը՝ որ վերջերը նորու-

շուած է, ուր 150ի չափ թնդանօթներ կային և 500 զինուոր . տաճկաց տուներն ալ ասոր մէջն են : Լեռան վրայ մահարձան մը՝ Սևիր-Պէլա անուն, ուրկէ յստակ ջուր մը կը բալսի . Տուները փայտաշէն, փոքրիկ ու ցիրուցան . բնակիչները հիւրասէր՝ բայց անկիրթ . Ուրիզյ, փայտի, մրգաց, մորթոյ և այլն վաճառականութիւն կ'ըլլայ : Զուրը գէշ, օդը ծանր և եղանակը բարեխառն . ընդ հանրապէս արևմտեան հարաւային (Դանաւու) հովիեր կը փշեն : Զերմային հիւանդութիւններ կը տիրեն, և բնակիչները վատառողջ են :

Սինոպ՝ ժդ. և ժդ. դարերուն մէջ թիւրք իշխանութեան (Գևորգիւն) մը մայրաքաղաքն եղաւ, վերջը մասնաւոր էւկայունիւն մը գլխաւոր քաղաքը, և հիմայ չանկիկի Փալյանիւն . մէկ քաղաքն է :

Գիտնալ պէտք է որ այս նոր Սինոպէն քիչ մը հեռի էր հին Սինոպը՝ որ Պափղագոնիայի մէջ ֆոքր-Ասկոյ քաղաքն ու ամրոցն էր, Սև ծովուն եզրը փոքրիկ գետակի մը բերնին վրայ շինուած, որ և Պոնտոի թագաւորներէն նուաճեալ՝ անոնց մայրաքաղաքն եղաւ : Լուկուլլոսի գէմ մէկ երեկի պաշարման մը գիմացաւ, և Քրիստոսի թուականէն 70 տարի յառաջ նուաճեցաւ :

Դիոգինէս Ճնականը հոս ծնած էր, և մեծն Միհրդատ ալ հոս թաղուեցաւ հրամանաւ Պոմպէոսի :

Հոս 100 անձինք պատուաստեցի և 20 հիւանդ դարմանեցի :

6 ½ ժամ միայն դադարեցանք 'ի Սինոպ ու գիշերուան 9ին դարձեալ ճամբայ ինկանք ու յունուար 7 երեքշաբթի ժամ 5 ին, այսինքն 8 ժամու մէջ հասանք յամսուն քաղաքը :

ՍԱՄՈՒՆ

Սամուն (Ագու) եկէւ—Ըբժու գետին բերնէն 20
մղոնի շափ հեռի , 1200 տունով ծովեղերեայ քաղաք
մ'է , որոնց 800ը տաճկաց , 240 յունաց , 60 հայոց և
մէկ քանին ալ եւրոպացւոց են . բնակչաց թիւը 6000ի
կը հասնի :

Խրաքանչիւր աղդ զատ զատ թաղերու մէջ բաժ-
նուած են : Տաճկաց թաղը ծովեղըն է՝ որ ունի վաճա-
ռանոց , պէտուին , պանդոկներ , բաղնիքներ և 7 մզկիթ ,
4 թիւ-լուե , Սեյխ Քառէնին , լուսէ դողու . Սայուէ պէտ և Հիւ-
ուեն շոշ անուն . Յունաց և հայոց թաղերը քաղաքէն
քիչ մը հեռի դէպ ՚ի լեռան վրայ շինուած են , և մէյ-
մէկ եկեղեցի ու վարժարաններ ունին : Տուներն ընդ-
հանրապէս լինաւեր են , ոչ ներկեալ և ոչ բռածեփ .
Բնակիչները կոչա :

Քաղաքն ունի Քառանին մը , ընդարձակ նաւահան-
գիստ մը ծանծաղուա , այնպէս որ նաւերը չը կրնալով
եղերքին մերձենալ՝ բացը կը կենային , որով ճանապար-
հորդները մեծ գժուարութիւններ կը կրէին նաւէն
քաղաքը և քաղաքէն նաւը մտնելու համար . նաւն եր-
թալու համար նաւաստիներու կոնակ ելնելով ծովեղ-
քէն կ'երթային կը մտնէին նաւակներու մէջ և անկէ
ալ նաւը . նաւէն ալ քաղաք մտնելու համար նոյնը կը-
նէին : Ժամանակէ ետքը նաւահանգիստ մը շինուեցաւ :

160 Թնդանօթաձիթ զինուոր կար : Գլխաւորաբար
բերքերն են՝ Պաֆրայի ծխախոտ և փայտ , վասն զի շատ
անտառներ ունի :

0դը բարեխառն է , ձմեռը հարաւային և ամառն
արևելեան հով կը փչէ . Չուրն առատ՝ բայց քիչ մը լե-
զի է . ամառը ջերմային հիւանդութիւններ պակաս

չեն, ուստի բնակիչները վատառողջ են : Ա.

Սամսուն հին ատենները Պոնտացւոց թագաւորութեան քաղաքն էր, զոր Միհրդատ ամրացուց և ընդարձակեց, և 71 տարի Քրիստոսէ յառաջ լուկուլոս նուաճեց . բայց այն հին Սամսունը հիմայ աւրուած է և աւերակներն անդամ ծովուն մէջ անհետ եղած են :

Հոս 48 ժամ կեցանք . 500 ի չափ պատուաստ ըրի և շատ մ'ալ հիւանդներ դարմանեցի :

Յունուար 9 հինգարթի օր ճամբայ ելանք ձիերով՝ գուշտ անուն դիւզն երթալու համար, 8 ժամ հեռի, և նոյն օրը ժամ 12 ին մոտանք ու դիշեր կեցանք :

Գավաք՝ լեռան մը վրայ 30 տունով տաճկի դիւզ մ'է . տուները փայտաշէն հիւղակներ են . ունի 200 բընակիչ՝ որոց արհեստն էր հողագործութիւն :

Յունուար 10 ուրբաթ ժամ 5 ին ճամբայ ելանք լուսած երթալու համար, 6 ժամ հեռի, և նոյն օրը մոտանք ու դիշեր կեցանք :

Լատիք՝ լեռան ստորոտը դաշտավայրի մը վրայ շինուած քաղաք մ'է 260 տունով, 250 ը ջաճկի, 10 ընալ չայու . բնակչաց թիւը 1500 ի կը հասնի . Ունի 4 մեծ մկիթ, 10 մէսճիտ, 1 չայու փոքր եկեղեցի, 2 բաղնիք, 1 հին պարիսպ մը, երկաթագործի շուկայ մը : Օդը լաւ, ջուրն անուշ ու պաղ :

Յունուար 11 շաբաթ առտու ժամ 2½, ին ճամբայ ելանք Ամասիա երթալու համար, 8 ժամ հեռի, և նոյն օրը ժամ 10 ին մոտանք :

Լատիքէն 1 ժամ հեռի դէպ ՚ի Ամասիա երթալու ճամբուն աջ կողմը Աւ-Գուշառուած լեռան ներքեւ կ'երևայ Աւ-Նոր դիւլը :

Դարձեալ Լատիքէն Զ ժամ հեռի քարէ կամուրջի
մը մօտ փոքրիկ խան մը կայ . այս տեղին Տէրէնէւ ուր-
դէնոյ կ'ըսեն :

4 ժամ հեռի աջ կողմը կերևայ Ավելն ըսուած
գիւղը :

5 ժամ հեռի աջ կողմը Ա+ւ ըսուած գիւղը :

7 ժամ հեռի ճամբուն վրայ Թէրուտն մէտէւ :

Քիչ մ'ալյառաջ դարձեալ ճամբուն վրայ դէպ 'ի
աջ կողմը թթենւոյ անտառաց մէջ ըլքնաւ խանը :

Այս վերջինէն և ժամ անդին է Ամասիա քաղաքը :

Ա Մ Ա Ս Ի Ա

Այս անուն դաւառին դլխաւոր քաղաքն է Երկու¹
լեռներու ստորոտը՝ ձորի մէջ շինուած, որուն մէջն
կանցնի Եւչէւրում (1) ըսուած գետը :

Աշխարհագրական լայնութիւնն է $40^{\circ} 59'$ և երկայ-
նութիւնը $33^{\circ} 4'$:

(1) Եէշիլ ըրմաք կըսուի նաեւ Թօքաթ սույը, Ամասիա
սույը, Զարշէնպիհ սույը . 'ի հնումն Երիս : Փոքր Ասիոյ մէկ
գետն է՝ որ կը գոյանայ Երկու մեծ վտակներէ . որոնց մեծաւ
գոյնը Սըլվազի հիւսիսակողմի լեռներէն բղխելով կուգայ կ'անց-
նի Թօքաթէն, Թրիսալէն, Ամասիայէն, եւ այնուհետեւ կեր-
թայ կը միանայ միւս վտակին հետ՝ որ Եըլտըզ-տաղիէն կը-
բղխի . Եէշիլ ըրմաք այսպէս իր Երկու վտակներուն միաւո-
րութենէն ետքը կերթայ կը թափի 'ի Սեւ ծով . Մեծ վտակը
'ի հնումն յունարէն Լիդոս կըսուէր՝ որ Գայլ ըսել է, եւ
իսքը՝ որ Եըլտըզ-տաղիէն կը բղխի, կ'անուանէր Երիս՝ որ
ծիածան ըսել է . այս վերջինը բուն գետը կը համարուէր .
ակ Լիդոս՝ անոր մէկ վտակը :

Քաղաքին հիւսիսային կողմէն բարձրացած լեռը
Ք-Հ-Ռ-Ա կ'անուանի , և հարաւային կողմէն բարձրա-
ցածը Չ-Վ-Լ-Ռ-Դ-Ր-Ա :

Ամասիա 48 թաղ ունի , ամենը 5,000 տուն . 25,000ի
չափ բնակիչ կայ , 18,000 մահմետական , 6,000 հայ և
1,000 ալյոյն :

Ունի 12 մզկիթ մեծ և 25 ալ փոքր , որոնց գլխա-
ւորներն են Պ-Կ-Ջ-Ռ ըսուած մզկիթը մարմարիոնէ սիւ-
ներով , և կէտ հերէսէ ըսուած ինը գմբէթով մզկիթը .
ասոնց երկուքն ալ Սուլթան Պայազիտ շինած է : Այս
վերջինին գէմը կը դտնուին Ղիճասլանայ մարմարիոնէ
տապանաւ մահարձանն ու ուրիշ շիրիմներ :

Յիմարանոց մը թէպէտ հոյակապ շինուած է սիւ-
ներով , բայց հիմա լքեալ . 3 եկեղեցի հայոց , մէյմէկ
ալ գպրոց . 1 եկեղեցի յունաց . 12 բաղնիք , 12 պան-
դոկ , իջևաններ , հոյակապ շուկաններ , 1 ուղեադէն մը ,
և շատ մը հին շինուածոց մնացորդները . Ք-Հ-Ռ-Ա լե-
ռան վրայ Միհրդատի շինած զարմանալի քարափոր շի-
նուածներուն մնացորդները կը տեսնուին . Նոյնպէս և
դադաթին վրայ շինուած բերդը կիսաւեր ու լքեալ .
լեռանը երեսն 'ի վեր կուտակոփ անձաւներ քառա-
կուսի դռներով , փողոցներ և սանդուխներ :

Բերդին մէկ սենեակին մէջ հին զբահներ , երկա-
թեայ գլխարկներ պահուած կը կինան , և բերդէն մին-
չև գետին եզրը գետնափոր սանդխաձեւ ճամբայ մը
փորուած է հորի նման՝ որ հիմա Ճ-Լ-Շ-Պ-Ա-Լ կըսուի :
Այսպիսի կունակոփ անձաւներ կը դտնուին նաև քա-
ղաքէն գուրս շրջակայ վայրերուն ապաւաժներուն վը-
րայ , որ պոնտացւոց թագաւորաց գերեզմաններն ըլլալ
կը կարծուին . Նոյնպէս հասարակաց ճանապարհին վրայ
կը դտնուի քարայր մը Ա-Յ-Ն-Լ-Ը-Տ-Կ-Ր-Ա ըսուած . վասն զի
ապակիով բռեալ է . ասոր ձեղունին վրայ նկարեալ են

քրիստոնէութեան ժամանակ սրբոց պատկերներ և դռանը ճակատն ալ յունարէն գրեր . կը կարծուի թէ Միհրդատայ մէկ դանձատունն եղած ըլլայ : Ուրիշ անթիւ հնութիւններ ալ կան՝ ու դեռ չեն քննուած :

Քաղաքին մէջ տեղէն անցող և էվլընաւ գետին վրայ տեղ տեղ կամուրջներ շինուած են , որոնք կը միացնեն քաղաքը . նոյնպէս գետին շատ աեղերուն վրայ ալ ալիւրի ջաղացներ շինած են . գետին ջուրը ագուդաներու մէջէ կուգայ քաղաքին պարտէզները կ'ուսուցէ :

Քաղաքին դէպ 'ի լատիքի կողմը՝ 6 ժամ շարունակ , և դէպ 'ի թրիսալի կողմը՝ 2 ½ ժամ շարունակ թթենւոյ անտառներ կան : Ընտիր մետաքս կելնէ քարշը 120 զուրուշ . ցորեն առատ ու պատուական . ամեն տեսակ միրգեր , մանաւանդ խաղող , խնձոր և գինի պատուական : Քաղաքիս մետաքսի առեւտուրը խիստ համբաւեալ է : Բնակիչներն ընդհանրապէս հողագործութեամբ կ'ապրին . կանայք հոչակեալ են իրենց գեղեցկութեամբ :

Օդը ծանր է , շատ մառախուղ կըլլայ . ջերմը շատ , ամառը շատ տաք և ձմեռն ալ շատ ցուրտ կընէ : Զուրերը պաղ , անուշ և յստակ են , և կը կոչուին Շնէմուլի , Թէմուլը , Արչուր , որ Զատուլոյ ըստուած լեռնէն կուգան և Քուլէ բունար սոսոյ ըստուածը՝ որ Քալէ-Դուլը լեռնէն կուգայ :

Ամասիա Սուլթան Աէլիմ առաջնոյն հայրենիքն է և մինչև ցարդ թագուհւոյ (Սուլթան) մը կալուածն է .

Հոս 2 օր և 3 դիշեր կեցանք . 500 ի չափ հիւանդդարմանեցի և պատուատ ըրի :

Յունվար 14 երեքշաբթի ժամ 1 ին ճամբայ ելանք թրիսալա երթալու համար , 12 ժամ հեռի , և նոյն օրը

Ժամ 44 ½ ին մտանկը :

Քաղաքէն ժամ մը հեռի վիմաբուղխ աղբիւր մը կայ . ասկէ ալ ժամ մը հեռի վէմը փորելով պատուելով շինուած ագուգաներ կան Միհրդատայ ժամանակէն մացած , որ տաճկեները ֆեհնար ետքուու կը կոչեն :

Ամասիոյ հարաւային կողմը կիյնայ Զէւէ անուն հին քաղաքն՝ որ ՚ի հնումն Զէւ կը կոչուէր . հռչակեալ է Անահտական դից մեհենովն և մանաւանդ այն պատերազմովը զոր հոս ըրաւ Միհրդատ թուիարիոսի (Լուկուլոսի սպարապետ) դէմքրիստոսէ Եղ տարի յառաջ։ Հոս տեսակ տեսակ հիւսուածներ և շոխաներ կը շինեն , 4000 տաճկի և 250 հայու տուն կայ : Քաղաքէն ետեւը բլուր մը կայ՝ փրան ալ հին բերդ մը :

Ամասիայէն մինչև թրիսալս աջ և ահեակ և ճամբուն փրայ գանուած դիւզերը հետեւեալներն են .

1 ժամ հեռի ձախ կողմը Սազա դիւդ .

3 " " " Քալէ " "

4 ½ " " աջ " Ռյկուր " "

5 " " ձախ " Թաթար " "

6 " " " " ճամբէն ալ 1 ժամ հեռի կվթէ դիւդ .

6 " " աջ " ճամբէն ալ ½ ժամ հեռի իյնէ պաղար կամ Ռւզուն պօղազ դիւզը .

6 ժամ հեռի ճամբուն փրայ Սուլթան Մուրատի շինած քարաշէն մեծ կարաւանատունը՝ իյնէ պոշտ եռանուն , որ զոյգ զոյգ 8 մարմարիոնէ սիւներու փրայ հաստատուած է :

6 ½ ժամ հեռի աջ կողմը Նէնիզնէ դիւդ .

9 ժամ հեռի ճամբուն փրայ Զէնկէլի տէվրէնտ , և լուան ստորոտը սրճարան մը կայ՝ որ կըսուի Զէնիւլ եռհիւ-

Թ. ՐԱԽԱԼԱ (ՍԵԲԱՍՏՈՒԳՈԼԻՍ)

Փոքր գիւղաքաղաք մ' է , որ կըսուի նաև գելան հիսարը կամ Քելան քալէսի : Ունի 150 տուն և 500 բնակիչ մահմէտական . 3 մզկիթ , 2 բաղնիք , 4 իջեվան , բերդ մը լեռան գագաթը :

Օդը ծանր է . ամառը սաստիկ տաք կընէ , մինչև անդամ ջուրը կեռայ . ջերմային հիւանդութիւններ կը տիրեն : Բնակչաց գործածած և խմած ջուրը թօւան-ը-ը-ը ըստած վտակին ծանր ջուրն է , որ գիւղին վարի եւ զերքէն պարտէզներու բոլորտիքէ կ'անցնի :

Ունի շատ այգիներ , մրգեղէններ , ցորեն և էնոքի առատ են : 144 հոխա ցորենը 50՝ ջուրուշ : Հոս գիշեր մը կեցանք :

Յունուար 15 երեքշաբթի առոտու ժամ՝ $3\frac{1}{2}$ ին ճամբայ ելանք թօքաթք քաղաքն երթալու համար , 8 ժամ հեռի , և նոյն օրը ժամը $9\frac{1}{2}$ ին մոտանք :

Թրխալէն մինչև թօքաթք՝ որ ընդհանրապէս հարթ գաշտավայր մ' է , ճամբուն վրայ և կողմնակի գըտ նուած գիւղերն իրենց հեռաւորութեան կարգովը հետեւալներն են .

1	ժամ հեռի	Արա պէօրէ	ընդ աջ
1	" "	Քըյճը քէօյ	" ձախ
$1\frac{1}{2}$	" "	Քալէ քէօյ	
4	" "	Նէնիալ քէօյ	ընդ ձախ և 1 ժամ
$4\frac{1}{2}$	" "	Քատը քէօյ	ճամբէն հեռի
4	" "	Բաղար քէօյ	ընդ ձախ և $\frac{1}{2}$ ժամ
4	" "	Երքէլէթ	ճամբէն հեռի

4	ժամ	հեռի	թավուքճա	քէօյ	ընդ	աջ
5	"	"	Քիւչիւկի	էնտիղ		
5	"	"	Պէջիւք	"	"	աջ
5	"	"	Կիւրճիւ	քէօյ	"	ձախ
5½	"	"	Պէրէպ	քէօյ	"	"
5½	"	"	"	" քիւչիւք		
6	"	"	Էմիր սէյխու	ընդ	ձախ	
6	"	"	Սէօնկութ	քէօյ	"	աջ
6½	"	"	Զէրչի		"	"
6⅓	"	"	Թաշլը չիփալիկ		"	"
4¼	"	"	Տօղան օպասը		"	"
3	"	"	Պէյ	"	"	"
4	"	"	Քալաթան	քէօփրիւսի	Թօքաթ	ըրմա-
					զին	վրայ .
7½	"	"	Հըտըրլը	քէօփրիւսի	Թօքաթ	ըրմաղին
				վրայ՝	Թօքաթի	մօտ :

ԹՕՔԱԹ (ԵՒԴՈԿԻԱ. ԵՒԴՈՔՍԻԱ.)

Այս քաղաքն եօթը ապառաժուտ կարմրահող լեռ-ներով պատած ձորի մը մէջ շինուած է : Ունի 75 թաղ. 4000ի չափ տուն լեռանը զառ ՚ի վայրին վրայ շինուած և ընդհանրապէս կաւակերտ , արտաքին երեւոյթնին տգեղ , բայց ներսի կողմերնին յարդարեալ . կան նաև շատ մը փայտաշէն գեղեցիկ տուներ . 20000ի չափ բը-նակիչ կայ՝ որ ըստ մեծի մասին տաճկներէ ու հայերէ կը բազկանան . կան նաև յոյն , հրեայ և եւրոպացի .

Ունի 10 մզկիթ , որոնց մէջ Ավ Քու և Սուլեյմէն կամ Հյուն համբաւէ գեղեցիկ շէնքեր են : 8 հայոց ե-կեղեցի կայ և իւրաքանչիւր աղդ մէյմէկ եկեղեցի ու-նին . կան նախակրթական դպրոցներ :

Ունի պէտէն մը , 14 քաղնիք մեծ և փոքր , մեծ

շուկայ մը և օ քարաշէն իջեվամներ , ուր կը բնակին վաճառականք . մեծ հրապարակ մը վայլու խանին առջեւ :

Քաղաքին նշանաւոր շէնքերն են իւշնէտիանէ ըստ ւած երեք շէնքերն , որոնց երկուքն ընդարձակ են և դարդարուն . մէկն իջեվան է . միւսին մէջ ալ դերեզմաններ կան , բայց երրորդը պարտէզի մէջ է և լէնկթիմուրի որդւոյն գերեզմանը մէջն է կ'ըսեն :

Նոյնպէս նշանաւոր է պղինձ հալեցընող (զալիսանէ) մեծ և եւրոպական ձեւով շինուած գործարանն , որ քաղաքէն քիչ մը դուրս է . հոս կը զրկեն թօքաթի սահմանաց մէջ գտնուած բոլոր հանքերէն ելած պըզինձն հալեցընելու համար :

Արեւմտեան կողմէն ապառաժուտ լեռան ծայրը կը բարձրանայ հին և կիսաւեր բերդ մը , որուն մէջ կայ մեծագործ գետնուղի ջրամբար . բայց իջնելու ճամբան աւեր է , և բերդին դուան վրայ քանի մը յունարէն գիրեր կան :

Այս քաղաքն իր այդիներով ու պարտէզներովն և Պէլլու աղքիւրէն եկած իր պայծառ ու անուշ ջուրելովը շատ զուարճալի է բնակելու համար : Շրջականերն ալ շատ այդեստաններ կան :

Երկրին վաճառականութիւնն ու բերքերն են պըզուղներ , գինի , նկարատիպ կտաւներ , սեկ , պղինձէ ամաններ , ապակաբուռ և մանաւանդ Ֆէկրէ հովսան 30 զուրուշ և այլն : Ցորենին հօխան 12 կամ 16 փարա է : 75 տրամ հացն 3 փարա : Թօքաթի ցորենն իրեն չըբաւեր , վասն որոյ դուրսէն կը բերեն . բայց փայտն առատ է , և ընդարձակ դաշտ մ'ունի մինչև թրիսալա : Պարտէզներուն մէջ ամառնային տուներ կան :

Օդը բաւական առողջ է . ամառը ջերմ կը տիրէ , նոյնպէս աչքի ցաւ : Ժողովուրդը բաւական կրթեալ է . Զուրն առատ է որ կուդայ բարձրաբերձ լեռներէն , և

աղբիւրներու ու հարուստներու տուներուն կը բաշխուի :
Պէկզատ աղբիւրին ջուրը շատ գեղեցիկ է , որուն ա-
նունը կը կրէ իր գտնուած թաղն ալ :

Թօւան-սույ կամ նույն կամ իւսոււքի ըսուած
վտակն՝ որուն վրայ քարաշէն կամուրջ շինուած է ,
կ'անցնի քաղաքին քովիչն և կ'երթայ կը խառնուի Եւ-
ալ-ըւմ-սույ : Թօւան-սույին խոշոր ձուկեր կը հանեն .

Քաղաքին հիւսիսային կողմը ժամ մը հեռի Եւյլ-ը
լեռան տակը Ս. Աննայի անուան նուիրեալ փայտաշէն
մենաստան մը կայ հայոց : Ասոր արեւելեան կողմն և
քաղաքէն 1 ժամ հեռի կէտա անուն գիւղին մէջ վերա-
փոխան եկեղեցի մը կայ յունաց , սիւնազարդ քարա-
շէն , որ կըսուի հերեւ ոչլու . ասիկա Յուստիանոս կայ-
սեր շինածն է կըսեն : Հոս 600ի չափ հիւանդ նայեցայ
և պատուաստ ըրի . Օր մ'եւ երկու գիշեր կեցանք :

Յունուար 17 ուրբաթ ժամ 3 ճամբայ ելանք Եւնի
երթալու համար , 12 ժամ հեռի , և նոյն օրը մը-
տանք ու գիշեր կեցանք :

Թօքաֆէն Եւնի իւն՝ ճամբուն վրայ կը գտնուին .

1	ժամ հեռի	կէյրազ	ճամբուն	վրայ
5½	"	Եարմըշ	"	"
6	"	Զիֆիկ քէօյ	"	"
6	"	Կէտազազ	կ ձախ	
6	"	Քէրվան սէրայ	"	
6	"	Պօլուս	"	

Եէնի խան՝ 78 տունով տաճկի գիւղ մ'է դաշտի
մէջ շինուած . ունի մէկ մզկիթ , մէկ բաղնիք , մէկ քա-
րաշէն իջեվան՝ զոր Սուլթան Մուրատ շինած է : 0դն ա-
ռողջ . Ջուրը բաւական աղէկ . ձմեռը սաստիկ : Բնակիչ-
ները հողագործ են և ցորեն կը ցանեն .

Ասկէ մէկ քառորդ հեռի հայոց թաղ մը կոյ 48
տունով (էրժնէ բահալուն), որ ունի մէկ եկեղեցի և
մէկ ալ իջեվան :

Յունուար 48 շաբաթ օր ժամ 5 ճամբայ ելանք Սը-
վազ երթալու համար , 7 ժամ հեռի և նոյն օրը ժամը
40 ին մտանք :

Եէնի խանէն մինչև Սըվազ ճամբուն վրայ կը գըտ-
նուին .

4 ժամ հեռի երյարդ տէրէսի ճամբուն վրայ .

5 " " Զիֆլիկ քէօյ " "

Այս Զիֆլիկ քէօյին վերի կողմը լեռ է . սոյն լեռան
վրայ մէկ ժամ երկայնութեամբ ընդարձակ դաշտ մ'է .
այս դաշտէն մէկ ժամ տնդին է Սըվազ՝ որ դաշտին
ծայրէն կըսկի երեւնալ : Ճանապարդները չատ նեղու-
թիւն կը կրեն ձմեռն այս դաշտն անցնելու համար .
վասն զի շարունակ ձիւն դալով բոլոր դաշտին վրայ
քանի մը կանդուն կը դիզուի և ճանապարհորդն անոր
մէջ կը թաղուի կը մնայ՝ առանց գիտնալու թէ ուր է և
ուր պիտի երթայ :

Ն Ա Հ Ա Ն Գ Ս Բ Վ Ա Զ Ի .

Սըվազի նահանգն՝ Ասիական թուրքաստանի մէկ
Փաշունիւն է , Քայսէրիի , Տիվիկի , Զանդըրըյի ու
Շապին — Քարահիսարի մէջ տեղը . մայրաքաղաքն է
Սըվազ :

Այս նահանգին արեւմտեան կողմի մէկ մասն ա-
պառաժուտ է և անբոյս . միւս մասն անտառուտ մայրի
Խառերով . հիւսիսային կողմն՝ անտառախիտ լերանց
գոտիներ մինչև Սև ծով . հարաւային կողմը՝ դաշտա-
լայր :

Անտառներն են . Ա+ - բազ-օռմանը 12 ժամ ընդարձակութեամբ , Սըվազ քաղաքէն 12 ժամ հեռի , արևմբատեան կողմը կէրմուզատգաւառին մէջ . Զամբ-պէլ-օռմանը 3 ժամ լայնութեամբ և 12 ժամ երկայնութեամբ , Սըվազէն 6 ժամ հեռի , հիւսիւսային կողմը . Տուրման-եւլուզ-բազ ըսուած կաղնիի անտառները , Զամբ-պէլ արևելեան կողմին կից . Ս-իուրէ ըսուած կաղնիի անտառները , 6 ժամ երկայնութեամբ ու 6 ժամ խորութեամբ , Սըվազէն 4 ժամ հեռի , արևելեան հիւսիւսային կողմը . Հաղէլ կամ Աղէլ ըսուած մայրախիտ անտառները 6 ժամ շրջապատով , Սըվազէն 12 ժամ հեռի , արևելեան կողմը . Քէսօէ-բազ-օռմանը , Հաղէլ անտառներուն կից . Կի-ս-լէմէլ , Եւլուզ և Թէճիր ըսուած ընդարձակ անտառները , Սըվազէն 12 ժամ հեռի , արևելեան հիւսիւսային կողմը , այս անտառներուն լայնութիւնը 4 ժամ կը տեէ և երկայնութիւնը 12 . Պուշա կամ Աէշոր-բազ-օռմանը 12 ժամ լայնութեամբ և նոյնչափ ալ երկայնութեամբ , Սըվազէն 18 ժամ հեռի , հիւսիւսային կողմը . այս անտառն Աշէջէ անուն նորաշէն քաղաքին սահմանակից է :

Հողը շատ բարերեր է դաշտերուն ու ձորերուն մէջ , օդն առողջ , ձմեռը շատ ցուրտ , բերքերն են՝ ցորեն , արօտ , բամպակ , մետաքս , կտաւատ , ճէկէ , գէտ ույս , ճակնդեղ , կորեակ , հաճար :

Ունի հանքեր , բարահատք , աղի լիճեր՝ ուրկէ կը հանեն աղ . աղի ծովակներ՝ ուրկէ կը հանեն տարեխ ձուկը : Հանքային ջուրերու ջերմուկներ , որոնց մէջ երեկի են բրդնիկու մօտ գտնուած պաղ ջերմուկն ու եւլուզ ջերմուկը : Մէկ քանի վտակ . Ալիս ու Իրիս գետերը . 300 ի չափ գիւղ :

Այս նահանդը բաժնուած է 7 գաւառներու , որ են . Սըվազ , Ամասիա , Զօրում , Ճանիկ , Տիվիկ , Ա-

ըասպկեր, Եօղկաթ :

Այս նահանգը կը պատասխանէ կալասի և Պոնտոսի
մեծ մասերուն, նաև Հայաստանի մէկ փոքրիկ մասին
(Փոքր Հայք) :

Ս Բ Վ Ա Զ Ք Ա Ղ Ա Ք :

Սըվազ Մարագոմ լեռան տակ՝ գաշտավայրի վրայ
շինուած բերդաքաղաք մ'է Քըւըւըքաւէն (1) կէս ժամ'
հեռի հիւսիսային կողմը :

Քաղաքին հիւսիսային կողմն է Մայրագոմ կամ Մէ-
րէքիւմ լեռը, արևելեան հիւսիսային կողմը Ատղիկ
կամ Երլարդ լեռը, և արևելեան կողմն ալ հիւռլէվիկ
լեռը :

Սըվազ պարսպապատ չէ, բայց տեղ տեղ կը տես-
նուին հին պարսպի մ' ինկած կտորները, վասն զի՞ն
հնումն պարսպապատ էր. Լէնկթիմուր 4400 ին առաւ
քաղաքն ու կործանեց պարիսպը : Քաղաքին արևմտեան
ծայրն՝ ուրկէ կեսարիա կերթան, Ղայսերու դուռ կը-
կոչուի, պահելով մինչև ցարդ հին դռան անունը, զի
երբ պարսպապատ էր, հան ունէր նոյն անունով դուռ
մը :

Քաղաքին հարաւային կողմէն և կէս ժամու չափ
հեռիէն կ'անցնի Քըզըլըրմաք, որ կ'ընթանայ դէպ ՚ի
արևմուտ և որուն վրայ ձգուած են երեք կամուրջներ,
1° Լյէ-է-կ'ամ Մուռ կամուրջ, քարաշէն հոյակապ
18 կամարներով, որ Սենեքերիմ թագաւորին աղջկան

(1)Քըզըլըրմաք, 'ի հսումն Սլիւս, Գոքր Առիոյ ամենէն
մեծ գետն է որ երկու մեծամեծ վտակներով ալիզք կ'առնէ ու-
երթայ կը թափի Սիւ ծովի մէջ :

շինել տուածն է կրսեն : 2^o. Քեւէ-+էօբէ-էն արևմտեան կողմը և անկէ 1 ժամ հեռի . այս կամուր-ջը կիսաւեր է , բայց 18 կամարներով իր հոյակապ շէնքը ցոյց կուտայ՝ որ նշանաւոր անձ մը շինել տուած է զանի . ասոր հիւսիսային կողմը կ'ինայ Շահնայ գմբեթ ըսուած ամուր շէնքն , որ ամենակուլ ժամանակին հարուածներուն դէմ դնելով մինչև հիմա կանգուն կեցած է . այս շէնքը ձմեռ ատեն ճանապարհորդաց ապաստանարանն է . իր ականակիտ աղբիւրներուն ջուրերն անցորդաց ծարաւը կը յագեցընեն : 3^o. Ղըրշէ-+էօբէ-էն արևելեան կողմը . կոփածոյ մեծահասոր քարերով կառուցեալ է վեց կամարներու վրայ :

Այս քաղաքն ունի 32,761 բնակիչ ջաճիկ , չայ և թոյն . Դաւրա , Հողթար արուարձաններուն բնակիչներն ալ հետ հաշուելով .

Տաճկաց թիւն	9,279	արու.	9,837	էգ.	49,416
Տաճիկ մաղագործաց	111	"	100	"	211
Հայոց	6,539	"	6,479	"	13,017
Հո. և Բող. Հայոց	35	"	37	"	72
Հայ մաղագործաց	9	"	6	"	15
Յունաց	163	"	167	"	330
					32,761

4976 ի չափ տուն . 2176 ը Տաճկաց , 1750 ը Հայոց և 50 ալ Յունաց . Ցուներն աղքատ շէնքեր են իրարմէ հեռի շինուած . կան մէկ քանի փայտաշէն մեծ տուներ ալ . փողոցները նեղ ու անկանոն . Ունի 45 աղօթատեղի տաճկաց , ճահ և մահիտ , որոնց երևելիներն են .

Ա . Ո-լու-հակ . ասոր ընդարձակատարած շինութիւնը 50 մեծամեծ քառանկիւնի սիւներու վրայ հաստատուած է և 15,000 էն աւելի մարդ կ'առնէ մէջը . նուիրական աշտարակին (Փատէ) բարձրութիւնը կը գե-

բազանցէ միւս ամեն համար աշտարակները . վայրադաւիթը կամ արտաքին սրահին մէջ շաբանուն մը կայ բոլորտիքը ծառատունկերով զարդարեալ , արտաքին դրան կից ալ աղբիւր մը 30 խողովակներու բաժնու ած :

Բ. Փողունակութանքն է . ասոր աղօթատեղին վայտաշէն է և առաջինէն փոքր , բայց գեղեցկագոյն . նու իրական աշտարակը 150 ոտք բարձրութիւն ունի , սրահը (հակառակ) ծառազարդ է և մէջն ալ շաբանուն մը կայ .

Գ. Մթիւռան - համարէ . քաղաքին հրապարակին մէջ շինուած :

Դ. Օսման-էւլու-համարէ , կամ Քիւվակ-համարէ . շէնքը հին , քարաշէն , գմբէթը գեղեցիկ , աշտարակին բարձրութիւնը 60 ոտք : Այս ճամին 1584 տարի յառաջ Հայոց եկեղեցի էր՝ կառուցեալ յանուն Ս. Լուսաւորչի :

Միւսներուն անուններն են .

1 Ապտիւլ-վահապ ճամիսի

- 2 Գլավուղ "
- 3 Շէհիսլէր "
- 4 Ալի պապա "
- 5 Արիֆ էֆէնտի "
- 6 Հիւսէին էֆէնտի "
- 7 Ֆէրթէլի զատէ "
- 8 Աղաճսուք զատէ "
- 9 Հահ-Հիւսէին թաղի "
- 10 Թէքքէլի "
- 11 Քիւշիկ մինարէ "
- 12 Տիքիլի թաշ "
- 13 Քիւրքճիլէր "
- 14 Գարս հաֆիզ "
- 15 Զաթալ-փունար թաղի "
- 16 Մէքթէպի ըիւշտիէ "
- 17 Պաղէզլէր "

18	իմարէխ	ճամիսի
19	թարխանայ	"
20	Շաքիր պէջ	"
21	Մավուշ օղլու	"
22	Ծէճէպ փաշայ	"
23	Օսման փաշայ	"
24	Ալի աղայ	"
25	Գալէ	"
26	Գազի զատէ	"
27	Սէլչէլի	"
28	Զուքուր բունար	"
29	Զավուշ պաշը թաղի	"
30	Աճէմ մահլէսի	"
31	Պատթալ զազի	"
32	Ուզուն օղլու	"
33	Իւրեանը-զիմմի թաղի	"
34	" Միսլիմ "	"
35	Քէօսէ-տէրէի-զիմմի	"
36	Կիւլիւտ աղասը	"
37	Օղան չավուշ	"
38	Պաթալ զազի մէսմիթի	"
39	Շահ Հիւսէին թաղի մէսմիթի	"

Հինգ դլիսաւոր նէւակներն , այսինքն . մենաստաններն են .

1 Իպրահիմ թէքքէսի . լայնանիստ աշտարակ մ'ունի կիսակործան , որուն շրջապատը 100 ոտքէն աւելի է :

- 2 Շէյս-չօպան թէքքէսի .
 - 3 Ալի-պապայ "
 - 4 Սօրխուլու . "
 - 5 Էվլիայ էֆէնտի "
- Ասոնց Շէյսէրը հիւրամեծար մարդիկներ են . ամեն մէկ Շէյսի իր կրօնական կարգին համաձայն արարողու-

Թիւն կ'ընէ ուրբաթ օրերը միայն :

8 եկեղեցի մեծ ու փոքր . 7ը Հայոց (վեցը ուղղափառաց և մէկը հռովմէականաց) . 1 յունաց . 1 ժողովարան բողոքականաց :

Ուղղափառ Հայոց եկեղեցիներն են .

Ա. Մայր եկեղեցի . 8 հաստահեղսյս երկաթապատ սիւներու վրայ հաստատեալ, լայնանիստ , քարաշէն , գմբեթաւոր եկեղեցի մ'է հինդ դուռով , կառուցեալ 1808ին յանուն Ս. Աստուածածնի և նորողեալ 1840ին . դմբեթին բարձրութիւնը կը գերազանցէ քաղաքին ամեն շէնքերը , չքեղութեամբն ու ընդարձակութեամբը հրաշալիք մը համարուած է Սեբաստիոյ և չ չ սկայ քաղաքաց մէջ . ունի երեք մարմարիոնեայ ընդարձակ խորաններ , ամպիոններ և սալայատակ ընդարձակ գութին մէջ կրկնափեղկ վանդակագործ երկաթի հազուատես դուռ մը . ընդարձակ սրահ մը , որուն մէջ է կրկնայարկ առաջնորդարանը , սրահին երկու ծայրերն ալ երկու աղբիւրներ կան յորդահոս և կրկնախողովակ :

Բ. Ս. Վարդիս . քարաշէն և չորս սիւներու վրայ կառուցեալ :

Գ. Ս. Փրկիչ . կոփածոյ քարերով շինուած :

Դ. Ս. Մինաս .

Ե. Ս. Շակոր . վայսաշէն , մայր եկեղեցիին կից :

Զ. Ս. Վլասայ մատուռն վոքր և քարաշէն , հետեւ բանքու ըսուած թաղը տաճկի պարտէզի մը մէջ . ասոր մէջն է Ս. Վլասիոսի գերեզմանն . այս մատուռը թէև տաճիկ ընտանեաց մը ձեռքին տակն է , բայց ամեն քրիստոնեայներ ինչպէս նաև տաճիկներն ուխտի համար կրնան յաճախել համարձակ :

Հոռվմէական հայոց եկեղեցին է Ս. Վլասիոս , քաշէն , յունաց եկեղեցւոյն արեւելեան կողմը :

Յունաց եկեղեցին է Ս. Գէորգ , Հայոց գերեզմա-

նաստան մէջ . Յոյները ձանիկու կողմերէն հոս գաղթած ժամանակ՝ Հայերէն վարձու առած են այս եւ կեղեցին և վերջը ժամանակ անցնելով իւրացուցած են :

Կայ շրս մէտրէսէ (ուսումնարան) . Ա . կէրէ-հորէսէ , ճարտար ու հոյակապ շէնք . պատերը քրտաքին կողմէն զարմանալի արուեստով , մարմարիոն քարերով և քէրուբ քանդակներով զարդարուած են , որոնց վրայի սքանչելարուեստ փորագրութիւնները խմորի վրայ գեղաձոյլ կաղապարներով տպուածի պէս կ'երևան . դուռը փոքրիկ և երկու կողմէն կճեայ ու քանդակադործ . բարաւորին վրայ ուղղանկիւն եռանկիւնի ձեւով դէպ 'ի ներս փապարած եւ ամենաշքեղ քանդակներով զարդարուած շէնք մը կայ , որ իւր բրդաձեւ և դէպ 'ի դուրս առ 'ի շեղ բարձրացած սպառուածով որմերուն եղերքը կը շօշափէ . դուան երկու կողմերն երկու նուիրական աշտարակներ կան , որոնք թէպէտ բաւական գեղեցիկ և երկնագոյն ապակիններով վայելչացած են , բայց բուն Գորէ-էէն շինութեանը հետ բաղդատելով՝ կերեայ որ վերջը շինուած են , վասն զի անոր ճարտարութեանն ամեննեին չեն հաւասարիր . ունի բաւական մեծ սրահ մը՝ որուն երկու կողմերը սիւնազարդ կամարներու տակ ութական սենեակներ կան և մէջ տեղը ընդարձակ պարտէզ մը . Մէրէ-էէն ներսի որմերուն փորագրութեանց վրայ ալ պակաս ճարտարութիւն չըկայ . բայց այսու ամենասյնիւ թէ՛ ժամանակին սպառիչ ճիրաններն , և թէ՛ մէջը յաճախող տաճկաց անհոգութիւնը գրեթէ ոչընչացուցած են անոր դեղեցկութիւնը : Կը կարծուի որ այս շէնքը Սենեքերիմ ժագաւորին ապարանն էր :

Բ . Գուլէ-հորէսէ . ասոր ալ ճարտարութիւնն առաջինին հետ կը մրցի . քանդակները ցոյց կուտան որ երկուքն ալ մի և նոյն վարպետի ձեռագրուած են . ասոր .

դիմացը՝ նոյն օրինակ փորադրութիւններով դարդարած պարիսազ մ' և դուռ մը կայ, որուն ներքին կողմը բոլորովին աւերակ եղած է և միայն երկու կիսակիորժան աշտարակները մնացեր են դռանը ձախ կողմը. կերեայ որ այս չենքն երեքն մշկիթ էր.

Դ. Շէֆոյ-Ֆուբէսէ :

Ե. Այէտ-Քոշու-Շուբէսէ :

Ս յա չորս մէտրէսէներուն մէջ տարին 3 ամիս միայն ձմեռը դասախոսութիւն կըլլայ չափահաս երիտասարդաց (1) :

Տաճկաց դպրոցներուն թիւը շատ է, ճամիններուն թույն հաւասար, բայց և ո՛չ իսկ մէկ կանոնաւոր դըպրոց մը կը գտնուի. վասն զի ամենուն մէջն ալ հասարակ ընթերցանութենէ ու գրելէ և քիչ մ'ալ կրօնական դաստիարակութենէ զատ բան մը չըլլալուն՝ տըզայք կարեոր ուսմունքներէ ու արհեստներէ զրկուած են :

4 նախակրթական դպրոց ունին հայք, աղջկանց և տղայոց : Քիչ ժամանակ առաջ աղջիկներուն կարդալ սորվիլլ մեծ ամօթ ու անպատկառութիւն կը համարուէր և մինչև հիմայ ալ այս տարօրինակ դաշտարին հետքը մնացած է քանի մը անկիրթ ծնողաց քով. Հայք ունին ուսումնարան մ'ալ կրկնայարկ, կառուցեալ 1851 Քրիստոսի թուականին՝ յանուն Ս. Թարգմանչաց արդեամբ Օսաւպաշեանց դերդաստանին . ասոր մէջ կը կրթուին 300ի չափ տղայք, և կը սորվին զանազան ուսմունքներ, ազատական արհեստներ ու օտար լեզու-

(1) Իսկ 1862ին հաստատեցաւ մէքթէպի բիւշտիէ, այսինքն արքունի դպրոց ո՛ը, որուն մէջ հիմա 120ի չափ աշկերմաներ կը գտնուին միայն հասարակ ընթերցանութեան համար :

ներ : Դպրոցին ծախքին մատակարարութեան համար ընկերութիւն մը կաղմուած է Սենեքերիմեան անուն, որուն անդուլ աշխատութեան շնորհիւն է որ մինչև Քիմսյ այս դպրոցը կը յարատեէ : Մէջ մէկ ծաղկոցներ ալ հռովմէական և բողոքական հայք և յոյնք ունին :

10 բաղնիք . որոնց գլխաւորներն են երկու վազեան բաղնիքները կամ սողոհ-համաժ ըսուած բաղնիքները, մասաւանդ արանց յատկացածը, որուն մեծութիւնը 80 քառակուսի կանգուն է կամարակապ քարաշէն : Գուր շունչուհումնէ . Սույու գուշէն բաղնիքը նորաշէն և հոյակապ միւսներուն անուններն են շինչի, է-է, էմի-է-շու, մուռ, է-է-է-է, լոյ հոմանը :

Իշխաններն են .

1 Թուշ-իտ, զօրաց մթերանոց եղած էր :

2 Փուշ-իտ, փայտաշէն և ամենէն ընդարձակ :

3 Մէլէն-իտու կամ Արամու, փայտաշէն եւ ընդարձակ .

ունի 38 գեղեցիկաշէն սենեակներ, արտաքին կողմն ալ 11 խանութ . սրահին մէջ ականակիտ ջուրի աւագան մը: Ա. յս խանը քաղաքին համօրէն Հայոց արդեամբն ու Սենեքերիմեան անձնուեր ընկերութեան ջանիւքը շինուած է՝ ինպաստ ծախուց մայր դպրոցին :

4 Շեխ-իտու, փայտաշէն ընդարձակ 60 սենեակներով:

5 Քէ-շէ-ի-իտու, Շեխ-ի-տոնին կից :

6 Պէտք-շուն-շուն, քարաշէն 30 սենեակներով :

7 Փուշ, — իտու, վերինին կից և կիուաւեր :

8 Ահեր — ուշի երեք դռնեայ խանը վերինին աշկողիւ 30 սենեակ և 30 ալ խանութներով. վաճառականաց իշխան է :

9 Գուրու-սհեր-օղլու-իտու, խիստ փոքրիկ :

10 Նուբի-օղլու-իտու, խիստ փոքրիկ :

Սուրահնակ-իտու, Խոբու-իտու և Սու-սուշ-իտու անուն երեք իշխաններն ալ կային որ հիմա բոլորովին աւելակ

Եղած են :

կան զինուորանոցներ , նեղիոնէ մը , մեծ հրապարակ
մը՝ ուր առեւտուր՝ կըլլայ և բնակչաց տարեկան ալարէնը
կը ծախուի . վաճառանոցներ կամ շուկայներ , որ են .

1 Բեւեռադործաց փողոց , Ենուերնիւթիւնը .

2 Համերտագործաց „

3 Սառաճ-խանէ „

4 Նալպանալար

5 Զէօրէ կճիլէր

6 Պիթ պազար . աճուրդով ծախուելիք բաներուն .

7 Դերձակնոց , Անդնէւ .

8 Պէզազլար .

9 Զէզմէճիլնը .

10 Բապուճճըլար .

11 Մէսճիլէր .

12 Փէմպէճիլեր .

13 Պադալլար .

14 Ադտէրլէր , որուն առջեւն է մեծ հրապարակը .

15 Գլըճճըլար , պլչաքճըլար , թիւթիւնճիլէր , շը-
պըքճըլար և քալայճըլար . չարշըր :

16 Զըլըլիմճըլար , և դարբնաց շուկայներ մեծ հը-
րապարակին մէջ :

Այս շուկայներուն անուններէն կ'իմացուի որ քաղաքացւոց սովորական արհեստները վերոյիշեալներն են : Առաջները կտաւի վաճառականութիւնը շատ բանուկ էր , տարին մէկ միլիոն զուրուչէն աւելի կտաւեղէն կը ծախուէր ուրիշ քաղաքներու վրայ , բայց հիմա քաղաքէն ելած վաճառնելն են դուլպայ և ծխազամուրճ միայն . աղի լիճերն ու հանքերն ալ արդիւնաւոր են . սյս մօտերս քաղաքին վաճառականութիւնն առաջ երթալ սկսաւ Հայոց նորահաստատ երկու ընկերութեանց չնորհիւը :

Հացին հոխան 20 փարայ է , միսը 60 փարայ , իւղը 7 զուրուշ . գարիխն գրիւը (Պօլսոյ 7 գրիւը) 40 զուրուշ :

Քաղաքին շինուածոյ տախտակներն ու ատաղձը Ադրբայջանտառէն կը բերեն . վառելու փայտերն ու մախըրը (չըրա) Զամլը-պէւ անտառէն . կաղնիի փայտերը Սահանէ ըսուած անտառէն . շինուածոյ գերաններն Ապէչ Շեշտադ-պատ անտառներէն Ալիս գետին հոսանաց միջոցաւ . իսկ սիւնացու գերանները՝ Քորա-պէւ ըսուած անտառէն :

Արվազ ունի 2 բերդ . որ են վերին և ստորին :

Վերին բերդը քաղաքին հարաւային կողմը բլրոյ մը վրայ է , որ երեսի վրայ մնացած ըլլալով քայքայուեր և հիմա կիսաւեր եղած է , որուն մէջ 150 . ի շափ տաճկի տուներ կան . Ասոր մէջ դրուած է մեծ ժամացոյց մը՝ որուն հարուածոց ձայնը քաղաքէն երկու ժամու շափ հեռի կը տարածուի : Այս բերդէն կ'արձակուին թնդանօթք :

Ատորին բերդը քարաշէն է և նոյն բլրոյն ստորոտը . իր կիսակործան պարիսպները կը ցուցնեն որ ՚ի հնումն այս բերդը հոյակապ շինուած մէկը : Ասոր մէջ 100 էն աւելի տաճկի տուներ կան : Հոս է վերոյիշեալ Գուէ Խոչքուէնէ ըսուած ճարտարագործ շէնքը . մէջը շիրիմներ կան և կը կարծուի թէ Սենեքերիմեանց գերեզմաններն ըլլան անոնք :

Հոս կը գտնուի նախնեայ շատ մը զէնքեր . նետ , աղեղն , թուր , նիղակ , վահան և թնդանօթի երկաթեայ մեծամեծ ուռմբեր :

Քաղաքացիք 1808 ին այս բերդին մէջ պաշարեցին Զուէնէն Ալէ Քուա , իր բոլոր ուտելիքները կտրեցին , և 40 օր շարունակ արիւնահեղութիւններ եղան . փաշաններսէն իր մարդոցմով քաղաքին վրայ ոռւմբեր կը տե-

զացընէր և քաղաքացիք դրսէն փոխադարձաբար փաշային վրայ , մինչեւ որ Մութուլլահ փաշան գալով՝ Ալի փաշան կ—Պօլիս կանչուեցաւ , և զոր թունաւորեցին :

Բերդէն դուրս և անոր մօտն է վերոյիշեալ հոյակապ շնչքը , կիւտ-մարէսէ ըսուած ուսումնարանը : Նոյնպէս բերդին դէմը կիյնայ քաղաքին կառավարուե դուռը :

Բերդին դռան առջեւ տաճկաց գերեզմանատունը կայ , որուն մէջ կը դանուին Ա. Եւսուռատիոսեանց հինդ վկայից գերեզմանը :

Քաղաքին հարաւային կողմը Հայոց ընդարձակ գերեզմանատունը կայ , որուն անուն կուտան լիւ հոչէր , զի հոն ժողվել տալով լէնկթիմուր Հայոց մանկտին , ոտնակոխ , ջարդուբուրդ . ըրած է զանոնք : Կ'անուանեն նաև . Քառասուն-հական + , քառասուն մանկունք ըսուած տեղին կամ Ա. քառասոնից լճին 10 վայրկենի չափ մօտ ըլլալրուն :

Քառասուն մանկունք ըսուած տեղը կամ սրբոց քառասոնից լիճը , ուր քառասուն մանկունք նահատակուեցան , բոլորովին ցամքած է , և նահատակաց գերեզմանները ցիր ու ցան գերեզմանատան մը մէջ են :

Ասկէ հինգ վայրկեան հեռի եկեղեցի մը կարյանուն Ա. քառասոնից , զոր Ղաչ-Պուշան հիմնայստակ րած է :

Կուսակալին ասլարանն ալ քաղաքին հիւսիսային կողմն է :

Յ. վտակներ կոռոդեն քաղաքը :

4 Մուրառաւ (պղծեալ ջուր) . քաղաքին ականներն ու աղտեղութիւններն այս ջուրին մէջ կը թափին . մշտահոս է , տմառ ձմեռ կը վաղէ . այս վտակին Աստղիկ գետ ալ կըսեն , վասն զի Սեբաստիոյ Խըցըշ-էլի

այսինքն Աստղ գաւառին լեռներէն կը բղիսէ . ճամբան շատ մը ջրաղացներ դարձնելով . կուգայ Սըվազ և Մւ հանքառ գերեզմանատանը քովիչն անցնելով կերթայ Քւ զււ-ըստ-ին կը խառնուի :

2 Մէսէլ-սոս . Բոգնիկու ջուր ալ կըսուի . կը հո-սի քաղաքին եղերքէն , ասոր ջուրը մաքուր է , ճորդա-սոսէն մեծ է , և ամառը կը ցամքի :

3 Բնկորաս կամ կապուտիկ վտակ . վոքը առու-մ'է , որ կ'անցնի քաղաքին քովիչն և շատ անգամ ջու-րին առատանալովն եղերքներուն վրայ բնակիչներուն մնաս կը հասցընէ :

Այս վտակներէն ձուկ կենէ : Քաղաքին խոշոր փայտերը այս վտակներով կ'իջեցունեն : Քաղաքին ջու-րը անուշ է , մանաւանդ Քէէնէնէ և Պայշտ-է-շայ ըսուած ջուրերը . շատ մը ինքնաբուղին աղբիւրներ կան . Պա-շտ-է-շայն զովացուցիչ ջուրը 62 գլխաւոր մասերու բաժ-նուած է քաղաքին զանազան կողմերուն ու թաղերուն մէջ :

Քէէնէնէ ջուրն ալ զանազան թաղերու բաշխուելով 32 աղբիւրներէ կը վաղէ , որոնց մէջ երեսելի են կառա-վարութեան պաշտօնատան դռան ձախ կողմը գտնուած գեղեցկաշէն աղբիւրն ու կուսակալին ամարանո-ցին շքեղ աղբիւրը . այս աղբիւրներուն երկուքն ալ մաղմարիկոնեայ շէնքերով ու ոսկեզօծ նկաֆիներով զար-դարուած են :

Օդն առողջ է , եղանակը բարեխառն , ձմեռը սաս-տիկ ցուրտ կընէ , ընդհանրապէս հիւսիսային հովեր կը փշեն . ծառերը չեն դիմանար , բայց առատ ցորեն , դարի , հաճար , կորեակ , կտաւատ , ուստ ույտ , ճէնդի , ճակնդեղ կըլլան :

Բնակիչները պարկեշտ , խաղաղասէր , մարդասէր , աշխատասէր և քաղաքակրթութեան ընդունակ են , բնաւ-

չուայլութիւն չունին :

Տէրութեան զօրքերը չատ ժամանակ այս քաղաքիու մէջ կը ձմերեն :

Սրվաղ նախ Պոնտոսի վիճակն էր . ետքը կապադով կիսյի վիճակն եղաւ և վերջն ալ Հայոց մայրաքաղաք ՚ի սկզբան Սրվաղ կողութ կը կոչուէր , ուր Միհրդատ եօթներորդ (Պոնտոսի թագաւոր) բերդ . կառոյց , և ասոր շրջակայ վայրերուն վրայ 74 տարի յառաջ քան դիրիստու՝ հռովմայեցւոց դէմ լուկուլոսի (հռովմայեցի պատրապետ) հետ պատերազմ ընկրով յաղթուեցաւ . քաղաքը հռովմայեցւոց անցաւ . անկէ ՚ի վեր երկու անդամ իրարու ձեռքէ առնելէ ետքը վերջապէս մնաց հռովմայեցւոց ձեռքը , երբ Պոմպէոս վերջին յաղթութիւն մը կանգնելով Միհրդատայ վրայ նուաճեց թէ՛ սյս քաղաքն և թէ՛ բոլոր շրջակայ վայրերը : Պոմպէոսի շնորհիւր բարգաւաճեցաւ քաղաքն ու անուն ստացաւ թէսուտպօլիս : Վերջը Պոնտոսի Բոլէմն և թագաւորին մահուանէն ետքն իւր այրի կինը Բիթմհուսուռիս՝ Քրիստոսի ժամանակներն այս քաղաքին անունը դարձեալ փոխելով դրաւ Սեբաստիա , այսինքն, Յգոստոս , ՚ի պատիւ Հռովմայ կայսերաց՝ որ կը կոչուէին Օգոստոս :

Ճ. դարուն՝ Հայոց Սենեքերիմ թագաւորը փոխանակաւ առաւ յունաց կայսրէն զՍեբաստիա իւր ութ քաղաքներոնին ու 4000 ի չափ դիւղերովը :

699 տաճկաց թուականին՝ Սուլթան Օսմանի օրովը՝ տաճիկները գրաւեցին Սրվաղ և 103 տարի ետքը Սուլթան Պայազիս Ելլուրը օրովն՝ որ Պրուսա կը նըստէր . և որուն որդին էմիր Սիւլէյմանն իբրև իշխան և կուսակալ կը գտնուէր՝ ՚ի Սեբաստիա . Լէնկթիմուր 18 օր քաղաքը պաշարելէն ետքը սուտ երդմամբ տիրեց բերդին . իր աշխարհաւեր ձեռքը ազատ չը թողուց այս

Քաղաքն ալ և մերկացուց զանի ժե դարուն սկիզբները
իր գեղեցկութիւններէն ու այն հոյակապ շէնքերէն՝
որոնք Սենեքերիմայ ձեռակերտներն էին։ Լմիր Սիւ-
լյյման դահը բարձրանալէն 14 տարի ետքը դերի ին-
կաւ Լէնկիթիմուրի ձեռքն ու մեռաւ։ իսկ իր յաջորդը
Զէլէպի սուլթան Մէհմեմէտ կրկին ձեռք բերաւ Լէնկ-
թիմուրէն դրաւեալ ամեն քաղաքներն ինչպէս չնաեւ
Սըվազ 816 թուականին տաճկաց, յորմէ հետէ մինչեւ
ցայսօր Օսմաննեան տէրութեան ձեռքն է։

Քաղաքէն կէս ժամու չափ հեռի հիւսիսային կող-
մը դաշտին բարձր տեղը Հայոց Ա. Նշանի վանքը կայ
40 սենեակով։ այս վանքն աղիւսակերտ պատերապ
շրջապատեալ ծառազարդ լնդարձակ պարտէզի մը
վէջ է։ ունի 4 աղբիւր աւատ ու պատուական ջուրե-
րու։ 3 քարաշէն փոքրիկ տաճար. Ա. Ա. Նշան, քառա-
կուսի սրբատաշ քարերով կամարակատ և դմբեթաւոր։
տաճարին որմերուն մինչեւ կէսը գեղեցիկ յախճապա-
կիներապ զարդարած։ Բ. Ա. Կարապետ, բարձրաբերձ
դմբեթաւոր, շինուած կուսաւորչի կեսարիայէն դար-
ձած ատենը։ Գ. Ա. Սասուածածին, Ա. Կարապետի
տաճարին աջ կողմը։ որմերն ու յատակը յախճապակի-
ներով զարդարած։ ասոր խորանին աջ կողմը կը դը-
նուի Պետրոս գետադարձին գերեզմանն, և ձախ կող-
մին ալ՝ Գոհարինեաց Թէոդորոս Որեզտոյ վկայինը։

Այս մենաստանը, զոր նախ Սենեքերիմ թագաւորը
շինած էր և որ երբեմն ալ կաթուղիկոսարան եղած է
է Պետրոս գետադարձի ժամանակ, ինչպէս Շկը վկայեն
Մադիսարոսի թուղթերն ու այլք, հոյակապ շէնք մ'
ունէր և շատ հարուստ էր։ բայց Լէնկիթիմուր հիմնա-
յատակ կործանած ըլլալով, ժամանակէ մ'ետքը այս
արդի վանքը շինուեցաւ, և երբեմն երբեմն ալ նորո-
գութիւններ կրեց։ իսկ ՚ի վերջը վիճակին առաջնորդ

Յովիշաննէս արքեպիսկոպոսի աշխատութեամբ՝ ՚ի հիմանէն նորոգեցաւ :

Այս վանքէն ելած է Միսիթար վարդապետը, որ հիմնադիրն եղաւ Միսիթարեան միաբանութեան :

Հիմա շատ ճանապարհորդներ հոս կողան կը կերակրին :

Վանքին արևեմտեան կողմը կը դանուի Անքապատրուած 20 սենեակներով մենաստանն՝ որ ունի քառաշէն հին եկեղեցի մը յանուն Ս. Աստուածածնի, ջրարբի պարտէղ և ականակիտ անուշ ջուրի աղբիւր մը զեղեցկաշէն աւաղանով :

Անքապատ վանքին հիւսիսային կողմն է Դավիթա առուն Հայոց դիւղն, որուն բնակիչներուն ամենն ալաղօքապան են : Այս դիւղին դիմաց բարձրաւանդակի մը վրայ կը դտնուին Ս. Բակոր և Ս. Վարվառ ուխտատեղիներն իրարմէ քիչ հեռի . Ս. Վարվառի առջե ականակիտ աղբիւր մը կայ Ճ-է անուն :

Աըլվաղէն 22 ժամ հեռի հարաւային կողմը Խռէ-հռաւուած ուխտատեղի մը կայ, նուիրեալ յանուն Խնդրակառար Ս. Աստուածածնի . ասոր համար կըսեն որ առաջուց բաւական ընդարձակ մենաստան մ'է եղեր, որուն հիմա տաճարին բեմը միայն մնացեր է : Տաճիկները հոս շատ կը յաճախսեն երբ հիւանդի մը բժիշկներէն բժշկուելու յոսերնին կը կտրեն, և կանուաննեն Խռ-ց-է-էն :

Աըլվաղէն 2 ժամ հեռի արևելեան կողմը Ս. Աւերիանոս սեբաստացիին ուխտաաեղին կայ, որուն եկեղեցիին հետքն անդամ հիմա չը նշմարուիր, միայն ծառերով շրջապատած բոլորակաձեւ տեղ մ'է, ուր ջուրի ակ մ'ալ կայ . հո՛ս ամառը շատ ուխտաւոր կերթայ : 6 ժամ հեռի արևելեան կողմը լայնանիատ բարձրաւանդակի մը վրայ կառուցեալ է Ս. Հրեշտակապետաց մե-

նաստանը 40 սենեակով ընդարձակ բակի մը մէջ, որուն
միջավայրին վրայ մեծ աւազան մը կայ . Ասոր ջուրը
մերձակայ կրահանքի մը մէջ բղխելուն համար ախոր-
ժահամ չէ : Ունի քարաշէն եկեղեցի մ' և երկու մա-
տուռ :

Քաղաքին շուրջը 300 էն աւելի դիւղեր կան, որոնց
գլխակորները հայաբնակներն են : Բոդնիկ կամ Բագ-
րատունիք գիւղ, քաղաքէն և ժամ հեռի արևելեան
կողմը . ո նի 200 տուն հռովմէական հայոց, մէկ եկե-
ղեցի քարաշէն յանուն Ս. Սարդսի, մէկ դպրոց . Մէտէ
վտակն ասոր առջևէն անցնելով կուդայ ՚ի Սեբաստիա :

Հողթար (հողդոր) տաճկ. Հեղլաւէլէ-է անուն հայոց
դիւղը կամ արուարձանը . Սըգաղէն ՚և ժամ հեռի
հիւսիսային կողմն, ունի 20 տուն բնակիչ, փայտաշէն
եկեղեցի մը Ս. յէօրդ անուն :

Գալտը գիւղ և ժամ հեռի արևելեան հարաւային
կողմն Ալիս գետին եղերքին վրայ . ունի 12 տուն հա-
յոց, մէկ փայտաշէն եկեղեցի, երկու ջրհոր, ուրկէ
դիւղացիք կը խմեն :

Իշխանիկ գիւղ և ժամ հեռի արևելեան հարաւա-
յին կողմն . ունի 23 տուն հայոց, քարաշէն նոր եկե-
ղեցի մը յանուն Ս. Երրորդութեան, և դպրոց հասա-
րակ ընթերցանութեան, 6 աղբիւր, և ջրհոր աղի,
ուրկէ 150.000 հոխայի չափ աղ կը հանեն :

Պինկէօլ գիւղ 2 ժամ հեռի արևելեան հարաւային
կողմը . ունի 33 տուն հայոց, մէկ քարաշէն եկեղեցի
չորս կամարով Ս. Յակոբ անուն, մէկ ջրհոր մը աղի, ո-
րուն տեսակը ստորին է . Պինկէօլէն և ժամ հեռի
մահլուս ըսուած աղի ջրհորը կայ, որուն աղը շատ ա-
ռատ է և անուշահոտ, զոր կը զտեն 800 փոսերու
մէջ :

Ղավրազ գիւղ 3 ժամ հեռի արեւելեան կողմն . ու-

Նի 46 տուն Հայոց, հին եկեղեցի մը յանուն Ա. Սարգսի :

Խանձառ դիւղ 3 ժամ հեռի հիւսիսային կողմն . ունի 18 տուն Հայոց, Ա. Սարգիս անուն փայտաշէն եկեղեցի մը . դպրոց մը . այս դիւղին մօտն է Ռուբ Աթանադինէ Հայրապետին գերեզմանը :

Կովտուն դիւղ 3 ժամ հեռի արեւելեան կողմն . ունի 110 տուն Հայոց, փայտաշէն եկեղեցի մը Ա. Աստուածածին , մէկ դպրոց . Ասոր հիւսիսային կողմը Ա. Նշան անուն ուխտատեղի մը կայ, ուր կը դանուի աղի ջուրի լճակ մը :

* Եէնիծէ դիւղ 4 ժամ հեռի արեւելեան կողմն . ունի 10 տուն հայ բնակիչ , աղի ջրհոր՝ ուրկէ տարին 100 քոռ աղ կը հանեն :

Խորսանայ դիւղ 4 ժամ հեռի արեւելեան կողմն . ունի 28 տուն Հայոց , 2 փայտաշէն եկեղեցի , Ա. Աստուածածին որ դիւղէն գուրս է , և Ա. Թորոս . Այս դիւղէն ընտիր ցորեն կ'ելնէ :

Կավլայ դիւղ 5 ժամ հեռի արեւելեան կողմն . ունի 18 տուն Հայոց , մէկ քարաշէն եկեղեցի դմբեթաւոր Ա. Սարգիս անուն . դպրոց մը :

Դդմաճ դիւղ 6 ժամ հեռի արեւելեան կողմն . ունի 24 տուն Հայոց , կէս քարաշէն եկեղեցի մը Ա. Սարգիս անուն . ասկէ կէս ժամ հեռի բլրակի մը վրայ կը գրանուի Հ-ՖԻ-Ք-Ա-Ր-Ի ըսուած ամրոցն , որուն վրայ կան քարայրներ և քարաշէն տուներ :

Խորոխոն դիւղ 6 ժամ հեռի արեւելեան հիւսիսային կողմն . ունի 22 տուն տաճկաց . 8 Հայոց . 1 քարաշէն եկեղեցի յանուն Ա. Հրեշտակապետաց , զոր Աենեքերիմ թագաւորը կառուցած է ըստ աւանդութեան :

Պետրոսի կամ գոչ-հիսար դիւղ 6 ժամ հեռի արեւելեան հիւսիսակողմն . ունի 32 տուն տաճկաց , 28

Հայոց . 1 փայտաշէն եկեղեցի Ա. Յակոբ , 1 դպրոց = կամիս գիւղ 6 ժամ հեռի արեւելեան կողմն . ունի 39 տուն Հայոց , 20 տաճկոց . մէկ քարաշէն եկեղեցի Ա. Թորոս , մէկ դպրոց . գիւղին մօտ է Գ. Շահումյանը ըստած արօտը :

Աղտք կամ թուղ-հիսոր գիւղ 6 ժամ հեռի . ունի 120 տուն Հայոց , մէկ քարաշէն եկեղեցի Ա. Կարապետ , մէկ դպրոց :

Թավշանլու գիւղ 7 ժամ հեռի . ունի 20 տուն տաճկայ , 7 տուն Հայոց .

Շժղնի կամ Եար-հիսար գիւղ 8 ժամ հեռի , այսի մը վրայ շինուած և պարսպապատ . ունի 40 տուն Հայոց , 30 տաճկաց , մէկ փայտաշէն եկեղեցի , մէկ դպրոց : Ասոր մօտ է Դրունք կամ Թիւրնիք ըստած բարերեր գաշտավայրը՝ հարուստ առատ ու պատուական ցորենով :

Ատանօղ գիւղ 8 ժամ հեռի . ունի 30 տուն տաճկի , 30 տուն Հայ , մէկ փայտաշէն եկեղեցի , մէկ դըղոց :

Ասկէ շատ հեռի չէ Փասփիւնոյ անուն աւերսոկ գիւղըն , որուն մէջ կը գտնուի Սեւ խոչ անուն ուխտատեղի մը :

Թէոդորայ կամ Թոսորկայ գիւղ 10 ժամ հեռի . ունի 20 տուն տաճկաց , 8 տուն Հայոց , մէկ քարաշէն եկեղեցի , մէկ դպրոց : Այս գիւղին մօտ է Թէօտէրկէկէօլիւ անուն հոչակաւոր լիճն , որուն շրջապատը 3 ժամէն աւելի է , այս լճէն կելնէ առատ աարեխ ձուկ :

Զառայ գիւղաքաղաք 12 ժամ հեռի . ունի 200 տուն տաճկիկ , 120 տուն Հայ բնակիչ , մէկ քարաշէն մզկիթ չորս սիւներու վրայ կառուցած . 1 քարաշէն գմբեթաւոր եկեղեցի 6 սիւներու վրայ հաստատած , մէյմէկ դպրոց Հայոց ու տաճկաց . շուկայ մը 60 ի շափ .

Խանութներով.

Զառայի արեւելեան կողմն երկու ձոր կայ, որոնց մէջէն երկու մեծ գետեր հոսելով կուգան գիւղին առջեւ իրարու կը խառնուին :

Սյս գիւղէն կէս ժամ հեռի արեւելեան կողմը լւոան մը մէջ կը դանուի քարհատ կամ թաշըք գիւղը 30 տուն Հայ բնակիչներով. ունի մէկ քարաշէն եկեղեցի յանուն Ա. Յակոբա :

Քարհատէն 1 ժամ հեռի դէպ ՚ի արևելք ձորի մէջ Ալիս գետին եղերքին վրայ կը դանուի թէքէրի անուն 6 տունով Հայոց գիւղը :

Թէքէրլիէն 1 ժամ առաջ երթալով բլրի մը վրայ կը դանուի Ալէ-քիլխա գիւղն, որ ունի 58 Հայոց տուն. 6 տաճիկ. մէկ քարաշէն եկեղեցի Ա. Սարգիս :

Ասկէ անդին անգործ մնացած արծաթի հանք մը կայ, ուրկէ 2 ժամ հեռի դէպ ՚ի արեւելք կը դանուի Գարա-պօղաղ անուն գիւղը 20 տուն Հայ և տաճիկ բնակիչներով. այս գիւղին ձորին մէջէն սկիզբ կ'առնէ Ալիս գետը. գետին քով կը դանուի հոյակապ պանդոկ մը, բայց աւերակ, զար Սուլթան Մուրատ շինած է ըստ աւ անդութեան :

Զառայի արևմտեան, այսինքն, դէպ ՚ի Աըվաղի կողմը կէս ժամ հեռի կը դանուի Դեւօձական կամ Իւլոձ (տաճիկ. Տէվէցէ կամ Տէվէքսէ) գիւղն Ալիս գետին եղերքին վրայ 40 տուն տաճիկ և Հայ բնակիչներով. ասոր մնա կը դանուի Դեւօձու Ա. Դէորդ. անունով աւերակ վանք մը, նաեւ կրոյ հանք՝ ուր այրեր փորուած են :

Դեւօձէն 2 ժամ հեռի կը դանուի Ճանճիկ կամ Ճէն-Ճէկ գիւղը 30 տուն տաճիկ, 10 տուն Հայ բնակիչներով :

Այս գիւղին շուրջն Յիհ կայ, որոց երկուքը

կապու տադոյն են եւ միւսը սեւ , ամեն մէկին տարածութիւնը գրեթէ 140 մէտրի չափ է , ուրկէ ձկնորսները աշնան ատեն առատ ձուկեր որսալով կ'աղեն ու հիռաւոր քաղաքներու կը վաճառեհն :

Զառայէն 2 ժամ հեռի գէալ 'ի հիւսիս կը գտնուի Օղնովուտ գիւղը 45 տուն տաճիկ եւ 5 տուն հայ բընակիչներով . գիւղին առջեւէն քաղցրահամ առուակ մը կ'անցնի :

Ասկէ 1 ժամ հեռի հուաբերդ գիւղն , որ ունի 32 տուն տաճիկ եւ 18 տուն հայոյ , 1 քարաշէն եկեղեցիցի Ս. Թորոս , փոքրիկ դպրոց մը , 5 աղբիւր , որոցմէ միայն մէկին ջուրը քաղցրահամ է եւ միւսներունը լեղիւրով :

Ասկէ ալ 1½ ժամ հեռի կը գտնուի Զաքիւրտ անուն գիւղը 25 տուն տաճիկ , 5 տուն հայ բնակիչներով :

Ասկէ ալ 2 ժամ անդին կը գտնուի Պահճէ գիւղը 22 տուն հայ և 6 տուն տաճիկ բնակիչներով : Գիւղին առջևէն անուշ չուրով գետակ մը կ'անցնի . ուրիշ կը հանեն քաղցրահամ ձուկեր . Պահճէ գիւղէն կէս ժամ հեռի ուխտամեղի մը կայ խնդրակատար Յօ Աստուածածին անունով , ուր վերափոխման տօնին օրն անթիւ ուխտաւորներ կ'երթան մատաղ կտրելու :

Զառայէն 4½ ժամ հեռի կը գտնուի Ող-մաշատը՝ ուստած արծաթի հանքն , ուրիշ կէս ժամ հեռի հիւսիսային կողմն անտառ մը կայ , որուն քովս ալ ջէրետամը անուն գիւղ մը : Դարձեալ 4½ ժամ հեռի կը գտնուի կիւլ-փունար արծաթի հանքն , որուն մօտն անտառ մը կոյ : Նոյնպէս 4½ ժամ հեռի եւ արեւելեան հիւսիսային կողմը կայ ֆունար—տէրէսիի արծաթի հանքն , որ ունի անտառ մը մէկ քառակուսի ժամ ընդարձակութեամբ , ուրիշ 1 ժամ հեռի է Պօնճուքուսէքի ըստամ գիւղը : 3 ժամ հեռի ալ Ալչադ-պէլ ը-

սուած արծաթի հանքն , որուն քով կամ ջառայի արեւելքան կողմը կը գտնուի Պաշ իւրա ըսուած գիւղն , ուրկէ 1½ ժամ հեռի անտառ մը կայ .

Այս գիւղերուն գրեթէ ամենն ալ Ոլիս գետին ոչ ու ձախ եղերքներուն վրայ կամ անոր մօտերը դաշտավայրի վրայ շնուած են :

Կլիման ցուրտ ըլլալուն հողը յարմարութիւն չունի պտուղ ու սյդի հասյունելու . բայց գարի ու ցորեն առատ կըքերէ՝ որով այս գիւղերն՝ Ակնայ , Տիվրիկի . Որապէ կերի , կիւրինի . Մալաթիոյի և ուրիշ շատ մը հեռաւոր ու մերձաւոր քաղաքներու . շոեմարան եղած են :

Սըլվաղէն մէկ , երկու , երեք ժամ հեռաւորութեամք կը գտնուին մէկ քանի ագարակներ , որ են Շուն-քուռակ կամ ըստ հնոց Սիմ-քիւրէկ , որ ունի անուշահամ' պատուական աղբիւր մը : Պալախօր , Աստղիկ գետին երկայնութեամք ջազանլու , Սարը-հասան , կմին-աղա-չիֆթլիկի , Պօրօղուա , Այրանլը , Քիւրտէր - քէօյի , Զէլէպիլէր և Աէրբէնճիկ :

Սըլվաղէն Յ Ժամ հեռի հարաւային կողմն երթալով կը հասնիս Ուլաշ , որ թօնուս գաղայի գիւղերէն մէկն է՝ դաշտավայրի վրայ շինուած . ունի 100 տուն չայոց , և 850 ի շափ բնակիչ , որոնց ամենն ալ երկրագործ են . մէկ քարաշէն եկեղեցի , դպրոց չը կայ . ասոր մօտ է թէճիր-տաղը ըսուած անտառապատ լեռը՝ որուն ստորսոտը զեաեղուած են Գոչքիրիկի և Ջազայ ցեղի քիւրտերը . Այս գիւղէն երեք ժամ առաջ երթալով կը մանես Գաղի-մաղարայ ըսուած հայաբնակ գիւղն , որ ունի 30 տուն և 110 բնակիչ . մէկ քարաշէն եկեղեցի , մէկ դպրոց : Ասկէ անդին մէկ ժամ երթալով և մէկ քանի մանը գիւղեր անցնելին վերջը կը հասնիս Գարայ - հաճուլու կամ Մաղարայ հայաբնակ գիւղն , ուրիէ անցնելով կ'երթաս Եաղ-տօնտուրան ըսուած լեռն , որուն

դագաթն ամենաքաղցր ջուր մը կայ :

Ժամ մ'ալ յառաջ երթալով կը մտնես Մանճըքը լսուած հայաբնակ դիւզը 50 տունով, որ ունի 200 բը-նակիչ, ամենն ալ երկրագործ, զինալարժ և քաջասիրա, բայց անկիրթ . մէկ վանք մը Ս. Թորոս անուն՝ ուր կը նստի վիճակին առաջնորդը . դպրոցն ունեկեղեցին ալ վանքին մէջ են : Գիւղին դիրքը լեռնային է, օդը բարեխառն, հիւսիսային արեւելեան հովերը կը փշեն .

Այս գիւղին 9 ժամու չափ հեռի ապառաժուա ու լեռնային ճամբաներէ յառաջ երթալով կը համիս կիւրին գիւղաքաղաքն, որ Սրվազի նահանգին կցորդ է և ունի 20 գիւղ, որոնց բնակչները տաճիկ են և երկրագործ :

Կիւրին գիւղաքաղաքն ունի 2000 ի չափ տուն, ու ըսնց 1250 ը ուղղափառ Հայ, 90 ը հոռվմէական և 10 ը բողոքական Հայոց է և 650 ալ տաճկաց : Բնակիչներն ընդհանրապէս աղքատիկ են՝ բայց հիւրասէր . 4 եկեղեցի Հայոց . որոնց մէկը քարաշէն է 14 սիւներու վը-րայ կառուցեալ յանուն Ս. Աստուածածնի . միւս երեքը փայտակերտ են, Ս. Գէորգ, Ս. Փրկիչ, Ս. Սարգիս : 4 քարաշէն փոքրիկ եկեղեցի հոռվմէական Հայոց . 1 ժողովարան բողոքականաց : 1 մեծ մզկիթ աշտարակաւոր, և մէկ քանի փոքրիկ աղօթարաններ (մէսճիր) : 3 դպրոց Հայոց . 1 հոռվմէականաց . տաճկայ դպրոց չը դտնուելուն համար անկիրթ մնացեր են : 1 բաղնիք, շուկայ մը, պարտէզներ : Հայերն ըստ մեծի մասին վաճառական են և միշտ բերիոյ ու ծրապիզնի հետ յարաբերութիւն ունին : Տաճիկները հիւսնութիւն և քանի մը ուրիշ արհետաներ կը գործեն :

Կիւրնոյ դիրքը լեռնային է, օդը բարեխառն, հիւսիսային հովերը պակաս չեն : Ունի երկու գետ . մէկը մէկ ժամու չափ հեռի տեղէ մը բղխելով կուգայ կ'անց .

նի գիւղին մէջէն , ոռոգելավ պարտէզներուն մէկ մասը կ'երթա , գէպ ՚ի ջարէնտէ , և միւսը քաղաքին հարաւային կողմէն կէս ժամու չափ հեռի տեղէ բղխելով կուդայ գիւղին պարտէզներուն մնացած մասը ոռոգելէ ետքը՝ կը միանայ տուչինին հետ :

Թօքաթէն Սըլվազ գալու համար՝ սովորաբար հետեւալ ճաքան կը բռնեն . Թօքաթէն 9 ժամ հեռի թուրխալ դիւղը Ա. իջեվան : Ասկէ 3 ժամ հեռի Զէնկէլիւ — պէղ ըսուած ձորն , ուրկէ 3 ժամ հեռի Իշնէ — բազար ըսուած խանը Բ. իջովան : Ասկէ ալ 6 ժամէն | ըլվազ :

Խոկ Սըլվազէն թօքաթէ երթալու համար երեք տարբեր ճամբաններ կան . — Ա. ամառնային ճանապարհ՝ որ Սըլվազէն 12 ժամ երթալավ կ'Յնան Ղարխըն դիւղը , ուրկէ ալ 9 ժամէն կը մոնան թօքաթ : Այս ճանապարհին մէջ Սըլվազէն 3 ժամ հեռի թէ որ ճամբէն խոսուրելով 3 կամ 4 ժամ աջ կողմն երթաս , Աստիիկ կամ և ըլտրզ ըսուած լեռը գէմի կ'ենիէ՝ որ հոչակաւոր եղած է իր քաղցրահամեւ արծաթավտակ ջրերու հարուստ ակերովը . (Կըսուի որ հին կուապաշտ թագաւորներն իրենց ապարաններն երթեմն աս լեռանը վրայ հաստատած էին . արդարե ալ 1866 ին ամերիկացի ճանապարհորդներ հնութեան շատ մը նշաններ գտան ասոր վրայ) : Բ. միջին ճանապարհ՝ որ Սըլվազէն 5 ժամ հեռի գէպ ՚ի Ղարայ — ճէօրէն դիւղը $3\frac{1}{2}$ ժամու չափ հեռի իջեվան կընեն . անկէ Զամլը — Պէլ ըսուած անտառն՝ որուն մէջ պատուական ջուրերու շատ մը ակեր կան , ուրկէ օձապասյա ու նեղ ճամբաններու մէջէ երթալով կ'իջնան Պօխս ըսուած դիւղը Բ. իջեվան . ասկէ ալ 6 ժամէն կը մոնան ՚ի թօքաթ : Գ. ձմեռնային ճանապարհ , $4\frac{1}{2}$ ժամու մէջ կ'երթան Սըլվազ — խանը կոչուած վայտաշէն պանդոկն՝ որ շինուեցաւ 1854 ին ,

Աստղիկ գետին ութ կամարեայ հաստահեղոյս և կոփածոյ քարերով շինուած կամրին մէկ կողմը, ուրկէ^{1/2}, ժամ հեռի ժայռի մը տակ կը դանուի ահաւոր խորութեամբ փապար կամ վիճ մը լի բորակային ու ծծմբային ջուրերէ բիւրեղացած և վերէն՝ ՚ի վայր կախուած սիւներով, ուրկէ երբեմն երբեմն որոսման ահագին ձայներ կը ըսուին, և որուն սաստիկ խորութեան ու մթութեան պատճառաւ ձէնէնէնչէ+ անունը տուած են : Այս վիճէն 100 քալ հեռի կը դանուին հանքային և առողջարար ջուրերու տաք ջերմուկներ, որոնց մէջ ամենէն մաքուրն ու օդտակարը ջէփէ — ջերմուկ ըսուած ջերմուկներն են՝ որ կը դանուին ձէնէնէնչէն քառորդ մը հեռի րարձրաւանդակի մը վրայ: Երլարդ խանէն ալ Յ ժամ հեռի դանուած Զիֆիկ — քէյօ ըսուած հայաբնակ դիւզն իջեվան կընեն, ուրկէ Յ ժամէն կը հասնին ՚ի թօքաթ :

Յունուարի 21 ուրբաթ առոտու ժամ 1/2 ին ճամբայ ելանք Տէլիք — թաշ երթալու համար 10 ժամ . հեռի, և նոյն օրը ժամը 12 ին մոտանք ու գիշեր կեցանք . Տէլիք — թաշ՝ 110 տունով տաճիկ դիւղ մ'է . ունի մէկ մղկիթ Քէ-Շէ-Շէ-Շէ — աէլուր անունով . բնակիչներն երկրագործ են . բոլոր տանեաց վրայ յարդի կոյտեր կան :

Յունուարի 23 շաբաթ առոտու ժամ 3^{1/2} ճամբայ ելանք Ալաճա խան երթալու համար 10 ժամ հեռի, և նոյն օրը ժամ 10 ին հասանք ու գիշեր կեցանք : Այս դիւղը շինուած է ձորի մ. ջ 33 տունով, աղբիւսի պէս տեղ մը, ունի մէկ հետեւէ, մէկ իջեվան, որ կ'ըսուի Ալաճ-ին . վասն զի աւաճ քարերով շինուած է . ասի ամրակառոյց մեծ շէնք մ'է Սուլթան Մուրատէն նորոգած և կրնայ քանի

մի հարիւր ձի պարունակել։ Զուրը լաւ, օդը բնակչաղ անհոգութեամբը գէցած, վասն զի փողոցները լի են ապականութեամբ։ Բնակիչները երկաթաղործ են և վայրենի։ Կանայք գլուխնին խոշոր կը կապեն, մեծ ու կրկնած ալ ֆէուր կը դնեն և ընդհանրապէս ոտքերնին բռպէն։

Յունուար 26 կիրակի առոտու ժամ 3 ½՝ ճամբայ եւ լանք Հասան — չէլէպի երթալու համար 7 ժամ հեռի, և նոյն օրը ժամ 8 ½ ին մոանք ու դիշեր կեցանք։ Չորին մէջ երկու լեռներու զառիվայրին վրայ շինուած ֆէուր դիւղ մը է 45 տունով, որոնց մէջ 3 ալ հայու տուն կայ. տուներն ընդհանրապէս գետնափոր շինուած են, տանիսներնին հողու հաւասար։ Ունի 100 բնակիչ՝ որ ամառը դաշտը կ'ենեն. կանայք չեն փախչիր, և մէր չունին, մէկիթ չըկայ, երեք աղրիւր կայ, մէկ կամուրջ դիւղին մէջ, մէկ կամուրջ ալ Հիւ-+ ուրեւէ ըսուած տեղը՝ կը լուսուած գետակին վրայ շինուած։ այս ջուրը դիւղին մէջն կ'անցնի և բաւական լաւ է, զոր դիւղայիք կը դործածեն. Ըդը աղէի է։ Ոյս դիւղը յաւաշադոյն լուս ։ կ'անուանէր. իսկ Սուլման Մուրատ հոս մասնելէն ետքը Հասան — իւլուս անունն առաւ։ Հոս քանի մը հիւանդ նայեցայ։

Յունուար 27 երկուշարթի առոտու ժամ 4 ճամբայ ելանք Հէքիմ — խան երթալու համար 4 ժամ հեռի. նոյն օրը ժամ 8 ին մոանք ու դիշեր կեցանք։

Ճամբուն վրայ աջ կողմը կիյնար Ջերէ — սույը ըստ ած գետակն՝ որուն եղերքէն անցանք։

Հէքիմ խան բարձր լեռան մը ստորոտը բլրակներու վրայ շինուած է, օդն առողջ, ջուրը գէշ։ Ունի 200

տուն քրդաց , 20 տուն հայոց , վորք շուկայ մը . մէկ քարաշէն ամրակառոյց մէկի՛՛ , իջեվան մը՝ Հեմք — խուզ անուն , որ լքեալ ամայի իքը արտաքնոց կը գործածուէր .

Յունուար 28 երեքարթի առտու ժամ 2 ճամբայ ելանք իշի — քէօյ երթալու համար 8 ժամ հեռի : և նոյն օրը ժամ 10 ին մոտանք ու դիշեր կեցանք .

Հէքիմ — խանէն մինչև իշի — քէօյ թէ՛ ճամբուն վրայ և թէ՛ կողմնակի տեսնուած գիւղերն իրենց հեռաւորութեան չափովը հետեւաներն են .

4 ժամ հեռի աջ կողմը Մօլլա-Եռուսովորու քէօյ , 1/4 ժամ հեռի ճամբայէն .

4 1/2 " " ձախ " Քընչիւ — քէօյ , 1/2 ժամ հեռի ճամբայէն .

5 " " " Քըշլա — քէօյ , 1/2 ժամ հեռի ճամբայէն .

6 1/2 " " ճամբուն վրայ Եօքարը — Ալուլմինի .

7 " " " Աշաղը "

Հէքիմ — խանէն մինչև իշի-քէօյ ճամբաները միշտ ել և էջ են , անանկ որ շարունակ լեռներ դառնայու է .

Իշի — քէօյ կամ Ըւզուրլու — օղի — քէօյի յեռան վրայ շինուած 120 տունով Պըրը պաշտ գիւղ մ'է , մէկ հայու տուն միայն կայ . ունի մէկ մզկիթ , մէկ աղբիւր , ջուրը լեռնէն կուդայ և բաւական աղեկ է . օդը աղէկ , բայց ամառը շատ տաք կ'ըլլայ և ջերմային հիւանդութիւն պակաս չէ : Բերքերն են . ցորեն , դարի , բամբակ : Գիւղէն քառորդ մը հեռի Նէյկերլի ըսուած տեղին վրայ է դերեցմանատունը : Գիւղէն կէս ժամ հեռի գետակ մը կայ իշչէ անուն՝ որ Եփրատ կը վազէ , այս գետակին եղերը բոլոր արտեր են , ուր ոչխարներ և ուրիշ կենդանիներ կարածին :

Յունուար 29 չոքեքշաբթի առտու ժամ 3 ճամբայ
ելանք կիւմիւշ — մատէն երթալու համար 9 ժամ հեշտի .
և նոյն օրը ժամ 11 ին մոտանք ու գիշեր կեցանք :
Էշի — քէօյէն մինչև կիւմիւշ — մատէն ճամբուն վրայ
և թէ՛ կողմնակի կը գտնուին .

2 ժամ հեռի ճամբուն վրայ Մէօյիւտիւ չայ(գետակ մը)
2 " " աջ կողմը Մութմուր
4 " " " " Տէրէկէզէր
5 " " ձախ " Բէրէլի
5 ½ " " " " Մէհմէտ ուշաղը
7 " " " " Սարանըի
7 ¼ " " " " Տէնիզի
9 " " ճամբուն վրայ Մուրատ չայ (1) ձորի
մէջ , որուն աջ եզրն եկանք միգապատ լեռներն 'ի վար
իշնալով գետին միւս կողմի լեռանը վրայ կ'երևայ կիւմիւշ — մատէն գիւղաքաղաքը . Հոս գետը նեղ ու բաւական խոր է , երկու եզերքին վրայ լեռներ կը բարձրանան՝ որ հին ատե՛ները Աւագան կը կոշուէին : Այս գետին վրայէն տեսակ մը մեծ ու տափակայարկ նաւերով գիւղաքաղաք անցանք ու Մատէն ելանք :

Կ Ի Ի Մ Ի Ի Շ-Մ Ա Տ Է Ն (Կ Ա Պ Ա Ն)

Եփրատի ձախ եզրը լեռան վրայ 750 տունով գիւղաքաղաք մ'է . ունի 200 տուն տաճիկ , 380 տուն Հայ , 170 տուն յոյն , ընդ ամենը 7000 բնակիչ և ըստ մեծի մասին հանքահան : 2 մզկիթ , մէկը քարաշէն անուանեալ Եռուսանի Զօռու Քոշա հոգու : միւսը փայտաշէն

(1) Գրքիս վերջը պիտի նկարագրեմ այս գետը զատ յօւածով մը :

է . 2 չայոց և 2 ալյունաց քարաջէն եկեղեցիներ կան :
 2 բաղնիք , 4 հացագործի փոռու . 100 խանութով շու -
 կայ մը . և Պօլսոյ նման դերեզմանատուներ : 0դը . շատ
 լաւ չէ և ջերմ շատ կայ . ձմեռը միշտ միգապատ է ,
 ամառը շատ տաք . ջուրը Եփրատ գետինն է . Եփրա -
 տը կը սառի ձմեռն և ոտքով կ'անցնուի վրայէն Քա -
 ղաքացիք կը պահեն այս սառն՝ ամառը գործածելու
 համար : Եփրատին երկու եղերքի լեռներուն վրայ ,
 մանաւանդ գիւղաքաղաքին լեռան վրայ , հանքահան -
 ներն այրեր ու գուբեր փորած են արծաթ ու երկաթ
 համելու համար , մէկ կողմէն ալ բանւորներու բազմու -
 թիւն ամեն օր աւելի փորելու վրայ էին . Այս լեռնե -
 րուն մէջ դժոնուած արծաթի ու երկաթի բովերուն
 համար գիւղաքաղաքն ալ լուսն անուանած է . Հիմա
 այս հանքերէն քիչ բան կ'ենէ , վասն զի առաջներն այս
 կողմերն անհատնում անտառներ կային , բայց շուայլա -
 բար ու անկանոնաբար կտրելով և ետեւէ ետեւ նորե -
 րը շը տնկելով սպառած են . ուստի հանք հանելու հա -
 մար պէտք եղած փայտն ու ածուխը հեռուներէն բե -
 րել կը պարտաւորին : Ասկէ ՚ի զատ հանքահաններն
 անհմուտ մ . րդիկ ըլլալով՝ հանքս բանական կանոնաց
 համեմատ չեն աշխատիր : Քաղաքէն քառորդ մը հեռի
 Տէկէմէն Պատար անուանեալ տեղին վրայ արծաթի + հնաէ
 մը կայ , որ տարին 200 կամ 300 հոխայ արծաթի կը զտէր :
 Քաղաքն իր սահմաններով լեռնային ըլլալով՝
 արտ ու պարտէզները քիչ են . ուստի պտուղները հա -
 զուագիւտ են և միայն կանանչեղէններ՝ դանիլնան , ըսդ -
 նու , դանեայ բաւական կըլլան : Ցորենն ու ուրիշ ասոր նը -
 ման բաները գիւղերէն կը բերեն , մանաւանդ Խարբեր -
 դէն , և միրդը՝ Արապկելէն :

Յունուար 30 հինգշաբթի առատու գիւղամ 2¹/₂ ճամբայ

Ելանք Խարբերդ երթալու համար 40 ժամ հեռի, և
նոյն օրը ժամ 41 ին մտանք: Ճամբան ժամ մը շարունակ
քարաշէն էր: Մինչեւ Խարբերդ քանի մը գիւղեր կան,
որոնցմէ մէկն է Խուլա: Հայոց գիւղն՝ որ Մատենէն 8
ժամ հեռի ճամբուն վրայ է, ուր կը գտնուի Ս. Գէոր-
գայ մենաստանն՝ որ կը կոչուի նաեւ խուլա իամ Խուլայ էնու:

Խ Ա Ր Բ Ե Ր Դ Ն Ա Հ Ա Ն Գ (4):

Այս նահանգը լեռներով շրջապատեալ լայնածաւալ
դաշտավայր մ'է Խորբոռ Օլսուտ անուն, 'ի հնումն Մեծ
Հայոց աշխարհին Հանձիթ գաւառն էր: Եփրատ գե-
տին Պայազիտէն եկած ճիւղն՝ որ Որեւելեան Եփրատ կամ
Մուրատ կըսուի նահանգին մէջէն անցնելով կ'երթայ
կը խառնուի Արեւմտեան Եփրատ կամ Ֆրատ ըսու ած
ճիւղին հետ, Նահանգին լեռներուն վրայ մարած հրա-
բուղիսի հետքեր կան, տեղ տեղ ալ երկաթի, պղնձի
ու արծաթի հանքերու նշաններ:

Խարբերդի ընդարձակ դաշտին մէջ Մուրատ գե-
տէն զատ վտակ չը գտնուելուն պատճառաւ, գետէն
հեռի կողմերուն մէջ առատ ջուր չիկայ: ցորեն, որիզ,
բամպակ, շուշմայ, գարի, բակլայ, ոսպ, մանաւանդ
կտաւատ առատ են: բաւական մրգեղէններ, ընդե-
ղէններ ու խոտեղէններ ալ կ'ըլլան, կը բուսնի նաեւ
շանաճանճի (ինէ օնու իամ ինէ իւրէն) տունկը, (ricinus
communis) որուն սերմէն իւղ մը կելսէ հինոր եղբ ըսուած
(huile de ricin) որ կը գործուի վառելու և լուծողական
դեղ մ'է:

(1) Այս մօտերս այս նահանգին անունը կոխուելով
Մամուրէթ-իւլ-ազիզ» ըսուեցաւ:

Այս նահանգը զուրկ է անտառէ :

Խարբերդի դաշտն երկուքի կը բաժնուի . Ուշ—Օվա և Քուղա—Օվա , որոնց առաջինը մեծ ու բնիքարձակ է և ջրոա , Մէզէրէի հարաւային . Կողմը . Երկրորդը՝ չոր և ո՛չ այնչափ ընդարձակ , Մէզէրէի հիւսիսակողմը .

Ունի 600,000 էն աւելի բնակիչ , տաճիկ ու Հայ , որոնք ընդհանրապէս անկիրթ են : Եը գտնուի նաեւ յօյն և ասորի .

Խարբերդ կը բաժնուի 7 խաղաներու :

1 Նէֆսի Խարբուդ

2 Մալալիա

3 Արապկեր

4 Ջըմը կէզէք

5 Էկին

6 Շերօ

7 Աղճատաղ } ապստամբ քրթաց բնակութիւն :

Նէֆսի Խարբուդ ալ 5 Նահիէյի բաժնուած է .

1 Հէրտի

2 Պէրամաս

3 Ալօշլու

4 Բէրիքեան

5 Զէյվէ

Խարբերդի դաշտերուն մէջ 366 ի չափ գիւղեր կան .
որոնց գլխաւորներն են .

Հողի 2 ժամ հեռի Խարբերդ քաղաքէն :

Գիւնկ	5	"	"	"
-------	---	---	---	---

Երդմիկ	3	"	"	"
--------	---	---	---	---

Խօքարը—Խօխ	5	"	"	"
------------	---	---	---	---

Աշաղը	5	"	"	"
-------	---	---	---	---

Սշաղը—Մէզէ-				
-------------	--	--	--	--

ըէ , կամ Աղա-	1	"	"	"
---------------	---	---	---	---

վատ Մէզէրէսի				
--------------	--	--	--	--

ԲԵՐԾԵՆՅ	$\frac{4}{1}$	ԺԱՄԻ ՀԵՌԻ ԽԱՐՔԵՐԴ ՔԱՂԱՔԵՆ :
ՀԱՊՈւԹԻ	5	" " "
ԶԱՐԴ-ԱՐԻՀ	5	" " "

Խ Ա Ր Բ Ե Ր Դ

ԼԵՌԱՆ ՎՐԱՅ ՀԻՆՌՈՒԱՃ ԲԵՐԴ-ԱՐԵՐՈՐ ՔԱՂԱՔ մ' է 6000 ՄՈՒՆՈՎ , ՈՐՈՆց 4200 ը ՄՈԱՃԿԻ , 1440 ը ՀԱՅՈԳ , 360 ալ ԱՍՈՐԵՐՈԳ , ՑՈՒՆԱԳ ու ՀՈՌՈՎՄԵԶԱԿԱՆ Եւ ԲՈՅԹԵՄՈՒԱՆ ՀԱՅՈԳ :

ԲԵՐԴ-Ը ՔԱՂԱՔԻՆ ԱՐԵՎԵԼԵՎԱՆ ԿՈՂՄՆ է , ՈՐՈՒՆ ՄԵջ ՄՈՒՆԵՐ ալ կան :

ՏՈՒՆԵՐԸ ՄԻԽԱՅԱՐԿ ու ԿՐԿՆԱՅԱՐԿ են և աղիւսակերտ : Տանիքները հողամած , փողոցները նեղ , անկանոն և քարայատակ . ՄԵՊԵՔԻ կողմէն քաղաքը մտնալու . ՀԱՄԱՐ լայն պողոտայ մը կայ . բայց քարայատակ չէ : Ունի 10 մզկիթ , 5 եկեղեցի ՀԱՅՈԳ և ասորւոյ , դպրոցներ , 4 բաղնիք , 10ի շափ խան , որոնց 2 ը միսյն քարաշէն է , միւները աղիւսակերտ . ՊԵՂ-ՇԽՆ մը , հրապարակ մը բաշտ - մշտակամ անուն , ուր կը ծախեն բամպակ , ցորեն և այլն : Փայտաշէն շու կայ մը , ուր կը գտնուին գերձակ , կոշկակար , ներկարար , ոսկերիչ , մրգավաճառ , սեղանաւոր , պէղու , բաղաւհակիճ , ևլն : 6 կամ 7 աղբիւր այլ և այլ թաղերու մէջ . ասոնց ջուրը շատ լաւ չէ . օդը առողջ է , ձմեռը սաստիկ ցուրտ կըլլայ : Բնակիչներն անկիրիթ են , կանայք ընդհանրապէս լկտի , գլուխնին Տըրապիգոնի լաշակով ծածկեալ :

Խ շաղը մէզէրէ դաշտին մէջ գիւղ մ' է ԽԱՐՔԵՐԴ-ԷՆ 1 ԺԱՄԻ ՀԵՌԻ , ուր կեցանք մինչեւ փետրուար 4 երկուշարժի : Հոս կը նստին նահանգին կուսակալն ու բանակին սպարապետը : Ունի 600 տուն բնակիչ , որուն 500ը ՀԱՅՈԳ և 100 ը ՄՈԱՃԿԱԳ : Հոս քանի մը տուն հոռովմէ-

ական հայեր ալ կան : 2 ճամի աղիւսակերտ և մէկ ալ նոր քարաշէն , 1 հիւանդանոց աղիւսակերտ , 1 փոքրիկ շուկայ , 4 բաղնիք , 2 եկեղեցի Հայոց , 1 եկեղեցի հրովարմէականաց , 1 ժողովարան բոօթէսթան Հայոց , 2 դպրոց , 1 նորաշէն իջեվան շնչէլլի խան անունով : 1 ճէջն հան աղիւսակերտ և 1 զինուորանոց հիւսէնլէր անուն գիւղին մէջ՝ որ մէկ քառորդ հեռի է Մէղէրէէն : 2 աղբիւր , որոնց ջուրը լեռնէն կուգայ , հորեր . Զուրը լաւէ , օդն առողջ : Հոս շատ հիւանդներ դարմանեցի և 250 ի շափ ալ պատուաստ ըրի :

Փետրուար 4 ժամ 3 ճամբայ ելանք Քէղին երթալու համար 6 ժամ հեռի , և ժամ 9 ին մտանք՝ կէօրէտ+ էտէւ անուանեալ լիճը անյնելնուս կէս ժամ անդին , և գէշեր կեցանք:

Քէղին՝ ձորի մէջ 60 առունով քրդաց գիւղ մ'է ծառերով զարդարուած , մեծ մասը թթենի . ունի մէկ հողաշէն փոքրիկ մզկիթ մ' և մէկ ալ փոքրիկ բաղնիք . բաւական անուշ ջուր մը . Այս գիւղը ձորի մէջ շինուած ըլլալրւն՝ ամառը սաստիկ տաք կ'ըլլայ . Բնակիչներն երկրագործ են և խիստ անկի թ . Գիւղը ճամբրուն վրայ ըլլալրուն՝ գիւղացիք ուրիշ քրդերու պէս ամառ ժամանակ դաշտերը չեն ելներ , միշտ գիւղին մէջ կը մնան՝ եկող գացող ճամբորդներէն օգուտ քաղելու համար . Քէղին՝ կէս ժամու չափ հեռի է կէօրէտ+ ըսուած լիճէն . այս լիճը՝ որ ծովակ կամ լճակ խարրերդի կը սուրի և հին ատեն ծովք կը կոչուէր , կը գտնուի երկու երկայնանիստ ապառաժուտ լեռներու մէջ , որ ՚ի հնումն կը կոչուէին Ծովուց լերինք :

Այս լիճն ունի 3 $\frac{1}{2}$ ժամ երկայնութիւն և 1 ժամու չափ լայնութիւն . Զուրն աղի է և պայծառ , յատակը քարոտ և աւազուտ . մէջը կը գտնուին Խոռոր անունով

տեսակ մառաւտ մանր ձուկեր , որ իրենց համովն ու մեծութեամբը կի-դ-ւ . Դաւուած ձկան կը նմանին .

Փետրուար 5 Երեքշաբթի ժամ 3 ճամբայ ելանք Պաքրը—Մատէն երթալու համար 6 ժամ հեռի , և նոյն օրը ժամ 9ին մտանք ու գիշեր կեցանք :

Քէղինէն մինչեւ Պաքրը—Մատէն՝ ժամբան 3 խան կայ + Այս ճամբուն վրայ կը գտնուի Մէրոպ—Պողը (1) ըսուած բարձը լեռը . այս լեռն անցնելու համար մէկ ու կէս ժամ պէտք է , վասն զի ճամբան անհարթ ու առապար է , մանաւանդ լեռան կէս մէջքերուն վրայ , ուր անցնելու ճամբան հաղիւ կէս կանգունի չափ լայնութիւն ունի և ծուռ ու ապառաժուտ է . Զմեռ ժամնակ լեռան այս նեղ ճամբան բոլորովին կը գոցուի ձիւնով և հետք ալ : Յ մնար և անցնելը խիստ դժուարին . մանաւանդ ձիւնախառն փոթորկի ժամանակ միշտ վրտանդաւոր է , վասն զի ճանապարհորդը տեղացող ձիւնին սաստիկ բայխումէն չը կինար աչքերը բաց բռնել և խափանեալ ճանապարհին հետքը որոշել և մէկ կողմէն ալ հովին ուժգնութեանը չը կրնալով դիմադրել , կը չփոթի ու ճարը հատած կը զլոտորի պարսպի պէս բարձրացած այս լեռան վրաէն մինչև ստորոտը . Ետեւէն ալ կ'իջնէ կը հասնի լեռան ինքնարեկ ապառաժը , որ իրեւ տապան անանուն կը ծածկէ մշտն ենաւորապէս թշուառ ճանապարհորդին ոսկորները + Շատ ճանապարհորդներ նմանօրինակ ճակատագիր կրած են այս լեռան ստորոտն , ուստի շատ անդամ ճանապարհորդները կը պարտաւորին օրերով սպասելու լեռան մէկ կողմը , մինչեւ օդը հանդարտի , որով կարող ըլլան

(1) Այս լեռն Աղձնեաց լեռներուն մէկն է :

անդամաս անկէ անցնելու : Բայց ես միայնակ թաւալեցի յանգէտս այս գժուարուղի լեռն ասանկ ձիւնաբեր ու փոթորկալից ժամանակ մը . և օր մը սպասեցի Պաքըր—Մատէն գիւղին մէջ ուղեկիցներուս գալստեանը :

Պաքըր—Մատէն կամ Արդանա—Մատէն՝ հանգիապակաց լեռներուն վրայ շինուած գիւղ մ'է , որուն տուներն այս իրարու դէմ ցցուած լեռներուն գագաթէն մինչեւ ստորոտը , այսինքն , մինչեւ ձորը շինուած են , ուրիշ կ'անցնի ջուր մը : Ունի 800 տուն , որոնց 200 ը տաճիկ , 200 ը հայու և 400 ալ յունաց են . իրաքանչիւր ազգաց թաղերը զատ են . կը գանուին խառն տուներ ալ : Ունի 3 մզկիթ , 1 Հայոց և 1 ալյունաց եկեղեցիներ , 3 բազնիք , 1 շուկայ . կան արտեր ու պարտէցներ : Օդն աղէկ չէ . ամառը սաստի՛ տաք կ'ընէ . Չուրն ալ աղէկ չէ , բայց Տեգրիս (⁽¹⁾) գետին ջուրը կը դործածեն , որ գիւղին արեւելեան կողմէն կ'անցնի , ուր 10 կամ 15 կանգուն լայնութիւն ունի և ծուկեր ալ կը պարունակէ բնակիչները բաւական կրթուած են . ասոնց շատը հեռաւոր քաղաքներէ հոս փոխադրուած են և առհասարակ հանք հանելու կը պարապին : Թէ՛ գիւղին և թէ՛ շրջակայ լեռներուն մէջ առաւ պղնձի հանք ըլլալուն՝ լեռներուն վրայ շատ տեղ այրեր ու գուբեր փորած են , մանաւանդ Մ-Նշր գիւղին լեռան վրայ : Գիւղին ամեն թաղերուն մէջ խոշոր խոշոր պղնձածախառն հանքայինն քարեր ձգուած են , որ շատ մը պատերու ու փողոցներու մէջ ալ գործածուած են : Այս հանքը շատ հարուստ է . տարին մինչեւ 2,000,000 հովայ պղինձ կելնէ , որուն մէկ հովային գինը՝ 12 դո-

(1) Գրքիս վերջը պիտի նկարագրեմ այս գետը զատ յօդուածով մը :

ըսւշի կրյայ տէրութեան . Այս ամեն հանքառատ լեռ-ներն որ երբեմն երկնաբերձ ծառերով ան սառացեալ էին , այսօր չոր ու լերկ ապառաժուտներ են . վասն զի դարերէ ՚ի վեր հանքահանները հանած պղինձնին զտելու համար՝ հալեցնելու կրակի տեղ զանոնք անխը-նայ կտրտած ու վառած են , առանց անոնց տեղ նոր ծառեր տնկելու :

Գիւղէն մէկ քառորդ հեռի դէպ ՚ի Արղըն երթա-լու ճամբուն վրայ ջիգրիս գետին եղրը՝ ճարտարածե-քարաշէն նոր գործարան մը կայ պղինձ հալեցնելու (+ հանկ) :

Փետրուար 6 չորեքշաբթի առտու ժամ 5 , ճամբայ ելանք Արղըն երթալու համար 4 ժամ հեռի , եւ նոյն օրն ժամ 9 ին մտանք ու դիշեր կեցանք :

ԱՐԴՆԱ ԿԱՄ ԱՐԴԲՆԻ ԿԱՄ ԱՐԿՆԻ

Երկնեղ բարձր լեռան մը մէկ երեսին վրայ շինուած գիւղաքաղաք մ'է . ունի իբր 600 տուն , որոնց 400 ը տաճկաց է և 200 ը հայոց . Այս քաղաքը 3 թաղերու կը բաժնուի . վիրին , միջին և ստորին . Ունի 5 մզկիթ . 2 եկեղեցի , մէկը վերին թաղին մէջ և միւսը միջինին մէջ , 1 բաղնիք . 0դը քաջառողջ է և ջուրը պատուականադոյն , որ կուգայ Ան — ուղը ըսուած լեռնէն . Լեռանը ներքեսէն , այսինքն , հիւսիսային կողմէն կանցնի ջիգրիսի մէկ վտակը Պողին — առց ըսուած :

Այս լեռան երկնեղ գագաթներուն մէկուն վրայ կո գտնուի բարձրահայեաց Աստուածածնսյ վանքը , և ս դլխուն վրայ ալ զօրաւոր բերդ մը հին ատենէ ու ած , որուն մէջ տաճկի տուներ կան 30 ի չափ . մէկ ալ ուխտատեղի վէ-իֆէ-ոսկէր բեղաժէրին գերեզ-

լ :

ԹԵՇ լեռանը ստորոտն և թԵՇ Արդանա բոլոր գիւղը
բաղմաքեր այգիներով, արտերով ու պարտէզներով զար-
դարուած են : Բերքերն են ցորեն, գարի և ամէն տե-
սակ բանջարեղէններ . միրգեր, մանաւանդ խաղող . ո-
րուն մէկ ողկոյզը մէկ երկու հոխայ խաղող կուտայ .
ասոր գինին . առատ, սև ու ընտիր է, զոր կաւակերտ
անօթներու մէջ լեցուցած կր զրկեն շրջակայ քաղաք-
ները : Այս կողմերուն մէջ բամպակ ալ կը մշակեն : Այս
գիւղաքաղաքիս լեռները պղնձի, արծաթի և ոսկւոյ
հանքեր կը պարունակեն :

Փետրուար 7 հինգչարթի առառու ժամ 2 ճամբայ
ելանք Տիւրպէքիր երթալու համար, 12 ճամ հեռի +
նոյն օրը Տիւրպէքիրի կուսակալը, քաղաքացիք և
զինուորական դասը նուագարանով դիմաւորեցին մեզ,
և մեծ հանդէսով մտանք քաղաքը ժամ 11 ին :

Արդընէն մինչե Տիւրպէքիր՝ ճամբան շարունակ
դաշտային է . բնաւ լեռ չըկայ . Արդընէն մէկ քառորդ
ժամ հեռի ճամբուն աջ կողմը Պէտուչ անուն գիւղը
կայ + 8 ժամ հեռի դարձեալ ճամբուն վրայ գետ մը
կայ Տէ՛ւ — Էվլուի — լոյ անունով, որուն վրայէն ան-
ցանք : Այս գետէն ճիշդ 4 ժամ անդին էր Տիւրպէ-
քիր քաղաքը :

Տ Ի Ա Ր Պ Լ Ք Ի Բ (4) :

Այս անունով նահանդին մայրաքաղաքն է, որ կը-

(4)Այս բառն Երէտ-Պէտէրէ ըսել է . վասն զի՞ նախ Պէքիր
անուն մէկը զանի տիրապետած է : Նաեւ կը նշանակէ Երէտ-
Կոյս : վասն զի՞ Օսմանցոց անցնելէն ՚ի վեր օտարի ձեռք
անցած չըլլալով՝ որպէս թէ կոյս մնացած է :

սուի նաև Ամիթ կամ Գարա — ամիթ։ Աշխարհագրական լայնութիւնն է 31°55' և երկայնութիւնը 31°31'։ Ի հնումն կըսուէր Տիգրանակերտ, վասն զի Հայոց Ա. Տիգրան թագաւորը շինած է, որ և Մեծ Հայոց Աղձնիք նահանդին գլխաւոր քաղաքն էր։ Այս քաղաքը պարսպապատ է և բերդաւոր, և Տիգրիս գետին ձախակողմը մէկ քառորդ հեռի լայնանիստ քարակտուր բարձրաւանդակ տեղի մը վրայ շինուած։ Պաղտատէն ճիշդ 625,000 մէթրօ հեռի և անոր արևմտեան հիւսիսային կողմը։ Այս բարձրաւանդակ տեղին նիւթը մարած հրախուղիսի լավա է։ Քաղաքին շրջապատը 1 ½ ժամ կը տեէ, որուն արևելեան կողմը գետեզրէն պատի պէս բարձրացած զառ ՚ի վերի մը գագաթն է։ Պարիսպը խիստ բարձր է և ստուար մինչև 10 կան գուն, խոշոր, սև և սպնդանման քառակուսի քարերով շինուած, որոնք գուցէ այն մարած հրաբղխային լեռան քարերն եղած ըլլան։ Ունի 72 բարձրութ մեծ աշտարակներ, որոնց 12 ը աւելի մեծ են։ Այս աշտարակները կրկնայարկ են և ունին քարաշէն կամարներ։ Պարսպին վրայ տեղ տեղ երկու գլխով և երկու պսակով արծիւներ քանդակուած են։ կան նաև նշանագրը եր եռանկիւնաձեւ և Քի-Քի գրեր։ Ունի 4 դուռ։ Մերոյն +աբուսը, հարաւակողմը։ Ուն-+աբուս, արևմը տեան կողմը։ Տ-ո կամ Երբուած +աբուս, հիւսիսակողմը։ Եւն +աբու կամ Շ-ու +աբուս, արևելեան կողմը։ Բերդը՝ քաղաքին արևելեան հիւսիսային կողմն՝ Եւնի քարուին ու Տաղ քարուին մէջ տեղն է։ ունի 4 դուռ, որոնց երկուքը քաղաքէն դուրս կը բացուին և կըսուին Օլբուած +աբուսէ և Ֆէնան +աբուսէ, զորս միշտ փակեալ կը պահեն և միայն պէտք եղած ատեն կը բանան։ Միւս երկու դուռներն ալ քաղաքին մէջ կը բացուին և կըսուին Ալազան+է +ալէ +աբուսը և Եւ+աբուսէ +ալէ +աբուսը։

Բերդին մէջ կան Ալթուն սէրայը՝ որ է փաշային գուռը կամ պալատը։ Առլիթան սէրայը՝ որ է փաշային կանանց բնակարանը (հարեմ)։ Փաշային պալատը (հարեմ), և վէրան տակու, որ բլուր մ'է, ուրկէ հանդիսաւոր օրեր թնդանօթ կը նետեն ։ Այս վերջինը քաղաքին հին բերդն է քայլայեալ։ ասոր աւերակներուն մէջ մինչև ցարդ կը տեսնուին հնաշէն եկեղեցւոյ մը խորաններուն տեղերը։ Բերդին մէջ կան նաև տաճկաց և հայոց տուներ, մզկիթ, հրապարակներ, բաղնիքներ և այլն։

Պատմութիւնը չը յայսնէր այս քաղաքին հնութեան ճիշդ ժամանակը, ըստ ոմանց ծիգրան թագաւորին դաստակերտն է, և քանի մ' անդամ վիլած է։ իր կերջին նորոգութիւնը վաղենտիանուներուն ժամանակէն ՚ի վեր է։ Այս քաղաքը զանազան աէրութեանց ձեռք անցնելէն ետքը՝ 958 ին անցաւ տաճկաց ձեռքն, որ և մինչև ցարդ կը տիրեն։

Օդը բաւական աղեկ է։ աշնան ժամանակ տենդ կը աիրէ։ Քաղաքին Ջրհորներուն ջուրը խմելու յարմար չէ։ ուստի հիները գրաէն քաղաքին մէջ ջրեր բերել տուած են, որք են։

Ա. Համբըրվաթ սույր, որ միւսներէն պատուական է և ամենէն աւելի կը դործածուի։

Բ. Փայաս սույր, բաւական աղեկ է և քաղաքէն կէս ժամ հեռի Ալի փունար դիւրջէն դալով մզկիթներու և բաղնիքներու բաժնուած է։

Գ. Քալէ սույր, չը խմուիր և ուրիշ պիտոյից համար կը դործածուի, բաղնիք և այլն։ Այս ջուրը բերդին մէջըն է, անյայտ ճամբով մը կուդայ և Օղուր քարուսիին տակէն դուրս ելնելով մէկ քանի ջրաղացներ կը դարձունէ։

Դ. Պալրքլը սույր, ասոր ալ ճամբան անյայտ է։

այս ջուրը յատուկ աւազաններու մէջ կը հաւաքուի ,
ուրիշ առնելով կը գործածեն ներկարարները , լաթ
լուազողներն և ուրիշներն իրենց զանազան պիտոյից
համար : Այս աւազաններէն դուրս խափելով առու մը
կը ձեւանայ , և Ասլիւանէն ու Թաղումիւնոյն անցնելով
քաղաքին մէջի ու դրսի ջրաղացները կը դարձընէ :
Բայց այս ամեն ջրերէն պատուականագոյնն ու անուշը¹
Տիգրիս գետին ջուրն է . զոր քաղաքին մեծամեծները .
բերել կուտան խմելու և կերակուրներու համար :
Տիգրպէքիր կը պարունակի 5700 ի չափ տուն և
35.000 ի չափ բնակիչ , որոնց՝
3000 տուն և 16000 բնակիչը թուրք(1) և քուրդ(2) .

(1) Թուրքերը հիմ Ակիւմացիներն ու Պարթեւներն են ,
որ հիմա Թուրք , Թաթար , Թիւրքմէն , Խոզպէկ եւ կամ
Ցաճիկ կը դրուցուին :

(2) Քուրդ կամ Քիւրտ անունն՝ որ ՚ի հնումն Մարք կը-
սուէր , կերեւայ որ Կորդուք կամ Կորդ հին հայկական ա-
նունէն յառաջ եկած է . Քրդաց ազդր Կրկուքի կը բաժնուի .
Վրանաբնակ (Քոչէր Եղիչ) եւ գիւղաբնակ : Վրանաբնակներն ի-
րենց ցեղերուն անունովը կը դրուցուին , զոր օրինակ . Ռըշ-
վանցիք , Մլանցի , Մանըքեցի (Տամինանեան ցեղին) , Մէնտէքչի
(մանդակունեաց ցեղին) եւլն . եւլն : Դիւղաբնակներուն ա-
նունները սովորաբար բնակած քաղաքներնուն առած են ,
զոր օրինակ , Խնուսցի , Մշեցի , Բաղէցի եւլն . կամ իրենց-
մէ շինուած ու ճանցուած նահանգին անունէն , զոր օրի-
նակ . Արլիվանցիք կըսուին Արլիվանի նահանգը բնակուները
(Պայազիտի վաշայութեան սահմանին՝ Արլիվան կըսեն քուր-
դերը) : Նոյնպէս ալ Ռոշկանցիք կըսուին Ռոշկան բնակողները
ողիշոյ խանին սահմանին , ուր կը գտնուին Բաղէշ , Մուշ ,
սուն եւլն , Ռոշկան կըսեն) : Կ'ենթադրուի նաեւ թէ
իվանցիները Արլիվունեաց ցեղէն եւ Ռոշկանցիները Ռըշ-
նեաց ցեղին սերեալ են . կրօնիւք մահմէտական են եւ

1500 տուն և 12000 բնակիչ հայ .

1200 " " 7000 " խառն ազգեր՝ թոյն , Քիլտանի(1) եւ Նաստուրի , Եագուալի(2) , Հրեայ եւ Արաբացի :

Կար 3500 զինուոր , որոնց 3000 ը հետևակ էր և 500 ը հեծելազօր . յատուկ զինուորանոց շրջալուն համար՝ զինուորները 5 մեծ իջեվաններու մէջ բաժնուած էին : Քազաքին տուներն ընդհանրապէս քարաշէն են գետնէն մինչև կէսը լաճար քարելով . կէսէն ալ մինչեւ առաստաղը աղիւսէ շինուած , ներսէն և դրսէն յարդախառն կաւով ծեփած . բայց հարուստներու տուներուն ներսի դին ճերմակ ծեփով ծեփած , տանիքներն ալյարդախառն կաւով շինուած են , զոր ամեն տարի կը նորոգեն ձմեռուան ձիւնն ու անձրեները ներս շրջազելու համար : Տուները քարաշէն ըլլալուն պատճա-

Շաֆի : Երկու լեզու ունին , մէկը բնիկ քրդաց լեզուն՝ որ զանազան լեզուներէ խառնուրդ մ'է եւ մանաւանդ պարսկերենէն . միւսը Զազա ըսուած լեզուն , որ առաջինէն բոլորովին տարբեր է . այս լեզուն քանի մը քաղաքներու քուրդերը միայն կը խօսին , թէպէտ եւ առաջին լեզուն ալ գիտեն :

(1) Քիլտանի եւ Նաստուրի մի եւ նոյն ազգ են կրօնքով բաժնուած . սամնք հին Քաղղէացիներ կամ Ասորեստանցիներն են : Նաստուրիները՝ Նեստորական են . Քիլտանիները Հուովմէական : Նաստուրիներուն պատրիարքը Մուսուլի Յալդոզ քաղաքը կը նստի , եւ Քիլտանիներուն պատրիարքը՝ Տիարպէքիր :

(2) Ես գուալիներն՝ ազգաւ նախնի Ասորիներն են , որ իրենց կրօնքովը Խաղուափի կամ Յակոբեան կը սուին , եւ շատ անդամ ալ իրենց ազգին անունովը Սուրեանի կը սուվին , որ ըսել է Ասորի . ասոնց ալ պատրիարքը Մէրտին կը նստի :

ռաւ ամառը շատ տաք կըլլաց բնակարաններուն մէջ՝ Քաղաք՝ ունի 46 մեծ մէկիթ և 20 մէսճիտ . ասոնց գլխաւորն է Ուլւ հ-դ ըսուածը՝ որ յառաջադրուն յունաց եկեղեցի էր Ս. Աստուածածնի անունով . նոյնպէս Գուր- շանը համար ըսուածը՝ որ հայոց եկեղեցի էր Ս. Թէոդո- րոս անուն . երկու եկեղեցի հայոց Ս. Սարգիս և Ս. Կիրակոս . 1 յունաց և 1 ալ քիլոայտոց եկեղեցիներ : Նախակրթական դպրոցներ իւրաքանչիւր ազգաց : Մեծ հրապարակներ՝ որք են . Բուլաճը , Պուշտոյ դուռը , Սեփ-հէ դուռը . ասոնցմէ մեծ է հենչ ւրիշ ըսուած հրապարակն՝ ուր կան կոչկավաճառներ և կտաւագործ- ներու կրպակներ . այս հրապարակը եէնի քարուի մօտ է : Պուղտայ պազարին մէջ Զիփտէ խանին քով կը գրտ- նուի ստորերկրեայ ճանապարհի մը բերանը . այս ճա- նապարհը մէկ քառորդ ժամ կը տեսէ , որ կը հանէ քա- ղաքէն դուրս թուեած ըսուած գիւղին մօտ կունենա- ւ- ի ըսուած տեղը : Կերևայ որ Պարսկաց ձեռոքէն քա- ղաքին պաշարման ժամանակ փախչելու կարող ըլլալու մոօք քաղաքացւոց փորած մէկ ճամբան է այս : Քա- ղաքն ունի ուրիշ վաճառանոցներ զանազան արուես- տաւորներու , կերպասագործ , վաճառանոց ոսկերչաց , խաղախորդք , ներկարարք . Ունի մեծամեծ եռայարկի ի- շելվաններ՝ որք են . Հուն հուն իսկ իսկ և Սե- պ-իւլ- իսկ : Այս քաղաքին և նահանգին բերքերն են՝ արմոտիք գրեթէ ամեն տեսակ , առատ ցորեն , սուսամ , բամպակ , զանազան տեսակ խաղողներ , խնձոր , տանձ , թուզ , դեղձ , նուռ , վարունդ , անուշ ու խոշոր ձմե- րուկ . որուն մէկ հատը մինչև 40 հոխա կը կշռէ : Հըռ- չակաւոր է բոլոր աշխարհի մէջ իր սեխը համովս ու մեծութեամբը մինչև 60 հոխայ : Տարուան բոյսն ա- նուանի է , որ գետնախնձորի պէս կը գործածուի և ան- չէ աղէկ է : կան նաև մեղք , մեղրամուի , ճերմակ նաւթ ,

հոչակաւոր է բոլոր աշխարհի մեջ Տիարպէքիրի Մանաւորին : Իան հարուստ աղէհանքեր : Գետէն առատ ձուկ կելնէ , որուն տեսակներուն անունները հետեւեալներն են . Շապօ , Զէլ , Ճէրտ , Սէրէտ , Եւլն և Ալուււոււր : Մեծ առուտուր ունի Լզմիրի . Հալէպի . Պոլայ , Տրապիդոնի , Լրպրումի , Պաղտատի և լն հետ . Կը զրկէ չէն , ուազւը , ալճու , ախորդէնէր չէնորդէն , մետաքսէ կտաներ , բրդեղէններ , հողէ և պղնձէ անօթներ , յահճուրին , ժիւուր , սեկ :

Այս նահանգին մեջ մանաւանդ՝ 'ի Տիարպէքիր վընասակար կարին մը կայ , որուն խայթուածոյն ցաւը 24 ժամ կը տեսէ . բայց երկրացիք խայթուածին վրայ կը քանին նոյն խնքն խայթող կարիճին իւղը՝ որ ցաւը կ'անցունէ :

Հոս 5 օր կեցանք . շատ մը հիւանդներ դամանուեցան և շատեր ալ պատուաստեցան :

Ժետրուար 13 չորեքշաբթի ժամ 4 ½ մելինեցանք Տիարպէքիրէն . նստանք լաստերու (+Ել+) կրայ՝ Տիգրիս գետով դէպ 'ի Մուսուլ երթալու համար : Այս լաստերը 4 հատ էին , իւրաքանչիւրը 12 տիկիրով (նույսամ) շինուած . տիկերը օդով ուռեցուցած և բերաններնին աղէկ մը սեղմած ու կապած էին , և այսպէս ուռեցած տիկերէն տաննական հաս իրարու քով մեկ գծի վրայ կապած , և դարձեալ 10 հատ տիկեր առաջնոյն պէս իրարու քով կապելով՝ առաջին կարգին ետեւը դնելով և առաջիններուն հետ կապելով՝ երկրորդ կարգ մը կազմած էին . այս եղանակաւ երրորդ , չորրորդ և այլն . մինչեւ 12 կարգ շինած էին , որով երկար քառակուսի լաստ մը ձեւացած էր . ասոր վրայ քովէ քով փայտեր դնելով յատակ մը շինած էին , և չորս կողմէն ալ մէկ

մէկ գերան բարձրացնելով՝ վրան վարագոյրով (նէնիւ-ք) դոցած էին . այսպէս շինուած լսատին վրայ աթոռներ ու բաղմականներ դրած էին հանդիսու նստելու համար . Այս լսատերը գետոյն ընթացքին հետ կը նաւէին . իսկ գետոյն հոսանքը խիստ դանդաղ եղած կողմերուն մէջ առաղաստ կը բանային ու թիակ ալ կը դործածէին . լսատերուն ծայրը զէկի տեղ թիաձեւ տախտակ մը կը դործածէին և լսատավարներուն ձեռքը մէկ մէկ ձող՝ միշտ կը կառավարէին ու կը կանոնաւորէին անոր ընթացքը , անանկ որ երբ լսատերը ջրին ընթացքին հետ դէպ ՚ի եզրը երթային՝ ձողերուն ծայրը ցամաքին կրթնցուներով ու հրելով եղրէն կը հեռացունէին զանոնք ու կրկին կը մոնէին ջուրին հոսանաց ընթացք՝ մէջ : Թէ որ տիկի մը օդը կապին թուլութենէն դուրս պարպուէր և տիկը պարպուէր , իսկոյն նոյն տիկին բերնէն կը փշէին ու կրկին կ'ուռեցունէին և նորէն կը կապէին բերանը . այս զործողութիւնը դիւրաւ ընելու համար՝ լսատը կաղմած ժամանակնին տիկերուն բերանը միշտ դէպ ՚ի վեր շարած էին . թէ որ մէկ կամ մէկ քանի տիկեր պատուելու ըլլային , կամ կը փոխէին ու նորը կը դնէին և կամ կ'սպասէին մինչեւ իրիկուան օթեւանը . և երեկոյէ երեկոյ երբ ցամաքը կ'երնէինք օթեւանելու , նորէն կուռեցունէին բոլոր տիկերը փշէլով՝ լոր ՚ի կէտ եղեալ տեղը հասնին՝ լսատերը կը քակեն ու կը ծախեն , վասն զի հոսանքին հակառակ չեն կրնար երթալ :

Տիարպէքիրէն մինչեւ Նինուէ ցամաքի ճամբով 84 ժամ կը տեւէ և 12 աւոր մէջ կրնայ երթալ մարդ . պյո լսատով գետին վրային 70 ժամ կը տեւէ և 6 կամ աւոր մէջ կ'երթուի , օրը 6 էն մինչեւ 10 ժամ ճամ ց առնելով :

Տիարպէքիրէն օքամ անդին անցանք Տէարուէր + էր

բեւին տակէն՝ որ 10 կամարներով քարաշէն բարձր կամուրջ մ'է : Փորձով հաստատուած է որ այն տարին որ գետին ջուրը կամուրջը ծածկելու չափ առատ է . անտարակոյս նոյն տարին գետը կ'ողովէ բարիլոնը : Գետին աջ և ձախ կողմերուն վրայ հետզհետէ գտնուած դիւղերը՝ ծիւրպէքիրէն իրենց հեռաւորութեան կարգաւ հետեւեալներն են .

Ա. Զարօսիխ գիւղ . 2 ժամ հեռի գետին աջ կողմը :

Բ. Հաճիիիզ (հաճի էսոս ըսելու ուն) գիւղ . 2 ժամ հեռի ձախ կողմը գետեղին վրայ , բնակիչները տաճիկ և ասորի են :

Գ. Քիապի քէօյիւ . 2 ½ ժամ հեռի գետին ձաթ կողմը և մէկ քառորդ ալ գետեղին հեռի : Այս գիւղին մէջ անհամար ազաւիներ կան՝ որ Պատուի կըսուին , և ընդարձակ ու մեծաշէն Պատուանէր կան . լնակիչներն են քանի մը հարիւր տուն չայ և ասորի :

Դ. Հէօճէթի գիւղ . 4 ½ ժամ հեռի և գետեղին վրայ : Ե. Հօլա " Յ " " " "

Զ. Քարաշ ահ . { մէտ գիւղ . } Յ " " " "

Գիշերը հոս անցուցինք , եւ լիկտրուար 14 հինդշարթի առտու ժամ 12 նստանք բեւիները ճամբանիս շարունակելու համար :

Ե. Քէօսէլի գիւղ . 8 ½ ժամ հեռի Տիւրպէքիրէն և գետեղին վրայ . բնակիչները Զոքուլք կըսուին , սյսմինքն , գետեղը բնակող . կըսուին նաեւ Զըղբէւլ , Զըրու սէնտէրէն կամ Մամ սէնտէրէն : Ասոնք մահմէտական են , կըթլիքատին , նույն կընեն ևն . բայց գարշելի աղանդ մ' ունին՝ որ տարին չորս անգամ չորս եղանակներու մէջ որոշեալ օր մը բոլոր գիւղացիք արք և կանայք օրիորդներն ու պատանիները մէկ տան մը մէջ կը ժողին մեծ հանդէսով խնջոյք կընեն՝ որուն կըսեն ուր:

Ներ . Խանջոյքէն ետքը ճրագները կը մարեն և արու և
էդ իրար կը խաւնուին՝ ո՛վ որի հանդիպի հոգ չէ . Առ
սոնքը հանդիպէս Ճիարպէքիրինահանդին մէջ կը գըտ-
նուին . 10 կամ 12 գիւղի չափ բնակիչներ են . այս գիւ-
ղերը գըեթէ բոլորն ալ գետեղրին վրայ են . ասոնցմէ-
ուրիշ երկիրներու մէջ ալ կը գտնուին :

Ը. Պիսմիլ գիւղ . 9 ժամ հեռի գետին ձախ կող-
մը և գետեղրին վրայ :

Թ. Քօրուճի 10 " հեռի գետին ձախ կող-
մը և գետեղրին վրայ :

Ժ. Պօհճալլ 11 " հեռի գետին ձախ կող-
մը և գետեղրին վրայ :

ԺԱ. Զէրիքէցիւ 11 1/4 " հեռի գետին ձախ կող-
մը և գետեղրին վրայ :

ԺԲ. Սլիւս գիւղ 12 " հեռի գետին աջ կողմը և
գետեղրին վրայ , որ 20 տունով քրիստոնէից գիւղ մ'
է , հոս ելանք եւ դիշեր կեցանք :

Ժ.Գ. Շէքէֆտան ըստած քրգաց դիւղը , որ 20 ժամ
հեռի է Ճիարպէքիրէն . հոս գիշերը կեցանք : Այս գիւ-
ղըն ապառաժուտ լեռան մը վրայ է և տուները լեռանը
ապառաժներուն մէջը փորելով շնուած են . թիւը 200ի
կը հասնի . ունի 300ի չափ վայրենի քուրդ բնակիչներ :

Ճիարպէքիրէն մինչեւ Սլիւս Տիգրիսի մէջ վազած
ջուրերը հետեւեալներն են .

Չարօխի սու	Հէօճէթի	գիւղէն վար .
Անպար "	Խւվաճըխէն	"
Պարավան "	Գէօսէլիէն	"
Ռընտվան "	Պիսմիլէն	"
Օլան "	Քարա ահմէտ	"
Իէօք "	Քէրիսէն	"
Պաթման "	Պիսմիլէն	"

Փետուար 15 ուրբաթ առառու դարձեալ նստանք լաստերը ճամբանիս շարունակելու համար :

Այսօր 8 ժամ ճամբորդութենէ վերջն ելանք դետին ձախ կողմը :

Փետրուար 16 շաբաթ առառու նստանք լաստերն ու սկսանք երթալ . ճամբան տեսանք գետին աջ կողմը ,

ԺԴ. Հասան քէֆ անուն քրդաց գիւղը , որուն տուները գետեզրէն պարսպի պէս բարձրացած անառիկ ապառաժուտ լեռան մը վրայ փորուած անձաւներ են : Այս լեռան վրայ սանդուխքի նման նեղ ճամբաներ փորուած են , ուրկէ մէկ մալդ մը հաղիւ հաղ ամենայն դժուարութեամբ վեր կրնար ելնել . Այս գիւղը քարէ բարձր կամուրջ մ'ուներ , զոր մեծ Ծէշիտ փաշան ուրմ բակոծելով կործանած էր , որուն հիմա թէպէտ աւերակը միայն կը տեսնուի , բայց և այնպէս այս մնացորդն ալ կրնայ գաղափար մը տալ անցաւորին իր հին բարձրութեանը : Տեսանք նաեւ հետզիետէ ,

ԺԵ. Քէֆրաիլ գիւղը .

ԺԵ. Հասան Սաման գիւղը .

ԺԵ. Շէմիի մէհէնա ” .

ԺԸ. Ալիրամօ անուն քրդաց գիւղը՝ աջ կողմը , 28 ժամ հեռի Տիարալէքիրէն և 8 ժամ վար Շէքէֆտանէն : Հոս ելանք գիւղը կենալու : Այս գիւղը ունի 150 աղիւ . սակերտ տուն . 500 բնակիչ քիւրտ և քանի մ'ալ հայ ու ասորի . ամենուն մէջը մէկ մէկ դաշոյն (խանչէր) : Լեռան գագաթը մեծ ու գեղեցկաչէն պալատներ , բերդ , կամուրջներ կան , ուր կը նստէր այս կողմերուն իշխող Ալիրամօ անուն քուրդ պէյը , այր երկայնահասակ , հաստաբազուկ և կորովի , որ մեծ հանդէսով գիւմաւորեց մեղ գիւղը մուած ժամանակնիս . Աենեկապետն ալ պատուեց զանի կարմիր հէկ-ն մը հագցունե-

լով։ Այս անձը մերձակայց քուրդերու վրայ պատերազմի գայած էր և քանի մը օրէ ՚ի վեր յաղթութեամբ վերադարձեր էր հսու իր գիւղը։

Ճեքէֆտանէն մինչեւ Սլիրամմի մէջ աեղերը Տիգրիսի մէջ կը թափին թէւ ուոյս և Պահուան ուոյս ըսուած ջուրերը։

Փետրուար 17 կիրակի առառու, մեկնեցանք դիւղէն, և լաստերով ճամբայ երանք։ Զ ժամ վար մնանք Պէտրհան պէջի ապառամբութեամբ տիրած հողերուն մէջ։ Գետին ձախակողմեայ եզերքին վրայ լեռ մը բարձրացած է, որուն միջին կողերուն վրայ ծծմբական հանքային տաք ջուր մը կը բգիսի 70⁰ տաքութեամբ։ Հսույատուկ բաղնիք մ'ալ շինուած է ուսոււրիւն ի-բլէճա անուն, ուր երկրացիք միշտ կը յոճախեն մաքրութեան և բժշկութեան համար։ Այս ջերմուկին կողմերը լիռուն վրայ բոլոր գետնին երեսը մաքուր ծծումբ կայ, և հանքաջրէն ալ փառած կամ նեխեալ հաւկթի հստուլ կաղ մը կելնէ, այն է ջրուսեալ ծծմբային թթւոյ կաղը։ Այս ջուրէն անօթի մէջ լեցունելու ըլլաս միուր մը կը ձգէ տակը, այս է ծծումիը։ Այս լիռուն վրայ քրուայ ցիրուցան բնակարաններ կան ապառամբներու մէջ փորուած, որոնց բոլորտիքը ցորենի ու բամակակի արտեր մշակուած էին և սալորի, թզենւոյ են։ ծառեր կային, գետին ձախ կողմի և եզրէն Յ վայրկեան հեռու ապառամբուան լիռուն մը ստորոտը քանի մը հարիւր տունով քրուաց գիւղ մը կայ։

Ժթ. Ֆէնտըի քէօյ անուն, որ ունի ընդարձակ արուեր ու ճոխ ծառաստան։ Այս լիռուան գաղաթը մէկ նառիկ ապառամբի մը վրայ, ուր անհնար էր ելնել, երդ մը կայ, որուն մէջ էր Պետրհան պէջի բնակարան կամ լաւ ևս է ըսել ապառամնարանը, ուր՝ կը քաշուէր

պէտք եղած ժամանակ : Այս ապառաժուտ ցիցին գէմ դարձեալ ուրիշ ցցուած բարձր ապառաժի մը վրայ աշտարակ մը շնուած է , որուն բարձրութիւնը Պօլսոց հարէ ներէն քիչ պակաս չէ : Ոյիրամօէն 8 ժամ վար՝ ըսել է Տիարպէքիրէն 36 ժամ հեռի՝ ելոնք Տիգրիսի աջ կողմը :

Խ. Ճէզիրէ կամ Ճէզրէ անուն քրդաց քաղաքը , ուր գիշերը կեցանք : Պէտրհան պէյի մարդիկը գէմ եկան և ներողանութիւն խնդրեցին իրենց պէյը անձամբ զմեղ չը գիմաւորելուն համար , և ըսին՝ որշատ մը գործերու համար գիշերը գացած ըլլարվ այս միջոցիս քաղաքը : Պանու իր : Այս պէյը Քրդաստանի ամենէն հոչականոր պէյն էր , որ ինքնադրուխ կը կառավարէրու կիշխէր Քրդաստանի մեծ մասին . տէրութեան ոչ տուրք կուտար և ոչ զինուոր . անյաղթելի գորութիւն ունէր և անբաւ հարսութիւն . իր իշխանութեան ներքեւ եղող քրդերը իշեն հաւատարմաբար էր ծառայեն . վել ջապէս գրեթէ անկախ իշխանութիւն մ'եղած էր . բայց 1847 ին վերջերը ճիշդ մեր ճանապարհորդութեան տուրին՝ տէրութիւնը իր վրայ բանակ դրկեզով պատերազմ բացաւ . բանակին սպարապետն էր Միւշիր Շաման վաշան , որ նուաճեց Քըր դաստանը , բռնեց Պետրհանն ու ուրիշները , վերջացուց ապատամբութիւններն ու հնաղոնդեցուց քրդերը :

Ճ է Զ ի Բ է

Պարսպապատ քաղաք մէ Տիգրիսի աջ կողմը . դարնան ժամանակ երբ գեար կառաւանսոյ , երկու առաջներու էր բամնուի , որ ամեն կողմէն ու շրջանակի քաղաքը կը պատեն երեք չորս ամիսի չափ , անանկ որ քաղաքը չաւրերէ շրջապատեալ կղզի մը կը ձեանսոյ . անոր համար Ճիզիրէ անունը առած է՝ որ արաբերէն

կղզի ըսել է :

1836 էն ի վեր , այսինքն , քրդաց ասլտամբութիւնը զապելու համար թշշիս փաշային հրամանառարութեամբը Քրդաստանի վրայ բացուած պատերազմին և մրակուծութենէն ի վեր . այս քաղաքը անշքացեր էր , բոլոր պարիսպներն աւերակ դարձած էին և առուելուն դրեմի մասը վլած հիմնայատակ կործանած : Քաղաքին հիւսիսակողմը անառիկ բերդ մը կայ ֆիւչ + անքու անուն , ուր կը քաշուէր Պետրհան պէլը երբ խուռլութիւն մը ծաղ էր : Այս բերդին մէջ կերեայ քառակուսի լակ քարերով և չուռլմայեցւոց տաճարի ձեռով շինուած բոլորակ շէնք մը որ կըսուի Ե-հ-ո-ր-է + մասսէ . վասն զի Հ-ը-ր- դ արուն մէջ երբ քաղաքիս մէջ շատ մը հրեայներ կը գ անուէին , իրենց տօնի օրերը այս շէնքին մօտ տեղ մը կերթային կը ժողովէին , համարելով մէկ ծաղ այս շէնքը բուն խակ Եղբաայ Սիւէչ- այսինքն ժողովրդանոյն է : Ճէղիրէ անի մզկիթներ , բազնիքներ , եկիղեցիներ = 2300 տան չափ բնակիչ կայ , որոնց մեծադոյն մասը գուրդ է և մնացածը Նասաուրի : կան նաև քանի մ'ալ հայոց՝ ասորւոյ և դաղթական արաբացւոյ տուներ : Քաղաքին առջել Տիգրիսի վրայ նաւակներով շինուած և երկաթէ շղթայով իրարու կապուած փայտաշէն կամուրջ մը կոյ : Այս քաղաքին շըրջակայնները բարեբեր էին , նաւիք ալ կենէ : մեծեղ շիւր այծեր կան և տեսակ մը էշ , և շատ տեղերու վըրայ մարած հրաբուղիսի հետքեր կը տեսնուին . Մեր նախնիքները այս քաղաքին Պէտրա անուն կուտային , և օստալները հին ատեն Զ-ք-ր- կամ Պէտր- (զաբդիկեան դաւառին մէկ զլիսաւոր քաղաքը) կը կոչէին . կը կարծուի՝ թէ կորդուաց Զարուան թաղաւորին մայրաքաղաքն եղած ըլլայ :

Փետրուար 18 երկուշաբթի առառու լաստեր վ ճամբայ ելանք և 6 ժամ վար՝ այսինքն 42 ժամ հեռի 8իւ արպեքիրէն, հասանք,

Իլի՛ Բէշավուր զիւղը, ուր դիշեր կեցանք. Ասիկա Քիլտանիի զիւղ մ'է լեռան վրայ շինուած. ունի 60 տուն և մէկ փոքրիկ եկեղեցի. Լեզի ջուր մը կանցնի զիւղին մէջէն գէպ ՚ի դետը, ուր ջաղացներ շինած են Եղիշէ հանելու համար.

Փետրուար 19 երեքշաբթի առառու նստանք լաստերը և մինչև իրիկուն շարունակ ճամբայ առնելնէս զատ, դիշերն ալ դարձեալ անդադար նաւեցինք մինչև առաւօտ առանց տեղ մը հանդիպելու :

Փետրուար 20, չորեքշաբթի առառու, 3 Ժամ ևս նստելնէս վերջը՝ Մուսուլի 2 ժամ մնացած ելանք զետին ձախ եղրը, և կառքերով ու դարդարուն ձիերով՝ փառաւոր հանդէսով մնանք ՚ի Մուսուլ ժամը 9 ին :

Մ Ո Ւ Ս Ո Ւ Լ (Ն Ի Ն Ո Ւ Լ) (1) :

Ասիական թուրքաստանի մէկ քաղաքն ու այս առնունով նահանգին (ֆ-լուլի) մայրաքաղաքն է, Տիղրիսի աջ կողմը դաշտի վրայ շինուած և պարսկապատ, որուն աշխարհադրական երկայնութիւնն է $40^{\circ} 48'$, և լայնութիւնը $36^{\circ} 40'$. Նահանգը կը պարունակէ 180 000 բնակիչ. ասկէ զատ կը դանուին նաև քրդաց և եւղիսներու (1) անկախ յեղեր :

(1) Եւղիսները կոր ովի պատերազմող եւ տգէտ ու անդիր ազգ մ'են, ասդին անդին ափոհալ ու թափառական, 200,000

Քաղաքը ունի 4500 ի չափ բնակիչ, որոնց 32000 ը մահմէտական են և մասցած 13000 ը նաստուրի, գիշտանի, եագուպի, հրեայ և քանի մ'ալ հայ . 10000 ի չափ առւն, 20 մզկիթ, 10 եկեղեցի, մեծ շուկայ մը ուր գրեթէ ամեն բան կայ և աման գնով. զանազան թաղերու մէջ մաքուր ու գեղեցկացէն զինուորանոցներ, իջևաններ, որոնց մէջ կը գտնուի քարաշէն գեղեցիկ մեծ իջևան մը հարիւր սենեակով . մեծ ու գեղեցիկ հիւպատոսարան մը անդ զիացւոց, նոյնալէս դադղիացւոց և ուրիշ ազգայ հիւպատոսարաններ . շատ մը բաղնիքներ մութ ու չը բռուած, որոնց մէկ քանիին ջուրը ծծմբային ըլլալով՝ աճառով չդլուխ լուալու չի յարմարիր, մազերը թաղիք կը գարձունէ . ուստի գե-

սուն կելնեն . առոնք զանազան ցեղերու եւ աղանգներու բաժնուած են, մեծ մասը վրանարնակ է եւ վոքր մասը հաստատ բնակութիւն ունի Տիարպէքիրի, Մուսուլի գիւղերուն մէջ, Մուշի, Պայաղիտի կողմերը, եւ զլսաւոր սահմաննին Սինճար է : Կրօնքով քրիստոնեայ են եւ Մանիքեցւոց աղանդը ունին . բայց քրիստոնէութեան միայն ուրուականը մնացեր է . մլրտութիւն չունին, չեն ալ թլիաառուիր . Ցիսուսի անուանը կերպնուն . ոչ սահեր կը բռնեն եւ ոչ աղօթք կընեն, վասն զի անսանկ կըսեն որ Եւյթ-Հառէ իրենց առաջնորդը՝ որուն կը հետեւին, իրենց ընելիք ամեն աղօթքներն ու բռնելիք պահքերը ինքն ընել ու բռնել յանձն առած է, եւ յարութեան օրը իրենց ամենն ալ խուռն բազմութեալք գրախատը պիտի խոթէ : Ուստի իրենց բոլոր աղօթքը հետեւեալն է . Արեւն ծագելէն յառաջ դէպ ՚ի արեւելք կայնիլ, Հեռքերնին երեսուն դէմը բարձրացունել, երկու բթամատերնին իրարու վրայ խաչաձեւ դնել եւ արեւուն ծագած ժամանակ՝ ևրեա ծառագայթը նոյն խաչաձեւ բանած բթամատերնուն վրայ գարնէ, իսկոյն զանի համբուրել : Ահա ասանկով վճարած կը

տէն ջուր կը բերեն կը տաքցնեն և գլուխնին անով կը լուանան : Քաղաքին պարիսալը խրամապատ է և աշտարակներ ունի : Քաղաքին արտաքին երեղիթը այն աստիճան անշուք էր : որ հեռուէն կարծես թէ կրակէ ելած վլատակ մը կամ չոր ապառաժներ կամ շատ մը պատերու կոյտ մ'է . մէջ ո՛չ պարտէզ կայ և ո՛չ ծառ ուեր՝ որոնց կանանչ տերեները գոնէ շքեղութիւն մը տային անոր : Փողոցները նեղ ու անկանոն . տուներն ալ առ հասարակ աղիւսով շինուած և իրարու կից : կան նաև սպնդային քարով շինուած տուներ . մէկ կամ կրկնայարկ են և փողոցին վրայ պատուհան չունին :

համարին ամեն պարտականութիւննին ու աղօթքնին : Ամեն մէկ Օղա մէկ մէկ ամուռնացեալ Եւյի ունի՝ որ քահանայի պէս է . զլուխը սեւ փաթթոց կը կրէ եւ արտօշը կը սուխ . այս շէլսերը պատարագի ուրուականը կը կատարեն , վրանին չուրծաորի պէս բան մը կառնեն , ղլուխնին բաց , զինի եւ հաց կը զընեն սկիհին մէջ եւ քառորդի մը չտփ վրան աղօթքներ կը նեն մտքով առանց գիրքի մէջ նայելու : Ժողովուրդը ասոնց մէ արքայութենէ տեղ ծախու կառնէ : Այս շէլսերուն զլուխը Մինձար կը նստի ու տարին մէկ անդամ Յալքօլ քաղաքը կերթայ ընծայներով , զոր կը նուիրէ նաստուրեանց Պատրիարքին եւ ծնրադրութեամբ օրհնութիւնը կառնէ : Այս աղջը Մանկեցւոց պէս չարեաց սկիզբը կը դնէ սատանան , բայց իրեն չարութիւն մը չը հասցունելու համար կը պատուէ , եւ կը կարծէ՝ թէ օր մը գարձեալ գարծի գալով Աստուծոյ հետ պիտի հաշտուի . ուստի կը ջանայ սպաննել սատանային գէշ ըսողը : Ասոնք կերդնուն Աըլքէ անուան վրայ՝ հաւատալով որ Աըլտէ մայր սադայէլի է : Քրիստոնեայները կը սիրեն , նաեւ կը մտնեն եկեղեցի եւ վառած կանթեղի իւղով խաչածեւ կօծեն կուրծքերնին : Կատեն մահմէտականները , բայց տաճկական անունները կը գործածեն բաց ՚ի Մուհամմէտէն : Մահ-

Տանիքները հողէ են, կղմինտը չըկայ. անձրևը գիւրաւ ներս չանցնելու համար՝ հողը պինդ մը սխմած են և գլանած խոշոր քար մ'ալ տանեաց վրայ կը պահեն, զրը կը գլտորեն անձրևէն ետքը, որ առաւել պնդացունելով հողը կարդիլէ տղմանալէն։ Տուներուն ներքին կողմը բաւական զարդարուն է. սպնդանման քարերով հիւսած են պատերը, որոնց վրայ զանազան քանդակներ կան։ Տուներուն կեղրոն տեղը վրան բաց բակ է, տանը սենեակները շուրջանակի այս բակին վրայ կը նային. առուներուն տակը ստորերկրեսայ յարկ մ'ալ կայ Սէրտաղ անուն, ամարան սասաիկ տաքին նըս-

մէտական մը սպաննելը մնծ առաքինութիւն է, որով Աստուծոյ զոհ մը մատուցած կը համարին եւ սպաննածնուն արիւնէն ալ քիչ ո՛ւ կը խմն։ Ամուսնութեան օրէնքը կը պահեն, բաղմակնութիւն չունին, պոռնկութիւնն ու արուազիտութիւնը գարշելի բաներ են իրենց մէջ, բայց գողութիւնը մեղք չէ. վասն որոյ երկրագործութեամբ ու աւաղակութեամբ կապրին։ Ծաղրելի սովորութիւն մ'ունին. թէ որ մէկը Եէղիտի մը կեցած տեղը շրջանակի գիծ մը քաշէ, մարզը անշարժ կը մնայ մինչեւ որ մէկը չարէ նոյն գիծը. նոյնալէ ստանը գուռնէն ելած ժամանակ դրան առջեւ գիծ մը քաշելու ըլլայ կամ ճամբան երթալու կամ վաղելու ատեն առջեւէն գիծ մը քաշէ, ոչ գոնէն գուրս կրնայ ելնել եւ ոչ ճամբան կրնայ շարունակել եւ եա կը գառնայ, մինչեւ որ կամ գծողը եւ կամ մէկ ուրիշ զայ աւրէ նոյն գիծը. Ոմանք կը կարծեն՝ թէ այս ազգը Քաղգէացիներէն սերեալ է, եւ ոմանք ալ Քրդաց մէկ ցեղն ըլլալ կը կարծեն. վասն զի լեզունին ալ ու հասարակ քրդերէն է եւ վերջերը Եէղտէ անուանած է. Կա անուան ալ մկղբնապատճառ այն է որ Սէլին իրեն դըլաւորը կը ճանչէ եւ անոր (Եէլին) անուանը կերդնու, ինչ-լէս որ Խոայէ, այսինքն, Յիսուսի անուանը վրայ։

տեղու համար : Օդը շատ տաք կլնէ . ամառը հողին վրայ քառորդ մը բոկոտն քալելը անհնար է . ջուրը Տիգրիսինն է , զոր քարէ սափորներու մէջ զտելով կը դորժածեն :

Արհեստներն ու առուտուրը բանուկ էին , բայց իշանալու վրայ . Կային բամպակի կտաւներ , բեհէզզ , թաւիչ , տապաստակ , վիժակ , ասպաղէնք , զէնք , երկաթի և պողովատի դորժանոցներ , կտաւի տպարաններ , նարօտաներկոթիւն , ին . Մէկ հոխա սերը Յ զուրուշ մէկ հոխա մածունը 10 փարայ . 150 տրամնոյ ճերմակ էլուն 4 փարայ :

Մահմէտականները խստակրօն էին ; մանաւանդ կանայք՝ որ մարդու չէին երևար , կը փախչէին ու կրոնակին կը դարձընէին . Քաղաքէն քառորդ մը հեռի գետին եղերքին վրայ շինուած են կուսակալին պալատը , զօրանոց մը , հեծելազօրաց ձմերոց մը և հիւանդանոց մը . Քաղաքին առջեւ գետին վրայ փայտաշէն կամուրջ մը կայ ձէղիրէինին նման , զոր դիշերները կը բանային անցուդարձը դադրեցունելու համար . Քաղաքէն դուրս դաշտին մէջ կային հարիւրի չափ վրաններ , ուր կը բնակիէին մերկ ու մուրացկան արաբացիք , որ մածուն ու կտաւ շինելով կապրէին : Քաղաքէն մէկ երկու ժամ հեռու կը դանուի տաճկաց ուխտատեղիներ : Քաղաքին դէմ և Տիգրիսի ձախ կողմն է Նունիա անուն անշուք դիւզը :

Նահանգին նորընտիր կուսակալը ծերունի մարդ մ' էր Մէհէմմէտ Եսսատ փաշայ անուն , որ մենէ Յ օր առաջ քաղաքը մուած ըլլալով՝ իր պաշտօնին վերաբերեալ հրովարտակը գեռ կարդացուած չէր և մեր ներկայութեանը կարդացուեցաւ : Բոլոր պաշտօնաւորները իրենց համազգեստներովը կարգաւ կայնած էին , ասոնց դէմն ալ քաղաքին ծերունիները , և նորընտիր

կուսակալը մէջերնին ստքի վրայ . բազմաթիւ քաղաքացիք ներկայ էին , և մէկ քանի գունդ ալ զօրք . Պաշտօնակալ մը բարձրածայն կարդաց հրովարտակը , որուն բոլոր հանդիսականք ակնածութեամբ ունկն կը դնէին : Լմննալէն եռքը կուսակալը չձեռքն առաւ հրովարտակը , ճականին դրաւ . այն ատեն նուադարան ներն սկսան երդել և 19 թնդանօթ արձակուեցաւ : Կուսակալը մեծերուն ու ծերերուն խնդրուած հաղցուց . վերջը զօրաց գունդերը գեղեցիկ ու վարպետ զինախազ մ'ըրին : Վեց օր կեցանք այս քաղաքը և շատ մը հիւանդներ դարմանեցի . այս վեց աւուր մէջ օր իմ'ալ գացինք Մուսուլէն 9 ժամ հեռէ դետին եզրը նէմքուանուն գիւղին մօտ՝ դաշտի մէջ գտնուած նինուէի աւերակները տեսնելու . այս դաշտին մէջ երկու հողակոյտներէ ձևացած բլրակներ կը տեսնուին , որոնց տակը թաղուած էր հին նինուէի աւերակաց մէկ մասը :

Անդդիոյ կառավարութեան կողմէն զրկուած անդդիացի պաշտօնեայ մը նէմբուտ գիւղին մէջ իրեն յատուկ բնակարան մը շինած և բոլոր գիւղացիներուն օրական տալով բլուրները փորել բանալ տուած՝ ու տակէն մեծ տաճարի մը մնացորդ դտած էր , որուն մէջի սենեակները , դահլիճներն ու ճամբաները շրջեցանք : Տաճարին որմերը իրարու քով դրուած 5 կամ' 6 կան դուն բարձրաւթեամբ և 2 էն մինչև 3 կանգուն լայնութեամբ միակտուր հաստ քարերով շինուած էին . քարերուն վրայ թագ աւորներու , թագուհիներու , նամիշներու , շաստուածոց , քրմապետներու , առիւծներու , կոլերու , կապիկներու , ծառերու , ծաղիկներու , ոչխարներու , կառքերու և այլն , պատկերներ քանդակուած էին արհեստին ամեն ճարտարութեամբը . նոյնպէս և նշանագիրներ՝ և եռանկիւնաձև գիրեր ոչ ակաւ կը տեսնուէին : Տաճարին սենեկաց 'դոներուն

առջև կողմնակի մարդկան և ցլուց վիթխարի : արձան՝ ներ կային : Այս անգղիացի պաշտօնեայն իր կառավարութեան կը դրկէր ոչ միայն դեանին տակէն գոտած փղոսկրէ պատկերի մասունքներն ու սակէզօծ փայտերու կտորներն ու զանազան անօթները են , այլ նաև այն ժանրաշարժ մեծամարմին քարերն ալ անտանելի աշխատութեամբ որմերէն կը քակէր և լաստերու վրայ հեծցուցած մինչև բարիլոն , անկէ ալ շոգենաւով մինչև Հնդկաց Անդ դիան կը հասցունէր . Խորսապատի մէջ ալ Յովիսան մարդարէրն գմբեթաւոր շիրիմը դանուած էր , որ հրէից ուխտատեղի է :

Ահա այսպէս ժամանակին դեռ խոսքառ սպուռ չըկըրցած մաշեցուցած կամ ըստ մասին խնայած Ասորեստանի այն մեծ քաղաքին յիշատակաց հետքերը բոլորովին ջնջելու կ'աշխատէր անգղիացի պաշտօնեայն . բոլորովին կըզրկէր հին աշխարհը իր նախնեաց պատկառելի ու հրաշալի ձեռակերտաց մնացորդներէն , վերջնապոյնն ալ իր ձեռքէն խլելով : Երբ իրեն հարցուցի թէ ի՞նչ է պատճառը այդ զրկանաց , պատասխանեց՝ թէ իւր կառավարութիւնը կը յարդէ հնութիւնները , զի անոնքը ըսաւ , պատմութիւնը կը կենդանացունեն եւ ներկայ ազգերը հնոյն հետ մասնակից կընեն . ուստի անոնց անկորուսա պահուիլը սննտարակկոյս մի եւ նոյն ծառայութիւնը կընէ ապագայ սերնդոյ ալ : Իւր այս պատասխանին իրաւունք տուի եւ իմ կողմանէս շնորհակալ եղայ մարդկային սեւին ըրած իւր այս մեծ ծառայութեանը համար այնպիսի աշխարհներու մէջ՝ ուր իր անձին կրուտեան սպառնալիքներ պակաս չէին միշտ : Բայց սա ալ չըմուցայ իրեն կրկնելու՝ թէ շատ աղէկ կը լար որ Անդ դիա կարող ըլլար ամեն հնութիւններ իրենց գտնուած տեղերուն մէջ եւ իրենց երկնքին տակ պահելու ու ներկայացունելու . որովհետեւ , ըսի , հնու-

թիւններն իրենց սկիզբ առած կէտերուն վրայ , իրենց երկնքին տակը միայն կարծես թէ իրենց նախնական դէմքովը կը պատկերանան . վասն զի իրենց տակի հողերն ու շրջակայ վայրերը , դաշտերն ու լեռներն և այն վայրերն ոռողող գետերը , եւ անսնց մէջ սերեալ աղքաց բարքն ու ոռվորութիւններն և աւանդութիւններըն այն հնութեանց կենդանի վկայներու պէս մարդուս երեակայութեան առջև իրենց ճշդրիս կերպարանօքը կը ներկայացնեն . բայց երբ փոխադրուին՝ բնականաբար կը զրկուին այս բարբառող վկայներէն , և այն առեն չեն կրնար վերսաւեղծիլ գաղափարաց սահմանին մէջ , և միայն հնիներուն իրը յիշատակ կը հանդիսանան մոքին կարողութեան առջև :

Նինուէ կամ Նինոս հին Ասիոյ քաղաքն Ասորեստանի կամ Նինուէացւոց թագաւորութեան մայրաքաղաքն էր , որ կը գանուէր Տիգրիսի ձախ կողմը : 43,000 մէթրո շրջապատ ունէր կըսեն , և 30 մէթրօէն աւելի բարձրութեամբ պարիսպ մը՝ 70 աշտարակով . և 600,000 բնակիչ : Կ'ըսուի որ Ասուր հիմնարկած է 2680 տարի Քրիստոսէն առաջ , և վերջը Նինոս 1968 տարի յառաջ քան դիրիստոս մեծցուցած ու իր անունն ալ անոր տուած է : Շամիլամիր երկանը Նինոսին յիշատակին 'Համար մահարձան մը կանգնեց մէջն , և հետզետէ իր յաջորդները ճոխացուցին քաղաքը : Նինուէ երկու անգամնուածեցաւ . նախ՝ Սարդանապաղաց օրովը (762 յետ քան դիրիստոս) երբ Բաբելոնցիք , Մարք : Պարսիկք և Հայք միաբանեալ պատերազմեցան Նինուէի դէմ . Սարդանապաղինը զինքը կրակը նետեց և քաղաքին մեծ մասն ալ այրեց , որուն հրդեհը 45 օր տեւեց : Այս պատերազմէն ետքը և Սարդանապաղաց մահուանէն յետոյ (739 յետ քան դիրիստոս) Արպասէս և Պէլէսիս նուածեցին զինուէ . երկրորդ անդամ ալ

Բարիլոնի թագաւոր Ա. Նապօքօլասար նուաճեց (625
յետ քան դիրիստոս) :

Նինուէ որչափ որ հարուստ էր ու ամուր , բարուց
ապականութիւնն ու զեղխութիւնն ալ այնչափ յառաւ-
ջացեր էր . ամենուն ծանօթ է Յովիսանու ըրած այն
հոչչակաւոր քարոզութիւնը՝ զրբ հրամայեց Աստուած :
Յովիսան նախ թէպէտ կերկնչէր քարողելու , բայց 'ի
վերջոյ կատարեց , Նինուէի բոլոր թաղերուն մէջ պօ-
ռալսվ թէ « Քառասուն օքն եռու Նինուէ ոչոչ էրծանի » :
Բայց Աստուած , կըսէ Ս. Գիլքը , դժմալսվ Նինուէա-
ցւոյ զղջմանը վրոյ՝ ներեց այն անդամ : կերևայ որ Նի-
նուէ մնաց , թեպէտ և շատ ինկաւ մինչեւ եօթներորդ-
դար , այսինքն , Արարացւոց աշխարհակալութեան ժաւ
մանակ՝ որ առին ու աւեր դարձուցին . անկէ 'ի վեր
աւերակ մնաց այս քաղաքը հողերուն տակ ծածկուած :
աւերակները հիմա կը գ անուին նէմբուտ , խորսապատ
և Նունիա գեղերուն մէջ , որ ըսել է 20 մլոնէն աւե-
լի տարածութեան մէջ , և Մուսուլի հիւսիսային արե-
ւելեան կողմն իր 20,000 մէմբրո հեռի : Խակ ժամա-
նակէ մ'ետքն անոր մօտերը շինեցին այժմեան Մուսուլ
քաղաքն՝ որ երկար ատեն մասնաւոր Յուլթաններ ու-
նեցաւ , որոնք ընդ իշխանութեամբ խալիֆէից էին :
Սալաախն , Մօնկոլները . և Թիմուր — Լէնի հետզհետէ-
ղարկին աւերեցին այս քաղաքը . 1741 ին ալ նասըր —
շահ պաշարեց , բայց չը, յաջողեցաւ :

Մուսուլի կառավարութիւնն երբեմն Պաղտատի
կուսակալէն կախումն ունէր , շատ անդամ ալ զատ
էւշաւ-նիւ եղած էր , ինչպէս որ հիմա .

Փետրուար 26 երեքշաբթի մեկնեցանք Մուսուլին
շքեղ հանդէսով անցանք կամուրջը . մոտանք տապակէղ
ու անբոյս դաշտային ճամբաներուն մէջ Զոր սույզ —

Քեզը ըսուած գիւղն երթալու համար՝ որ Մուսուլէն 9 ժամ հեռի և Զապ — սույու (1) ըսուած գետին եւ զերքին աջ կողմը 100 տունով գիւղ մ'է, որուն բնակիչներն են քուրդ ու արաբացի . իրիկուան հոս հասնելով գիշեր կեցանք վրաններու տակ :

Փետրուար 27 չորեքշաբթի առտու լաստերով անցանք Զապ — սու գետին միւս կողմն, և ճամբայ ելանք դէպ ՚ի էրպիլ երթալու համար 7 ժամ հեռի, ուր մը տանք իրիկուան ու գիշեր կեցանք : Էրպիլ՝ լեռան վրայ շինուած պարսպապատ գիւղաքաղաք մ'է . բընակչաց թիւը 4000 ի չափ է . ատոնց մեծ մասը քաղաքին մէջ կը նստի և մնացածը պարսպէն դուրս . ըստ մեծի մասին քուրդ են, կան նտեւ տաճիկ ու հրեայ. այս վերջին ազգը պարսպէն դուրս զատ թաղի մը մէջ կը բնակի : Քաղաքէն դուրս կան ուխտատեղիներ, վրանաբնակ արաբացիներ, շուկայ մը, քանի մը պարտէղներ՝ տեսակ տեսակ ծառերով : Քաղաքէն մէկ քառորդ ժամ հեռի Քէնաչու ըսուած տեղը հոր մը կայ, ուրկէ ջուր կը բլիսի՝ որ յատուկ շինուած ճամբով մը կուգայ մինչեւ քաղա-

(1) Մեծ Զապ-սույու ըսուած գետն՝ որ յունարէն Արգոս, այսինքն, Գայլ եւ Զէրպ՛ս ալ կը կոչուէր, Տիգր՛սի երեւելի մէկ վտակն է, որ Վանայ հարաւ ային կողմերէն Կ'իջնայ. Իր մէջը կը նույնի շատ մը գետակներ . նաեւ Շէնրիզուր նահանգէն բղիսած ջուրեւն, եւ շրջապտոյտ ու արագ լնթացքով մը կուգայ կը թափի Մուսուլէն օր մը վար Հատիսէ քալաքին մօտ՝ Թօփրաւ-+աւէլ առջեւ Տիւրիսի մէջ : Հոս 50-60 կանգուն լայնութիւն ունի գետը . ջուրը յատակ ու քաղցր է . իր արագըն թացութեաւը համար Աղէ-ծիւնան ըսած են, այսինքն, Զուբ-մոլիէն : Փոքր Զապ-սու գետակն ամէկ հեռի է :

Քին պարսպին դրսի կողմը և կը հաւաքի աւազանի մը մէջ, ուրկէ բնակիչները կ'առնեն գործածելու իրենց ամեն պիտոյիցը համար։ Քաղաքին մէջ ուրիշ ջուր չը կար

Փետրուար 28 Հինգարթի ճամբայ ելանք Ալեն-է-էօն- էն երթալու համար 12 ժամ հեռի, և նոյն օրն իրեն կուան ժամ 10 ին մտանք և գիշերն օթեւանեցանք ։ Մինչեւ Ալթըն-քէօփրիւ ճամբու վրայ տեղ տեղ ջուր կը դանուի ։ Ալթըն-քէօփրիւ՝ դաշտին մէջ Տիգրիս գետին ձախ կողմն և անոր ողորմամբ թերակղզի ձևացած հողին վրայ շինուած գիւղաքաղաք մ'է 300 տուն քուրդ բնակիչներով։ Քաղաքին երկու կողմերը մէկ մէկ բարձրը ու քարաշէն կամուրջ շինուած են, որոնց վրայէն պէտք է անցնիլ թէ քաղաքը մանելու և թէ անկէ դուրս ելնելու համար։ Ինչպէս որ մենք ալ այս երկու կամուրջներուն վրայէն անցանք քաղաքը մտած ու ելած ատենակիս։ Բնակիչներէն ոմանք վարժուած էին այս բարձր կամուրջներուն գագաթէն՝ որ 30 կամ 35 կանգուն բարձրութեան կը հասնի, ինք զինքնին գետը նետել, ինչ պէս որ մեր ներկայութեանն ալ նետուեցան։

Փետրուար 29 ուրբաթ, ճամբայ ելանք Քէրքիւթերթալու համար, 9 ժամ հեռուի, նոյն օրն իրեն կուան մտանք։

Այս ճամբուն վրայ աւերակ խան մը կար, ուրկէ ջուր մ'ալ կ'անցնէր։ Քէրքիւթի մօտ շատ մը հորեր կան, որոնց մինչեւ բերանը տեսակ մը կուպրով լեցուած էր։ այս կուպրը գետնին տակէն կը բղիսի և հորերուն մէջ կը պարպուի, ուրկէ ուզողը կ'առնէր տիկերու մէջ լեցընելով վառելու կը գործածէր։ Հոս տեսակ մը կպրածիւթ (նէֆի) ալ կայ։ Ոյս վայրէն մէկ քառորդ ժամ անդին և Քէրքիւթի 2 ժամ մնացած դաշտավայ-

ըթ մը վրայ ծծումքի հոտ կը բռւրէ . գետնին երեսը ծծումք ալ կը գտնուի , և երբ փայտով մը հողը խառնեն՝ իսկըյն կ'սկսի գետինը միսիլ , վառիլ և բոց հանել հրաբուղիսի նման : Բողոք այս վայրերուն տակը թափուր ու պարպուած է , մինչեւ անդամ քալած ատեն ոտքի ձայնին արձագանդը կը լսուի գետնին խորէն :

Ք Ե Ր Ք Ի Ւ Թ

Պազտատի գիւղաքաղաքներուն ամենէն գեղեցիկն է . ունի 8000 ի մօտ տուն , 15000 ի շափ բնակիչքիւրտ , տաճիկ . Հայ , ասորի , քիլտանի , հրեայ և արաբացի . 10 մզկիթ , մէկ մէկ եկեղեցի իւրաքանչիւր ազգի համար . Քէֆիլ , ձէրճիլ և Եագուապ բէյր-մէյներուն Ռէ-լունէնք . 8 բաղնիք , խաներ , արհեստաւորաց շուկայ մը : Կան շատ մը գեղեցիկ ու ընդարձակ արտեր , այգիներ , պարտէզնիր տեսակ տեսակ պատուական պաղաբեր ծառերով՝ որ կուտան խնձոր , լիմոն , նարինջ , սալոր , խաղող և լի : Կը գտնուին նաեւ սօսիի , շոճիկ ծառեր և թթենւոյ ու արմաւենւոյ անտառներ : Բնակիչները հիւրասէր , ազնիւ և հյու մարդիկ են , շատերնին զինուորական ծառայութեանց մէջ կրթուած . Ա էկ քանի հարիւրէն աւելի սորոն կար . Օդն աղէկ և ջուրը բաւական անուշ՝ որ կուգայ Յ ժամ հեռի լեռնէն և կը լսուի իսոսիտ .

Այս գիւղաքաղաքը 4 թաղերու բաժնուած է , ուրոնց անուններն են .

Ա . Քէօյր-յահլես . ուր կեցանք օր մ' եւ երկու գիշեր . Ունի 2500 տուն :

Բ . Ետերը շէյշ-յահլես . ունի 100 տուն :

Գ . Ուշու գյալի յահլես . ունի 2500 տուն , որոնց 500 ը հրէից էր :

Շուկան այս երկու թաղերուն մէջ տեղն է բաւական ընդարձակ, ուր կը գտնուին զանազան արհեստաւորներ. Այս երեք թաղերը դաշտավայրի վրայ շինուած են :

Դ. Քաղաքացիությունի որ ունի 2000 առւն ամեն ազգէ խառն : Այս թաղը հողակղոտէ ձեւացած լեռան մը զառ ՚ի վերին վրայ շինուած է պարսպապատ :

Մարտ 2 կիրակի առևտու ճամբայ եղանք թավուք երթալու համար 9 ժամ հեռի, և նոյն օրը իրիկուան մտանք ու գիշերը հոն օթեւանեցանք : Թավուք քըլդաց փոքրիկ գիւղ մ'է 120 տունով . մէկ քանի ալ հրեայ կը գտնուի . գիւղին մէջ տեղէն ջուր մը կանցնի : Ունի արմաւենիներ :

Մարտ 3 երկուշաբթի ճամբայ եղանք ջուս Հուրմաթ երթալու համար 7 ժամ հեռի, եւ նոյն օրն իրիկուան մտանք ու գիշեր կեցանք :

Ջուս Հուրմաթ քրդաց գիւղ մ'է 200 տունով . մէկ թաղ ալ հրեայ կը գտնուի : Գիւղին մէջէն ջուր մը կանցնի : Ունի գեղեցիկ պարտէշներ սալորի, լիմօնի եւ արմաւի ծառերով : Ջուրին եղերքին վրայ ջուր մը կայ Սէրայ անուանեալ, ուր կեցանք գիշերը :

Մարտ 4 երեքշաբթի առևտու ճամբայ եղանք Քիֆրի երթալու համար 7 ժամ հեռի, եւ նոյն օրն իրիկուան մտանք : Քիֆրի՝ 300 տուն քուրդ եւ հրեայ բընակիչներով գիւղ մ'է . ունի աղիւսակերտ հին պարիսպ մը, պարտէշներ : Գիւղին մէջ տեղէն ջուր մը կ'անցնի՝ որ քաղաքէն գուրս կ'ոռոգէ բընճի ու ցու-

բենի արտերք : Այս ջուրն իր աղբերականցը մօտ շատ աղէկ է , բայց ճամբան ուրիշ ջուրի հետ խառնուելավ քիչ մը կը գէշնայ : Հոս գիշեր մը կեցանք վրաններու տակ :

Մարտ 5 չորեքշաբթի առտու ճամբայ ելանք Քարա—թէփէ երթալու համար 7 ժամ հեռի , և նոյն իրիկուն մտանք : Քարա թէփէ—փոքրիկ գիւղ մ'է աղքատիկ քրդաք . ունի 100 տուն և պարտէզներ ծառերով : Հոս գիշեր մը կեցանք վրաններու տակ :

Մարտ 6 հինգ շաբթի առտու ճամբայ ելանք Տէլի—Ապասս երթալու համար 10 ժամ հեռի , և նոյն իրիկուն մուանք : Տէլի—Ապասս փոքրիկ գիւղ մ'է և մէկ խան մ'ունի : Գիւղին քովէն գետակ մը կ'անցնի , որուն եղերքը կեցանք գիշեր մը վրաններու տակ . այս գետակը բաւական լայն , մեծ ու խորունկ է , և մէկ կողմէն միւս կողմն անյնելու համար քարաշէն կամուրջ մը շինուածէ :

Մարտ 7 ուրբաթ առտու գիւղին կամուրջն անցնելով ճամբայ ինկանք Պաշ—Եէնկիճէ երթալու համար 18 ժամ հեռի , և նոյն իրիկուն մտանք : Ճամբուն վրայ 12 ժամ հեռի Տէլի—Ապասսէն՝ Հօրօր անուն գիւղ մը կայ : Այս տաք ու գաշտային երկիրներուն մէջ ծովի կամ գետի նման ջուր մը կերեւայ ճամբորդին աշքին ժամ հեռի դէպ ՚ի զդալի հորիզոնին վրայ . արեգական և գետնին տաքութենէն տոչորած ծարաւի ճամբորդն ՚ի զուր կ'աճապարէ այս անգոյ ջուրին հասնելու և ծարաւը յագեցունելու . վասն զի նաքանի՛ կաճապարէ յառաջ կը վագէ , այս երեսյթն ալ նոյն համեմատութեամբ իրմէ կը հեռանայ , որով ուղեորին ծարաւն առաւել կը սաստկանայ : Գետնին երեսէն շա-

ըունակ գոլորշիք կ'արտադրի արեգական տաքութենէն , ճամբորդն ալ հարկաւ այս արտադրութեան մէջ կը քալէ և չը կրնար տեսնել անմիջապէս զինքը պաշարող գոլորշիքը . վասն զի խիստ անօսր է . բայց այսպէս իրարու ետեւէ արտադրեալ անօսր գոլորշիներն՝ անոնց մէջէ քալող ճամբորդին աչքին ջուրի նման խտացեալ երեսով մը կը տեսնուին մինչեւ բաւական հեռաւութիւն մը :

Պաշ ԵԷՆԿԻՃԷ Տիգրիսի ձախ եղերքին վրայ արմաւենիներու մէջ շինուած աւերակ գիւղ մ'է , որուն որ մերուն փլատակներն ու մնացորդները միայն կը տեսնուին հիմա . աւերակներուն մէջ պատուական իջնվան մը կայ : Հոս գիշեր մը կեցանք :

Մարտ 8 շաբաթ առոտու ճամբայ ելանք Պաղտատի մօտ իմամ—Ազամ երթալու հ սմար . Պաշ—ԵԷՆԿԻՃԷՆ մինչեւ Պաղտատ՝ որ 6 ժամ կը տեւէ , երկիրը խիստ հարթ է . իմամ—Ազամի 2 ժամ մնալով Պաղտատի երեւելի անձինք գիմաւորեցին մեղ՝ որոնց հետ մէկ տեղ շարունակելով ճամբանիս գալարադեղ վայրաց վրայէն մանք գեղեցիկ ծառաստանի մը մէջ , ուր կը դտնուէր իմամ—Ազամի մզկիթը :

Իմամը—Ազամ՝ Պաղտատի արեւմտեան հիւսիսային կողմն և անկէ 5/4 ժամ հեռի Տիգրիսի ձախ եղերքին վրայ գեղեցիկ ծառաստաններու մէջ փառաւոր մզկիթ մ'է , որուն մէջն է Մուհամմէտի եղբօր իմամ—Մուսային գերեզմանը : Այս մզկիթին բոլորունքը կան արտեր ու պարտէզներ , ուր կը գտնուին լիմնի , նարնջի , արմաւի , թութի , սալորի , գեղձի ևն . ծառեր : Գետեղին վրայ շատ մը ջաղացներ շինուած կան , որոց ամեն մէկին երկերկու ձի կապելով ջուր կը քաշէին և արտերըն ու պարտէզները կը թրջէին : Գիշերը հոս կեցանք

մղկթին մէջ : Այս մղկիթն երեւելի ուխտատեղի մ'է ուր քրիստոնէից ներեալ չէ մտնել :

Մարտ 9 կիրակի առտու ժամ 4 ին շքեղ հանդէ սով ելանք իմամլ—Աղամէն Պաղտատ մտնելու համար . Պաղտատի բոլոր մեծամեծները , պաշտօնեայներն ու իւլէմաներն իրենց համաղգեստներովն իմամ—Աղամ ե կան . մղկթին առջեւ պատրաստ կը կենային արաբացի բարձր ձիեր ուկեհուռ ու արծաթապատ հաշուերոջ զարդարուած՝ որոնց վրայ հեծանք ու ճամբայ ելանք : Հանդէ ին առջեւէն խումբ մը դինուոր կ'ե թար , ետեւէն ալ քաղսքայիր զորդ զոյդ իրենց աստիճանի կարգաւն . ասոնց ետեւէն գեհեա փաշան բազմաթիւ . սպասաւորներով . ասոր ետեւէն Պաղտատի բանսկին ֆէրիք փաշան . ասոր ալ ետեւէն Սենեկապետ Պէյն իր բոլոր սպասաւորներովը . Պէյին ետեւէն իր դանձապետն որուն ձեռքն էր բարձր բոնած Արքունական այն ականակուռ ուկէպատ թուրը , կարմիր շղաշատեռի մէջ պատատեալ , զոր բարեյիշատակ Սուլթան Ապտ—իւլ Մէծիտր կը զրկէր Պաղտատի ընդհանուր կառավարիչ Ալի . Նէծիպ փաշային : կուսակալի փիեսայն ու ես թուրին երկու կողմէն կ'երթայինք , և մեր ետեւէն կուգար նուագարաններու խումբ մը : որ շարունակ կ'երգէր պարսկական , արաբական և եւրոպական եղանակներ՝ որոնք այս անթիւ բազմութեանը հանած շեփորին հետ խառնուելով անապատը կը գոռացնէին . Այս խուռըն բազմութեան ճիշդ նկարագրութիւնն ընելը դժուար է : Պաղտատի բոլոր բնակիչները , մօտակայ ոչիւներուն հագարաւոր արաբացիները արու և էգ , ծեր և տղայ իմամը—Աղամի դուռնէն մինչեւ Պաղտատի դուռն իրարու վրայ դիզուած էին : ձանապարհին երկու կողմերուն վրայ զինուորական կարգեր կայնած

Էին խուժանը չը խռնելու և հանդիսականք անարգել
յառաջ ընթանալու համար : Բարիլոնի դաշտին մէջ այս
օրինակ արեւելեան հանդէս մը քիչ անդամ տես-
նուած էր, հանդէս մը՝ ուր ներկայ էին արաբացւոց
զանազան ցեղերն արք և կանայք զանազան տեսակ ըզ-
գեստներով . արք կը պարէին և կանայք հնդկահաւա-
նման կը կղկային . ոչ էներուա վահանակիր նիզակաւոր և
սուսերամերկ զօրքերն արաբական գինախաղութիւններ
կընէին . հազուագիւտ արաբական ձիերու խումբեր՝
ոսկեթել ականակուու և հնաձեւ հաշուերուզարդարուած՝
որոնց արձակած շողն ու ցոլմունքն ամեն աչք կը խտտղե-
ցունէին . նուագարաններուն արաբական և պարսկա-
կան երգերը քաղցր ու հեշտալուր էին . այսպէս նուա-
գարաններուն ձայներն ու կանանց կոկորդաձայն եր-
դերուն կիւրլուկն ու խուժանին ուրախական շաշիւնն ու
ձիերուն խինջիւնն իրար խառնուած՝ անապատին եր-
կինքը կը դդրդէին . Այս տեսարանին մէջ մարդ չըկար
որ յափշտակուած չըլլար : Վերջապէս քաղաքին մէկ
քառորդի մը չափ մնացած իջանք մէկ մեծ ու գեղե-
ցիկ վրանի մօտ, ուր նէճիպ փաշան՝ իր համազգեստը
հադած կ'սպասէր Սենեկապետին գալուստը բարեւե-
լու . ալեւոր ծեր կուսակալը մօտենալու Սենեկապետին՝
գրկեց զանի և ուրախութեամբ ջերմ արցունքներով
համբուրեց, գոհանալով Աստուծմէ որ մեզ անվտանգ
հոն բերեր էր . եւ վրանը մտնալով քառորդի մը չափ
հանդիստ ընելնուն ետքը, կուսակալը մեկնեցաւ միայ-
նակ դէպ 'ի Պաղտատ՝ հոն իր պալատին առջեւ կրկին
զմեզ դիմաւորելու համար . քիչ մը ետքը մենք ալ ճամ-
բայ ելանք հանդիսին առաջին կարգաւուը . թնդանօմաց
որոտման մէջ մտանք 'ի քաղաք և ուղղակի դացինք
կուսակալին պալատն՝ որ շինուած էր գետեզերքին վը-
րայ : Պարիսպէն ներս քաղաքին մէջ մինչեւ կուսակա-

ին պալատը՝ փողոցներուն մէջ, պատուհաններուն առջեւ և տանիքներուն վրայ անհամար բազմութիւն տեսնելու կայնած էր, արք և կանայք՝ ծեր ու տղայ խուզըն՝ ՚ի խուռն. կիները վրայնին ծրապիզօնի վերարկուառած, դէմքերնին ալ ձիու մազէ հիւսուած սեւ քողարկով մը գոցած, ամենը մէկ բերնէ հնդկահաւի նըման կոկորդային ձայներ կը հանէին ՚ի նշան ուրախութեան. ամեն կողմէ բարի՛ եկաքի ձայներ, երգեր ու պուշտուքներ ականջնիս կը խացունէին։ Մտանք պալատին բակն, ուր կուսակալը կ'սպասէր իր համազգեստովը՝ բայց թուր չէր կապած. վասն զի քիչ մը ետքը հանդիսաւոր արարողութեամբ թագաւորին զրկած թուրը պիտի կապէր։ Ելանք վեր պալատին մէջ, մէկ մեծ ու ընդարձակ սենեակ մը, որուն ձեղունն ու որմերն ասպակիէ շնուած էին և պարապ տեղերուն վլրայ ալ ոսկեզօծ քանդակներ կային։ Պաշտօնական քարտուղար մը կարդաց Արքունական հրովարտակը, զոր Ապտ—յւլ—Մէճիտ իր ձեռօքը շարադրած ու դրած էր. յիշատակաց արժանի լրայրն թուրքիոյ, այս հրովարտակին մէջ իրեն սովորական ոճովս իր բարձր գոհունակութիւնը կը յայտնէր կուսակալին՝ իր բարւոք կառավարութեանն ու աշալուրջ հսկողութեանը համար, ծանուցանելով միանդամայն թէ այնքան ծառայութեանց ՚ի վարձատրութիւն ոսկիապատ ականակուռ թուր մը կը զրկէր իրեն, թուր մը՝ կըսէր, զոր արդաթեան յաղթանակին և թշնամեաց ու ապստամբաց պարտութեանը պիտի գործածես։ Հրովարտակը կարդացուելէն ետքը՝ կուսակալը ձեռքն առաւ համբուրեց ու ճակատը դրաւ, ինչպէս օրէն է մեծարանաց՝ զոր ուրաքանչիւր ոք կը պարտի հասուցանել Արքունական իրովարտակաց։ իսկ հրովարտակին խրախուսիչ բանքն ու գոհունակութեան հաւաստիքն այն աստիճան յու

զեցին ծերունաղարդ կուսակալն՝ որ չըկրնալով ինք զինք զսպել ուրախութեան արտասուքներ սկան ողուն ողուն թափիլ ու ցոլանալ իր դէմքին խորշոմներուն վրայ ։ Միւս կողմէն ալ հանդիսականք սրտաշարժ յուղ մամբ լցեալ կային 'ի լուր Հրովարտակին և 'ի տեսաղդեցութեանն, որոյ ներքեւ կուլար տղու մը պէս ծերունի կուսակալն, և ամենուն դէմքին վրայ գոհութիւն և պատկառանք միանգամայն նկարուած կը տեսնուէին ։ Հրովարտակին ընթերցումէն անմիջապէս ետքը, Սենեկապետը ձեռքն առաւ Արքունական թուրը՝ համբուրեց ու կապեց կուսակալին մէջքը ։ Ներկայ իւլէմաններէն մէկն ալ չնորհաւորութեան ու օրհնութեան թուղթ մը կարդաց ։ Այս արարողութենէն ետքը մեկնեցանք պալատէն և գացինք նեղ փողոցի մը մէջ մեղի համար յատկացեալ քարաշէն մեծ տուն մը ։

Քաղաքին մէջ հինգ գիշեր շարունակ նմանը չտեսնուած լուսաւորութիւններ ու հրախաղութիւններ եղան ։ Հրոյ բոց մը պատած էր բոլոր քաղաքը, շուկաներէն սկսեալ մինչեւ երեւելեաց ու արհեստաւորաց տունները ցերեկուան պէս լուսաւորուած էին գիշերները մինչեւ լցոյ ։ իսկ ամենէն աւելի գեղեցիկ ու գուարճալի տեսարանն ներկայացնողն էր պալատին ընդարձակ հրապարակը ։ Վերջապէս այս հինգ օրը ճշմարիտ տօնախմբութեան օրեր եղան բոլոր քաղաքին համար, և հինգերորդ օրը իբրեւ կնիք այս արարողութեան տեղի ունեցաւ պաշտօնական այցելութեանց արարողութիւնը Սենեկապետին, կուսակալին և հիւպատոսաց մէջ։

Կնքենք մենք ալ այս հակիրճ ու տժդոյն նկարագրութիւնն այն շողջողուն հանդէսներուն, ու անցնինք նըկարագրելու նախ նահանդն և ապա քաղաքը հոչակաւորն Բաբելոնի ։

ՆԱՀԱՆԴ ԲԱԲԵԼՈՆԻ

Պաղտատի կամ Բաբելոնի նահանգն Ասիական թուրքաստանի մէկ փաշյութիւնն է (Աւ—ձեռէւ) որ իրզրումի, Տիարպէքիրի, իրանի և Պարսկաց ծոցոյն մէջ տեղերը կիյնայ, և ընդհանրապէս դաշտային է մինչև Պարսկաց ծոցը, բաց ՚ի հիւսիսային արևմտեան կողմը Շահրիզուր երկրէն՝ որ լեռնային է.

Ունի 590,000 մէթրօ (1) երկայնութիւն (354 մղոն կամ 768,821 կանգուն), և 550,000 մէթրօ լայնութիւն (327 մղոն կամ 717,619 կանգուն) :

1,300,000	ի չափ ալ բնակիչ, որուն՝
650,000	վրանարնակ ու թափառական Արաբացիներ են.
600,000	քաղաքաբնակ ու գիւղաբնակ Մահմէտական.
35,000	" " " Հրեայներ.
2,040	" " " Քրիստոնեայներ.

յորոց՝ 700 չայ.

500 Քիլտանի.

400 Սիւրեանի.

200 չայ պապական.

100 լատին.

100 բողոքական.

40 թոյն.

12,960 ալ գաղթականներ են՝ քուրդ, աղուան, հրն-
դիկ եւ այլն:

Այս թափառական արաբացիները գեռ մնաւորա-
կան մշակութեան ստորնագոյն աստիճաններուն մէջ

(1) 1680 գաղզ մէթրօն 1 մղոն է, կամ 2192 կանգուն
տաճկ.

կը գեղերին . բայց պատերազմի և ձիի սէրն իրենց երկու գլխաւոր կիրքերն են : Թէ՛ ասոնք և թէ՛ քաղաքաբնակ ժողովուրդը հիւրասիրութենէ հեռի են : Կը դտնուի 15,000 ի չափ կանոնաւոր ու անկանոն զօրք : Այս սահմանին մէջ կը գանուեր հին բարելոնն ու Ասորեսատանի և Միջագետաց մէկ մասը : Քրդաստանի լեռներն ու Տորոսի զանազան ճիւղերը նահանգիս հիւսային կողմի եղերքը բռնած են . արևմտեան կողմն ալ անապատներ են, ուր կը թափառին աւագակ Պետքանիւնուն խումբերը : Շատ մը գետեր, մանաւանդ՝ Տիգրիս, Եփրատ և Քապուր հոչակաւոր գետերը, կ'ուսուցեն նահանգին արեգական տոչորիչ շառաւազաց աղդեցութենէն ճղքուտած գետիններն, իրենց յորդառատ ջուրերուն մերթ գանգաղ՝ մերթ արագ ու ոլործուն ընթացքովն և մաքրելով, սրբելով կը տանին կը թափիսանոսի ծովերուն մէջ . Հողը բերի է գետեղերք ներուն երկայնութեամբը, բայց ուրիշ կողմերուն մէջ էքեալ ու ամայի մնացած : Գլխաւոր բերքերն են՝ յուրեն, դարի, բրինձ, կորեակ, ոսպ, առոն, գխառը, ներկ, կուպը, կիր, բորաղ քար, դաճ, աղ ծծումբ, բորակ, դեղձ, ծիրան, խնձոր, թութ, տանձ, թուզ, արմաւ, ձմերուկ, սեխ, սերկելիլ, շոր, նարինջ, լիմոն, չօրնչաւ, նուռ, ձիթապտուղ, պաժեայ, դդում, չալիչն, շոմին, բակլայ, լուրիսա, ստէպղին, շողդամ, խատոր, կաղամբ, վարունդ, գետնախնձոր, առանձիւ, ևլն՝ Տեսակ տեսակ թուչուններ կը գանուին . նոյնպէս կով, գոմէշ, եղ, մատակ ոչխար, այծ, արջ, գայլ, աղուէս, նաղաստակ, կատու, կուզ, առիւծ, ինձ, ձի, ևլն . Որապի ձիին դէմքը գեղեցիկ է, դլուխը փոքրիկ, ականջները մանր և գեղ ՚ի առջև ցցուած, մաղերը տարածուն ու փայլուն և ճակտին վրայ սիր-

ոռուած, պարանոցը նեղ ու երկայն, մարմինը գեր պղնա
դակավմ, պոչը երկայն, ոտքերն երկայն ու բարակ և
սմբակները խորունկ . խիստ արագ կը վազէ, փոսերուն
վրայէն ցատկելով կ'անցնի, գետերուն մէջէն լողալով
կ'երթայ, տիրոջը հաւատարիմէ՝ որմէն չը զատուիր և
զոր վտանգներէ կ'ազատէ, անապատներուն մէջ անօ
թութեան ու ծարաւի կը դիմանայ. Արապի ընտիր ցե
ղէ սերեալ ձայիկը մեծագին է և հատը մինչև 50 հա
զար զուրուշ կ'արժէ :

Կլիման խիստ տաք է :

Այս նահանգը 8 լէկուանեան բաժնուած է, որ են՝
Մէշէտ — Սլի, Հիլէ, Սէշէտ — Հիւսէին, Լննա, Շի
զիպին, Մարտին, Փասրա, Քոռնա : Այս 8 էն զատ է
ուղղակի նահանգին կուսակալին (Պաղապատ Քանչէ) կա
ռավարութեանը տակ դանուած երկիրն՝ որ կըտուի
Բարելոնի դաւառ, և որոյ մայրաքաղաքն է Պաղտասա,
որ կը նստի կուսակալը :

Այս վայրերուն մէջ ճանապարհորդութիւնս դրած
ատենս, չեմ ուղեր նաև զանց առնել նկարագրելու
այն խորին զգացումները՝ զոր ճանապարհորդին կ'ազ-
դեն այս կերպարանավոխեալ երկիրներն, անանկ որ, հին
աշխարհը կարծես թէ կը նորոգուի իր երևակայութեան
առջեւ ու իր նախնական դէմքովը կը ներկայանայ :
Միտքդ բոլորովին յափշտակուած, ինք զինքդ հին աշ-
խարհին մէջ կը կարծես և մերթ Նինուեի քարաշէն աշ-
տարակներն ՚ի վեր ենելով, մերժ իր երկնարերձ ըս-
տուարաշէն պարիսպներուն վրայ շրջելով, հսս Նա-
րուգուդունոսորի արձանը աչքիդ կը զարնէ, հոն հա-
րիւր գունեայ ամրապարիսպ Բաբելոնի մէջ կը կարծես
շրջիւ, անդին Բելայ քառանկիւնի մեհեանին մէջ ինք
զինքդ կը դանես, որուն ութ կարգ բարձրացած վիթ-
խարի աշտարակը հազար անդամ կ'ելլիս կ'իջնես և

երբ բաւական կը յոդնիս՝ հանգիստ ընելու համար կախաղանաւոր բուրաստանը ճեմելու կենես ու հռն ինք զինքդ գրախառի մը մէջ կը կարծես . գեղեցի՛կ տեսարան , զմայլելի ծաղկըներ անուշ հոտերով և հովանաւոր ծառեր , օրոնց ներքեւ մարդագետնի մը վրայ ձեռքս գլխուս վրայ կրթնցունելով ընկողմանած՝ մարդկային մեծագործութեանց վրայ մտածութիւններ կը նէի ու կրսէի որ մարդ աշխատութեամբ կրնայ ձեռք բերել՝ ինչ որ այս աշխարհիս մէջ իր կարծեցեալ երջանկութեանը կը նպաստէ . Սուտ և պատի՛ր երջանկութիւն , այնքան խարիսուլ և այնքան դիւրաբեկ՝ որչափ յայտ յանդիման կ'երեւան աչքիդ առջև այս վիթխարի չէնքերուն փլատակները՝ որ ամեն տեղ երկրիս երեալ ծածկած են . այս փլատակները մարդկային ունայնութեան մէյ մէկ տիսուր վկայներն են , մարդկային հանճարին ու աշխատութեան բեկորները , զոր գարերը թոյլ ձեռքով սփուած են աշխարհիս երեսը : Երբոր ասանկ մտածութիւններ զիս գրաւած էին , յանկարծտեսայ քովս ՚ի վեր կանդնած լիկոդրոն և կալիմաքոս (Պտղոմէոս Եգիպտ. թագաւորին պալատի իմաստունները) , որ ողջունելով զիս ըսին . Այդ ի՞նչ յափշտակութիւն է վրադ . գիտցի՛ր , ոչ միայն Բաբելացւոց ու Սսորւոց աշխարհներուն մէջ գտնուած մեծագործութիւնները պիտի չքանան , այլ նաև Եգիպտացւոց , Յունաց , Պարսից , Պարթևաց , Հայոց , Մարաց և ուրիշ ամեն ազգաց մեծագործութիւններն ու ամրութիւնները , քաղաքներն ու բնակիչները , թագաւորներն ու զինուորները , հանճարներն ու ազգերը՝ մի և նոյն ճակատագիրը պիտի կրեն , անոնց ամենն ալ ժամանակին բուռն հոսանքը պիտի մղէ ու կորստեան անդունդներուն մէջ պիտի տանի ձգէ . չըկայ զօրութիւն մը՝ որ կարող ըլլայ զանոնք ազատելու անոր ճիրաննեւ .

ըէն , աւերակաց աւերակներն ալ պիտի անհետանան : Գիտցի՛ր որ երկրի վրայ ինչ որ կուգայ , անտարակոյս պիտի երթայ . հաւատու՛ որ այս ժամանակաւոր բաներուն վերև անոնց գալստեան և կորստեան , առաջմանն ու բարձման օրէնքներուն անընթերակայ անիմանալի էակ մը կայ , որ 'ի հարկէ ինքը ժամանակ չունի , ո՛չ սկիզբ և ո՛չ վախճան , 'ի յաւիտենից տնօրինած է տմեն բան և յաւիտեան կը հսկէ . Նա՛ է առաջին և Նա՛ է վերջին . ահա՛ նա է միայն՝ որ յաւիտեան կը մնայ : Մեր այս սկզբունքին ճշմարիտ ըլլալն ապացուցանելու համար կ'ուղենք ներկայացընել արդի գտնուած բաներն ապագայ սերունդին , որ ծանօթանայ թէ ինչե՛ր եկած են մեր աշխարհին մէջ . արդ կը գըլառորենք ժամանակին շրջանին մէջ մեր սկատմութեան գիրքն , որ անոր ամեն շրջանին հետ վերագառնալով ամեն հանդըպածին իր թղթերը բանայ : Այս մեր կամքին գործադրութեանը՝ ժամանակն ալ կ'օժանդակէ , վասն զի ան որ ամեն բան կը ջնջէ , կը խնայէ միայն յիշտակը , զոր սերունդէ սերունդ յաջորդաբար կ'աւանդէ իրը յաղթանակ իր անդթութեան , որով կը խորտակէ ներկային գոռոզութիւնն անցելոյն տուդանքը . Մէմփիս , Ալեք և Թէփիէ իր մեհեաններովն ու 120 սիւներու վրայ շինուած հրաշակերտ պալստովը , իրենց փառաւոր չէնքերովը , կոթողներովն ու արձաններովը պիտի անհետանան : Պիտի անհետանայ Մէմնոնի արձանն ալ որ այսօր այնքան ներդաշնակաւոր ձայներէկանէ՝ քանի՛որ արևելն ճառագայթները վրան զարնեն : Ճե՛ս Ոսկմանդի պալատն այնքան հոչակաւոր , տե՛ս ինչ աշխատութեամբ ձեւացուցեր են ճարտարարուեստ պատկերներով ու քանդակներով բակտրիացւոց վրայ իր ըրած յաղթութիւնն , և ոչ իսկ փոշին պիտի մնայ այս պալատին , ինչպէս նաև իր 365 կանդուն շրջապատ

ունեցող ոսկի շրջանով գերեզմանը , որուն չորս կողմն աստուածներուն արձանները կանգնեցուցած են պահ պահութեան համար : Փիլտոնի ու Ասիքիսի բրդունքը պիտի փրթին կյնան , և ահագին ու հիանալի լաբիւրինթոսն ալ պիտի լափէ ժամանակը . Սեսոստրի ՚ի յիշատակ իր յաղթութեանցը կանգնած արձաններն , և այն հարիւր փառաւոր մեհեանները . Պեղուսիոնէ մինչև Արեգ 1500 ասպարէզ շինած պարսպին մէկ քարն անդամ՝ չը պիտի մնայ : Նաւորդաց լցու տալու համար Աղեքսանդրիոյ նաւահանգստին բերանը՝ ֆարոս կրղղւոյն մէջ Գտղոմէոսի կանգնած գերահրաշ աշտարակն ալ պիտի մարի : Նեքաւովի ակսած և Գտղոմէոսի լմբնցուցած կարմիր ծովը Մեջերկրականին միացնող ջրանցքըն ալ պիտի գոցուի : Եկրատան պիտի մերկանայ մէջէ մէջ բարձրացած եօթն պարիսպներէն : Պիտի կործանին բազմահարուստ ամրապարիսպ Ակրագանդիր Բաղերեան հոչշակաւոր ցլուզը , Աթենասայ տաճառըն ու Յունաստանի հրաշակերտ արձանները :

Օր պիտի դայ՝ որ ոչ ևս պիտի տեսնեն նաւավարք Հոռողոսի նաւահանգստին բերնին վրայ Հոռողացւոց շինած պղինձէ մեծ արձանը : Այո՛ , բան մը չըպիտի դիմանայ , ո՛չ կրետէ կղղւոյն բաւիղը , ո՛չ Եփեսոսի Որտեմեայ տաճարը , ո՛չ Սամոս կղղւոյն Հէրայի տաճարը , ո՛չ Դէղիփիսի Ապողոնի տաճարը , ո՛չ Ողիմպեան Սրամազգայ տաճարն և ո՛չ ալ Ամենադից մեհեանը : Անդութ ժամանակն ոչ միայն այս ամրապինդ շէնքերն արմատախիլ կը ջնջէ , ասոնք՝ որ անզգայ անիմաստնիւթեր ըլլալով կարող չեն ինք զինքնին պաշտպանելու անոր բուռն յարձակմանց դէմ , և հետզհետէ կը քայբային կ'ըսպառին , այլ նաև այն բանական կենդանիներն ալ , այն հզոր թագաւորներն ալ , այն հանճարներն ու ազգերն ալ՝ որ իրենց իմացականութեամբ

ինք զինքնին պահպանել կը ջանան, իրենց զօրութեամբն ամեն բան յաղթել կ'աշխատին, իրենց հանճարովն անոր դիմադրելու հնարքներ կը հնարեն, անոնք ամենն ալ դարձեալ կը նուաճին . յաղթանակը ժամանակին է, վասն զի Աստուած անանկ տնօրինած է 'ի յաւիտենից՝ որ ինչ որ կը կանգնի՝ պիտի յնայ, ի՞նք միայն կանգուն փլատակաց վերեւը : Ի զուր պիտի վնտոէ ապագայ սերունդն իր նախնիքը, մեր աշխարհի մարդիկն, այս աղդերն . ամենակուլ ժամանակին անոնց ամենն ալ յաւիտենական շիրմին տակ պիտի խռկէ, և զամենայն հող պիտի դարձնէ : Այն ամրափակ գերեզմանին մէջ պիտի թաղուին Ասիոյ և Հնդկաստանի տիրող, Եթովպացիներուն յաղթող, Սկիւթացիներն ու Դանայի բնակիչները հնազանդեցրնող, կապադովկիան հարկատու ընող այն աշխարհակալ Սեառատրը . հո՞ն չը պիտի ունենայ չորս թագաւորներով լծեալ կառքը : Ասիոյ մեծ մասը նուաճող Նինոսը, Սոտեր պատուանուն ունեցող Պտղոմէոսն, Աստուածաշունչ սուրբ գերքը թարգմանել տուող Պտղոմէոս թագաւորը : Արշակ, Վաղարշակ, Սրտաշէս, Տիգրան . ատոնց ամենն ալ դահերնէն խոնարհաբար իջնալով հոն պիտի պահկին . Հէրակղէսի, Աքիւլէսի դիւցաղնութիւնները հոն պիտի թաղուին : Ամէն հիւանդութիւն բժշկելու գաղտնիքը դիտցող Պոդալիր ու Մաքրաւոն ինք զինքնին բժշկելու ճարը չը պիտի գտնան ու հասարակաց ճակատագրին մասնակից՝ անոնք ալ հոն պիտի փակուին : Լիդուրկոս օրէնսդիր թագաւորը պիտի հնազանդի ժամանակին օրինաց առջև և Դեղփիսի Ապողոնի տաճառէն ալ ետ չը պիտի դառնայ : Կրեսոս իր անբաւ գանձերն ու կարասին պիտի թողու, մերկ ու չքաւոր իր նկերներուն քով պիտի փատի հոն : Թէմիստոկլ իր փառասիրութեան վախճանը հոն պիտի տեսնայ, և

Միշտադէսի հետ յաւիտենական քնոց մէջ լպիտի ընկղպմին ։ Քսէրքսէս իր միլիոնաւոր զօրքերուն ։ բանակը հոն բվիսի գետեղէ , և հայրենիքը դառնալու հհամար ձկնորսի նաւակ մ'ալ չը պիտի գտնայ հոն ։ Նոյն շիրմին տակ պիտի մնան կիմոն և Պէրիկղէս պերճախօս . հոն Արամազդ անոր բերնովը չը պիտի որոտայ ։ Աշխարհակալն Փիլիպպոս . նա՛ ալ իր ընկերներուն պիտի երթայ խառնուի . հո՞ն իր մահկանացու ըլլալն իրեն յիշել տալու համար՝ քովը մասնաւոր մարդ մ' ունենալու կարսութիւն չը պիտի ունենայ ։ Հո՞ն պիտի ամփոփի մեծըն Աղէքսանդր , որոյ փառասիրութիւնը ծիր և հորիզոն չունեցաւ աշխարհիս վրայ . Աղէքսանդր՝ յաղթող գետացւոց , Թրէկացւոց , Տրիբաղաց , Լիւլիկեցւոց , Թէբացւոց . Աղէքսանդր՝ որ կործանեց զթէբէ , յաղթակալեց զչայս և միահեծ ան ինքնակալեց այնքան թագաւորութեանց և բոլոր Յունաստանի . դողացուզ ըզդարսիկս , հնազանդեցուց զփիւնիկէ , զկիւրոս , Գազա , Սոսփիանէ , Սկիւթիա , Բարելոն , և մինչև Գանգէսի եղերքը տարաւ իր յաղթող ու աշխարհաւեր սուրը . ան ալ հոն պիտի կծկի : Փիլոպէմէն ալ Յունաստանի դուռներն երևելի և հոչակաւոր անձանց դէմ ամուր մը փակելով , անոր փառքն ու ազատութիւնն իր ծոցը դրած , նոյն անդնդին մէջ պիտի թաղուի : Վերջապէս , ո՛չ երաժիշտ , ո՛չ բանաստեղծ , ո՛չ նկարիչ , ո՛չ պատմաբան , ո՛չ ճարտասան , ո՛չ բժիշկ , ո՛չ իմաստուն և ո՛չ մէկը հոս չը պիտի մնան : Լինոս , Հոմերոս , Պարուածիոս , Քսենոֆոնն , Դիմոսթենէս , Սոլոն , Սոկրատ , Պղատոն , Արիստոտէլ , Թաղէս և որ մէկն ըսենք , մինչև Մինեկրատ ինքնակոչ Արամազդը թագ ՚ի գլուխցու ալ ՚ի ձեռին կրկին կենդանութիւն չնորհելով յարուցած մարդոցն հետ այն խաւարչախին բանտին մէջ պիտի թաքչին , ուր արեգակն ալ չը կրնար սահիլ ըս-

պղոկի՝ որ իր լուսոյն ճառագայթովը ցամքեցունէ թալ-
կացեալ բանտարկելոց արտևանանց արտօսրը :

Այս, ահա ասանկ ամեն բան ժամանակին առջե
պիտի խոնարհի ։

Երբոր ամենայն ուշադրութեամբ մտիկ կընէի,
յանկարծ սպասաւորս ինձի ձայն տուաւ, որպէս զի ըզ-
գուշանամ սենեկին որմէն՝ ի վար իջնող կարիճին խայ-
թելէն. վասն զի այս տաք կղիմաներուն մէջ գրեթէ
ամեն տեղ կը գտնուի, այս խայթից կենդանին, որուն
կճած տեղին վրայ խսկոյն տիղմ՝ կը դնեն. Սպասաւո-
րիս ձայնելէն սթափելով իմ խորին զգացումներէս, կո-
րուսի ամեն բան աչքիս առջեւէն և սկսայ մտածել
տեսած սոսկալի երազիս վրայ՝ որ այսօր սոսկալի իրո-
ղութիւն մ' եղած է :

Պ Ա Ղ Տ Ա Տ :

Գաղտատ՝ ԱԼ — Ճէզիրէի մէջ Տիգրիսի ձախ եզեր-
քին վրայ շինուած, այս անունով փաշայութեան մայ-
րաքաղաքն է : Աշխարհագրական երկայնութիւնն է 42°
և լայնութիւնը 33° : Ունի 80,000 քնակիչ, 20,000 տուն.
որոնց՝

7500	տունը Մահմէտական .	6000	տուն Արաբացի .
6000	" Հրեայ .	104	" Հայ .
180	" Քիլոտանի .	176	" Ասորի .
40	" Եւրոպացի :		

Գաղտատ՝ գետի կողմէն զատ ուրիշ ամեն կողմէն
աղիւսաշար բարձր պարիսպով շրջապատած է մէկ ժամ
արածութեամբ : Գարիսպը շատ անդամ քանդուած
աւերուած ըլլալով՝ զանազան ժամանակ նորոգութիւն
ած է և արտօաքին կողմն ալ խրամ բացուած : Այս
արիսպը 4 դուռ ունի : Քաղաքին մէջ կան հարուատ

վաճառանոցներ , հրապարակներ , մէկ քանի գեղեցիկ
տուններ , իջևաններ , զինուորանոց , հիւանդանոց .
շատ մզկիթներ , որոնց անուններն իրենց շինութեան
թուականով հետևեալներն են .

Թիւ	անուանք	տաճկ . թուական	
1	Ճամփ-իւլ—Մուրատիէ	870	
2	" " Ահմէտիէ	1224	
3	" " Փաշայ	1133	
4	" " Վէզիր	1008	
5	" " Մէհմէտ իւր Փալթըլ	1197	
6	" " Ադուլիէ	1095	
7	" " Հայրը խանէ	1243	
8	" " Մօլլա խանէ	1242	
9	" " Խասաքի	1094	
10	" " Ադլիէ	1170	
11	" " Սէյդ-Մուլթան-Ալի	1039	
12	" " Հոսէյն Փաշայ	723	
13	" " Շէյխ-Աբդ-Ղադըլ	840	
14	" իւլ Ղափլանիէ	1134	
15	" Խըդըլ—Բէդ	1133	
16	" իւլ Խաթուն	• • •	
17	" " Խաթուն	• • •	
18	" " Նէֆիսէ—Խաթուն	1113	
19	" " Օզբէդիէ	1242	
20	" իւլ Ղազէէ	1112	
21	" " Ալի—Լփէնստի	1130	
22	" " Ահմէդ—Լփէնստի	1220	
23	" " Նասամանիէ	1197	
24	Մըսջըդ	Գանջ Օսման	• • •
25	Ճամփ	Համ-իւլ-Մահլըն	1162
26	" "	Համ-իւլ-Մահլըն	• • •
27	" իւլ	Մահդիէ	• • •

28	Ճամփի	Ղամփար—Ալի	1201
29	"	Բաբուլ—Աղայ	...
30	" իւլ	Սէյյադ	1118
31	"	Հաջ—Էմին	...
32	"	Շէխ-Ռազմ-Ռուդ-Ռին	1192
33	" իւլ	Ղրղազէ	...
34	"	Հաջ—Ֆրթհի	...
35	" իւլ	Նասմանի	...
36	"	Սուգ—ըլ—Ղըֆըլ	1116
37	"	Բնաթուլ—Հասան	...
38	"	Շէխ—Շհաբուդ-Ռին	1115
39	" իւլ	Մուջանիէ	758
40	"	Իմամ-Ապագամ (Քու հանչի)	1115
41	"	Իմամ-Մուսա-Ըլքադ-ըմ	...
42	"	Մաշհէդ-Սլի (՚ Նեջի)	...

Ասոնցմէ զատ կան նաև փոքր մզկիթներ ալ :

Բաղնիքներ , որոնց անունները հետևեալներն են .

1	Համալ—ըլ—Ղոր	2	Համալ—ըլ—Եթեիմ		
3	" "	Քաջէ	4	" "	Ուժիք
5	" "	Մաշն	6	" "	Շորջէ
7	" "	Սեխիդ	8	" "	Ուեի
9	" "	Հէյտէր	10	" "	Ղադի
11	" "	Դմբուկ	12	" "	Քինջեալի

Խաներ , որոնց անունները հետևեալներն են .

1	Խան—ըլ Ղուուր
2	" " Զքղիլէր քէհեասի մեծ
3	" " " " փոքր
4	" " Մերջան
5	" " Օրթմէ
6	" " Տավուտ փաշայ մեծ
7	" " " " փոքր
8	" " Տէֆթէրտար

- 9 Խան -ըլ Քեթան
 10 " " Բեքիր
 11 " " Մեխում
 12 " " Ադիբեէ
 13 " " Զեն մուրաստ
 14 " " Մեմելեզի
 15 " " Քաղեզի
 16 " " Վեզան
 17 " " Լումիուկ
 18 " " Շըշալ
 19 " " Հեռիու
 20 " " Մֆիու հին
 21 " " " նոր
 22 " " Թութըն
 23 " " Զեզաղին
 24 " " Մութան հմուդի
 25 " " Ռըմահ
 26 " " Մըսալջէ
 27 " " Մոպլէ
 28 " " Քեպապջիէ
 29 " " Բրզլնի
 30 " " Թեմու մեծ
 31 " " " Փոքր
 32 " " Հննէ ընդընէ
 33 " " ԶԱԼ
 34 " " Զաջ
 35 " " Հաջի լող
 36 " " Բուգեիչ
 37 " " Զդիդ
 38 " " Եռհուդ
 39 " " Ահմէդ աղսյ
 40 " " Մեջէ

- 41 Խան - ԸԼ Տհրն
 42 " " Քինջ աղայ ;
 43 " " Ումեր բէդ
 44 " " Նեջիբ փաշայ
 45 " " Քմեք
 46 " " Սովու զեզլ
 47 " " Զո
 48 " " Սըղալին

Հայոց 2 եկեղեցի, որոնց մէկը՝ Ա. Աստուածածնայ անուամբ կառուցեալ 1638 թուականին Քրիստոսի, Քաղաքին արեւմտեան հիւսիսային կողմի՝ Մ'ԿՐՏԱՆ կոչուած թաղին մէջ . և միւսը՝ յանուն Ա. Երրորդութեան կառուցեալ 1852 թուականին, Շօրջէ կոչուած թաղին մէջ . 1 եկեղեցի քիլոտանցուց, 1 եկեղեցի ասորւոց, 1 եկեղեցի լատինաց, 1 եկեղեցի հայ հռովմէականաց . կան նախակրթական գպրոցներ իւրաքանչիւր ազգաց : Տաճկաց նախակրթական գպրոցները՝ որոնց թիւը 100 էն աւելի է, ամայի մնացած հին մկիթներու անկիւններու կամ գանացան թաղերու մէջ գտնուած էնչէֆէ կալուածներու մէջ աղքատիկ գրութեամբ շինութիւններ են, ուր հասարակ հաւաքաներ 20—30 ի չափ տղայոց մինչեւ Գուրձան կարդալ և արաբերէն ու տաճկերէն գրել կը սորվեցունեն, իւրաքանչիւրէն 4—5 զուրուշ ամսական առնելով : 15 ի չափ հարգեւներ, երեւելի մկիթներու մէջ, որոնց դասատուները գիտնական էքինտիներ են՝ էնչէֆէ կողմանէ տարեկան թոշակով կարգուած : Շատ մը հոյակապ շինուածներ, որոնց երեւելիներն են՝ Հարուն—Էլ Թէշիտի կնոջ Զօպէիտի և Շէյս—Ապտ—Իւլ—Գատիր—Շիլանիին գերեզմանները . փաշային պալատը (սորայ) . մաքսատունը՝ որ Ապաստիէ Խիւլաֆաններու շինութիւնն է : Սուդըլ Ղըզըլի Քորէի՝ որ Ապաստի Խիւլաֆայից ժամանակէն մնացած հին ու բարձր շի-

նուած մ'է , որուն շուրջը ոչ մզկիթ կայ հիմայ և ոչ աղօթատեղի : Տուներն առհասարակ աղիւսակերտ են՝ 6 էն 12 կանգուն բարձրութեամբ . կը գտնուին նաեւ քարաշէն ու փայտաշէն տուներ ալ , որոնց ձեւը Մուսուլի տուներուն կը նմանի . փողոցին կողմը պատուհան չունին , և ամառնային գետնայարկ (սէրտառ) ունին : Փողոցներն ընդհանրապէս նեղ ու անկանոն են . իւրաքանչիւր ազդ զատ զատ թաղերու մէջ կը բնակին : Բը նակիչներն անկիրթ են , բայց հիւրասէր : կը շինեն սեկ (սնիդին) , թամբի գործածներ (սբաճէլք) , մետաքսէ , բամպակէ ու բուրդէ կերպամներ , կտաւներ : կ'ընեն ուկերցութիւն , ներկարարութիւն , ոստայնանկութիւն , որմնադրութիւն , հիւմնութիւն , զինագործութիւն , դարբնութիւն , երկրագործութիւն : կը ձուլեն նաեւ թնդանօթ՝ յատուկ ձուլարանի մէջ : Քաղաքիս վաճառականութիւնն առհասարակ Պարսկաստանի , Հնդկաստանի , Արաբիոյ և Թուրքիոյ վրայ է : Քաղաքիս երեւելիները , զինուորական ու քաղաքական պաշտօնակալներն ու բոլոր օտարականները սպիտակ հանդերձներ կը հագնին ամառ ատեն , տակէն բարակ շապիկ մը , վրայէն ալ կամերփ կամ բամպակ կտաւէ ունիրէ և բանալն Հասարակ ժողովուրդն ու արաբացիները՝ թեւերն երկայն շապիկ , վրայէն բամպակեղէն ննորչ կը հագնին . մէջքերնին գոտի և սպիտակ կամ սեւ վերարկու (Ֆլաւ) , գլուխնին +էֆէտ , վրայէն էիլ փաթթած : կիները բամպակէ Տրապիզոնի սպիտակ կամ ներկուած վերարկու մը կ'առնեն վրանին , որով գլուխնին ալ կը ծածկեն , և երեսնին ալ սեւ բարակ սպիտակ կամ ձիի մազէ շինուած քողով մը կը գոցեն : Ոզնուական կանայք երբեմն ուսկէթել հիւսուածքով մետաքսեայ կտաւէ վերարկու մը կառնեն .

Քաղաքիս ջուրը Ցիգրիս գետինն է և լաւ է . բայց

քաղաքին բոլոր ապականութիւնը՝ ինչպէս որ ուրիշ ամեն գետեզերեայ քաղաքներուն ու գիւղերունը, գետին մէջ կը թափի ու գետին հոսանքը դանդաղած ժամանակ ջուրին երեսը յայտնի կ'երեւայ. ուստի քաղաքացիք ու մասնաւոր ջրկիրներ առհասարակ գետին վերի ծայրի կողմէն ջուր կառնեն, և իրարու տակ դրուած տեսակ մը սափորներուն վրայինին մէջ կը լեցունեն, որուն մէջէն մզելով կաթիլ կաթիլ տակի սափորին մէջ կը հաւաքի. այս հաւաքուած ջուրը մաքուր ու յստակէ, զոր կը գործածեն միայն խմելու և կերակուրի: Այս ջուրը պաղեցունելու համար ալ տեսակ մը հողէ մանր ամաններու (*շերպէ*) մէջ կը լեցունեն և գիշերները մինչև առաւօտ օդին կը դնեն. անկէ ետքը այս ջուրը ցերէկն ալ չի տաքնար շերպէն յատկութենէն. վասն զի շերպէն շարունակ ծծելով իր մէջի պարունակած ջուրը՝ միշտ թրջած կը մնայ և հողմ ալ քանի վրան փշէ. մէջի ջուրը աւելի կը պաղի: Աղքատ բնակիչներն առւսնց զտելու գետին աղտեղի ջուրը կը խմն և ուրիշ ամեն պիտոյից կը գործածեն: Օդը բաւական առողջէ. ամառը սաստիկ տաք կընէ ցերէկները. ժամը 4 էն մինչև 12 կիզող հովեր (*ամ եւէ*) կը փշեն. 12 էն ետքը՝ գիշերը ցուրտ կընէ և պաղ հովեր կը փշեն. ջերմ և թանձք ցուրտ հիւանդութիւնները շատ կը պատահին հոս. և հայոց բանին նման՝ միրթոյ հիւանդութիւն մը միշտ կը տիրէ, որ կըսուի պարագաներն, զոր երկրացի և օտարական անխօտիր կը հանեն մէկ անդամ մը միայն: Երկրացիներն առհասարակ տարեկան մը ըլլալուն վերջը կը հանեն, բայց օտարականներն այս հովերուն մէջ ուռք կոխելուն քանի մը օր ետքը կանուխ կամ ուշ, երբեմն ալ տարիներ անցնելէ վերջը, թէ և իրենց հայրենիքն ալ դարձած ըլլան:

ԲԱՐԵԼՈՆԻ ԿԱՄ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԿՈՒՌՆ
Պաղտատ կամ Հալէպ չըպահը(1):

Ասիկա մորթոյ ախտ մ'է , կեղալից , խեցամորթի ձեռվ և երկարատեւ , որ կը տիրէ Ասորեստանի և Միշտետաց բոլոր սահմաններուն ընդարձակ տարածութեանց մէջ , զորօրինակ . Օռֆայ , Մուսուլ , Տիարպէքիր , Հալէպ , և լու և լու :

Այս ախտը մարմնոյն վրայ մէկ կամ շատ խումբ կոկններ կամ երբեմն միակ կոկոն մը դուրս կուտայ , ու լուն սկսին ու վերջ մնալը միշտ մէկ տարի կը տեէ . Երբեմն ալ առաւել և վերջն իր տեղն անջինջ սպի մը կը ձգէ . Մի և նոյն անձի վրայ իր բոլոր կենացը մէջ միայն մէկ անդամ կը պատահի : Կոկոնը միակ եղած ատեն արու , և բազմապատիկ եղած ատեն էգ կը սուլի ըստ արարացւոց : Արուն սովորաբար ընդարձակ ու մեծ կըլլայ . բայց էգը փոքրիկ և մարմնոյն զանազան կէտերուն վրայ փուլի պէս ցըցըկնած : Էդ կոկոնները ամենը մէկին երեան կենսեն , որոնց թիւը միշտ անորոշ ու անհաստատ է , և մինչև 77 գլխաւոր կոկոն մի և նոյն անձին վրայ տեսնուած է բայց 'ի փոքրիկներէն , որ անոնց ամեն մէկին բոլորտիքն ելած կըլլան : Արու և էդ կոկոնները տարբեր տեսակ ախտեր չեն . Երկուքին ալ ընթացքը , տեսողութիւնը , վախճանը միշտ միօրինակ են : Կոկոնը 'ի սկզբան փոքրիկ բան մ'է , ոչ ցաւ կունենայ և ոչ բարձրութիւն մը կը ձեւացընէ մորթոյն վրայ և հաղիւ կը տեսնուի : Առջի օրերուն մէջ ծանր կաճի , և մինչեւ 3 ամիսէն ետքը կաղնոյ չափ

(1) Bouton de Bagdad et d'Alep .

կը մեծնայ, կը կարմրի և շատ կը ցաւի :

Անկէ ալ մինչև երկրորդ եռամսեայ շրջանին վերջը կը շարաւանայ ու կեղ մը կը շինէ, որուն լայնութիւնը սովորաբար մեխտալիկ քաւառունոցի շափ կըլլայ, երբեմն ալ աւելի մեծ և մինչև արծաթ հանչէ տարածութեան շափ : Մէկ խոնաւ և սպիտակագոյն կեղեւ մը շարունակ կը ծածկէ սոյն կեղին մակերեսոյիթը, որ մերթընդ մերթ փրժելով կամ ճեղքուելով մէջի շարաւրդուս կուտայ, և դարձեալ կը նորոգի, և ասանկ յաջորդաբար մինչև վերջը կը շարունակէ : Բաւական շարաւ կը գոյանայ առհասարակ գեղնագոյն և անհոտ, և երբեմն ալ դարշահոտ : Այս կեղեսին բարձրութիւնը խիստ շատը 0.01 մէթրօյի կը համնի . կեղը ասանկ շենուելէն ետքը 5—6 ամիս կը տևէ . և վերջը կապիանայ : Ոչա կոկոնի սկզբնաւորութենէն մինչև կատարեալ սպիանալը ընդհանրապէս դրեթէ տարի մը կը տևէ : Այս կեղը չորնալ ու գոցուելէն ետքն՝ իր տեղը տձեւ, ճնշուած ու խորունկ սպի մը կը ձգէ, որ նախ կարմիր գոյն մը կունենայ և հետզհետէ գոյնը կը կորսնցունէ և անջնջելի կը մնայ . կոկոնը առհասարակ մարդուն դէմքին վրայ, մանաւանդ այտերուն վրայ կելնէ, երբեմն ալ մարմնոյն ուրիշ կողմերուն վրայ : Բնիկ երկրացիներըն առհասարակ մինչև երկու երեք տարեկան անսպատճառ պիտի հանեն : Երբէք տեմնուած չէ՝ որ երկրացի տղայ մը մինչև 10 տարեկան ըլլայ ու կոկոն չըհանէ : Կաթնասուն մանկանց համար հաղուադէպէ : Օտար երկիրներէն այս կողմերուն մէջքնակութիւնն հաստատող անձանց համար չէ ըսած . ասոնք երբեմն վեց տամսուան մէջ, երբեմն տարի մը, երկու, մինչև տասը և աւելի ևս անյներէն ետքը կը հանեն : Սա միայն փորձով հաստատուած է որ երբէք օտարական մը չը կրնարդ մնալ այս ախտէն, թէ և ձգէ այս երկիրն ու հե-

ո.աննայ անկէ . վասն զի միշտ իր հետ կը կրէ հիւան՝ դութեան թաղուն սերմը (germe en incubation) : Օտարական մը նաև 3—4 օր ալ միայն կեցած ըլլայ այս հողերուն մէջ , անպատճառ կանուխ կամ ուշ պիտի հանէ զանի : Սակայն մէկ քանի հաղուագիւտ բացառութիւններ կան . զորօրինակ . ձերման անուն անձը՝ 69 տարի չալչպ նստաւ և 83 տարեկան մեռաւ առանց կոկոն հանելու : Նոյնպէս Պարոն 8իզօ , որ 30 տարիէն աւելի է որ չալչպէն ելած է , մինչև հիմա անարաա մնացեր է : Նոյնպէս ես , սպասաւորս և 40 ճանապարհորդակիցներէս 4 ը մինչև հիմա 18 տարի աղատ մնացեր ենք , թէպէս և շաբաթներով այս վայրերուն մէջ բնակեցանք . ու շրջեցանք :

Կըսուի որ խուլագարներուն (սըռաճալը , serofuleux) ու ափրողիտեան ախտէն բռնուածներուն (ֆլրէնկի , syphilitis) վրայ կոկոնը շուտ մը երեան կելնէ աւելի ուժով և աւելի ծանր կերպարանքով մը: Փորձը կը սովորեցունէ թէ կոկոնը բռնութելու համար միակ լաւագոյն դեղը՝ զանի չը խառնելն է միայն . ուստի պէտք է կերպ մաքուր բռնել շարունակ դադջ ջուրով լուալով :

Բժիշկներէն ոմանք կըսեն որ 3—4 ամսական կոկոն մը շարաւանալու սկսելէն առաջ կրակով երելով համառուսած են անոր տեսողութիւնն ու տարածութիւնը : Հաստատուած է որ կոկոնը տարապիտիկ չէ . երբէք տեանուած չէ որ ախտակիր երկրացի մը օտար երկիրներ՝ ուր որ հիւանդութիւնը չը տիրէր , դաշաճ ու հոնիրմէ ուրիշի մը փոխադրելով տարածած ըլլայ այս ախտը : Պէտք է գիանալ նաև որ պատուաստելու փորձերըն ալ ապարդիւն մնացած են . շատերն աշխատեցան որ պատուաստով դոնէ կարող ըլլան դէմքէն զատ ուրիշ տեղի մը վրայ զանի արտադրելու , որով ախտակիրը զերծ մնայ այն տղեզութենէն՝ զոր կը պատճառէ

կոկոնին տձեւ սպին անոր դէմքին վրայ անջինջ դրոշմելով։ Իոկոնը շուներուն վրայ ալ կելնէ ։ Այս տեղական և տիրող հիւանդութեան բուն իսկ պատճառն իմանալը դժուար է. այս խնդիր մ'է, որ մինչեւ հիմայատնի ապացուցական վկայութեամբ լուծուած չէ ։ Բժիշկներէն ոմանք կը կարծեն թէ պատճառը չուրն է.

Պաղտատի բանակին կեդրոնը հոս է, ուր միայն 3 գունդ զօրք կը դանուէր :

Գեախն աջ կողմին վրայ և քաղաքին դէմ շինուած է արուարձանն, ուր կը բնակին արաբացիներ, խրճիթներու, վրաններու, հողաշէն և մէկ քանի ալ վայտաշէն տուներու մէջ :

Գեախն վրայ Պաղտատին մինչեւ արուարձանը 600 ոտնաշախ երկայնութեամբ փայտաշէն նաւակամուրջ մը կայ, որ կապով պատուած 27 հատ անարուեստ նաւակներով շինուած է :

Ապասեան ցեղէն Ապու—Ճաֆէր—Սլմանսուր Ռ. Ալիրապետը (Եւլիչ) հիմեց Պաղտատ քաղաքը՝ Քրիստոսի 762 թուականին կամ 143 թուականին տաճկաց, հին Սելլվիոյ մօտերը ։ Կըսուի թէ այս քաղաքին տեղը Դատ անունով մէկուն այդին է եղեր, որ իր անուամբը Պաղ-իւլ-Դատ կը կոչուի եղեր. վասն որոյ Ալմանսուր՝ քաղաքը հիմնարկած ժամանակը մի և նոյն անունը պահելով Պաղտատ անուաներ է : Այս քաղաքը հինգ դար շարունակ արաբացւոց տէրութեան մայրաքաղաքն եղաւ. Քրիստոսի 1238 թուականին (636 հինդէ) Ճինկիզ խանի չորրորդ զաւակը՝ Հուլակու անուն բոնակալը նուաճեց քաղաքն և 150 տարի շառնակ տիրապետեց. անկէ ետքը պարսկաց ձեռքն սնցաւ. և 1534 ին (940 հինդէ) Սուլթան Սիւլյան տիրեց քաղաքին մինչեւ 1623 թուականը, երբ քաղաքցիք ապստամբեցան. և վերջապէս Սուլթան Մուրատ

Դ. Երկար ատեն պաշարելէն ետքն՝ առաւ 1648 թուա կանին՝ (1048 հիմք) Պարսից ձեռքէն .

14 օր կեցանք Պաղտատ , ուր շատ հիւանդներ դարմանեցի և 1000 ի մօտ պատուաստ ըրի :

Մարտի 24 ին Երկուշաբթի օր ժամ 3½ Տիգրիսի վրայ նաւել սկսանք Պատրա Երթալու համար :

Կուսակալն , պաշտօնակալներն և քաղաքացւոց Երեւելիներն ուղեկից եղան մինչև Պաղտատի նաւահանգիստն , ուր պատրաստ էին գրոշակակիր Երկու նաւակներ մեզի համար , և մէկ ալ մեծ ու բարձր նաւ մը կահ կարասեաց և պարէնի համար : Ոյս նաւակներուն Երկայնութիւնն էր 25 կանգուն . ունէին մէկ մէկ սենեակ (± չոչ) բանջարը 8 պատուհաններով , 20 ական թի , առաջաստ կրող մէկ մէկ հաստ կայմեր , 3 ական թնդանօթ և պահապան զօրքեր : Նոտանք նաւակներն ու ելանք ճամբայ . Քաղաքը թնդանօթներսվ բարեւց մեղ . կամուրջը բաց էր . յաջող հով մ'ուռեցուց առադաստները . թիավարներն ալ սկսան քաշել , և գետին ընթացքն ալ նպաստելով նաւակները թռան լարեալ աղեղէ մ'ելած նետի պէս , և շուտ մը ամեն բան կորսնցուցինք աշքերնուս առջեւէն : Պաղտա ոի արուարձանը շատ մը ճառաստաններ կը ներկայացնէր և քաղաքին պարսպէն անդին արմաւենիի անտառներու մէջէ կը սպրդէինք , որոնց մէջ արաբացիներու բնակութիւններ կը տեսնուէին և կանայք մեր ճանապարհը կ'օրհնէին : Հազիւ ժամ ու կէս անցաւ , այս գեղեցիկ տեսարանն ալ կորսնցուցինք . անկէ ետքը չոր անսապատներէ զատ բան մը չէինք տեսնար , միայն թէ տեղ տեղ արտեր .

Պաղտատէն մինչեւ բաւական հեռաւ.որութեամբ վար՝ գետին ջուրը խիստ պւառը ըլլալուն անկարելի էր խմելը . վասն որոյ մեծ սափորներու մէջ լցունելով

զտուելէն ետքը կը գործածէինք . Այսօր հովը շարունակ յաջող ըլլալով՝ առագաստները չը պարպուեցան :

Պաղտատէն Յ ժամ հեռի գետին ձախ կողմը եղերքին վրայ իջանք ժամ 9 ին : Հոս ձիեր ալատրաստուածէին , նստանք ու գացինք Հուբէնէ — ուլմանէ բու— ուլմանէ հոնեսի ըսուած տաճկաց ուխտատեղին՝ գետէն մէկ քառորդ ժամ հեռի : Ասոր մօտն էր Տէլման , եսրա ըսուած շէնքի մը մնացորդը , որուն լայնութիւնը 20 կանդունի , բարձրութիւնը 20 կանդունի և երկայնութիւնը 60 կանդունի չափ էր . Հոս աւանդաբար կը տեն՝ թէ այս Նուշի— ըէվան թագաւորին կռատան մնացորդն է , որ ըսել է 2500 տարուան չէնք է . Պատերը տեղ տեղ ճեղքը տածած էին , և կամարը տեղ տեղ փլած փլիլկած , պատերուն փայտէ հոնըները դեռ չէին փտտած :

Ուխտաեղիէն ետ դառնալով գիշերը նաւերուն մէջ մնացինք

Մարտ 25 ին երեքշարթի առտու ժամը 11 ½ ին՝ նաւակներուն առագաստները բացին , թիավարները թի քաշել սկսան մինչև իրիկուն . Ժամը կէսին գետին աջակողմը Պուշտորէ անուն տեղը հասանք , ուր մարտկոց մը կար և քիչ մ'ալ անդին պարիսսպը : Մինչեւ հոս դարձեալ երկու կողմը անապատ էր :

Մարտի 26 չորեքշարթի օր առտուն ժամը 12 ին՝ նաւակներն սկսան ճամբայ ենել . այսօր գետին երկու եղերքներուն վրայ կուգային կը մօտենային շատ մ'արաբացիներ զաւկներով ու կնիկներով , կը պարէին կ'երգէին կ'օրհնէին Սուլթանն ու Պէյը , և 'ի նշան ուրախութեան նուիրել կուգէին իրենց գեղեցիկ ոչխարները . Երջն իրենց խեղճութիւնը լալով կը յայտնէին և դարձան կը խնդրէին : Մօտեցանք գետեղերքին . Սենեկապե-

Մը դրամական օգնութիւններ ընելով քաջալերեց զանոնք։ Այս արաբացինները՝ կուսակալին չէին հնաղանդեր. իրենց վայրեան իշխանութեանը տակն էին։ Ասոնք միայն շապիկով մը ճակերու (իւրաքանչ) վրայ հեծած՝ ձեռքերնին մէկ մէկ շարադր առած՝ կարավաններ կը կողոպտեն մարդասպանութիւններ կը լինեն։

Իրիկուան ժամը 10 ին գետին աշ կողմը ելնելով գիշեր կեցանք։

Մարտի 27 հինգշաբթի առառու ժամը 11 ½ ին նաւակինները ճամբայ ելան։ Այս կողմերը գետը շատ ընդարձակ էր. երկու կողմի անապատներուն մէջ և մինչեւ գետեղերքներուն վրայ թուփի պէս մանր ծառերով անտառներ կային, որոնց մէջ տեսակ տեսակ անասուններ կը գտնուէին, առիւծ, խող, ինձ, ճագար, զանազան թռչուններ, որ գետին ջուր խմելու կը դիմէին։ Այս անապատներուն մէջ՝ մանաւանդ գետոյն վրայ ամեն տեղ ասանկ ամառնային եղանակներուն մէջ անթիւ ճանճեր կը դոյանան, որ կը խայթեն և ճանապարհորդը խիստ անհանդիստ կը լինեն։

Իրիկուան ժամ 11, գետին աշ կողմը ելանք, ուր սլարիսապ մը կար. չոս գիշերը անցուցինք։

Մարտ 28 ուրբաթ օր առառուան ժամ 11, նաւակները ճամբայ ելան և իրիկուան ժամ 10 ½ ին մօտեցանք հետ-ըսուած տեղը, ուր կար վրանաբնակ արաբացիններու բնակութիւն։ Հոս ծիգրիս երկուքի ճղքուելով կղզի մը կը ձեւացունէ, որ կըսուի Մահմէտ հո,։

Մարտ 29 շաբաթ առառու ժամ 11, նաւեցինք և երեկոյին գետին աշ կողմը կեցանք։

Մարտ 30 կիրակի առառու ժամ 12, նաւեցինք և
4 ½ ին գետին ձախ կողմը կեցանք :

Մարտ 31 երկուշարթի առառու ժամ 11, նաւեցինք
և 6 ժամ ետքը գետին ձախ կողմը կեցանք :

Ապրիլ 1 երեքշարթի առառու ժամ 11 նաւեցինք :
Հաղիւ Յ Ժամ նաւած էինք՝ հեռուէն տեսանք անթիւ
արաբայիներու խումբեր , ձեռքերնին սուր ու վահան,
որ արեւուն շառաւիղներէն կը շողային և հրացաններու
ճայթիւններ կը լսուէին : Այս յանկարծագէպ աեսարա-
նը քիչ երկիրւդ չը պատճառեց մեզ . շփոթեցանք և խա-
կոյն առադաստները ժողովել տալով գետին աջ կողմի
եզերքը քաշել տուինք նաւակներն ու սպառագիննեալ
ցամաքն ելանք . շուտ մը պատգամաւոր դրկեցինք ա-
նոնց՝ մեր հետ դտնուող սէյխարը , իմացունելու համար՝
թէ մենք պիտի անցնինք , ի՞նչ կը պատասխաննեն . Շատ
չանցաւ , մեր պատգամաւորը պատասխան բերաւ՝ թէ
կրնանք անցնիլ աներկիրւդ , և ըսաւ որ այս պատե-
րազմը նոր չէ , քանի մը ամիսէ՝ ՚ի վեր է որ ուշենիւը
կրնեն . Անոնք օտարականի զնաս չունին , մանաւանդ
ձեզի՝ որ իմացած են թէ Սուլթանին փոխանորդն
էք . անոնք կը յարգեն ձեղ և ապահովութեան համար՝
ըսաւ , իրենց սէյխոն ալ հետ դրկեցին : Այն աստեն մը-
տանք նաւակներն ու քաջուեցանք սենեակներուն մէջ ,
որոնց վանդակաձև փեղկերն (բանջուր) ալ գոցեցին ,
և աճապարանօք անցանք բանակատեղիէն առանց վը-
տանգի : Այս պատերազմն եղած տեղ Շադը երկուքի
բաժնուած էր , որուն մէկ ճիւղը կերթայ ՚ի Պարսկաս-
տան և միւսը ՚ի Պասրա :

Պատերազմի դաշտին մէջ 50—60 հազարէն աւելի
մերկ արաբացիներ կային , որոնց շատին մէկ ձեռքին

մէջ երկաթածայրը երկար դարձւ մը կար և միւսին մէջ ալ վահան մը . ոմանք սուսերամերկ էին , ոմանք ալ երկար հրացաններ ունէին . ասոնք խումբ խումբ բաժնուած էին և տեսակ տեսակ դրօշակսեր կը կրէին , արեւուն տաքէն պատուպարելու համար բոլոր մարմիննուն վրայ տիղմ քսած էին : Այս ցամաքային խումբերէն զատ՝ կային նաև հրացանակիր անթիւ գետայիններ , որ շատ մը եղեգնաշէն նեղ ու երկայն նաւակներու (թուրատէ և պելեմ կոչուած) մէջ նստած կը պատերազմէին : Պատերազմին դաշտը մեռնող հայրենակցին դիակին քով կը տնկէին ձեռքի շուրջն ՚ի նշան քաջութեան և հայենասիրութեան : Այս վայրերէն անդին գետին երկու եղերքներուն վրայ մէկ քանի ժամ շարունակ արաբացւոց մեծ ու երկար սև վրաններ կային , ուրկէ հետզհետէ խումբ խումբ պատերազմին դաշտը կը դիմէին : Այսօր մինչև դիշերոյ 1 ½ ժամը շարունակ նաւելով իսպառ հեռացանք այս արիւնուոգվայրերէն , և ելանք գետախն ձախ կողմը դիշերը լուսցուցինք :

Ապրիլ 2 չորեքշաբթի օր առտուան դէմժամ 9 ին նաւեցինք . քանի մը ժամ ետքը գետեղերքին վրայ էտչէր բնութիւն զէտէնէ ըսուած տեղն ելանք . հոս գետին երկու եղերքներուն վրայ երկու փոքրիկ ունիներ կային . դիշերուան ժամը 1 ½ գետին աջ կողմը Մընթէնից շէյխին մաքսատան տեղն ելանք :

Ապրիլ 3 հինգշաբթի առտու ժամ 11 , նաւեցինք և 1 ժամէն հասանք գետին աջ կողմը Քօռնա . ասոր առջև իդրատ ու Տիգրիս գետերը իրար կը խառնուին . և այս երկու գետերուն միաւորութեամբը շինուած ընդարձակ գետը Շուշ էու արագ կըսուի , որ Քօռ-

նայի առջեկն սկսելով կերթայ կը թափի պարսկաց ծոցը 5 բերաններով, որ կը կոչուի Քօստոսոսունչ ։ Քօսունայէն մինչև գետին բերանը 200000 մէթրօ է ։ գետին ընթացքն ու ուղղութիւնն արևմոեան հիւսիսային կողմէն դէպ 'ի արեւելեան հարաւ։

Քօսնա՝ Պատրայի ար մտեան հիւսիսային կողմը 58 000 մէթրօ հեռաւորութեամբ Եփրատի ու Տիգրիսի իրարու խառնուած տեղին վրայ շինուած 6 կամ 7 հարիւր տնով դիւղ մ' է երկու գետոց մէջ աեղը⁽¹⁾։

Ունի 5000 արաբացի բնակիչ ։ Այս դիւղը լեզու մ'է, որուն աջ կողմէն Եփրատ կանցնի, և ձախէն Տիգրիս։

Տուները եղեգնաշէն են արմաւենիներու և ուրիշ տեսակ ծառերու մէջ ։ Ունի արտեր և պարտէղներ ։ Հոս ելանք նախաճաշիկ ըրինք, ուր դիմաւորութեան եկած էին Պարայի կառավարիչն ու քաղաքացւոց երեւելիները ։ Շատ մը թնդանօթներ նետուեցան ։ Այս վայրերուն մէջ Տիգրիսի և Եփրատի ամեն եղերքներուն վրայ արմաւենիի անտառներ պակաս չէին ։ Պարսկային ծոցին մակնթացութիւնն ու տեղատուութիւնը երկու գետերուն մինչև այս կողմերուն վրայ կը հասնէր, որով այս երկու գետերուն ջուրն օրն երկու անգամ կամի կուռենայ, երկու անգամ ալ կը նուազի կը քաշուի ։ Մէկ աւուր մէջ պատահած այս երկու մակընթացութիւններուն իրարմէ հեռաւորութիւնը 10 ժամ է ։ Լուսնոյ ամսոյ նորելուն առտուան ժամ 12 ին գետին ջուրը բարձրանալով կոկսի առաջին մակընթացութիւնը, և 1 ½ կամ 2 ժամ աւելէն վերջը քաշուելով կը լայ առաջին տեղատուութիւն ։ 10 ժամէն ետքը՝

(1) Հոս շինուած էր հին Ապամիա կամ Տիկպա։

այսինքն իրիկուան ժամ 42 ին կրկին անդամջուրը բարձրանալով կըլլայ երկրորդ մակրնթացութիւնը , որուն կը յաջորդէ երկրորդ տեղատուութիւնը՝ գիշերը ժամը 1 ին կամ 2 ին ջուրերուն կրկին քաշուելովը : Ամիսը քանի որ լրանայ , առաւօտեան մակրնթացութիւնն ալ այնքան ուշ կակի ըլլալ . այսինքն առատուան ժամը 12 ին ըլլալու տեղ ժամը 1 ին , 2 ին , 3 ին են . նոյնպէս ալ երկրորդ մակրնթացութիւնը իրիկուան 42 ին սկսելու տեղ՝ քանի ամիսը հիննայ՝ զիշերուան 1 ին , 2 ին , 3 ին , են . կ'սկսի . և մերջապէս ամսոյ նորողման կրկին առատուան ժամ 42 ին կ'սկսի : Մակրնթացութենէն օդուտ քաղելու համար գետեղերքներուն զանազան կողմերուն վրայ գէպ ՚ի գաշտը երկար խրամներ (1) փորածեն , որ գետերուն ջուրն օրն երկու անդամ , առատուան և իրիկուան մակրնթացութեանց ժամանակ) բարձրանալով մէջը կը վազէ ու կերթայ կ'ոռոգէ արտերն ուժառերը , և ետքը ինքնիրեն (տեղատուութեանց ժամանակ) կը քաշուի :

Քանի մը ժամ քօռնա կենալուս վերջը՝ ժամ 6 ½ ին մտանք նաւերն ու ճամբայ ելանք , շատ մը նաւակներու ու նաւերու հետ , որ կը կրէին դիմաւորութեան եկողբազմաթիւ պարացցիներ : Քօռնայէն 32000 մէթրօ վարկամ Պասրայէն 26000 մէթրօ վեր գերափին Հայս կողմը կը թափի Քէրան կամ Քէրտան ըսուած Պարսկաստանի գետը , որ սկիզբ կառնէ Քրդաստանի հիւսիսային կողմերէն և 600000 մէթրօ երկայնութիւն ունի : Գետին վրայ շատ տեղեր եղեգէ շինութիւններ (տալեան) կային ձուկ որսալու համար : Քօռնայէն մինչեւ Պասրա գետին

(1) Այս խրամներս Առաջ կըսուին , որ չինծու առուակ ներու կը նմանին :

երկու կողմերուն վրայ անընդհատ արմաւենիի անտառներ կ. մ. 2 — 3 ժամ խորութեամբ . այս ծառերն իշտարմէ մէկ մէկ կանգունի չափ միայն հեռաւորութիւն ունին : Քոռնայէն մինչև Պասրա նաւակները միայն թիքաշելով 12 ժամ կը տեսէ . բայց յաջող հով մը Յ^{1/2} ժամու մէջ մեղ տարաւ ձգեց Պատրայի նաւարանին առջև գիշերը ժամը 1 ին : Այս ժամանակ տեղ՝ տութիւն ըլլալով ջուրերը քաշուած էին , և նաւակները չը կրնալով յառաջ երթալ՝ մնացին ջուրին քաշուած տեղին վրայ , ուր փոքրիկ նաւակներ (ողելէն) բերած էին մեզ առներու համար . մոռանք ասոնց մէջ . արաբացիները տիղմին մէջէն հրելով քաշելով տալին Մէննէվի գիւղին մէջ , ուր ելանք գիշերը կեցանք . Այս գիւղը պարտէզներու ծառերու մէջ էր . ունէր 200 տան չափ բնակութիւն :

Ապրիլի 4 ուրբաթ առոտու ժամ 4 ին հեծանք ձիերը ու ծառաստաներու մէջէն անցնելով , ուր տեղ տեղ վրանաբնակ և հողէ շինուած փոքրիկ խրճիթներու մէջ բնակող արաբացիներ կային . քառորդէն մտանք Պասրա մեծ հանդէսով :

Պ Ա Ս Ր Ա :

Ասիական Տաճկաստանի մէկ քաղաքն է Շահ Էւլ արանի վրայ , Պարսկաց ծոցին հիւսիսային կողմը . ուր կէ 88000 մէթրօ հեռու է , և Պաղտատի արևելեան հարաւային կողմը , ուրկէ ալ 410000 մէթրօ հեռու է :

Աշխարհագրական երկայնութիւնն է $45^{\circ} 20'$, և լայնութիւնը $30^{\circ} 16'$:

Այս քաղաքն՝ որ երբեմն պարսպապատ էր և աւելի ընդարձակ , բարդաւած և Տաճկաստանի վաճառաշահ

քաղաքներուն ամենէն հռչակաւորը, ուր շատ եւոսպացին վաճառակ սննոր մ.ծ տուներ բացած էին, և 150000 էն աւելի բնակչաց պատսպարան էր, այսօր անոր պարսպը բոլորովին քայլայեալ է, տուներուն շատին տանիքներն ու որմերը փլած, գուռները կրնակի վրայ բաց, շուներու և անասնոյ բնակարան եղած է, և հաշիւ 10000 ժողովուրդ. կը պահէ 1000 ի չափ տուներու մէջ. վասն զի օդին գէշութիւնը, ֆէլլահներուն բարբարոսութիւնը, մաքսերուն և իհթիսապիէի ծանրութիւնը, և մանաւանդ դլասաւորապէս քակէրայի երբեմն երբեմն ըրած սարսափելի կոտորածները պատճառ եղած են բնակչաց նուազելուն և քաղաքին կործանմանը: Հիմա վաճառականութիւնը բոլորովին դադրած է. վաճառական մը շրկայ, և ոչ ալ վաճառականաց նաւերը կերպեւեկեն: Հնդկաստանէն երբեմն յաճախող շողենաւերն ալ հազուառես եղած են. Այս քաղաքը Շադ — իւլ — արասլին անմիջապէս եղերքին վրայ չէ. բայց գետեզրէն մինչև քաղաք փորուած առուներուն մէջէն անոր ջուրն օրն երկու անգամ (երկու մակրնեցութեանյ ժամանակ) կերպայ. կը ջրէ քաղաքին մէջի և շրջակայ արտերն ու գարտէզները, և մէկ երկու ժամէն վերջը (տեղատուութեանյ ժամանակ) կը քաշուի: Ցուները բարձր են և աղիւսաշէն կամ նոողայն շինուած. վրանաբնակներ ալ կան. քար քիչ գըտնուելուն համար սոսկ քարաշէն տուն շրկայ: Ցուներուն մէջի ձեղունները արմաւենիի անկոփի գերաններով շինուած են անզարդ և աններկ: Ցուներուն վրայ էիրեմոյ շրկայ, և անոր տեղ տանիքին գերաններուն վրայ արմաւենիի տերևներով հիւսուած փսիաթներ գրուած են՝ վրայէն հողով ծեփուած: Ոմեն տան մ.տ փուեր կան պիտոյից համար: Փողոները անկարգ, նեղ ու անտեղի են: կան աւերակ եղած շատ մը. հրապարակներ

ու վաճառանոցներ . 420 ի չափ խանութով նորաշէն շուկայ մը՝ որուն 30 խանութը միայն բաց է . 25 ի չափ մեծ սրճարաններ՝ ուր կը յաճախեն քաղաքայիք . 100 ի չափ մեծ ու ամուր խաներ՝ անտէր ու երեսի վրայ մնացած . քանի մը բաղնիք՝ մէջը մութ ու ցած , գետինն ալ մարմարինի տեղ կպրածիւթ . ապարան մը՝ քաղաքին կառավարչին յատկացեալ . ուր մենք նստեցանք . Այս ապարանին մէջ ընդարձակ բակ մը կայ , որուն մէջ արաբացի անկանոն զինուորներ արուեստական զինախաղութիւն մ'ըրին . քանի մը մըզ կիթ՝ որոնց մէկը Հայենք Ալէն ոտքին կոխած տեղին վրայ շինուած է . 1 Հայոց փոքրիկ եկեղեցի , և 1 ալ ֆուանկաց . 10000 բնակիչ , որոնց 100 ը միայն հայ է . մէկ քանին եւրոպացի . մէկ քանին ալ քաղդէացի և ասորի . իսկ մնացեալները հրեայ , պարսիկ և մահմէտական արաբացիներ են : 100 ի չափ կանոնաւոր զօրք և 300 ի չափ ալ անկանոն : Հայենք Զէ-Պէտք զէ-Շէն հաւան ալ քաղաքին մօտերն է : Լիիման տաք է մանաւանդ ամառը . ցերէկն որչափ որ կեփի , գիշերներն ու առտուններն ալ այնքան սասափիկ ցուրտ հով մը կը փչէ անդադար : Քաղաքին բաց ականներուն դարշահոտութեան և վուոցներուն ջրանցքներուն ու ջրամբարներուն անմաքրութեան և մանաւանդ Եփրատի ողողման պատճառաւ երկրին օդն որքան որ ապականեալ է , այսու ամենանիւ դիւրին է առողջարար և պատուականագոյն ընել . բայց պէտք է յատուկ ճամբայ մը շինել՝ որ ականները մինչև գետ տանի թափէ . փողցներն ու ջրանցքները և ջրամբարները մաքրել . Ջընանցքներուն ու առուներուն եզերքներուն վրայ ուռիներ անկել . արդէն ալ կան տեղ տեղ . Եփրատ գետին նզերքին վրայ պատ մը շինել՝ որ դաշտը չողողէ և ճահիճներ չը ձեւացունէ : Քաղաքին ջուրը ծանր է , վասն

զի ջրամբարներուն մէջ անշարժ կը մնայ . բայց հա-
րուատները Քէ-Ծէ Ֆէկանին կամ Քօռնայէն բերել կու-
տան՝ որ աւելի աղէկ է :

Առողջութեան ամենակարևոր պիտոյից պակասու-
թեան պատճ սուաւ բնակիչներն ընդհանրապէս վատա-
ռողջ են և հիւանդ : Քաղաքին մէջ և շրջակայ վայրե-
րուն վրայ արգաւանդ պարտէղներ կան տեսակ տեսակ
ծառերով , ինչպէս են՝ խնձ. րի , սալորի , արմաւի , սև
թութի , ճոռի , հնդիկ արմաւի (տէմիր հինտի) , տան-
ձի , սերկելիի , դեղձի , լիմոնի , փօրթուքալի , խաղո-
ղի . նուան , և լն ծառեր . խահվէի ծառ չըկայ : Քաղա-
քին շրջակայ արտերուն մէջ աւատափար կը բումնին
ցորեն , դարի , բամզակ , նէնդէկ , +ըու , և լն :

Նահանդին ջուրն աւատ ըլլալուն՝ հողն ալ շատ
ուժով է և բարեբեր . թէ որ օրինաւոր կերպով հոգ-
տ որուի մշակութեան , անտարակոյս բերքերը կը բազ-
մապատկին . վասն զի շատ կողերուն հողերը՝ տարին
երիու անդամ բերք կը հասցունեն , զոր օրինակ , ցորեն .
գար և լն . Հոս ոչխարները մէկ տարւոյ մէջ երկու
անդամ կը ծնին . Մարդկային սեռին ծննդական կարո-
ղութիւնն ալ շուտ կ'սկսի , անանկ որ 12 տարեկան
աջիկ մը կընայ ծնանիլ . վասն որոյ ծնողք սովորաբար
կամուռնացունեն իրենց 11 կամ 12 տարեկան դեռա-
հաս ղաւկըները :

Հաղթէթի էօմէր շինեց Պատրա 636 թուականին ,
և մասնաւոր փաշայութեան մը մայրաքաղաքն ըրաւ .
պարսիկներն ու տաճիկները փոխանակաւ նուաճելով ի-
րարու ձեռքէ առին (1638) . 1673 էն մինչև 1779
պարսկաց ձեռքն անցաւ . վերջապէս 100 տարիէն ա-
ւելի է որ տաճկաց ձեռքն է և Պաղտատի փաշայէն
կախումն ունի : Հոս 4 օր միայն կեցանք և շատ մը
հիւանդներ դարմանեցի :

Ապրիլ 9 չորեքշաբթի առտու ժամ 2, նստանք 6
նաւերու մէջ, զոր, մակընթացութեան ժամանակ ըլ-
լալով. առուներու մէ էն մինչև մեր օթս ան ըրած ա-
պարանին առջւ բերած էին. թիավարներն սկսան
գերաններով կողմակի եղերքներուն կրթընելով հրել
ու ետ ետ քշել. ասանկով Մէննէվիին առջևէն անցանք
ու ժամը 3 ին Շադ — իւլ — արապի մէջ իջանք ուր
մեծ նաւահանդէս մը եղաւ: Մէննէվիին առջև գե-
տին խորութիւնը 7 կանգուն էր. ընդհանրապէս գե-
տին աջակողմը աւելի խոր է քան գձախակողմը: Նա-
ւերը բացին առագաստները. սկսանք նաւել դէպ ՚ի
պարսկաց ծոցը. Պասրայէն վար գետը հետզետէ
կընդարձակի. մէկ եզրէն միւսը՝ մինչև կէս ժամ կը
տեէ: Քիչ մը վար գետին ձախ կողմէն ճիւղ մը կը
բաժնուի, որ բաւական շրջան մ'ընելէն վերջը՝ կու-
գայ դարձեալ կը միանայ գետին, վարի կողմերուն
մէջ. որով նոյն տեղը փոքրիկ կղզի մը կը ձևանայ:
Խրիկուան ժամը 9, գետին աջ կողմը իզգէին ըսո-
ւած վրանաբնակ արաբացւոց գիւղն ելանք, ուր ՅՈ
ի չափ վրաններ կային: Այս գիւղին ուղղակի դէմն էր
էր Մուամմէրա ըսուած քաղաքը, որ այն ատեն պարս-
կաց իշխանութեան տակն էր ու ետքը Տաճկաստանի
անցաւ: Մուամմէրային առջևէն դետ մը կանցնի:
Պասրայէն մինչև իզգէին 6 ժամ է. գետեղերքին վրայ
ծայրէ ՚ի ծայր 3 կամ 4 ժամի խորութեամբ անընդհատ
արմաւենիի անտառներ կան: Հոս գիշեր մը կեցանք:

Ապրիլ 10 հինգշաբթի առտու ժամ 3 ին՝ մտանք
նաւերն ու իրիկուան ժամ 12 ին ելանք գետին աջ կող-
մը ու գիշեր կեցանք. Ճամբան գետին աջ կողմէն
ճիւղ մը կը բաժնուի, և քիչ մ'ալ վար ուրիշ ճիւղ մ'

ալ կը բաժնուի , որոնք կուգան դարձեալ կը միանան դետրն վարի կողմերուն մէջ , որով մէջ տեղի ցամաքը կղզի մը կը ձեանայ : իզզէինէն մինչև հոս ալ արմաւենիի անտառները կը շարունակեն : գետին ձախ կողմը Մուամմէրայէն վար պարսկաց հող է . Մուամմէրայէն մինչև Յ ժամ վար դետեղերին վրայ արմաւենիի անտառներ կան . բայց անկէ վար բնաւ ծառ մը չէր տեսնուեր :

Ապրիլ 11 ուրբաթ առտու ժամ 12 ին՝ մտանք նաւերը . յաջող հովով մը 1 $\frac{1}{2}$ ժամու մէջ 4 ժամու չափ ճամբայ առնելով ելանք գետին աջ կողմը , ուրիէ ժամ մը վար է գետին բերանը՝ պարսկաց ծոց անուանեալ տեղը : գետին ջուրն աւելի աղի է այս կողմերուն մէջ . վասն զի ծովին ջուրը մակրնթացութեան ժամանակ գետին մէջ կուգայ կը խառնուի : երկին մտանք նաւերուն մէջ գետին մինչև բերանը երթալու համար . բայց հազիւ կէս ժամու չափ նաւեցինք՝ սկսաւ կամաց կամաց հիւսիսային հով մը փշել . որ սաստիկ փոթորիկ հանելով գետն ալեկոծեց . մէկ կողմէն ալ ովկիանոսի խրոխտ ալիքները գետին հոսանացը դէմյարձակելով կարդիկին մեր յառաջ երթալը : Թիավարներն ալյոդնած ու վհատած էին . ուստի պարտաւորեցանք ետ դառնալ երթալ եկած տեղերնիս : Քօնայէն՝ նաև քիչ մ' ալ վերէն սկսելով՝ մինչև Պարսկաց ծոցը գետին ընթացքը դրեթէ ուղղակի է և բնաւ ոլորումներ չը ձեացունէր :

Ապրիլ 12 շաբաթ առտու ժամ 12 ին մտանք նաւերը ետ դառնալու համար , բայց օդը յաջող չէր և սաստիկ ալէկոծութիւն կար . ուստի մեր ալեծածան նաւերը չէին կրնար յառաջ երթալ գետին հոսանացը դէմ .

վասն որոյ 60 ի չափ մերկամարմին՝ արաբացիներ (եւ տէկճի) սկսան քաշել նաւերը 14 ժամ շարունակ մինչև գիշերոյ ժամ 2, ցերէկուան անտանելի տաքին և գիշերոյ սաստիկ ցուրտին դիմանալով և առանց բան մ ուտելու Երբ դետեղերքին վրայ առուներ հանդիպէին՝ մէջէն լողալով կանցնէին, և տեղատուոթեան ժամանակ ջուրը քաշուած ըլլալով դետեղերքին վրայ մինչև ծունկերնին տիղմերու մէջ ընկղմելով կը քալէին. այս եղանակաւ և միշտ դետին աջակողմի եղերքին կողմէն նաւելով անցանք Քիւնիւ ու Անիւ և Քիւնիւ Եսնես, և հասանք Քիւնիւ Խոսն, որ Պատրայի ու Պարսկաց ծոցին մէջ տեղն է, երկու կողմէն ալ 10 ական ժամ հեռի. Գիշերը հոս կեցանք :

Ապրիլ 13 կիրակի առոտու ժամ^{1/2} մտանք նաւերը, ու յս ջող հուղով մը կրկին մոտանք Պատրա իրիկուան ժամ 10 ին. Երեք օր կեցանք և ապրիլ 17 հինգշաբթի օր ժամ 7 ին մեկնելով Պատրայէն ու 4 ժամ նաւելով եւ լանք իրիկուան ժամ 11 ին Շատ — Էւլ — Մրառէ աջ կողմը Քիւնիւ — Քիւնիւ ըստուած տեղը, որ Պատրայէն 2 ժամու չափ հեռի է. Հոս կը գտնուէր Անգղիոյ հիւպատուսին տունը դրօշակ բացած, որուն բոլորտիքն ալ մէկ քանի արագներու փոքրիկ բնակարաններ կային :

Ապրիլ 18 ուրբաթ առոտու ժամ 12, նստանք նաւակները, և իրիկուան ժամ 12 ին Քօռնա ելնելով գիշեր կեցանք :

Ապրիլ 19 շաբաթ առոտու ժամ 11^{1/2} ին՝ նստանք աւակները, և այսօրուընէ ձգելով Ցիցրիսի ճամբան, արկինք գիւղին աջ կողմէն Եփրատի մէջ և 15 ժամ նընդհատ նաւեցինք: Գետին ձախ կողմի եղերքին

վրայ Քօռնայէն մինչև Յ Ժամ վեր շարունակ արմաւենի անտառներ կային . իսկ աջ կողմը միայն տեղ տեղ : Ե Ժամ վեր աջ ու ձախ եղերքներուն վրայ իրարու մօտ անթիւ առուներ կային , քիչ մ' ալ վեր Եփրատ՝ ծովի նման ծածկեր էր իր երկու կողմի ցած դաշտերը , ողողերով մէկ կողմէն մինչև Պատրա և միւս կողմէն մինչեւ Քօռնա : Այս ծովացեալ դաշտերուն մէջ տեղ աեղ կղզիի նման ցամաքներ կերևային , տեղ տեղ ալ արմաւի ծառեր : Ամառը այս ջուրերը մէկ մէկ քիչ քաշուելով ճախճախուտ ճահիճներ կը գոյանան , որ օդը կապականեն . Քօռնայէն Է Ժամ վեր դետին խորութիւնը հազիւ կանգունի մը չափ կար . մեր նաւակները Յ տիղ մին մէջ խրեցան . այնուհետև անհնար եղաւ նաւել . Ուստի փոքրիկ նաւակներով (պելեմ) մեղ առաջնորդող արաբացիները եկան մեր նաւակներուն բոլորտիքը , շատերն ալ իջնալով դետին մէջ՝ բունեցին մեր նաւերն ու սկսան յառաջ մզել կ Ժամ շարունակ մինչեւ 'Մէշէր է՛ֆ + արէ՛ֆ դիմացը , ուր փոքրիկ ցամաքի մը վրայ եւնելով դիշեր կեցանք : Այս կողմերը Մէնտէֆիւ անուանեալ Շէյխին իշխանութեան ներքեւ են . հոս տեսութեան եկաւ Պէլինամ անուն շէյխը :

Ապրիլ 20 կիրակի առոտու Ժամ 12 , նստանք նաւերը Սուզուշուք երթալու համար որ 10 Ժամ հեռի է . նոյն օրը իրիկուան իջանք քաղաքին մէկ քառորդ մասը դաշտին մէջ մէկ առուի մը քով՝ 50 ի չափ մեծամեծ վրաններու տակ , զոր Մէնտէֆիք շէյխը պատրաստել տուած էր :

Սուզուշուք՝ Եփրատի աջ կողմը դիւղաքաղաք մ' է : Ունի 400 տուն , 2000 բնակիչ արաբացի . հրեայ և 100 ի չափ հայ մէկ եկեղեցիով : Թթճարաններ , վաճառանոց մը , ան բազմէ մը : Պարտէզներ , արմաւի ծա-

ուեր : Կը գտնուէին անթիւ ընտիր ձիեր և սրընթաց գեղեցիկ ճայիկներ . Օդր բաւական առողջ է : Գիւղին դէմ գետին ձախ կողմն ալ կան արարացւոց հողաշէն տուներ , պարոտէզներ , արմաւի ծառեր :

Գիշերը սասատիկ քամի մը տակնուվրայ ըրաւ փրանները , տեղատարափ անձրև մը ամենուն ոսկորներուն մէջ կանցնէր . ամնզերուն դոռումն ու կոյժակներուն հարուածները ահու դողի մէջ կը ձդէր : Կարծես թէ ոտքերնուս տակը ջրհեղեղ մը կը պատրաստուէր . Առոտուն աենեկապետը ոսկի թուր մը ու զարդարեալ վերարկու մը չնորհեց շէյխին , որ փոխադարձ ճայիկներ ընծայեց :

Ապրիլ 23 չորեքշաբթի ժամ 3 , ճամբայ ելանք ձիերով (նաւային ճանապարհորդութիւնը ձգեղինք) , 7 ժամ շարունակ գետին աջ կողմէն յառաջ երթարով անցանք արմաւի անտառներու , գիւղերու և 9 ի շափ առուներու մէջէ . վերջը՝ ջանք գետին եղերքը ծառերու տակ վրաններու մէջ :

Ապրիլ 24 հինգշաբթի , 6 ժամ ճանապարհորդեցինք ու իջանք գետին աջակողմը վրաններու մէջ գիշեր կեցանք : Այսօր 3 առու անցանք :

Ապրիլ 25 ուրբաթ առոտու ժամ 12 , ճամբայ ելանք և 6 ժամ երթարնուս վերջը՝ իջանք գետին աջ կողմը , որուն գիմացի կողմը դիւղ մը կար ծառաստանի մէջ :

Ապրիլ 26 շաբաթ օր ժամ 12 , ճամբայ ելանք և 4 ժամ հեռի Սամավար ըստած գեղին առջև իշանք և գիշերը վրաններու մէջ կեցանք . Ճամբուն վրայ ո՛չ ծառ կար և ո՛չ առու :

Եփրատի աջ կողմը. արարացւոց գիւղ մ' է պարսպապատ : Այնի 250 տուն , 2000 բնակիչ . վաճառանոց մ' ու առելեայ . գիւղին մէջն ու բոլորտիքը պարտէզներ կային , թութի , նռան , արմաւի , գեղձի , նաւընջի , ծիրանի եւ այլն ծառերով : Գիւղին գիմացի կողմն ալ արմաւի անտառներ ու պարտէզներ ու քանի մ' ալ արարացւոց տն ակներ կային : Հոս գետը նեղ է եւ քիչ մը խոր , մինչեւ հոս բերեր էին մեր նաւերը . պարէնի մեծ նաւերը առկէ վեր չը կրցան երթալ :

Շէյխերն ու Շահպէնտէրը այցելութեան եկան և 1000 ի չափ ձիաւոր ու հետեւակ պահապան դօրք տուին :

Ապրիլ 27 կիրակի առոտու ժամ 10 , ճամբայ ելանք, և 2 ժամ հեռի իջանք լոյն ու խորունկ առուի մը եղերք/ն վրայ , ուրկէ մանք նաւակներով ու ձիերնիս լողարով անցանք գիմացի կողմը . և գիշերը հոն անցուցինք վրաններու տակ :

Ապրիլ 28 երկուշաբթի առոտու ժամ 12 , ճամբայ ելանք , վերջին մնաս բարովն ըսելով Մէնտէֆիք շէյխին . 2 ժամ անդին Եփրատի մէջն անցնելով մտանք Շէյխ վատիին իշխանութեան երկիրներուն մէջ , և քանի մը ժամ երթալնէս վերջը անցանք առուէ մը , որուն եղերքին վրայ գիշերը անցուցինք վրաններու տակ : Հոս քանի մը հազար դօրք գեղեցիկ զինախաղութիւն մ' ըրին :

Ապրիլ 29 երեքշաբթի առոտու ժամ 12 , ճամբայ ելանք և 5 ժամ հեռի առուի մը եղերքին վրայ գիշեր կեցանք վրաններու մէջ :

Ապրիլ 30 չորեքշաբթի առևտու ժամ 12, ճամբայ
ելանք և 7 ժամ երթանէս վերջը եղէգնուտ ընդար.
Ճակ ճահիճի մը եղերքին վրայ կեցանք գիշերն ու հե-
տեւալ օրը մինչեւ իրիկուն՝ վրաններու մէջ։

Այսօր Մէշէտ Սլիի գայմագամը դիմաւորութեան
եկաւ։

Մայիս 1 հինգշաբթի իրիկուան ժամ 12, 100 ի չափ
թուրատէներով անյանք ճահիճէն. թիավարները ե-
ղէգներով կը մղէին նաւերն և շատ դժուարութիւն կը
կրէին զանոնք քալեցունելու. շամբերուն մէջէն ու
տիղմերուն վրայէն. Զուրը հաղիւ կանգուն մը կար. Բո-
լոր գիշերը այս կերպով ճանապարհորդեցինք, ցրէկ
ները սաստիկ տաքին պատճառաւ անհնար էր ճանա-
հորդել։

Մայիս 2 ուրբաթ առւտու ժամ 12 ին եկանք Մէ-
շէտ Ոլիին դրեթէ նաւահանգիստը, 4 ½ ժամ հեռի քա-
ղաքէն. Հոս է Մէտին Ք-Ֆէն, ուխտատեղի տաճկաց.
Ժամը 4 ին շքեղ հանդէսով մը մտանք Մէշէտ Սլի։

Մ է Շ է Տ Ա Լ Ի Կ Ա Մ Ի Մ Ա Մ Ա Լ Ի
'ի հնումն Աղեքսանդրիա կամ Հիուա

Պաղտատի հարաւային կողմը՝ 133 քիլոմէթրո հե-
ռի պարսպատատ դեղեցիկ քաղաք մ'է. Ունի 3000
տուն, 10000 բնակիչ, որ ըստ մեծի մասին շէն աղան-
դաւոր պարսիկներ են. Նաեւ հրեայներ ։ Զինուորա-
նոց մը՝ քանի մը հարիւր զորքով. հիւանդանոց մը, ա-
մուր խաներ, հարուստ վաճառանոց մը ուր ամեն տեսակ
ւան կը դժուաւէր աժան գնով. Մրգեղէնները շատ,
հացը աժան, ջուները մեծ ու քարաշէն են։ Հոս է

տաճկաց մարդարէին փեսայ Սլիթն գերեզմանը՝ հոյակապ մզկիթի մը մէջ, ուր միշտ բազմաթիւ պարսիկ ուխտաւորներ կը դիմեն ։ Այս մզկիթը շինուած է քարայեալ խորանարդ աղիւսներով, ունի բարձր ու ոսկեզօծ դմբեթ մը, նոյնապէս ոսկեզօծ երկու ժամուն ներ. նաև շրջանակի ընդարձակ բակ մը, ուր պարսիկները տեսակ տեսակ բնական քարեր հատիւ, չէնէֆ, եւլիչ, ելն. կը ծախեն բակին շուրջը երկկուղ բնակարաններ կան ։ Փայտ համար ։ մզկիթին ամեն պատերուն վրայ մնէ քարերով զարդարուած է, որոնց վրայ հառիս թափուած էր Քաղաքին մէջ ո՛չ պարտէղ կայ և ո՛չ ծառ. ջուրն աղէկ չէ Օդն ալ շատ աղէկ չէ ։ վասն զի քաղաքին շրջակայներն ընդարձակ ճահիճներ ու լիճեր կան ։ Պ. սիկները մեռելներնին իրենց այս սուրբ քաղաքը կը բերեն թաղելու համար ։ Աղեքանդը հիմնած է այս քաղաքը, որուն անունովը կը կոչուէր երկար ժամանակ ։ Եսքը արարացւոց ձեռքն անցնելով Հիռա անուանեցին ։ և իրենց մէկ իշխանութեան մայրաքաղաքն ըրին ։ ասոնցմէ ալ քրիստոնէից ձեռքն անցաւ մինչև Քրիստոսի 632 թուականը ։ Այն ատենէն տաճիկներն առին և 1806 ին թէ և վահապիները նուաճեցին քաղաքը ։ բայց վերջապէս բնակիչները յաջողեցան զանոնք փախցունելու, և անկէ եազը գերեզմանին մեծ հարստութիւնը փոխադրեցին իմամ մուսս :

Մայիս 4 կիրակի իրիկուան ժամ 10 ելանք, և դիշերը 6 ժամ ճամբայ րրինք եղէդներու մէջէ անցնելով քուն ճանապարհէն խոտորեցանք ջուրի մօտ երթալու համար, և դիշերուան ժամ 4 ին իջանք եփրատի ողողմամբը շինուած ճահիճի մը եղերքին վրայ, որ կըսուի Հինուին ։ Վրաններու աակ կեցանք մինչև առաւօտ :

Այս ջուրին լայնութիւնը մէկ ժամու չափ կար , ո-
րուն դիմացի եղերքին կողմը և բաւական հեռի փո-
քրիկ լեռ մը կամ բլուր մը կը տեսնուէր , վրան ալ կար-
ծես թէ շէնք մը կար , զոր ե-է նէրուո կանուանէին :
Այս գիշերային ճանապարհորդութիւննիս ջահերով
խիստ գուարճալի եղաւ , ազատ արևուն տոշորիչ աղդե-
ցութենէն , որուն տեղ պաղ հովեր կը փշէին : Ցերէկնե-
րը տաքին սաստիութեանը գիմանալու համար վրան-
ները կը թրջէին ու անոնց բոլորտիքը խրամներ փորե-
լով ջուր կը լեցունէին . մենք ալ լած մը թրջելով ե-
րեսնուս վրայ կը ծածկէինք :

Մայիս 5 երկուշաբթի իրիկուան ժամ 10 , ճամբայ
ելանք . կէս ժամ հեռի քարաշէն խան մը կարի . գիշերու-
ան 5 ին Մէջտ Հիւսէինի կամ Քէրպէլայի մէջ 1 ժամ
մնալով իջանք վրաններու մէջ գիշեր լուսցուցինք :

Մայիս 6 երեքշաբթի առոտու ժամ 12 , ճամբայ ե-
լանք շքեղ հանգէսով մը , և քիչ մը անդին արմաւենի-
ներու մէջէ անցնելով մտանք Քէրպէլա , իւահ Աւէ +
բուուի ըստած դոնէն :

**Մէջէջ Հիւսէին ԿԱՄ ԻՄԱՄ Հիւսէին , ԵՒ-ԿԱՄ
ՔէրՊէլա :**

Պաղտատի արևմտեան հարաւային կողմը և անկէ
93 քիլոմէթրօ հեռի արաբացւոց դաշտին մէջ և Եվրատի
մէկ առուին վրայ 6000 տունով՝ պարսպապատ քաղաք
մէէ , իմամ Ալիի կը կնապատիկ մեծութեամբ . Ունի
14000 բնակիչ . որոնք ըստ մեծի մասին պարսիկներ
են չի կրօնքով , իսկ ու-նաէ քիչ կայ . նաև վաճառակա-
նութեան պատճառաւ երթեւէկող 30 ի չափ ալ հրեայ

կը գանուին ։ Դժուար էր քրիստոնէից՝ ինչպէս նաև երբեմն տաճկաց հոս մտնել ու կալուածքի տէր ըլլալ։ Տուները քարաշէն են և հոյակապ, բայց դուները փոքրիկ և տանեաց վրայ հող։

Ունի զինուորանոց մը 1000 ի չափ զօրքով։ ապարան մը, հիւանդանոց մը, մեծ վաճառանոց մը, ուր հնդկային ու պարսկական բերքեր կը ծախուին աժան գընով։ մեծ խաներ, գեղեցիկ ու ընդարձակ բաղնիքներ, մզկիթներ։ Հոս է Ալիխն որդի իմամէջիւսէինին գերեղմանը՝ նոյն անուն հոյակապ մզկիթին մէջ, ուր կուգան անթիւ պարակի ուխտաւորներ, որոնք մեռելնին ալ հոն կը բերեն կը թաղեն։ Մզկիթն ունի հոյակապ գընթեթ մը և երկու հուրտ ոսկեզօծեալ։ նաև ընդարձակ բակ մը, որուն մէջ տեսակ տեսակ բնական քարերու վաճառականութիւն կը լին արդին տակ։ Քաղաքէն դուրս շրջանակի ծառաստան է։ արմաւի և ուրիշ տեսակ ծառերով։ շատ մ'ալ պարտէզներ կան՝ վարունգի, սեխի, բարձրական, և լուսական բերքերով լեցուն։ Մառաստանին ու պարտէզներուն միւս կողմն ալ շատ մը նույն այս հարաներ կան։

Զուլը Եփրատինն է որ մինչև քաղաք կուդար մեծ առուով մը։ Տաքը սաստիկ է։ օդը ծանր, որուն ապականութեան պատճառներն են արմաւի ծառերը, նույլը, հորմաներուն պիտոյիցը յատկացեալ ջրով լեցուն փոսերը, տուներուն ականները՝ որ փոսերու մէջ կը դիզուին, և պարաից մեռելներուն դիակները՝ որ երբեմն օրերով լասներուն մէջ կը մոռցուին։ Քաղաքին պարիսպը քանի մը դուռն ունի, և աեղ տեղ թնդանօթներ դրտած են։ Հոս քանի մը օր կեցանք։

Մայիս 9 ուրբաթ իրկուան ժամ 9, ելանք քաղաքին Պալատ ու բոսուը ըսուած դուռնէն, և առուին ձախ

կողմէն շքեղ հանդէսով գացինք 1 ժամ շարունակ՝ արմաւի անտառներու և պարտէղներու որմերուն մէջ տեղէն. վերջը քարաշէն կամուրջի մը վրայէն առուին աջ կողմն անցանք, Քիչ մը անդին ճամբուն վրայ քարաշէն մեծ խան մը կար, 3 ժամ հեռի քարաշէն կամուրջի մը վրայէ դարձեալ նոյն առուին ձախ կողմը անցանք. ասկէ ալ կէս ժամ հեռի ուրիշ քարաշէն խան մը կար, ուրիշ քառորդ մը անդին կը վազէ Եփրատ գետը, և որուն հաջակողմի եղերքին վրայ իջանք գիշերուան ժամ 3 ին վրաններու տակ

Մայիս 10 շաբաթ առտու ժամ 11 ին, վայտաշէն կամուրջի մը վրայէ գետն անցնելով եկանք Մէսեէիո ըսուած գիւղը, որ 12 ժամ հեռի է Պաղտատէն. Պարսկաստանէն Քէրպէլա եկող ուխաւաւորները քաղաքը մտնալին օր մը յառաջ այս գիւղը օթևան կընեն, մեռենին ալ հոս կիջեցընեն և հետևեալ օրը կամուրջէն անցնելով կը մտնեն քաղաքը, կամուրջին համար մասնաւոր տուրք մը վճարելով։ Գիւղէն ելանք ու Եփրատի ձախ կողմին վրայ կէս ժամ երթալով անցանք ուրիշ գիւղի մը քովին. ասկէ ալ 1 ½ ժամ անդին իջանք քարաշէն խան մը՝ որուն առջեւէն առու մը կանցնէր. ուրիշ 2 ժամ հեռի իջանք ուրիշ քարաշէն խան մը, ուր ջրհոր մը կար՝ որուն մինչև խորք քարաշէն սանդուխք մը շինուած էր իջնալ ջուր հանելու համար. Ասկէ ալ 2½ ժամ հեռի իջանք ուրիշ քարաշէն խան մը՝ ժամը 10 ին, որուն հեռաւորութիւնը Պաղտատէն 6 ժամ էր. Ասկէ ալ 2 ժամհեռիքայքայեալ խանի մը քովին անցնելով եկանք կէս ժամու մէջ Տիգրիսի աջ կողմը, որուն եղերքն՚ի վեր կէս ժամ երթալով անցանք առուէ մը. Քիչ մ'ալ վեր ուրիշ առուէ մը, և վերջը ընդարձակ ջուրէ մը՝ հողաշէն կամուրջի մը վրայէն, ուրիշ Պաղտատ սկսաւ երկնալ:

Այս ջուրէն շատ հեռի չէր Պաղտմափի արուարձանը ,
որուն մէջէն անցանք , և կամուրջին վրայէն մոտանք
Պաղտատ այս երկրորդ անգամ և 25 օր կեցանք :

1847 թունիս 4 րէճէպի 3 չորեքշաբթի իրկուան
ժամ 10 ին՝ շքեղ հանդիսիւ մեկնեցանք Պաղտատէն .
անցանք իմամ Ազամէն , և գիշերուան ժամ 8 ին իջանք
Պաշ եէնկիճէն վեր Շադին ձախ կողմը , որ 8 ժամու
շափի հեռի էր Պաղտատէն :

Յունիս 5 հինգշաբթի իրկուան ժամ 9 ճամբայ եւ-
լանք , և գիշերուան ժամ 4 ին իջանք Ահմադ առ իւնը
ըսուած տեղին մօտ , որ 3 ժամ հեռի էր ելած տեղեր-
նէս :

Յունիս 6 ուրբաթ իրկուան ժամ 7½ , ճամբայ եւ-
լանք Տէլի Ապասս երթալու համար , որ 9 ժամ հեռա-
ւորութիւն ունի , ուր գիշերուան ժամ 4 ին հասանք :
Ճամբան 6 ժամ հեռու տաճկաց ուխտատեղի մը կար ,
որ կըսուի Հարէնէ Ավ Հակոբ :

Յունիս 7 շաբաթ իրկուան ժամ 8 , ճամբայ ելանք
Քարա—թէփիէ երթալու համար , որ 10 ժամ հեռի է ,
ուր մոտանք գիշերը ժամ 3 ին :

Յունիս 8 կիրակի իրկուան ժամ 9 , հեծանք ձիերը
Քիֆրի երթալու համար , որ 7 ժամ հեռի է . հոս 100
ի շափ վրաններ պատրաստուած էին , որոնց տակը կե-
ցանք մինչև յունիս 14 բոլոր հեծելազօրաց ու Հայու-
ակէտ անուանեալ անկանոն զօրաց հետ , որ մեր պահ-
պանութեանը համար հետերնիս դրկուած էին Պաղտա-
տի կուսակալին կողմէն :

Յունիս 14 շաբաթ ժամ 9, ճամբայ ելանք ու Սիւ-
լէյմանիի ճամբան բռնեցինք: Գիւղին մէկ կողմէն միւսն
անցնելով մտանք ընդարձակ դաշտանման ձորի մը մէջ,
որուն մէջէն ջուր մը կանցնէր, և ամեն կողմէն բաւա-
կան բարձր լեռներով պատած էր: ունէր արտեր և
ձմերուկի ու սեխի պարտէղներ: Հոս գեղձի հովանա-
ւոր անտառի մը մէջէ ալ անցնելով Յ ժամյառաջ դա-
ցինք միշտ ձորերու մէջ ու գիշեր կեցանք: ո՛լ դաշ-
տերը հեռացան մեր աչքին՝ առջնէն:

Յունիս 15 կիրակի իրկուան ժամ 9, ճամբայ ելանք,
և 3 ժամ շարունակ անրեր ու ապառաժուտ լեռներ
ելլելով իշնելով՝ անցանք քրդաց գիւղի մը մէջէ՝ որուն
առջեն գետակի մը կանցնէր: Այս գիւղին բնակիչնե-
րը բացօթեայ արօտներն ելած էին և տուներնին ալ դոյ
էին: Գետակին միւս կողմն ընդարձակ անդաստան մը
կար, որուն մէջ կը տեսնուէր քանի մը հաստ ու բար-
ձըր ծառերով հովանաւոր վայր մը, զոր գետակին մէկ
ճիւղը միշտ կը թրջէր: Այս գիւղէն քառորդ մը հեռի
էր իունիսի անուն քրդաց գիւղը, ուր իջանք ու
գիշեր կեցանք: Այս գիւղը լեռներով շրջապատած
ձորի մը շինուած է, որուն մօտէն ու լեռան ստորոտէն
կանցնի վերցիշնալ գետակը: Ունի 100 իշափի իւղիկներ.
ոչ ծառ կայ և ոչ բոյս:

Յունիս 16 երկու շաբթի ժամ 9, ճամբայ ելանք ու
4 ժամ շարունակ լեռներու վրայէ անցանք, որոնց դաշ-
տանման ձորերուն մէջ գետակներու քով կային շատ մը
քրդաց գիւղեր: Վեցը ճամբառն վրայ ձա՞րէ անուն քըր
ւաց գիւղէ մը անցնելով՝ գիշերուան ժամ 1 ին իջանք
որի մէջ Աւճէ բառ լերին ստորոտը, ստու ար ու բարձր

ծառերու ներքեւ ու գետակի մը եղերքին վրայ վրան ներու տակ, ուր առտու ըրինք . Այս ձորին մէկ կողմի լեռները Ա+ծէ բառ և միւս կողմինը Ք-բառ բառ սու ած լեռներուն գօտիներն էին .

Յունիս 17 Երեքշաբթի ժամ 9 ճամբայ ելանք, և 4 ժամ շարունակ լեռներ ելանք ու իջանք, որ հետզիեւ աէ կը բարձրանային . անյանք նաև յԱ+ բառ ըսուած լեռը . և իջանք կէտ-Շէտէ անուն ընդարձակ ձորին մէջ, ուր պատուական ջուր մը կար, և գիշերը կեցանք վրաններու տակ :

Յունիս 18 չորեքշաբթի ժամ 8 ճամբայ ելնելով՝ կէս ժամէն եկանք դէպ 'ի Ք-բառն բառձր ու անառիկ լերին ատորոտը : Յիշեալ ընդարձակ ու դաշտանման ձորին մէջ փսիփաթէ հիւսուած անթիւ բնակութիւններ կային քրդաց . ամեն առւն ունէր ձիեր, ոչխարներ, հաւեր, շուներ, որ ընտանիքներուն հեռ խառնուած էին . Ամեն մէկ տան մէջ բազմաթիւ բնակութիւններ կային . այս քրդերը ամենառողջ մարդիկ ըլլալով իրենց թոռան թոռներուն հետ մէկ տեղ կապրէին : Մէջերնին ոչ նախանձ և ոչ խտրութիւն կար, ամենը իրար կը հոդային և իրար կը խնամէին . վերջապէս, կարծես թէ ամենը մէկ մարմին էին : Երբ հասանք 'ի Ք-արաճա տաղ, տեսանք որ հեռուէն աչքերնուս երկցած մայառները մեծամեծ ու անթիւ շոճի ծառերու անտառներ էին : Այս լեռն անցնելու համար միակ ճանապարհ մը կար, այն ալ շարունակ լեռան բոլորտիքը շրջագայելով, զոր ծառերը բոլորովին գոցած էին, և Ք-բառատանի կառավարիչ Ապտուլահ փաշան քանի մը օր յառաջ խոշընդոտները բառնալով բանալ տուած էր . որով կարող եղանք և ժամու մէջ ելնել լեռան մինչեւ գագա-

թը , ուր կար պարսպի մը աւերակ՝ որուն ՔԵՒՔԵՒԾ—
տէս անուն կամարը մինչև ցարդ կը կենայ . ասոր տա-
կէն անցնելով լեռան միւս կողմէն վար իջանք մինչև
ստորոտը՝ որ 1 ժամ տևեց . շոճիի անտառները մինչև
հոս կը շարունակէին : Անկից լեռներու ու ձորերու մէ-
ջէն սկսանք յառաջ երթալ . ճանապարհը սարսափ ու
զարհուրանք կը պատճառէր ամենուս . վասն զի տեղ
տեղ այն աստիճան կը նեղնար՝ որ երկու կողմի պարս-
պաձեւ ու ապառաժուտ լեռներուն գագախներն ու
կողմնակի ցիցերը կարծես թէ իրարմէ նոր բաժնուած
ու կրկին կուգային միանալ իրարու հետ , որ զմեղ կուլ
տան . արևն անդամ չէր կրնար թափանցել հոս՝ որ
փոքր ինչ մեղմացունէր ճանապարհորդին սարսափը :
Այս երկնարերձ ու ապառաժուտ լեռներուն գագախ-
ներէն մինչեւ ձորը խողովակներու նման լայն ծերպիր
բացուած էին , որոնց մէջէն սահանաց նման անձրեւի
ջուրերը ահագին որոտմամբ կը հոսէին ու սեւ սարսափ
կը ձգէին ջուրջանակի : Նոյն ձորին մէջ կամուրջէ մը
անցնելով , կէս ժամ շարունակեցինք ճամբայնիս . ուր
տեղ տեղ ծառեր և տեղ տեղ ալ ցորենի արտեր կային .
մէկ ժամու չափ ալ բլրակներ ելանք ու իջանք , և գի-
շերը ժամ 1½ ին հասանք թիմուր գիւղին մօտ , ուր
վրաններու տակ կեցանք :

Թիմուր գիւղ՝ արտերու , պարտէղներու ու ծառե-
րու մէջ քրդաց գիւղ մ'է , 5 ժամ հեռի Սիւլէյմանի-
էն : Ունի պատուական ջուր մը՝ որ ապառաժներէն կը
բղաէր : Հոս դիմաւորեց զմեզ Շիւլէյմանիի Ապտուլահ
փաշան : Պաղտատէն Սիւլէյմանի երթալու բանուկ ճա-
նապարհը այս չէր , բայց Սենեկապետ Պէյը գահաւո-
ւակով (թահտըրավան) երթալուն համար այս ճամբան
սւելի յարմար դատուած էր :

Յունիս 19 հինգշարթի իրիկուան ժամ 9 , ճամբայ

ելանք եւ քիչ մը յառաջ երթալէ ետքը անտառախիտ լեռան մը գագաթն ենելով՝ դարձանք միւս կողմը, ուրիշ կերևար առջենիս ընդարձակ դաշտ մը, որուն մէջ կը տեսնուեր Սիւլէյմանի քաղաքը՝ լեռնէն 2 ժամու չափ հեռաւորութեամբ, և հորիզոնին վրայ ալ երկնաբերձ լեռներ, որ կը զատէին Տաճկաստանը սլարսից հողերէն։ Նոյն դաշտը իջնալով կերթայինք դէպ ՚ի քաղաքը՝ մշակեալ հողերու ու ցորենի արտերու մէջէն անցնելով։ Դաշտին մէջ ամեն կողմէն վտակներ կը հոսէին ու ցիր ու ցան քրդաց գիւղեր ջինուածէն։ Վերջապէս Սիւլէյմանիին 1 ժամ մնալով իջանք ծառուա վայրի մը վրայ վրաններու տակ ու գիշեր կեցանք։

Յունիս 20 ուրբաթ ժամ 8 ճամբայ ելանք։ առջենէս կերթային հազարաւոր հետեակ ու ձիաւոր զօրքեր՝ որոնց գլուխն էր քաղաքին կառավարէլ Ապտուլահ փաշան, և մինչև քաղաքը՝ անթիւ ձիաւոր ւրացը ու հրացանակիր հայնաց ըստուած զինուորներ երկու կողմէն բարեկի կեցած էին։ Այսպիսի շքեղ հանդէսով ժամ 9 ին մտանք քաղաքը և փաշային պալատն ելանք։

Ս Ի Ւ Լ Է Ց Մ Ա Ն Ի :

Ամեն կողմէն 1 ժամ հեռի, շուրջանակի բարձր լեռներով պատած ու դաշտի մէջ ջինուած քրդաց քաղաք մո՞ւ է Պաղտատի իշխանութեան ներքեւ։ Ունի 2500 իշտուն, 15000 ի չափ բնակիչ, որոնցմէ 14500 քիւրտ, 150 հրեայ, 150 քիլոսնի և 100 ալ պարսիկ են։ Քանի մը մզկիթ, 4 մութ բաղնիքներ որոնց մէջ մէկ մէկ տալան կայ, ուր կը մտնեն լուացուելու համար։ Քանի մի ալ խան։ Վաճառանոց մը, ուր կը գտնուին զա-

Նազան՝ արհեստաւորներ, ոսկերիչ, նիւղինորմի, ադրբ, կօշկակար, դերձակ, սափրիչ, զինագործ, ձուլագործ (ռէտինհի), մետաքսագործ (լողու), երշանհի, ծխավաճառ, մրգավաճառ, հնավաճառ (էսինհի), վաճառական, ևլն ևլն։ Այս վաճառանոցը՝ որուն վրայ տերևներով գոցուածէ, այնքան ցած էր՝ որ բարձրահաւաակ մարդիկ գլուխնին ծոելով պիտի անցնէին։ Երկու զինուորանոց, որոնց մէկուն մէջ կար 3000 ի չափ հետևակ քուրդ զօրք և միւսին մէջ 1000 ի չափ։ այս ետքինին մէջ էր փաշային ապարանքը։ Տուներն առհասարակ գետնի վրայ միակուղ ու աղիւսակերտ շինուած էին, տանիքները հողով գոցուած։ ամեն տուն ծաղկազարդ պարտէզ ունի և իրարմէ հեռի է, որով քաղաքը շատ ընդարձակ կերևայ և որուն բոլորտիքը հաղիւ երկու ժամու մէջ կը շրջագայուի։ Զուրը առատ՝ անուշ ու պաղուկ է, թէպէտ և հորի ջուր։ ուր որ հոր բանան՝ անպատճառ ջուր կելնէ։ ուստի քանի մը հոր քոմէ քով բացեր, իրարու հետ հաղորդեր և գետնին տակէն ճամբայ մը շինելով ու քիչ մը անդին նոյն հորերուն ջուրը դուրս բղիւցնելով արուեստական վտակ մը շինած են, որ միշտ կը վազէ և քաղաքին զանազան կողմերուն մէջ ոլորելով կանցնի կերթայ։ Մերձակայ վայրերէն ու լեռներէն սառած ձիւն կը բերեն քաղաքը ու ջուրին կը խառնեն։ Քաղաքացւոց սովորութիւն եղած է սառով խառնուած արեւն խմել։ նոյնպէս իրարու այցելուն գացած ժամանակ ձիւնախառն ացնա կը հրամցունեն, և սրճարաններու մէջն ալ նոյնը կը գործածեն խահվէի տեղ։ Օդն աղէկ է, սաստկաշունչ քամիներ կը փշեն, որ գետնին փոշիները ժողվելով քառքին վրայ կը բերեն ու անձրևի պէս տուներու մէջ կը լեցընեն։ ասանկ սաստկաշունչ քամիներու ատեն՝ բնակիչները փողոցներէն փախչելով տուներնուն մէջ

կը փակուինս բաղաքացիք կոչտ են բայց հիւրասէր։ Երկիւր բարեբեր ըլլալուն՝ ամեն բան առատ ու աժան էր։ Բաղաքէս մեկնելէն յառաջ. կառավարիչ փաշխն՝ իր հրամանատարուն տակ գտնուած թէ՛ կանոնաւոր և թէ՛ անկանոն զօրաց յառաջադիմութիւնը ցոյց տալու համար զինախաղութիւն մ'ընել տուաւ որ 6 ժամ տևեց։

Յուլիս 7 երկուշաբթի իրիկուան ժամ 9, շքեղ հանդէսով քաղաքէն ելանք 6 ժամ հեռի լեռան մը ստորոտն ծառուտ և սպառաժուտ վայրի մը վրայ իշանք գիշերուան ժամ 4 ին. այս տեղ պատուական ջջուր մը կը բղիսէր և առջևն ալ աւազան մը շինուած էր։ Քաղաքէն մինչև հոս երկու լերանց գօտիներու մէջ մէկ ժամէն աւելի ընդարձակութիւն ունեցող դաշտային ու քարուտ ճամբայ մ'էր, ուր ցորենի արտեր կային, տեղ տեղ ալ ջուրեր կը բղիսէին։

Յուլիս 8 երեքշաբթի իրիկուան ժամ 9, ճամբայ ելանք և վերոյիշեալ լերանց գօտիներու մէջ տեղի նոյն դաշտային ճանապարհը 4 ժամու չափ շարունակելնէս վերջը՝ իշանք մշակեալ տեղ մը, ուր պատուական ջուր մը կար և աւազան մը՝ ծառերու տակ։ Արտեր ու այգիներ ալ պակաս չէին։ Այս տեղէն կէս ժամ հեռի ապառաժուտ ցյուած և սրածայր լեռներ կը տեսնուէին։

Յուլիս 9 չորեքշաբթի իրիկուան ժամ 8, ճամբայ ելնելով՝ նախ անցանք ձորերու մէջէ, որ այգիներով ու շոճի ծառերով զարդարուած էին և փոքրիկ գիւղեր կը գտնուէին։ Վերջը արագասահ վտակէ մը՝ որ բաւական լայնարձակ էր ու $1\frac{1}{2}$ կանդուն խորութիւն ունէր. ասկէ շանդին բլուր մը դառնալով կրկին մը։

տանք ձորերու մէջ, և յառաջ երթալով՝ գիշերուան ժամ 2 ին իշանք լեղի ջուրի մը գլուխը։

Յուլիս 10 հինգչաբթի իրիկուան ժամ 8, ճամբայ ելանք Քէօյ — Սանճաք երթալու համար, որ 5 ժամ հեռի էր, և նոյն օրը գիշերուան ժամ 1 ին մոտանք այսօրուան ճամբանիս նախ՝ մէկ ժամու չափ շարունակ ձորերու մէջէ էր, ուր կը գտնուէին դիւղեր, արտեր և այգիներ. ետքը դարձանք անտառուտ բարձր լեռ մը՝ որ 2 ժամէն աւելի տևեց. վերջապէս մոտանք ընդարձակ դաշտի մը մէջ՝ որուն հորիզոնին վրայ լեռնէր կը տեսնուէին։ Այս դաշտը թէպէս քարուտ էր, բայց ամեն կողմ մշակուած էր ցորենի արտերով։

Ք Ե Օ Յ — Ս Ա Ն Ճ Ա Ք :

Դաշտին ծայրը բարձր տեղի մը վրայ շինուած 1000 տնով քրդաց դիւղ մ'է, ուր քանի մը տուն հրեայ ալ կը գտնուի. Գիւղին մէկ կողմը քայքայեալ պարիսպ մը կայ, և 5 վայրկեան հեռի բարձր տեղի մը վրայ նոր բերդ մը։ Բնակիչները շատ կոշտ են։ Օդը ծանր է, ջուրը գէշ։ Գիւղին թէ՛ ներսը և թէ՛ շրջակայքը կը դանուին բարերեր այդիներ և ծառաւէտ պարտէղներ։ Ունի մեծ մղկիթ մը, բազնիք մը, խան մը, վաճառանոց մը՝ ուր կը ծախէին սովորաբար գործածելիք նշին բաներ։ Խանութները գուռն չունէին, և իրարմէ ալ զատուած չըլլալով՝ մէջէ մէջ կանցնուէր։ Վասն որոյ ամեն իրիկուն կը պարտաւորէին մէջի եղած բաները պարպել ու տուները տանիլ։ Քանի մը հարիւր զինուոր կար։ Տուները Սիւլէյմանիի տուներէն ամուր ու աղէկ շինուած էին։ Բնակիչներն առհասարակ ամառները տանեաց վրայ կը պառկին, տեսակ մը

մահճակալի նման շինուած անկողնոց մէջ, վասն զի տուներուն մէջ գիշերը չատ տաք կրնէ և կարիճ ալ կը դտնուի : Հոս երևելի հարուստ անձ մը կար, Մօյլա Պէքիր անուն, որուն համար կըսէին թէ իւր հարստութեան չափը յըդիտէ :

Յուլիս 14 երկուշաբթի իրիկուան ժամ 8 ճամբայ ելանք : Նախ 2 ժամու չափ անցանք ձորերու մէջէ, ուր ամեն տեղ արտեր ու այդիներ պակաս չէին եւ քըրդաց գիւղեր ալ կային : Ետքը մէկ ժամու չափ ալ դարձանք բարձր լեռ մը, անկէ ալ անդին ելանք ու րիշ լերան մը գագաթը, ու իջանք միւս երեսն ՚ի վայր՝ անցնելով քրդաց գիւղի մը մէջէ, որուն ծայրը մինչեւ լերան ստորոտն ու ձորին մէջը կը հասնէր : Այս ձորին մէջէն ու լերան ստորոտէն ապառաժ նեղ ճամբայ ներու վրայէ մէկ ժամու չափ յառաջ դացինք մեծ դժուարութեամբ, եւ իջանք ծառազարդ ու անուշ ջրով տեղ մը, գիշեր կենալու համար : Այս ձորն ալ մշակեալ էր, ունէր պարտէզներ, տեղ տեղ ալ ծխախոտի արտեր :

Յուլիս 15 երեքշաբթի, ճամբայ ելանք Պալասան գիւղը երթալու համար, որ 4 ժամ հեռի էր : Նախ անցանք դաշտի մը մէջէ ու մնանք ձորի մը մէջ, ուր կային արտեր ու քրդաց գիւղեր : Վերջը դարձանք բարձր լեռ մը, անկէ ալ իջանք ուրիշ ձոր մը անցնելով չօշափ անուն քրդաց գիւղին քովին, ուրիէ մէկ ժամ հեռի լերան ստորոտն իջանք Պալասան գիւղին քով, ու երկու գիշեր կեցանք :

Այս գիւղը լեռան զառ ՚ի վայրին վրայ շինուած ու մինչեւ ստորոտը կը հասնէր : Ունէր այդիներ, բարեբեր պատէզներ, պտղաւէտ և հովանաւոր ծառեր .

օդն ալ շատ պատուական էր :

Յուլիս 17 հինգշաբթի , ճամբայ ելանք , 4 ժամ շարունակ անցնելով ընդարձակ ձորերու մէջէ , ուր կային գիւղեր , արտեր , այդիներ , անտառներ . անուշ ու յստակ ջուրեր . իջանք ծառուտ տեղ մը անուշ ջուրի մը գլուխ՝ գիշեր կենալու համար . Այս տեղէն կէս ժամ հեռի կերևար Պէտք — Տու ըստած բարձր ու դժուարամատոյց լեռը :

Յուլիս 18 ուրբաթ առտու ժամ 10 , ճամբայ ելանք թէվանտրզ մաներու համար , որ 5 ժամ հեռի էր . նոյն օրը ժամ 8 ին մտանք մեծ հանդէսով . Նախ կէս ժամու չափ ձորերու մէջէ երթալով հասանք Բէլառուզ կամ Պէտք — Տու ըստած լերան ստորոտը , և հազիւ 1 ½ ժամու մէջ ելանք անոր գագաթը . Այս ապառաժուտ լեռը շուի ծառերով ծածկուած պարսպի պէս բարձրացած էր . տեղ տեղ յստակ ու անուշ ջուր կը բղիսէր . գագաթին մօտ փոքրիկ հարթ տեղի մը վրայ մարտկոց մը կար՝ որուն մէջ զօրք կսպասէր :

Դարձանք լեռան գագաթն ու սկսանք մեծ դըժուարութեամբ ու ահու դողով վար իջնել ապառաժուտ նեղ ճամբու մը վրայէ , որ 2 ժամու չափ տեսեց : Այս լերան ստորոտէն յստակ ու առատ ջուր մը կը բրդիսէր՝ որ թէվանտրզի քաղաքը կը յագեցընէր . Ասկէ կէս ժամ ալ յառաջ երթալով՝ ելանք բլրի մը վրայ ուրկէ կէս ժամ հեռի էր թէվանտրզ :

Այս քաղաքին մօտ տեսանք բարեբեր պարտէզներ , դոնց մէջ տերեներէ շինուած շատ մը խրճիթներ կախին : Այս տեղը գարաթէ կանուանի :

Ռ է Վ Ա Ն Տ Ը Լ Զ :

Զապ — Սու գետին մէկ վտակին եղերքը բարձրաւանդակի մը վրայ շինուած 1600 տունով քրդաց գիւղաբաղաք մ'է պարսպապատ : Ունի 6000 բնակիչ քիւրա, և մէկ երկու հարիւր հրեայ . երկու թաղի բաժնուած է , վերին և ստորին , որ իրարմէ փոքրիկ միջոցաւ մը զատուած են : Բնաւ հարթ տեղ մը չըկայ , ամեն տեղ զառ՝ ի վայր է : Պարիսպը՝ միայն լեռանը հիւսիսային կամ Քարէթի կողմը չինուած է , ուրկէ մտանք գիւղը . խակ ստորոտը շուրջանակի խրամի նման բնական խորութիւն մը կայ 10 կամ 15 կանդուն , որուն մէջէն կը վաղէ Զապ—Սու գետին մէկ վտակը՝ որուն վրայ երկու կամուրջներ չինուած են՝ գիմացի և քովի լեռները անցնելու համար . կամուրջներուն գիւղի կողմի ծայրերը մէկ մէկ դուռն շինուած է :

Գիւղին լեռն ուղղակի բարձրացած ըլլալուն համար՝ տուները իրարու վրայ հեծածի պէս կերևային . Տուները աղիւսակերտ են . ձեղունները ցած , տանիքները հողով ձեփած : Կայ փոքրիկ վաճառանոց մը , փոքրիկ բաղնիք մը , խակ և ոչ մէկ ծառ մը : Ձուրը վտակին ջուրն է և աղէկ . այս կողմերը միշտ ձիւն դրոնուելուն համար՝ բնակիչներն իրենց խմելու ջուրերուն մէջ ձիւն կը խառնեն : Օդը ծանր է և ամառը շատ տաք . թէպէտ գիւղը լեռան վրայ է , բայց շուրջանակի բարձրաբերձ պարաւոր լեռներով պաշարուած ըլլալուն համար՝ կարծես թէ խոր վիրասկն ես . այս պարաւոր լեռները՝ որ տաճկաց հողը Պարսկաստանէն կը զատեն , ՚ի հնումն Զակրոս լերինք կը կոչուէին : Բնակիչներն ամառնային տաք եղանակին մէջ տանեաց վրայ մահճակալի նման շինուած անկողիններու մէջ կը

պառկին, թէ և տանիքները իրարու մէջ կը նային վերէն՝ ՚ի վար. շատերն ալ Քարամիէ կերթան օդափոխութեան՝ Բնակիչները կոչտ են. կանայք Նուհերաց չունին, ամենն ալ անկիրթ ու մոլի են. արք և կանայք մի և նոյն գետի մէջ կը լուացուին իրարմէ քիչ հեռի: Կարիճ շատ կայ: Մէսն ու հայն աժան էր. առատ ալ մրգեղէն կայ: Մէկ քանի հարիւր զօրք կար, որ գիւղին զանազան փողոցներուն մէջ մասնաւոր տուններու բաժնուած էին: Գիւղին արևելեան կողմը բարձր լեռ մը կայ՝ որ մէկ ժամ հեռի է. հիւսիսային կողմը Քիւստան անուն լեռը՝ որ երեք ժամ հեռի է. արեւմտեան հիւսիսային կողմը բերդը որ իչ — քալէ կըսուի. ուղղակի արևմտեան հիւսիսային կողմը Պալաք անուն լեռը. հարաւային կողմը Քիւրէկ — տաղը ըսուած լեռը. արևմտեան կողմը Պիճան — տաղը ըսուած լեռը, և արևելեան հարաւային կողմը Հէնտէրէն լեռը՝ ժամ մը հեռի. այս լեռը Ճինտիեան ըսուած տեղին վրայ բարձրացած է. ասոր նտորուտը խորունկ ջրհոր մը կայ, ուրկէ առատ ու պատուական ջուր մը կը բղխէ, որ Ճինտիեանէն անցնելով կերթայ գետը կը խառնուի. այս հորին ջուրը ցերէկէն մինչև կէս դիշեր կը բղխի, բայց կէս գիշերէն մինչև ցերէկ կը դադրի և ձմեռը բոլորովին կը կտրի ու հորն ալ կը ցամքի: Ճինտիեան շատ գեղեցիկ ու ղմայլելի ծառաղարդ տեղ մ'է. հան կային այգիներ, պարտէզներ, ցորենի ու ծխախոսի արտեր, ուրկէ կանցնի գետը: Այս զուարճալի վոյրերուն մէջ քանի մը օր ժամանակ անցուցինք:

Յուլիս 21 երկուշաբթի ժամ 9, շքեղ հանդէսով ճամբայ ելանք Քեանօթման երթալու համար, որ 6 ժամ հեռի է: Նախ ելանք Քիւրէկ — տաղը ըսուած դժուարամատոյց լեռան գագաթը՝ որ երկու ժամ տե-

ւեց . անկէ սկսանք իջնալ լեռան միւս կողմն ՚ի վար մինչև ստորոտը՝ ճիշդ երկու ժամու մէջ . վերջը երկու ժամ ալ ձորերու մէջէ անցնելով իջանք ծառու դաշտավայրի մը վրայ , ուրկէ վտակ մը կանցնէր և որուն եղերքին վրայ ջաղացք մը շինուած էր .

Յուլիս 22 երեքշաբթի իրիկուան ժամ 9 ճամբայ ելանք , 5 ժամ շարունակ ձորերու մէջէ անցնելով իջանք Զապ — Սու վտակին եղերքին վրայ ու գիշեր կեցանք :

Յուլիս 23 չորեքշաբթի իրիկուան ժամ 9 ժամբայ ելանք և 3 ժամ հեռի էահուտի — քէօյի ըսուած հըրէից գիւղն իջանք , որ 20 վայրկեանի չափ հեռի էր Զապ — Սու վտակին :

Յուլիս 24 հինգշաբթի իրիկուան ժամ 8 ճամբայ ելանք , 8 ժամ շարունակ լեռներ ու ձորեր անցնելով իջանք դաշտի մը մէջ քրդաց գիւղ մը , ուրկէ ջուր մը կանցնէր .

Յուլիս 25 ուրբաթ իրկուան ժամ 8 ճամբայ ելանք Պարթուլլահ կամ կեավուր — քէօյ ըսուած գիւղն եր . թալու համար , որ 8 ժամ հեռի էր , և նոյն օրը մը տանք . այս գիւղը Մուսուլէն 4 ժամ հեռի է . ասկէ արագահոս ջուր մը կանցնի՝ որուն վրայ ջրաղացներ շինուած էին :

Յուլիս 26 շաբաթ առառ ժամ մէկ ճամբայ ելանք և ժամ 6 ին շքեղ հանգէսով մտանք Մուսուլ , ուր այս անգամ 10 օր կեցանք .

Օգոստոս 4 (բամազան 5) երկուշաբթի ժամ 8 մեծ հանդէսով մեկնեցանք քաղաքէն . ձէրէն ճամբան բըռնելով զարկինք դաշտային ճամբայ մը . 3 ժամ հեռի ճամբուն վրայ հանդիպեցանք թէրէէն անուն քիլտանիներու գիւղը , որ 1000ի չափ քարաշէն մեծ տուներ անէր , և գործածած ջուրերնին հորի ջուր էր : Ասկէ 3 քառորդ հեռի է Պաթմըն անուն քիլտանիներու գիւղը : Թէրքէֆէն $1\frac{1}{2}$ ժամ ալ երթալով իջանք թիլիսքօր անուն քիլտանիներու աւերակ գիւղը , ուր 150 տուն միայն մնացեր էր :

Օգոստոս 5 երեքշաբթի ճամբայ ելանք , և 6 ժամ դաշտային ճամբայէ մը երթալով իջանք աւերակ գիւղ մը ու գիշեր կեցանք : Այս դաշտին մէջ բազմաթիւ գիւղեր կային՝ մէկ քանին քայքայուած , տեղ տեղ ալ ծառեր , շատ մ'ալ վտակներ կանցնէին :

Օգոստոսի 6 չորեքշաբթի , 7 ժամ ճամբայ երթալով իջանք քրդաց գիւղ մը , ուր անթիւ սօսիի ծառեր կային :

Օգոստոս 7 հինգշաբթի , 6 ժամ ճամբայ երթալով անցանք մերթ դաշտեր և մերթ բլուրներ . վերջը իջանք դաշտի մէջ Եկղիտիներու գիւղ մը . որուն առջևէն առաստ ջուր մը կանցնէր . ճամբան շատ տեղ գիւղեր կար , ու վտակներ կանցնէին :

Օգոստոս 8 ուրբաթ առտու ժամ 8 ճամբայ , ելանք ձիզրէ երթալու համար , որ 10 ժամ հեռի է , և նոյն օրը ժամը 5 ին մտանք : Ճամբան շատ գիւղեր կային , և երկու կողմերնիս անընդհատ ցորենի արտեր էին . քանի մը ջուրերու վրայէ անցանք . նոյնպէս անցանք Պաթ-

ման ջուրը . և ձիղրէի մօտ դիմաւորեց զմեզ կմին փաշան , որ մէկ գունդ մը զօրքով կսպասէր քաղաքը . մեծ հանդէսով անցանք կամուրջն ու մուանք քաղաքը : Զօրքը՝ քաղաքին շուրջը և 10 վայրկեան հեռի վրան՝ ներու մէջ էին , և մէկ մասն ալ պարիսպներուն վրայ ու քաղաքին մասնաւոր տուներու մէջ :

0դոստոս 9 շաբաթ ճամբայ ելանք , Տէրկիւլի դէմը գտնուած լեռն երթալու համար , որ $4\frac{1}{2}$ ժամ հեռի է , ուր տէրութեան բանակը կը կենար : Ինչպէս որ յառաջադոյն գրած եմ : քանի մ'ամիս յառաջ տէրութիւնը սպարապետ Օսման փաշայի հրամանատարութեան ներքև՝ Քրդաստանի վրայ բանակ զրկելով պատերազմ բացեր էր , և կուզէր ձերբակալել քրդաց գլխաւոր և անյաղթելի ապստամբապետ Պետրհան պէյն ու իրեն նըմանները , որոնց ամենն ալ պատերազմին սաստկութեանը չը դիմանալով արդէն անձնատուր եղած էին , և ընդհանուր Քրդաստան հնազանդութեան մտած էր քիչ աւուր մէջ . Նոյն օրը անցանք մանր բլուրներ , ընդարձակ ու առատաջուր ձորեր . նաև դարձանք մէկ ձոր մ'որուն երկու կողմը միակտուր ապառաժէ բարձր լեռներ կային , որոնց կէս մէջքին վրայ դէմ առ դէմ բերդեր շինուած էին . վերջը ելանք մէկ բարձր լեռ մը , որուն դադաթին կողմը բաւական ընդարձակ տեղէ մը մը յստակ ու առատ ջուր մը կը բղխէր . այս լեռն իշնալով՝ անկէ ալ ելանք ուրիշ անտառուտ լեռան մը վրայ , որուն զառ ՚ի վայրին վրայ հաստատուած էր բանակը 500ի չափ վրաններու տակ . այս լեռան շատ կողմերէն առատ ու յստակ ջուրեր կը բղխէին . հոս իշանք մեծ հանդէսով ու դիշեր կեցանք : Այս լեռան արեւելեան կողմն է ձ՛եղէլւ—ձէուոյն կամ ձէուոյն ըսուած անառիկ ապառաժուտ ձիւնապատ բարձր լեռը , որուն վը-

ըայ շինուած էր Պետրհան պէյին բերդը , որ պատերազմին ատեն ռմբակոծութենէ կործաներ էր :

Քրդերն աւանդութեամբ կը կարծեն՝ թէ Նոյի տապահոյ այս լեռան վրայ իջած է : Ճիզրէէն մինչեւ հոսլեռներուն վրայ ու ձորերուն մէջ քրդաց , քիլտանցւոց ու Հայոց անթիւ գիւղեր կային :

Օդոստոս 11 Երկուշաբթի ժամ 3 , բանակով հանդերձ ճամբայ ելանք Ավրան գիւղն երթալու համար , որ 3 ժամ հեռի է , և նոյն օրը գիշերուան ժամ $1\frac{1}{2}$ ին հասանք . նախ անցանք քարոտ ու լեռնային ճամբաներէ , ուր բազմաթիւ գիւղեր ու պատուական ջուրեր կային . վերջը թաւալեցինք լեռ մը՝ որ $2\frac{1}{2}$ ժամ տևեց : Ավրան լեռան վրայ շինուած քրդաց գիւղ մ'է գեղեցիկ պարտէզներով ու այգիներով . ունի անուշ ու պաղ ջուր մը : Յաջորդ օրն ալ հոս անցուցինք՝ որ բանակին ետ մնայող զօրքերը գան ժողովին :

Օդոստոս 13 չորեքշաբթի ճամբայ ելանք և 5 ժամ հեռի գաշտի մէջ շինուած թիլ անուն քրդաց ու Հայոց գիւղն իջանք , որ պատուական ջուր մ'ունէր : Ճամբան շատ գիւղեր կային , և ընտիր ցորենի արտեր ու յստակ ջուրեր պակաս չէին :

Օդոստոս 14 հինգշաբթի ճամբայ ելանք , 9 ժամ հեռի Մութութ գիւղն երթալու համար : Ոնցանք ձորերու մէջէ , դարձանք լեռներ , ուր գիւղեր , ջուրեր , արտեր ու այգիներ կը գտնուէին . վերջը երբ գիւղին մնացանք , տեսանք լեռան վրայէն Շագը , որուն մէջ կը թափէր Պահան— ըստած ընդարձակ արագահոս գետակը : Այս գետերուն խառնուած տեղը հրուանդանի մը՝ վրայ թիլ անուն քրդաց գիւղ մը կայ : Մու-

թութ գիւղը Պօհրան— ճախ կողմն է ջուրէն քառորդ մը հեռի դաշտավայրի մը վրայ . Գիւղին մէջ ուրիշ ջուր մ'ալ կար՝ որ բնակիչները խմելու կը գործածեն :

Օգոստոս 15 ուրբաթ ճամբայ ելանք , Յ ժամ հեռի Սղերդ երթալու համար : Մութութէն կէս ժամ հեռի՝ Պօհրան ջուրին մէջէն աջ կողմը անցանք , և 3 ժամ անոր եղերքէն չը հեռանալով դաշտավայրերու վրայէ յառաջ գացինք , ու լեռ մ'անցնելով մօանք ըն դարձակ դաշտի մը մէջ , որ ցորենի արտերով ու այդիներով ծածկած էր . աս դաշտին մէջ ո՛չ գետ կար և ո՛չ վտակ , միայն հորեր փորուած էին պէտք եղած ջուրը հոգալու համար :

Ս Դ Ե Ր Դ .

Լեռան մը վրայ շինուած ամուր գիւղաքաղաք մ'է . ունի 2500 քարաշէն հոյակապ տուներ , որոնց 1800 ը քրդաց է , մնացածը հայ , ասորի , քիլոմետրոնէրց : Ամրակառոյց մեծամեծ ապարաններ , մզկիթներ , եկեղեցիներ , մեծ վաճառանոց մ'ուր ամեն բան կը գտնուէր . Այս կողմերը շատ բարեբեր են . պատուական մեղր , մոմ , կարակ , սպիտակ նաւթ և ամեն տեսակ մրգեղիններ , թուզ , նուռ , ընկոյզ , առատ խաղող՝ մանաւանդ շնչի— էւշի— ըսուած , ձէթ , վշատ , և լն : Օդը մաքուր ու առողջ է , ջուրը քիչ : Բնակիչները առ հասարակ վայելչադէմ ու հաստաբագուկ են :

Մենք և բանակին աստիճանաւոր պաշտօնատէրները մասնաւոր տուներու մէջ իջանք , և զօրքը վրաններու տակ : Օսման փաշան խակոյն ձեռք անցուց գիւղաքաղաքիս եօթը գլխաւոր ապատամբ քրդերը , և շղթա-

յակասալ ըրաւ առանց ունին դնելու ոչ կանանց պաղաւտանացը և ոչ տղայոց ողբոց աղաղակին, և հրաման ըստ որ հետ բերուին :

Օգոստոս 16 շաբաթ օր ճամբայ ելանք 6 ժամ հետի Մնար գիւղն երթարու համար . նախ ժամ մը դաշտային ճամբու մէջէ երթալով՝ լեռնէ մը վար իջանք, և կամուրջի մը վայէ անցնելով՝ գեղեր գիւղը մոտանք . վերջը դարձեալ դաշտավայրի մէջէ երթալով՝ ելանք լեռան վրայ ու մտանք Մնար գիւղը, որ այդիներու ու անթիւ ծառերու մէջ դրախտանման գիւղմ' էր . բանակն ալ զետեղեցաւ վրաններու տակ այդիներու մէջ :

Օգոստոս 17 կիւրակի օր ճամբայ ելանք, եւ եօթն ժամ հեռի Պէնէւ — ոս ըսուած գետակին եղերքը իջեւան ըրինք : Նախ՝ 2—3 ժամ շարունակ լեռներու կէո մէջքին վրայ դանուած նեղ ճամբայներու վրայէ իրարու ետեւ երթալով իջանք այդիներու մէջ գեղեցիկ տեղ մը՝ ուր քիչ մը հանդիսաւ ըրինք . վերջը 4 ժամ ալ երթալով, իջանք Պէնէւ — ոս ըսուած գետակին եղերքին վրայ, ուր ոչ ծառ կար և ոչ տուն . հոս գիշերը կեցանք վրաններու տակ :

Օգոստոս 18 երկուշաբթի ճամբայ ելանք 6 ժամ հեռի Պիթլիզ երթալու համար, և նոյն օրը իրիկուան մոտանք : Ճամբան մինչև Պիթլիզի մէկ ժամ մնալով գըրեթէ դաշտային էր, և մենք միշտ Պիթլիզի գետին եղերքէն չը հեռանալով կերթայինք . բայց վերջը ելանք լեռ մը . որուն ապառաժուտ գագաթին կողմը դռան նման փորուած ծակի մը մէջէ անցնելով մոտանք Պիթլիզ : Քաղաքին մօտ երկիրը մշակեալ էր . արտեր, այդիներ ու անհամար ծառեր կային և շատ մ'ալ առուակներ՝

որ Պիթլիզի գետը, կը թափէին :

Բ. Ա. Ղ. Ե. Շ (Պ Ի Թ Լ Ի Զ)

Զորերու մէջ ու լեռներու վրայ շինուած 4300
տունով բերդաքաղաք մ'է , ամեն կողմէն բազմաթիւ
ձորերով ու գժուարամատոյց լեռներով պատաժ : Ա-
րևելեան կողմէն սահմանակից ունի խլադ ու Դատո-
ւան , ուրկէ 5 ժամու չափ հեռակ է . արևմոտեան կող-
մէն Մուշ , ուրկէ 12 ժամու չափ հեռակ . և հիւսիսէն
Մանագիերտ քաղաքը : Ունի 25600 ի չափ բնակիչ ,
որոնց 20000 ը , քիւրտ ու մահմէտական են , 5000 ը
հայ , 600 ի չափ ալ եագուպի ու ասորի : 100 տարիի
մօտ առաջ 25000 ի չափ տուն կար , և 100000 է աւելի
բնակիչ . բայց անդադար խոռովութեանց , անտանելի
հարստահարութեանց և անխնայ սովերու շը կրնալ դի-
մանալով ցրուեր են :

Բաղէշ՝ ի հնումն Տուրուբերան նահանգին մոյրա-
քաղաքն էր : Տուրուբերան նահանգը՝ — ուամկօրէնս
Տարբերունի — Մեծին Հայոյ 15 նահանգներէն մէկն
էր , որուն սահմանակից էր արևելեան կողմէն վաս-
պուրուկան նահանգը . արևմուտքէն Զորբորդ Հայք .
հիւսիսէն Բարձր Հայք ու Արարատ . հարաւէն Աղձ-
նեաց և Մոկաց նահանգները : Այս Տուրուբերան նա-
հանգն ալ 16 դաւառներու բաժնուած էր , որոնց մէ-
կըն էր Բաղնունեանց (1) դաւառը . Բաղէշ քաղաքը սյս

(1) Այս դաւառին ի՞նչ սկզբամբ նշնունիք՝ բառելուն
պատճառը՝ Խորենացւոյն պատմութենին կը սովորինք , որ
Հայկայ Մանաւաղ որդւոյն ժառանգն եղող Բազ նահապետը՝
Վանայ ծովուն արեւմտեան հիւսիսային կողմի եղերքը ի-

Բղնունեանց գաւառին մէջ է , ինչպէս նաև Արձկէ , Խլադ , Հիղան քաղաքները . բայց աղգային աշխարհա- գիրներէն ոմանք կը պնդեն թէ ՚ի հնումն բաղէշ Տու- րուբերան նահանգին մէջ չէր գտնուեր , այլ Աղձնեաց նահանգին մէջ կը համարուեր , որուն մէջն էր Սալնոյ ձոր անուն գաւառը . այս պատճառաւ էր որ Բաղէշի հայերը մինչեւ հիմայ Սալնոյ ձոր կանուանեն քաղաքին տեղը : Բաղէշ քաղաքը՝ որ ձորերու մէջ ու լեռներու վրայ շինուած ըլլալը արդէն ծանուցինք , ունի չորս ձոր . արեւելեան , արեւմտեան , հիւսիսային եւ հա- րաւային . առջի երեքին մէջէն կը վաղեն մշտահոս ե- րեք վտակներ , որոնք երթալով դէպ 'ի հարաւային կող- մի ձորին մէջ կը միանան : Այս երեք վտակները իրա- րու հետ չը միացած զատ զատ անուն կը կրեն իրենց անցած նշանաւոր տեղերուն անուններն առնելով , եւ կըսուէին Ամուս ջուր , Օ-ԵՒՌՈ ջուր , Խ-ՋԵՐՈ կամ Խ-ՐՈՒ ջուր . այս վերջինը Ամրաօլ վանքին առջեւէն անյնե-

րեն բնակութեան տեղ ընտրելով , իր անունով Բղնունիք անուանած է թէ՛ ծովը եւ թէ՛ գաւառը . յիշտ որոյ կե- ցեալ (Հայկայ) եւ այլ եւս ամս ոչ սակաւս մոռանի , յան- ձըն առնելով զբովանդակ աղն Արմենակայ որդւոյ իւրոյ : Իսկ նորա թողեալ երկուս յեղբարց իւրոց զիոռ եւ զՄանա- ւազ ամնայն աղիմին իւրեանց 'ի կոչեցեալն Հարք , եւ զորդի Մանաւազայ զԲաղ յարեւմափց հիւսիսոյ զեղը ծովուն աղւոյ եւ զդաւառն եւ զծովն անուանէ իւրով անուամբն : Եւ 'ի սոցանէ ասեն լեալ զնահապետութիւնս (Նախարարու- թիւնս) Մանաւաղեան եւ զԲղնուննեանց » , (Խորեն . Գիրք . . .) :

Վանայ ծովուն արեւմտեան հիւսիսային կողմը 3900 սարիի չափ առաջ շինուած այս Բաղ անուն գիւղը մինչեւ իմա կը կենայ . թէպէտ գիւղին հայ բնակիչները ժամանա- ւաւ քրդաց հարստահարութիւններէն բռնադատուելով ձգեր

լուն համար , քրդերը վանքին անունովը Ամբողջականութեան կանուանեն : Իսկ միանալուն ետքը ընդհանրապէս կը կոչուին Բաղեշու ջուր , Առք-Պանև , որ կը թափի Տիգրիս գետին մէջ :

Քաղաքիս տուներն այս երեք ձորերուն մէջէն անցնող վտակներուն եղերքէն սկսելով հետզծետէ դէպ 'ի վեր կարդ կարդ բարձրանալով լերանց զառ 'ի վայրին վրայ տարածուած են , որոնք ըստ մեծի մասին իրարմէ հեռի են եւ ծառաղարդ պարաէզներու ու արտերու մէջ զուարճալի գիրք մ' ունին : Այս տուներն ու հասարակաց շէնքերն ամենն ալ մէկ ունաչափ խորանարդ կակուղ ընդհանրապէս միխրագոյն սղբատաշ եւ տեղ տեղ ալ գոյնզդոյն քարերով շինուած են . կան մեծամեծ ապարաններ ու կամարակապ շինուածքներ . Բերդը երեք ձորերուն ճիշդ կերպոնը՝ հիւսիսէն դէպ 'ի հարաւ երկնցած քարանձաւի մը վրայ շինուած է : Ունի հարաւային կողմը կամարակապ աւերակ դուռ մը , որուն վրայ արաբերէն մեծ գրերով արձանագրութիւն

ուրիշ գիւղերու մէջ ցրուեր են , բայց տեղւոյն քիւրտ բնակիչները գիւղին անունը միշտ անփոխու պահած են մինչեւ հիմայ :

Պատմութիւնը չաւանդէր թէ Բազ ուրիշ ի՞նչ քաղաքներ շինած է . Բաղէշ , Խլադ , Արձէէ , Հիզան քաղաքները թէ եւ բազմաթիւ դարերէ 'ի վեր շինուած ըլլալին մեր աղդային պատմչաց յիշատակութիւններէն ու նկարագրութիւններէն յայտնի կերեւին , բայց չը զիտցուիր թէ Բազ նահապէտը շինած է թէ իր յաջորդ նախարարները կամ թագաւորները . ուստի այս քաղաքներուն անունները ի՞նչ ըսկըբամբ , առիթով եւ ո՞ր շինողին անունովը կոչուած ըլլալին յայտնի չէ , եւ շատերու անուան ստուդաբանութենէն ալ որոշ իմաստ մը չառնուիր :

մը կայ, որ սոյն բերդը ջաճկաց 902թուականին սուլ-թաններէն մէկուն շինածն ըլլալը կը յայտնէ . բայց կերևի՝ որ նոյն թուականին մէկ սուլթան մը նորոգած է միայն զանի . վասն զի բերդին արևելեան վարի կողմն ու իր տակը պատին կից շինուած խոհարարի խանութի մը մէջ քառակուսի կակուղ քարերուն վրայ մաշած ու աւրուած գրեթէ անվերծանելի գրերով լա-տիներէն հնագոյն արձանագրութիւն մը կայ, և մա-նաւանդ առաքելաշէն վանքերուն յիշատակարաններն ու աւանդութիւնները յայտնի ցոյց կուտան՝ որ Բաղէշ 1865 տարիի չափ և անկէ ալ շատ առաջ Հայոց ճոխ ու բազմամարդ քաղաքներուն մէկն եղած է, և Հայոց իշխանութեան կործանման ժամանակներուն մէջ աս ալ՝ միւս քաղաքներուն պէս իր ճոխութենէն ու հայ բնակչաց բազմութենէն մերկացեր է : Ահա ասոնց ա-մէնը կը հաստատեն որ թէ՛ քաղաքն ու թէ՛ բերդը շատ հին ժամանակներու մէջ շինուած են : Քարան-ձաւին ամեն կողմի երեսները խորտութորտ է և վե-րէն՝ ի վար ուղղահայեաց դիրք մ'ունի, այս պատճա-ռաւ բերդէն մինչև վար դէպ ՚ի դուռը՝ շրջապտոյտ ճամբայ մը շինուած է, վրան քարաշէն բարձր կամա-րով ծածկած : Հիմա այս բերդը աւրուած, լքեալ ու ամպի մնացած է . դունէն սկսելով բերդին ամեն կող-մերուն վրայ բազմաթիւ աւերակաց կոյտեր կը ներկա-յանան . տեղ տեղ ալ կիսակործան չէնքեր այլ և այլ ձեւրով կը տեսնուին . միայն քանի մը հին տուներ կան տաճկաց և մէկ փոքրիկ մզկիթ մը : Ասկէ 30—40 տա-րի առաջ այս քաղաքին երբեմն երկար ժամանակ տի-րող պարսից խաններուն ապարաններն ալ կան եղեր, որոնց հետքն անդամ հիմայ չէ մնացած : Բերդին մէջ աղբիւր չը կայ, միայն քանի մը տուներու մէջ ջրամ-քարներ շինուած են :

Քարանձաւին քնական եռանկիւնաձև դիրքին վը-
րայ խորանարդ մանր քարերով պատեր շինուած են,
որոնց կարդին մէջ սեղ աեղ աւերակաց կամարները
կան . ասոնց ալ շատ տեղերը փլած , մացածներն ալ
բոլորովին խարիսրած են : կամարներուն այս խարխուլ
վիճակը շատ վտանգաւոր է քաղաքին քնակիչներուն ,
վասն զի թեթև երկրաշարժ մանդամ կրնայ պատճառ
ըլլալ այն ահագին բարձրութենէն քաղաքին վրայ կու-
տելու անոնց անթիւ քարերը : Նաև երթևեկութեան
ճանապարհ՝ բերդին հարաւային արևելեան կողմին
ճիշդ տակին և ուստի բարձրուն ուղղակի ներքեւէն ըլլալուն
համար , մասնաւոր վտանգներ ալ պակաս չեն ըլլար .
վասն զի երբեմն երբեմն մէկ քանի քար բրդելով վար
կը թափին ու շատ անդամ անցորդաց վնաս կը պատ-
ճառեն : Ուստի կառավարութեան կը մնայ ՚ի գործ
գնել այն ամեն միջոցներն՝ որ անհրաժեշտ են այս ծա-
նըր ու աղէտալի վտանգներուն առջևն առնելու հա-
մար : Բերդին հիւսիսային ծայրէն քիչ մը հեռի բլուր
մը կայ , որուն վրայ աշտարակաձև քառակուսի քարէ
շէնք մը կը գտնուի , որ բերդին բարձրութենէն քիչ մը
ցած է :

Քաղաքին ականատես ծերերը կը պատմեն որ 70
տարիի չափ առաջ այս շէնքին վերի ծայրէն դէպ ՚ի
բերդին դադաթին մօտերուն վրայ կամար մը ձգուած
էր , որուն վրայէն դէպ ՚ի բերդը ջուր բերելու հա-
մար քարաշէն խողովակներու մէջ անցուցած հողի թըր-
ծուած խողովակներ շինուած էին . այս ջուրը բերդին
հիւսիսային կողմի լերան աղբիւրէն կուգար և երեք
մասի բաժնուած էր . մէկ մասը բերդին մէջ , երկոր-
դը քաղաքին հիւսիսային կողմը գտնուած կարմրակ
եկեղեցւոյն բակին մէջ , և երրորդն ալ նոյն իսկ սոյն
հիւսիսային լերան միջավայրին վրայ կէտ — հեյրան

ըսուած տեղւոյն մզկիթին բակին մէջ կերթար . բայց հիմայ այս ճամբաները բոլորովին խանգարուած ու աւրուած են , վերցյիշեալ կամարն ալ ֆլած է , և միայն բերդին արևմտեան կողմի պարսպին վրայ խողովակներուն մնացորդները տեղ տեղ կը գտնուին : Բերդին թէ՛ արևելեան և թէ՛ արևմտեան յառակի կողմերը մէկ մէկ խոռոչներ կան , ուրկէ դէպ 'ի վեր՝ բերդը տանող քարէ աստիճաններով ծածուկ նեղ ճանապարհներ փորուած են . կըսեն՝ որ բերդին մէջ դետնափոր ծածուկ ճանապարհ մը կար , որ քաղաքին հարաւային կողմը վտակին վրայ շինուած Քաղիչն , անուն կամուրջին քովը կը հանէ եղեր . այս ճամբուն երկարութիւնը մէկ մղոնէն աւելի է . հիմայ այս դռներն ալ չեն տեսնուիր : Բերդին բոլորտիքը՝ կէս ժամ կը տեւէ : Քաղաքը պարսպապատ չէ . բայց դլխաւոր փողոցներուն բերանը դուռներ ունի , որ են . 1. Վան—գափուսը 2. Շեմիթիճիլէր—գափուսը : 3. Սրապ—չարսուղափուսը : 4. Ամիրա—չարսուղափուսը . որուն հայերը Ամիրա—լուսայի դուռն կըսեն : 5. Մէյվահանէ—գափուսը . Օրբուն հոգուսը անունով դուռ մ'ալ կայ , որ շատ չի գործածուիր . ասոր Հայերը հողան դուռ կըսեն :

Բաղէշ ունի մեծամեծ մզկիթներ . Ամիր—Շեմիտատին , Ճամիթ—Աթիք , Գըզըլ—Մէսմիտ , Մէսմիտի—Խաթուն և Շերիֆէ . այս վերջինը աւելի մեծագործէ , որուն գմբեթը կիսագնդի ձևով է , ուրիշ մզկիթներէն՝ ումանց գմբեթը սրածայր է :

Չորս քարաշէն Հայոց եկեղեցիներ . 1. Կարմրակ Անշան , որ Ա. կիրակոս ալ կըսուի . վեց սիւներու վրայ հաստատուած գմբեթաւոր եկեղեցի մ'է , կակուղ սրբաւտաշ քառակուսի քարերով շինուած . ասոր մէջ պահուած է կենաց փայտի մասունք մը՝ որուն խաչին վրայ կարմիր գունով գոհար մը կայ , այս պատճառաւ

Եկեղեցին ալ կործակ ըստւած է։ 2։ Ա. Սարգիս. սորա աւագ սեղանոյն տակէն առաստ ու անուշ ջուր մը կը բղիէ, որ ստորերկրեայ ջրմուղներով քաղաքին զանազան կողմերուն մէջ կը բաժնուի . քաղաքացւոց շատերը այս ջուրը կը գործածեն : 3։ Հինգ խորան եկեղեցի : 4։ Ա. Դէորդ եկեղեցի :

Ամրտոլու անուն վանք մը, կամ Ամրոդւոյ Ա. Յոհաննու վանք . որուն մէջ է առաջնորդարանը, և ունի եկեղեցի մը : Աւանդութիւն մը կայ՝ թէ Ամիր և Տօլ անունով երկու եղբայրներ կային, որ այս վանքն ու եկեղեցին նորոգած են . այս պատճառաւ անոնց անուամբը Ա. Յոհանք վանք կոչուած է . բայց ըստ մեղկերեկ որ այս բառը՝ Ա. Յոհանք բառին աղաւաղութիւնն է :

Քարաշէն և տեղ տեղ ալ փայտաշէն բարձր կամարով ծածկած մեծ շուկայ մը, որ երեք ձորոց կեդրոնը շինուած է բերդին կից : Հիւսիսային ձորին մէջէն վաղող վտակը այս շուկային մէջէն կանցնի, որուն վըրայ տեղ տեղ կամուրջներ շինուած են :

Մսավաճառներուն և մանրավաճառներուն շուկաները լայն, բարձրակամար և աւելի կանոնաւոր շինուած են : Քանի մը մեծ ու փոքր քարաշէն խաներ . հին իոն, նոր իոն և այն :

Երեք մեծ քարաշէն քաղնիքներ . Խոն - համար, Խոն - համար, Փալ - համար : Մէտրէսէներ, քրիստոնէից նախակրթական դպրոցներ :

Բաղէշի արևելեան կողմը գտնուած բարձր լերան գագաթին վրայ քառակուսի դիրքով կիսակործան կամարակապ շէնք մը կայ՝ որ քաղաքին տիրող պարսից խաներուն ժամանակէն մնացեր է, որ մինչեւ հիմա ջերագիւն (1) կը տուի . այս տեղէն կերևայ քաղաքին ամեն

(1) Այս պարսկերէն բառը՝ հայերէն դիտարան կը նշա-

կողմը, նաև Ռահկայ ըստած հովտին մէկ մասը . Ս. Գէ որդ եկեղեցին այս լերան ստորոտը շինուած ըլլալուն՝ լերան անունն ալ Ա. Գէորգ լեռ դրած են . այս լեռը գիր գրելու դործած ուած աև քարէ տախտակին հանքէն դոյացած է : Այն լերան առջնը բարձր բլուր մը կայ՝ որուն գագաթին վրայ բերդանման շինքի մը աւերակը կայ՝ որ երեսուն տարիի մը չափ առաջ քաղաքիս տիրող Շէրիֆ Պէյին ապարանն էր :

Քաղաքայիք կը պատմեն՝ թէ երբեմն ձմեռն սովորականէն աւելի ձիւն եկած ըլլալով՝ մեկէն ՚ի մէկ ուսին (1) բրդեր ու տակը գտնուած Ծողուռ անուն թաղին քանի մը տուները կործաներ ծածկեր ու մէջի բնակիչները սպաններ է :

Առաջները շատ արհեստաւորներ կը գտնուէին, մանաւանդ կտաւագործ կամ ջուլհակ . բայց վերջերը ցրուեր են, և հիմայ կը գտնուին միայն ոսկերիչ, գերձակ, երկաթագործ, կոշկակար, խաղախորդ, օլոն, ներկարար, և 100 ի չափ ալ կտաւագործ, որոնց շատին գործարաններուն կտաւը Ամերիկայինէն վար ըմմար . կարմիր ներկով ներկուած պատուական կտաւ մը կը շինեն, որ բոլոր Քրդաստանի մէջ կը գործածուի : Այս կտաւը շատ գերազանց ու կենդանի գոյն մ'ունի, որ կարմիր թաւիչէն չի տարբերիր և կըսուի Շիլէ :

Քաղաքին բերքերն են՝ մեղր, գղթոր, խէժ, ծըխախոտ, լոշտակ, խաղող, դինի (խանտրտիկ կըսեն),

նակէ . որովհետեւ հոս տեղ միշտ պահապաններ կը կենան եղեր հեռուէն՝ եկող թշնամեաց զալուստը զիտելով հսկելու համար :

(1) Զմեռ աաեն լեռներուն վերի կողմերուն վրայ ժողովուած ձիւնակոյտ :

օղի , ռուալ , նուռ , թութ , թուզ , խնձոր , տանձ ,
սեխ , ձմերուկ և ուրիշ տեսակ տեսակ պտուղներ .
նոյնպէս խաւրծիլ բյոսը , որ ինքնին կը բուսնի գարնան
ժամանակ լեռներուն վրայ մանաւանդ վանայ կողմերն
ու վարադայ լերան վրայ . քաղաքացիք կառնեն ասոր
զովացուցիչ հիւթն , և ջրոյ հետ խառնելով կը խմեն .
Ուավէնտ ըսուածն ալ ասոր արմատն է , բայց ժողվելու
հոդ չեն տանիր : Քաղաքին օդն առողջ է , բայց բանա-
կին զօրաց մէջ ջերմը կը տիրէր . ջուրն ալ առատ է .
վոտակներուն ջուրերէն զատ գրեթէ ամեն տան մէջ
անուշ ջուրի աղբիւրներ կան , որոնց գլխաւորներն են
Լօլու , Ռաշօ , Շէրիֆխանի և Մաթաշ աղայի աղբիւրնե-
րը . Սեփէր պեկենց ակները , ևն . Իլու Վանայ լիճին
մէջ գտնուած Տառէի ձկան տեսակին նման ձուկ մ'ալ
Բաղէշի վտակներուն մէջ կը գտնուի , մանաւանդ գար-
նան ժամանակ :

Բաղէշ գայմագամութեան վիճակ մ'է հիմայ . այս
վիճակը լեռնային է ուր կը գտնուին ընկուզի , տանձի
ձիթենիի ու կաղնոյ անհատնում անտառներ . ունի նաև
պարարտ արօտով ծածկուած ընդարձակ ձորավայրեր ,
այդիներ : Կը բուսնին տեսակ տեսակ խոտեր , բոյսեր ,
ծաղիկներ , որոնց մէջ յիշելու արժանի են նարկիզ և
մանուշակը՝ որ առատ ու ընտիր մեղր կուտան : Կը
գտնուին եղջերու , աղուէս , այծեամն , այծ , վայրի
ոչխար , վարազ , եզն , սալիտակ արջ , տատրակ , կաքաւ ,
լոր , մաշկաթեւ , սոլսակ , սորեակ , վնասակար օձեր ,
և այլն : Կան կարմիր , ս'ու ու սպիտակ մարմարիոնի և
ծծմբի առատ հանքեր : Ունի 80 ի չափ գիւղեր :

Ծապուկոր գլւղ . Բաղէշէն կէս ժամ հեռի ու անոր
արևելեան հիւսիսային կողմը , հիմա աւերակ է , ուր
կայ միայն քաղցրահամ աղբիւր մը : Ամպ գիւղ . քաղա-
քէն մէկուկէս ժամ հեռի և անոր հարաւային կողմը :

Պօռ գիւղ . քաղաքէն երկու ժամ հեռի ու անոր արևելեան հիւսիսյին կողմը ձորի մէջ : Խուլթիկ գիւղ . վիճակիս ամենէն մեծ ու երեւլի գիւղն է՝ որ ունի 400 տուն : Ռահվայ ըսուած տեղը՝ քաղաքին հիւսիսյին կողմը կի՞նայ , որ գէպ ՚ի արևմուտ Մուշի դաշտին կողմը երկնցած ձորահովիտ մ'է , և կարաւանի ճամբայ է . բայց ձմեռը ասոր մէջ սաստիկ փուք ընելուն պատճառաւ տեղ տեղ քարաշէն մեծամեծ իշեաններ շինած են , որոնց մէջ երևելի է Սլամելեք ըսուած իջեւանը . բայց հիմայ ասոնց շատը աւերակ ու ամայի մնացած են :

Քաղաքին մօտերը երեք քարաշէն հին վանքեր կան իրենց եկեղեցիներովը որք են . 1. Խնդրակատար Ս. Աստուածածնայ վանք . քաղաքէն կէս ժամու չափ հեռի ու անոր հարաւային կողմը ձորի մէջ . Թաղէոս Առաքեալ հիմնադրած է , և մինչև հիմնյ շատ նորոգութիւններ կրած : 2. Աւեխու Ս. Աստուածածնայ վանք . քաղաքէն քառորդի մը չափ հեռի և անոր արևելեան հարաւային կողմը լերան ստորոտը ձորի մէջ , որուն առջեն կանյնի գետակ մը . այս ալ Թաղէոս Առաքելոյն հիմնադրածն է , բայց մինչև հիմնյ շատ անդամ նորոգութիւններ եղած են : Այս վանքին հարաւային արևելեան կողմը մէկ երկու վայրկեան հեռի լերան զառ ՚ի վայրին վրայ երկու հատ իրարու քով շինուած կամարակապ փոքրիկ շէնքեր կան , որք մշտահոս աղբիւլներ են : Վանքին մէջ ալ առաւտ ու մշտահոս քաղղրահամ աղբիւր մը կայ , որուն ջուրը գետակէն բերուած է : 3. Գոմաց Ս. Աստուածածնի վանք կամ Տարակարնակ(1) Աստուածածին . քաղաքէն կէս ժամ հեռի և անոր

(1) Վասն զի շպտ աղաւանիներ կը յաճախեն հոս :

արևմտեան կողմէ ձորի մէջ, ուրկէ հինգ վայրկեան հետո է Գոմա անուն փոքրիկ գիւղը։ Այս վանքին մէջ ալ մըշտահոս քաղցրահամ աղբիւր մը կայ։ Ասոնցմէ զատ վիճակիս մէջ կը դանուին նաև քարաշէն եկեղեցիներու ու մատուռներու աւերակներ։

Հինգ օր նստանք այս քաղաքը՝ ուր էր նաև սպարապետը իր բանակովը մէկտեղ։

Օգոստոս 24 կիրակի օր մեկնեցանք քաղաքէն Ոխլադ երթալու համար, որ 12 ժամ հեռի է, և մինչեւ հոն ճամբուն վրայ կային Փափշեն, Կամախ, Պոռ, Զուար, Դատվան, Ջրիսոր, Շամրամ, Լծուակ, Ծղակ, Դեղուտ, Լարունջ և Քրիսուս անուն գիւղերը։

Շքեղ հանդէսով քաղաքին մէկ ծայրէն մէկալը անցանք, որն որ կէս ժամ տևեց, և խոկոյն մոանք Ռահվայի ձորահովիտը։ այն դաշտանման ընդարձակ և ջրաբուղին ձորերուն մէջ 2 ժամ շարտունակ մարդադետիններու վրայէ երթալով՝ ուր քրդաց ու հայոց գիւղեր պակաս չէին, հասանք Աւուլուր (հայերէն Աւուլու) անուն քարաշէն մեծ խանը, որ Մուշի ու Խխլադի ճամբուն վրայ էր։ ուրկէ բռնեցինք Ոխլադի ճամբան և 2 ժամ շարտունակ երթալով ընդարձակ դաշտի մը մէջէ, ուր մէկ ծառ մը անգամ չըկար, անցանք Գրէսուն անուն բարձրաբերձ լերան արևելեան կողմէն, որուն ստորոտն էր Ջրիսոր և Շամրամ գիւղերը, և իջանք ձորավայրի մէջ վանայ լճին արևմտեան ծայրը դէպ ՚ի Դատվան գիւղը։ գեռ գիւղը ըմբռած և անոր արևմտեան կողմը տեսանք բարձր լեռ մը, Ճեռելէ—Նեճուռ, հայերէն Ներբովիթաց լեառն ըսուած հրաբուղին լեառը, որ Գրգուռ ըսուած պարաւոր լեռներուն բարձրագոյնըն է։ այս լերան գլուխը անուշ ջուրի բաժակ մը կայ։ որ Մուշի մեղրագետին շտեմարանն ու առաջին ակն է։

բաժակին եղերքներուն վրայ հանքային տաք ջուրերու ակեր կան և լերան հիւսիսային կողմէն ալ երկաթային նիւթ մը բղխելով դիղուեր ու լերան պէս բարձրացեր է : Այս լեռը շիջեալ հրաբուզին մ'է . կրսեն թէ 1441 ին այս լեռը յանկարծ ամսպի որոտման պէս գոռացեր ու ճեղքուեր է . այս ահագին պատառուածքէն ամ պանման թանձր ու գարշահոտ ծխով հուր ու բաց ցու լացեր ու ահագին շառաչմամբ ու որոտմամբ մեծամեծ քարեր դէպ ՚ի երկինք նետուեր են . այս հրաբուզին երբ մարած ըլլալը չըգիտցուիր : Լերան ստորոտը քարաշէն խաներ կային :

Տեսանք նաև Դատվանի մօտ ձորավայրին մէջ 30 կամ 40 ի չափ ալ ուղտաձև այլանդակ լեռնանման քարեր, որ ըլլու գործեր, Ներքուագ ունեցէ կրսուին : Աւանդութիւն մը կայ թէ ասոնք Ներքովիթի ուղտերն են՝ որ Աստուծոյ բարկութեամբը քար դարձած են . բայց ոմանք ալ սատանայի գերեզմանն կրսեն :

Հասանք Դատվան՝ որ վանայ ծովուն արևմտեան կողմն է, ուրկէ քանի մը ժամ հեռի էր Ուրտատ անուն գիւղը :

Դատվան Հայոց գիւղ մ'է 60 տունով, ունի լերան վրայ բերդ մը, նաւահանդիստ մը, անուշ ջուր, արտեր ու պարտէզներ : Քիչ մը հանդիստ ընելնէս վերջը ելանք գիւղէն և վանայ ծովին գրեթէ միշտ եղերքի կողմէն մէկ ժամու չափ երթալով մտանք դաշտի մէջ կարմունջ (կամուրջ) գիւղը . այս ճամբան ոչ ծառ կար և ոչ ջուր :

Կարմունջ հայոց գիւղ մ'է, ունի 100 տուն, եկեղեցի, ուրկէ ջուր մը կանցնէր . հոս ծառ չըկար :

Ասկէ ալ ելնելով անցանք լեռ մը ու մոտանք Ախլադի թաղերուն մէջ, որ իրարմէ կէս ժամ հեռի 7 թաղ էին, և որոնց անունները Պիթլիզի կողմէն սկսեալ հե-

տեւալներն են . 1. Քըրքլար . 2. Թահտը — Սիւլէյման .
 3. Հարապազայ հայու թաղ՝ ուր վանք մ' ալ կայ .
 4. Իքի — քուպէլի կամ Սիլադ . 5. Էրքիդան . 6.
 Թունուղ . 7. Սոռ : Իջանք իւնք — ուսողէւնք կամ Աւշտ
 ըսուած թաղը մէկ քանի օր կենալու համար : Այս թա-
 ղերը պտղաբեր անտառներու մէջ շինուած են , տու-
 ները իրարմէ հեռի . բնակիչները քիւրտ են .

Խ Լ Ա Դ կամ Ա Խ Լ Ա Դ :

Վանէն հինգ օրի չափ հեռի , լճին հիւսիսային ա-
 րևմտեան ծայրն ու անկէ քառորդ մը հեռի , լերան
 ստորոտը և դէպ 'ի լիճը խոնարհած սարահարթի վրայ ,
 պտղաբեր անտառներու ու այդիներու մէջ շինուած
 քրդաց գիւղ մ'է 150 տունով , որ 'ի հնումն վասարու-
 րական աշխարհին թզնունեաց գաւառին մայրաքաղա-
 քըն էր . Օդը բարեխառն է , հողը բարեբեր . ունի
 հարուստ պարտէզներ , այդիներ ու արտեր . Ոնտառը
 կը բազկանար թութի , բնկուղի , կեռասի , բալի , սեր-
 կսիլի , գեղձի , ծիրանի , սալորի , տանձի , խնձորի
 և ն ծառերէ , որոնք իրարու մօտ ըլլալով՝ ճիւղերնին
 իրարու մէջ փաթթուած երկինքը կը ծածկէին . իրենց
 բարձրութիւնն ու արմատներնուն ստուարութիւնը՝
 անտառին հնութիւնը կը նշանակէին . անտառէն քիչ
 հեռի առապարներէն բլինած անուշ ու պայծառ ակե-
 րուն հազար ու մէկ առուակները օձապտոյտ կը սողոս-
 կէին լուկ մնջիկ անտառին մէջ , որուն գետինը թըր-
 ջելով գալարացուցած էին : Այս քիւրազուարճ ու հո-
 վանաւոր անտառին մէջ բնակիչները զուարճալի կեանք
 մը կանցունէին , մանաւանդ գարնան մէջ , երբ պտղա-
 տու ծառերը կանաչ տերևներով կը զարդարին ու քաղց-
 րաձայն թոշնոց գայլայլիկին կը խառնուի ականակիտ

առուակներուն կարկաջը՝ որոնք անտառին մարդարետնին վրայէն կանցնին խոխոջելով ու լցու և զով արձակելով հողին վրայ ու օդին մէջ, երբ ծաղկալից ու դալարագեղ մարդաստանը անուշ անուշ հոտեր կը բուրէ, երբ արևուն ոսկի ճառագայթները տերեւախիտ անտառին ճեղքերուն մէջէն սպրդելով անոր կամարներուն վրայ ալէծուփ ծիածաններ կը ձեւացունեն։ Հոն՝ ճանապարհորդը ինքզինք փափիկութեան դրախտին մէջ կը կարծէ։ մանաւանդ՝ երբ անջրդի ու ամայի անապատներուն մէջ դեգերելով՝ տօմթակէզ արևուն ջերմաջերմ շառաւիղներէն տոչորած՝ իր ծարաւն յագեցունելու համար կաթիլ մը ջուր գտնելէն յուսահատ՝ յանկարծ ինքզինքը այս վայրերուն մէջ կը դտնէ։ Հոն վտարանդի թափառիկ հայ ճանապարհորդն իսկոյն հոգի կ'առնէ ու կզգայ թէ այն քալած ու շուրջ եկած տեղերը իր նախնեաց հողերն են, և կարծես թէ կը տեսնէ իր հարանց արիւնը՝ որով այն հողը թաթաւեալէ և նախնի պատերազմաց փոշին զինքը շուրջ կը պատէ։ Հոն՝ երկինքը, օդը, ծովը, լեռներն ու ձորերը արձագանք կուտան իր նախահարց բարբառին։ և ափսոս, ո՞ր կողմն որ դարձնէ աշուինն, ամեն կողմն կը տեսնէ գահերը թափուր, դաւաղանները կոտրտած, դրօշակները պատուտած, պալատները քայլքայած, կոթողներն ու աշտարակները յերկիր թաւալած, բերդերն ու պարիսպները հիմնայատակ, ամրութիւնները փլած, տաճարները կործանած, մենաստաններն ու եկեղեցիները լքեալ և միայն ընդհանուր արձագանք մը ընդհանուր ողբոց աղաղակներու՝ որ այն ընդարձակ դերեզմաններէն ՚ի վեր կելնեն ու այն աւերակաց մէջ իր սիրտն այլ աւերակ դարձած ձեռն ՚ի ծնօտին կը նստի հոն, լնքն ալ լալ ու ողբալ անոնց հետ

Ախաղդի մէջ ու մծտերը կան քարաշէն սիւնազարդ գմբեթաւոր հոյակապ չիրիմներ (թիւրապէ) . Աւ իսուն և Գորս Քյուան Քոռիշնալը նէ-որդէլքը , Քէշէ նէ-որդէն և լին անուններով , ուր կը հանդչին Շոհէ Արմէ ըստուած թիւրք թագաւորաց ուկորները արկղներու (թապուտ) մէջ , որոնց մէջ զմուսեալ մարմիններ ալ կը գտնուին . կան նաև մահմէտականաց բազմաթիւ գերեզմաններ ու մահարձաններ կարմիր ու սպիտակ մեծ քարերով : Միջին դարու մէջ շատ փառաւոր քազաք մ'էր այս քաղաքը . Այս կողմերուն մէջ երկու տեսակ ցորեն կրլայ՝ որ անհամեմատ է մեծութեամբն ու քազցը համովը . 120 տիրհէմ կշուղ պատուական խնձոր . Երկու տեսակ տանձ , որուն մէկ տեսակը ձմեռը կը դիմանայ և միւսը՝ որ նոնիւ որճուր կրտուի , տասն օրէն աւելի չըդիմանար . այս ետքինը շատ ջրոտ ու կակուղ է և լվարդացուրի պատուական համ մ'ունի , ղոր ծծելով կուտեն :

Ախաղդի առջև ճին եղերքին վրայ պարսպապատ և բերդաւոր աւերակ դիւղ մը կայ 200 ի չափ տանիքները փլած տուններով , որոնց մէջ կը տեսնուէր նաև մէկ գնորդ ովլ քայքայեալ մզկիթ մը : Այս դիւղին խարխրլած պարիսպն ու բերդը և տունները քառակուսի սև քարերով շինուած էին :

Քիչ մ'ալ խօսինք Հայաստանի ծովուն վրայ :

ՎԱՆԱԾ ԼԻԾ ԿԱՄ ԾՈՎ

Հայաստանի՝ նաև արևմտեան Ասիոյ ամենէն ընդարձակ լիճն է ամեն կողմէն բարձրակատար լեռներով պատած , որ ՚ի հնումն Բզնունեանց ծով կանուանէր , և վասպուրական , Տուրուբերան ու Աղձնեաց աշխարհներուն մէջ կիյնար : Երկայնութիւնը՝ արևելքէն

գեղ՝ ի արևմիւնք 80 մղոն է, և լայնութիւնը՝ 40. ու նի 1200 քառակուսի մղոն տարածութիւն, և շատ խորացաւածէ : Ճուրը խիստ աղի է և բրդակուա . ուստի բնակիչները անոր եղերքներուն վրայ փոսեր բացած են, ուր ամսաք անոր ջուրէն կը լեցնեն որ 15—20 օրուան մէջ արևուն տաքէն ցամքելով կը պնդանայ և պատուական ճերմակ բրդակ մը կը դոյանայ : Այս լճին մէջ կը թափին 40 ի չափ գետ ու վտակներ : Բւնի չորս կղզիներ, որ են՝ Աղմանար, Կտուց, Առակը, Ղիմ: Ջեւալ լճին մէկ մասը կը սառի, մանաւանդ Ղիմի կողմերը . բայց բոլորովին սառիլը քիչ անգամ պատահած է : Այս լճին մէջ կայ միայն մէկ տեսակ ձուկ՝ որ Ցորեւ կըսուի, և մայիս ու յունիս ամիսներուն մէջ միայն անթիւ բաղմութեամբ կը գիմնն գեղ՝ ի դետերուն մէջ . ձենորանները անոնց ճամբուն առջեւը կողովներ (սեփէտ) դնելով՝ առատաբար կռասան, ու չորցընելով կը զրկեն բոլոր Քրդաստան ու Պարսկաստան վաճառելու համար : Այս ձկան մեծութիւնը էստոն չափ է :

Օդոստոս 27, չորեքշաբթի ճամբայ ելանք, Փըրխուս գիւղն երթալու համար, 3 ժամ հեռի, ծամբան շարունակ գաշտային էր, ուրկէ միայն մէկ վտակ կանցնէր : Փրխուս Հայոց գիւղ մ' է . ունի 80 հողաչէն խրճիթներ, քառակուսի ու քարերով շինուած . եկեղեցի մը յանուն Ս. Ստեփաննոսի . հարուստ արտեր ցրենի . բայց և ոչ մէկ ծառ մը :

Օդոստոս 28, հինգշաբթի ճամբայ ելանք, Մարադկերտ երթալու համար, 6 ½ ժամ հեռի : Փրխուսէն մինչև Մարադկերտ ճամբան հարթ ու գաշտային է և ճամբուն երկու կողմի գաշտերը ցորենի հարուստ ար-

տեր կը ներկայացնէին : Այս ճամբուն մէջ հեռուէն եւ ընցաւ Սէդու ուղարձուն լեռը՝ որ այս կողմի լեռներուն ամենէն բարձրն է և մշտածիւն : Բնակիչները կրօեն թէ Նոյի տապանը հոս իջած է : Փրխուաէն ժամ մը հեռի տեսանք նաև Նուշու կամ Նոչի կամ Գերս անուն ընդարձակ լիճը , որուն ջուրը յատակ ու անուշ էր . ձըմեռը կը սառի և վրայէն կարաւաններ կանցնին . ձուկը առատ է : Ասոր արևելեան կողմէն շրջելով իջանք ճամբուն վրայ գտնուած գերս անուն հայոց ու քրդաց գիւղը , որ ճիշդ Զ ժամ հեռոի էր Փրխուաէն :

Այս վայրերուն մէջ աւերակ գիւղ մ' ալ կար Նաղիկ անուն :

Գերսէն ելնելով՝ ժամ ու կէս հեռի ճամբուն ձախ կողմը տեսանք Քուշն Էւլու ըստուած լիճը , և աջ կողմը՝ լճին ուղղակի գէմն ու անկէ կէս ժամ հեռի Սօխթըլի անուն քրդաց գիւղը . ժամ մ'ալ յառաջ երթալով իջանք ճամբուն վրայ գերսէրի անուն հայոց բազմամարդ գիւղը , որուն տուները աղիւսակերտ խրճիխներէ կը բաղկանային , ուր եկեղեցի մ'ալ կար . ասկէ Զ ժամ առաջ երթալով հասանք Մալազկերտ :

ՄԱԼԱԶԿԵՐՏ կամ ՄԱՆԱՒԱՀԱՇԱՌԻԵՐՏ :

Եփրատ գետին . ձախ կողմն ու անկէ մէկ ժամու չափ հեռոի և Մուշերու անուն վտակին քով շինուած հայոց ու քրդաց պարսպապատ ու բերդաւոր գիւղ մ' է 100 տունով : Ունի մէկ մղկիթ և մէկ եկեղեցի : Պարսպին շատ կողմերը վլած էին . բայց բերդը գեռ նոր էր . տուներուն շատերը վլած և մնացածներն ախոռի կը նմանէին . պատերը հին ու սև քառակուսի քարերով շինուած . տանիքներուն վրայ քակորի կոյսեր կային , զոր վայտի ու ածուխի տեղ կը գործածէին , զի ո՛չ անտառ.

կար և ոչ ծառ կը դանուէր : Հողը մշակուած էր ցորենի արտերով և վարունգի, ձմերուկի, սեխի, դումի և շհանցի պարտէզներավ . Մալաղիերտ հասոց իշխանութեան ժամանակ մեծ քաղաք մ' էր Մանաղիերտ կամ Մանաւազակերտ անուն, որը Հայկոց որդին Մանաւազ շինած էր, և որ երբեմն ալ Ռշտունի իշխանաց աթոռան եղած էր . բայց վերջը Արփարսլան նու աճեր ու աւրեր է, և դեռ այսօր կը կենան կիսաւեր սլարիսազները .

Մանաղիերտի վիճակին մէջ՝ մանաւ անդ հիւսիսային կողմը՝ որ թուշւ կը կոչուի, շատ մը հան շինութեանց աւերակներ կը գանուին . ուստի շատ հաւանական է որ այս երկիրը Տուրուբերանի Դաւու դաւառն եղած ըլլայ . Այս վիճակը գաշտավայր է, ուր առատ ու պատուական ցորեն, գարի և կտաւատ . կը բուսնի, բայց ծառ դրեթէ չըկայ :

Սեպտեմբեր 1, Երկուշարթի (3^{րդ} օր պայրամի) դիւղէն մեկնելով գացինք կարխալլիս անուն տանձկի փոքրիկ գիւղը, և ժամ հեռի : Մալաղիերտէն մինչև կարխալլիս ընդտարձակ դաշտ էր մշակուած . ճամբոն աշ ու ձախ կողմերուն վրայ աեղ աեղ փոքրիկ գիւղեր կը գտնուէին : Գիւղէն ժամ մը հեռանալով անցանք Մալաղիերտ վատակէն, որ Եփրատի մէջ կը թափի, ու եկանք Եփրատի ձախ եղերքին կողմը, և միշտ անոր եղերքն ՚ի վեր՝ դրեթէ առանց անկէ հեռանալու երթալով մտանք կարխալլիս դիւղը, որ գետէն մէկ վոյր կեանի չափ հեռի էր : Թէ՛ գիւղին մէջ և թէ՛ գետին եղերքներուն վրայ սօսեաց ծառեր կային, զոր վառելու կը գործածէին քակորի հետ :

Սեպտեմբեր 2, Երեքշարթի օր ճամբայ Ելանք խամուր գիւղն երթալու համար : Ճամբան գաշտային էր

մինչև խամսւրի մէկ ժամ մնալով, ուր գարձեալ Եփա-
րատ գետին եղրը եկանք, և որոն եղերքն ՚ի վեր կէս
ժամէն աւելի լերան ստորոտի կողմէն երթալով սկսանք
հեռանալ անկէ ու մտանք խամսւր, որ բլուրի վրայ
շինուած բերդաւոր գիւղ մ' էր քրդաց, 50 տունով.
մէկ քանի տուն ալ հայ կը գտնաի : Այս գիւղն երբեմն
բերդաքաղաք մ' էր : Գիւղին քովի ձորին մէջէն ջուր
մը կանցնի . ո՛չ ծառ և ո՛չ պարտէզ կան :

Աեպտեմբեր 3, չորեքշաբթի օր ճամբայ ելանք իւչ
դիլիսէ երթալու համար, 9 ժամ հեռաի : Ճամբան դրե-
թէ գաշասյին էր և աւել աել Եփրատի եղերքներուն
վրայ վրանարնակ քրդաց բնակութիւններ կային : Գիւ-
ղէն 6 ժամ հեռաի պարակի գիւղ մը կար . ասկէ ալ մէկ
ժամ հեռի ուրիշ գիւղ մը, որուն մէջ կը տեսնուէր ե-
կեղեցիի մը աւերակը :

Ի Ի Զ ՞ Ի Լ Ի Ս Է :

Նպատ (1) անուն երկնարերձ լերին արեւելեան
հիւսիսային ատարուոր՝ Եփրատ գետին մօս՝ Հայոց գիւղ
մ' է 40 խրճիթներով : Ունի վանք մը եւ քարաշէն մեծ
ու բարձր եկեղեցի մը յանուն Ո. Գոփոր Լուսաւորչի,
հասասատեալ չորս միակտուր մարմարինէ սառւար ոիւ-
ներու վրայ՝ որուն աւագ խորանի ձեւը յունաց եկե-
ղեցւոյ նման է . Այս խորանին վրայ աւաղանի պէս
գաղտնի աւել մը՝ երկու մեծ արկղ՝ մագաղաթի վրայ
դրուած նախնեաց ձեռագիր ընտիր մասեաններ կային,

(1) Այսինքն՝ Նոյը պատող լեռ, որու վրայ Նոյ նահապե-
աի գերեզմանք կայ կըսուի :

որ անտարակցյա աղդային գրականութեան ու պատմութեան հազուագիւա գանձեր կը պարունակէին. բայց ափսո՞ս որ անուսումն ու անոպայ վանականաց կոյր համոզմամբը այնպէս խաւարամած ու բանտարկեալ կը մընան, եւ օր մը ժամանակին բռնութեամբը պիտի փրտտին ու անհետանան ։ Այս պատուական մատեանները ձեռք անցընել անշնար ըլլարվ, գոհ եղայ միայն զանոնք տեսնելով հետաքրքրութիւնս յագեցունել. ուստի կանչեցի վանահայրն ու միաբանները, եւ 20 ոտնեայ ասանդուխ մը բերել տալրվ մոտանք եկեղեցին ու ելանք այն անգին մատենադարանը. շատը պատմութեան վերաբերեալ գրքեր, որոնց վրայ հազիւ աչք մը նետելու ատեն ունեցայ. արդէն գրեթէ բռնութեամբ ելած էի, եւ ընդ հուալ վար իջնել պարտաւորեցայ. բոլոր ճիգս այն գիրքերը առնելու կամ մէկ ցանկը հանելու համար անօգուտ եղաւ. գիւղին մէջ սօսիի եւ ուրիշ տեսակ ծառեր կը գտնուէին. գիւղը թէպէտ Եփրատի մօտ է, բայց յատուկ առու մ'ալ բերուած էր մինչեւ հոն. Այս գիւղին տեղն էր Բագաւան(1), չաստուածոց ու Հանդիսից պաշտաման տեղին, ուր Լուսաւորիչ մկրտեց մեր Տրդատ թագաւորն՝ իր աշխարհագումար բիւրաւոր զօրքերովը մէկտեղ, ու կառոյց եկեղեցի մը յանուն Ս. Կարապետի, որուն վրայ վերջը Քրիստոսի 624 թուականին շինուեցաւ արդի հրաշակառոյց տաճարը Հերակլէս կայսեր օժանդակութեամբ. այն է որ իւշ Քէլսէ կանուանի :

Վանքին արևելեան կողմը՝ քառորդ մը հեռի է Հայոց՝ Եփրատի մէջ մկրտութեան տեղը, որուն եզերքի

(1) Մեծ Հայոց Այրարատ Նահանգին Բագրեւանդ անուն գաւառին գիւղն էր.

քարաժայռերուն վրայ շատ մը խաչաղրոշմ փորսւած ներ կան մինչև հիմա .

Նպատ լերան գագաթին վրայ մեծին Ներսիսի մատուռներն ու աղօթատեղիները կան , ուր երանելին աղօթքի կայնած՝ լերան առջևի Զիրաւ դաշտին մէջ Պարսիկներուն հետ Հայոց ըրած պատերազմն ու յաղթութիւնը կը դիտէր .

Սեպտեմբեր 4 , հինգշաբթի օր ճամբայ ելանք Պայազիտ երթալու համար , 9 ժամ հեռի : Իւչ Քիլիսէէն մինչև Պայազիտ ընդարձակ դաշտեր էին , որոնց մէջէն Եփրատ կանցնէր , և ուր տեղ տեղ գիւղեր կային և գետին եղերքներուն վրայ ալ վրանաբնակ քիւրտեր կը գանուէին : Իւչ Քիլիսէէն 3 ժամ հեռի Տիատին անուն քրդաց գիւղը հանդիպեցանք , որ ունի բերդ մը՝ որուն մէջ 50 էն աւելի ախոռի նման տուներ կան , և 50 իշափ ալ բերդէն դուրս . 'ի հանդիպոյ քակորէ շինուած աշտարակներ կային , որ վառելու կը գործածուէին , վասն զի ո՛չ ծառ կար և ո՛չ փայտ .

Գիւղիս հարաւային կողմը մեծ ու բարձր լեռ մը կայ Ալբ ռու (1) անուն , որ Նպատ լերան պէս Տորոսի մասն է . այս լեռը գարնան ժամանակ բիւրազգի երփներանդ ծաղիկներով կը ծածկուի : Լերան շատ կողմերէն յստակ ու անուշ ջուրեր կը բղիսին , և առորոտը մարդու հաստութեամբ երկու ակեր կան , որ կ'սկզբնաւուրեն զիշիրատ գետը : Այս ջուրին մէջ ճերմակ կաւի պէս նիւթ մը կը գոյանայ , որ ջուրէն դուրս հանելով կը

(1) Այս լեռն ՚ի հնումն Ծաղկած կամ Ծաղկոց լեռ կը կոչուէր , որուն վրայ սուրբ Ոսկեան վկայները ճգնեցան ու նահատակուեցան :

քարանայ . այս կաւէն համրիչ (թէսպիհ) կը չինեն :

Մեծ Հայոց Այրարատ Նահանգին Բագրեւանդ գաւառին գլխաւոր քաղաքներէն մէկն եղող Զարեհաւան քաղաքը՝ սոյն Տիատին գիւղին տեղն եղած ըլլալ կը կարծուի :

Տիատինէն մեկնեցանք ու դաշտավայրին մէջէն 2 ժամու չափ առաջ երթալով դարձանք վոքը լեռ մը ու մտանք նորէն դաշտին մէջ , և 2 ժամ անդին հանդիպեցանք քարաշէն կամուրջի մը , որուն ներքեւն արագաբար կանցնէր Սև Հոռ անուն ընդարձակ գետ մը՝ դէպ 'ի Պարսկաստան : կամուրջէն անդին դաշտերուն մէջէն 2 ժամ ալ երթալով մտանք Պայազիտ :

Պ Ա Յ Ա Զ Ի Տ :

Մէկ մասը՝ Քարտէն կամ Քարտարուան անուն ապառաժուատ լերան հիւսիսային զառ 'ի վայրին վրայ , և միւս մասն ալ անոր արևելեան կողմը գտնուած էսէ Քարտէն անուն ապառաժուատ լերան վրայ շինուած գիւղագաղաք մ'է :

Լերեմն շատ բազմամարդ էր և 12000 էն աւելի տուն ունէր . բայց մօտ ժամանակներու մէջ բնակչաց մեծ մասը տուներնին տեղերնին ձգելով Ռուսաստան գաղթեր են . վասն որոյ հրմա հազիւ 500 տուն և 4000 բնակիչ ունի քիւրտ և հայ : Գաղթականաց տուներուն աւերակները գեռ կը տեսնուէին :

Էսէ Քարտէ լեռը աւելի բարձր է , դագաթին կողմը բերդ մը կայ , որուն բոլորտիքը կը տեսնուին աշտարակներ , հնութիւններ , հիւսուած դուռ մը՝ որուն վրայ թագապսակ քարաշէն մարդիկ քանդակուած են : Այս լերան կատարը Ջրհոր մը կայ , և մատուռ մը՝ յանուն Ս. Գրիգորի : Քաղաքին այս մասին տուները՝ լե-

բան ստորոտէն սկսեալ մինչև բերդին կողմերը կը հասնին . իսկ Քարտէն լերան կողմի տուները՝ մինչև գագաթը կը հասնին . այս ետքի լերան վրայ տուներուն մէջ տեղը հրուանդանի պէս ցցուած բարձր ապառաժուտ վայրի մը վրայ հոյակապ քարաշէն բարձր դղեակ մը կայ կրկնայարկ , իսուա Փոշա ուրաց , որուն ճակատը դէպ ’ի հիւսիս է . շրջապատը 10 վայրկեան կը տեսէ և քարձը պատով պատած է : Այս պալատը մէկ երկու ոտնաշափ քառակուսի քարերով շինուած է , որոնց վրայ դանազան ծաղիկներ ու նկարներ քանդակուած են , մանաւանդ ներս մոնալու բարձր դրան բոլորտիքը : Ունի ընդարձակ քարայարկ բակեր , աղբիւր մը՝ դրան ներսի կողմը , որուն յատակ ու անուշ ջուրը խողովակով բերուած է . բազմաթիւ սենեակներ , որոնց պատերը արևելեան ոսկեզօծ նկարներով , և ձեղունները՝ մանր ու թանկիւն ապակիներով ու ոսկեզօծ գեղեցիկ նկարներով զարդարուած են : Մէկ հաւաք ով մզկիթ մը՝ իսուա Փոշ , համէտ , որ մի և նոյն ճարտարապետութեամբ շինուած է : Այս հոյակապ շէնքը շատ ժամանակէ ’ի վեր անխնամ մնացած ըլլալուն՝ տեղ տեղ վլած ու աւրուած էր , մանաւանդ արտաքին երկոյթը աւելի գէշացեր էր :

Քաղաքիս տուները քարաշէն են միայարկ կամ կրկնայարկ . և ընդհանրապէս իրարմէ հեռի . վասն զի ապառաժուտ լերան դժուարահարթ ժայռերն ու բազմաթիւ տուներու վլատակները արգելք եղած են անոնց իրարու կից գտնուելուն . գետնայարկներն ու տանիքները հողով ծեփած են . սենեակները մէկ կամ երկու պատուհան միայն ունին առանց ապակիի :

Պայազիտ ունի 3 մզկիթ , 2 եկեղեցի Հայոց Ս. Աստուածածին և Ս. Կարապետ , 3 բաղնիք աւրուած , վաճառանոց մը՝ 100 խանութով , ուր կը ծախուին սովորական չնչին բաներ սուղ գնով . մեծ դուռով քայ-

քայեալ իջեվան մը Շահէ իւա անունով, որ վաճառանոցին մէջն է, և որուն փլած սենեակները բնակչաց արտաքնոցի կը ծառայէին : Մրգեղէնը քիչ է և հեռաւոր գիւղերէն կը բերեն : Քաղաքին մէջ և մօտակայները ո՛չ ծառ կոյ և ո՛չ պարտէզ . Մուշտակը՝ Էւլու, Ռիւչ և լին . արժան էր : Հոս ալ քակոր կը վառեն փայտի ու ածուխի տեղ . ջուրը առատ է և անուշ . կը բղխի լերան ապառաժներէն, որուն համար յատուկ աղբիւրներ շինած են . Ալուչի՞ր ոչի՞ր, որուն ջուրը Ս. կարապետի եկեղեցւոյ ներքեւէն սպիտակ քարէ մը կը բղխի . այս եկեղեցին դղեակին վարի կողմն է : Ալուշի՞ր ոչի՞ր, առաջինէն քիչ հեռի է, որուն ջուրը գետնէն կը բրդիսի : Դվառի՞ր (սարայ չէշմէսի), որուն ջուրը՝ Ինչպէս վերն ըանճք, լերան գագաթէն խողովակով բերուած է : Աղբիւր մ'ալ Քուշի՞ր, լերան գագաթը՝ Ռիչի ուղար անուն դաշտավլայր արտի մը մէջ : Մուբրար ւա կամ կետուէ անուն ջուր մ'ալ կը վազէ Քարտէն ու իսի՞ Քուշի լեռներուն մէջ տեղի ձորին մէջէն . այս ձորը Թահնուտ կը կոչուի և զրօատեղի մ'է : Պատուական ջուր մ'ալ արևելեան կողմի լեռնէն կը վազէ : Ոդն աղէկ է ու առողջ . ամառը բարեխառն, իսկ ձմեռը ցուրտ, և գարունը անձրևառատ . տիրող ու ջերմային հիւանդութիւնները հազուատես : Քաղաքին ներքեւն է Հայոց մեծ գերեղմանատունը, որուն մէջն էր Ամենափրկիչ անուն քարաշէն եկեղեցին դշնոյն Հեղինէի, որուն հիմա խորանին տեղը միայն մնացեր է : Պայագիտի հարաւային կողմը լեռ մը կայ Քըււ Պահ անուն, որուն վրայ բերդ մը շինուած է Օման Պէ Պահ մէն Հարձեալ հարաւային կողմը Մուշի ձորը, որուն միւս կողմը փոքր լեռ մը կայ, ասոր ալ միւս կողմը Քուշ Տէք, ուրիէ անդին է Ալուշի՞ր . ասկէ ջուր մը կը բղխի . Աղպուլախի գագաթը Քէւէ Եսուրաս կըսուի Քաղաքէն քառորդ մը հեռի դաշտին մէջ 15 տու.

նով Հայոց գիւղ մը կաց Ջննից անուն, որ երբեմն 300 տռան ունէր և մեկ եկեղեցի . Այս գիւղին մօտ դեղեւ ցի՛ պարտէզ մը կար պատղաքեր ծառերով , սալը ու տանձ .

Քաղաքէն Յ ժամ հեռի և անոր՝ հիւսիսային կողմը կը տեսնես Մասիս , (1) Ճիւնապատ և տիեզերահոչակ լեռը . Քաղաքէն մինչև հոն դաշտավայր է . այս դաշտին Տիատինի կողմի մասը կանաչուի կը կոչուի , և միւս կողմը՝ որ Պարուիաց սահմանին մէջ է , կանիկոր՝ Մասիսի հարաւային կողմը տաճկաց հող է . իսկ հիւսիսային կողմը՝ որ Արարատայ ընդարձակ մշակեալ ու բարերեր դաշտն է , Բուռաց և Պայազիտէն Յ ժամ հեռի է Ճեւիծնէւ չեւլ , որ կը զատէ Բուռաց սահմանը , և 4 ժամ հեռի Ք-ը չեւլ , որ կը զատէ Պարսկաց սահմանը . Պարսկաց սահմանագլուխը Աւանդուի անուն տեղին վրայ բերդ մը շինուած է :

Պայազիտ ՚ի հնումն Մեծ Հայոց Այրարատ նահանքին Մասեաց—Առն բառած գաւառին մէջը կիյնար :

Սեպտեմբեր 8 , երկուշաբթի առոտու ժամ 2 , մեկ նեցանք Պայազիտէն , դարձանք կրկին ու եկանք նոյն օրը Երեկոյան ժամ 10 ին խչ Քիլիսէ :

Սեպտեմբեր 9 , երեքշաբթի առոտու նամբայելանք նահինու վիճակին Ք-ը Ք-ւէ անուն գիւղն երթալու համար , 7 ժամ հեռի : Ճամբան դաշտային էր , որուն մէջ տեղ տեղ բլրակներ պակաս չէին : Նախ գիւղէն մէկ քառորդ անդին հանդիսպեցանք Եփրատ գետին , որուն վրայ քարաշէն կամուրջ մը շինուած էր , ուրկէ

(1) Արմա ՚ոի որդին Ամառիա իր անունովը Մասիս անուանած է :

անցնելով գայթինք Զ ժամ ու, իշանք ճամբան վրայ Առ չեղ անուն պարսկի դիւղը՝ որուն մէջ աւերակ եկեղեցի մը կար . ասկէ ալ մէկ ժամ հեռի և գարձեալ ճամ բուն վրայ հանդիալեցանք կաւուոր անուն պարսկաց դիւղը . Մինչև հոս մէկ քանի անգամ իմբատ դետին հանդիպելով մէջէն անցանք . սյս դիւղէն ալ ելանք ու Զ $\frac{1}{2}$ ժամ ալ երթալով իջանք Երևաց անուն Հայոց դիւղը . վերջը ասկէ ալ 1 $\frac{1}{2}$ ժամ երթալով հասանք Քուստ Քէն զուե անուն Հայոց դիւղն՝ ուր գիշեր կեցանք : Քարա Քիլիսէ փոքրիկ դիւղ մ'է , որ ունի 25 չոյու և 3 տաճկի տուն . մէկ եկեղեցի Քուստ Քէն անունով , և չորս կողմն ալ առատ ցորենի արտեր :

Սեպտեմբեր 10 , չորեքշաբթի ճամբայ ելանք Մօլլա Սիւլէյման երթալու համար , 7 ժամ հեռի : Ճամ բանիս երէկուան դաշտային ճանապարհին շարունակութիւնն էր : Նախ դիւղէն քանի մը վայրկեան հեռանալով անցանք Դուռը Չոյ , անու վտակն՝ որ իմբատի մէջ կը թափի , ու կէս ժամ երթալով անցանք Բոշէն անուն քրդաց դիւղին մէջէն . ասկէ ալ մէկ ժամ անդին Մուլլօւն անուն քրդաց դիւղէն , ուրիէ ալ մէկ ժամ հեռի եկանք Շէլիոնէ անուն Հայոց ու քրդաց դիւղը . ասկէ ալ գարձեալ Զ ժամ հեռի հանդիպեցանք Մասուսէ դիւղն՝ որուն մօտն էր Խոշոն դիւղ . վերջը Զ ժամն չափ ալ երթալով հասանք գաշտին ծայրը՝ լեռներու ստորոտը Մուլլօւն դիւղը , ուր կեցանք գիշերը :

Այս ընդարձակ արդաւանդ դաշտն , որ ցորենի ու գարիի արտերով ծածկած էր , և որուն մէջ անթիւ դիւղեր շինուած էին , կըսուի Աւանեն Օկուր :

Մօլլա Սիւլէյման Քէօսէ(1) լերան մօտաւոր լերանց

(1) Քէօսէ Տաղը՝ 'ի հնումն Առաջաւ կամ Առաջաւէր . առառաժուտ

ստորոտը գայտին մէջ շինուած Հայոց գիւղ մ'է 40. ստունով, որուն հիւսիսապիին կողմէն կանցնի խօսուս ջուրն, որ Քէւու Կաղէն իջնելով խօսուս ձորին մէջէն վաղելով կերթայ կը խառնուի Շեռեւա վտակին մէջ։ Օդն ու ջուրը աղէկ է ։ ունի քարաշէն մեծ եկեղեցի մը հոռվմէական Հայոց ։ Քէսուէ լերան ստորոտը բլուրի մը վրայ գերեղ մաննոց մը կայ ուխտատեղի Հայոց, ուր կը հանդշին Սբոց Սատիստաց հուշ, նահատակներուն ոսկորները, ուրուն ներքեւ ալ աղբիւր մը կայ բնակչաց գործածած լեզուն քրդերէն էր Գիւղէն ժամմը հեռի ձորերուն մէջ ու լեռներուն վրայ տանձի, սօսիի, Խուշ պարնէն և լուսեր պակաս չէին։ Նաև Խորս Շուշ, մանաւանդ Զո՞ն աերէ անուն ձորին մէջ։ Զո՞ն անուն գիւղին աւերակ պատերը կը կենան։

Գիւղէս $1\frac{1}{2}$ ժամ հեռի է Խոնչը անուն գիւղը։ 4 ժամ հեռափ Քէւէն գիւղը, որոնց բնակիչները հոռվմէական հայեր էին։ և 2 ժամ հեռի Թուրութ Քաւս, որ կերւայ Շեռեան (1) վտակին արևմտեան կողմը լերան ստորոտը։

Թ Օ Բ Ռ Ա Ք Ք Ա Լ Է

Ալաշկերտ գաւառին գլխաւոր քաղաքն է ։ ունի 300 սոսէն քիւրտ և Հայ։ սրածայր լերան վրայ պարսպապատ բերդ մը ։ քաղաքէն մինչեւ բերդը կէս ժամէն ա-

յրուս ու անբեր սրակատար լեռ մ'է, որուն երկնաբերձ գլուխը կը խրոխտայ շրջակայ լեռներուն վրայ, որոնք Խով Խոշը, Բասէն եւ Կաղընչ լեռներու գտնիներն են։

(1) Շեռեան վտակը Խով Խոշը լեռներէն կիջնայ ու Սփրատ կը թափի։

ւելի կը տեսէ , միշտ ուղղակի դէս ՚ի վեր ելնելով նեղ ու գժուարին ճամբէ մը : կը կարծուի որ այս քաղաքը հին վաղարշակերու քաղաքն եղած ըլլայ , որ Այրարատայ Բագրեանդ գաւառին քաղաքն էր , և աղաւաղելով հիմա Ալաշկերտ ըստուած է :

Սեպտեմբեր 11 , հինգշաբթի առառուկանուխ ճամբայ ելանք Տէւ Պառ գիւղն երթալու համար , 10 ժամ հեռի : Այս գիւղն երթալու համար մէկ քանի ճամբայ կար , որոնց լաւադոյնը ձորի ճամբան ըլլալով՝ նոյն ճամբէն գացինք . ուստի նախ Քէօնէ Տաջէն արևմտեան կողմէն ու Մուլլ Ալ-կանչ լերան ստորոտէն երթալով 1½ ժամ , մոտանք ձորի մէջ . ուրկէ ալ 1½ ժամու չափ լեռներ ելնել ու իջնելով կրկին մոտանք ձորի մէջ , ուր վրանարնակ (քարա շատըլը) քրդեր կային , և չուր մ'ալ կանց նէր . թէ այս ձորն և թէ երկու կողմի լեռները փոքրիկ ծառերու անտառներով ծածկած էին . Ասկէ 3 ժամ հեռի հաստ ու բարձր անհատնում մայրի ծառերու ընդարձակ անտառ մը կայ Վոլանց անուն , որ կարսի ու Բասենի վիճակները իրարմէ կը զատէ : Այս ջրառատ ու ծառաւէտ ձորին մէջ 4 ժամ ճամբայ երթալնէս ետքը՝ ելանք լեռ մը , որուն գագաթին վրայ 1½ ժամ շարունակ երթալով (վասն զի հոս լեռներուն գագաթի կողմերը իրարու հետ միացեր ու կարծես թէ լնդարձակ դաշտ մը ձեւացուցեր էին) իջանք Հաճէ Հաճէւ անունով քրդաց գիւղը , ուրկէ ալ ելնելով 1½ ժամէն դարձանք լեռ մը ու մոտանք Տէւ Պառ , ուր գիշեր կեցանք :

Այս Հայոց գիւղը Բասենու վիճակին մէջ ընդարձակ դաշտի վրայ շինուած է . ունի 30 տուն , մէկ եկեղեցի , գմբեթաւոր շիրիմ մը՝ որ է Տէլի Պապայի գերեզմանն ու տաճկաց ուխտատեղի , ուր նաև հայերն ալ կերթան ամեն շաբաթ օր : Տուները գետնի վրայ

շինուած ախոռի նման բաներ էին . ձեղունները՝ իրարու կից պատուական գերաններով շինուած , պատուհանները՝ ձեղունի կողմէն տանիքներուն վրայ բացուած քանի մը ծակեր էին . տանիքները հողով ծեփած՝ որոնց վրայ իրբւ փողոցի մէջ կըքալէին . ամեն տան մէջ Յ սենեակ կար , որոնց մէկը ճանապարհորդ ընդունելու յատկացած էր , մէկն ալ տան տիրոջ կովերուն ու ձիերուն և լն . անառնոց ախոռն էր . իսկ երրորդն ընտանիքին նստելու ու պառկելու սենեակն էր . այս վերջինին դետինը փոս մը փորուած էր , որուն մէջ փայտ կամ քակոր կը վառէին տաքնալու և հացերնին ու կերակուրնին եփելու համար : Կրնայ մարդ երևակայելթէ ո՞չափ գժուարին է բնակիլ ասանկ մուխով լեցուած սենեակի մը մէջ , ուր մարդուն աչքէն արտասուքներ կը վաղէ և կրնայ խեղդամահ ըլլալ . Օդն առողջ է . ձմեռը շատ ցուրտ կընէ և մարդաչափ ձիւն կը դիզէ . Չուրը գետակինն է անուշ ու պատուական և կայ առատ ցորեն ու գարի :

Սեպտեմբեր 12 , ուրբաթ ճամբայ ելանք Եազանդիւնի երթալու համար , 7 ժամ հեռի : Ճամբանիս դաշտային էր , որ կը կոչուի Բագէն Օլուս . որուն ծայրը կը հանի մինչև իրզրում քաղաքին մէկ ժամ մնալով դանուած Տէ՛վ Պայու անուն ցած լեռները : Բասենու դաշտը ցորենի ու գարիի արտերով ծածկած էր , որուն մէջ $3\frac{1}{2}$ ժամ երթալնէս վերջը եկանք իւշբեկն անուն Հայոց գիւղը , ուրիէ ալ ժամ մը հեռի հանդիպեղանք ճամբուն վրայ Գուշակը անուն Հայոց գիւղը , և ասկէ մէկ ժամ հեռի՝ գարձեալ ճամբուն վրայ , մտանք Միւտիլան անուն տաճկի գիւղը , ուր քանի մը մեծ ծառեր կային : Ասկէ ալ կէս ժամ հեռի և ճամբուն վրայ տեսանք իւմբագոմ քրդաց գիւղը . այս վերջնէն ալ ժամ մը հե-

ոի երթալով հասանք Եազան, ուր գիշեր մը կեցանք :
Եազան Հայոց ու քրդաց գիւղ մ' է, որուն մօտէն
կանցնի Երասխ գետը (Արաս սու) :
Ունի 50 տուն, մէկ եկեղեցի, մէկ մզկիթ և սեխի ու
ձմերուկի արտեր :

Սեպաեմբեր 13, շաբաթ ճամբայ Ելանք Կէւլէւ
գեղն երթալու համար, 7 ժամ հեռի : Ճամբանիս դաշ-
տային էր և ցորենի արտերով ծածկած, որուն մէջ ա-
մեն կողմ գիւղեր կը գտնուէին, մանաւանդ ճամբուն
վրայ : Այս ճամբէն 2 ժամ հեռի կերևնար Հառա Քուի
գիւղաքաղաքը :

Հ Ա Ս Ա Ն Ք Ա Լ Է :

Բասեն գաւառուին գլխաւոր գիւղաքաղաքն է, որ
շինուած է Ծիծառ լեռին ստորոտ, և 6 ժամ հեռի
կը դում Մուրջ կամ Մըրցամօր) ըսուած ջուրը, որ մէկ
ժամու չափ հեռանալով քաղաքէն կը թափի Դրասխ
(1) գետին մէջ Քէտէւ Քէտէւ ըսուած գիւղին մօտ, ո-

- (1) Երասխ կամ Արաս եւ կամ Արաքս, Երես գետ .
• (կըսուի որ Արևենակի որդին Արմայիս իր Արաստ թոռան
անունով՝ այս գետին անունը Երասխ գրած է) : Թէքմանի
վիճակին մէջ Պինկէօլի լեռներէն շատ մը առուակնիր կը վա-
ղեն, որոնք միանալով կը շինեն այս գետը : Երասխ թէքմանէն
վազելով կանցնի Բասենի վիճակին մէջ, անէէ կանցնի Կարսի
նահանգն աւ կը մտնէ Պարսկաց հողը, կը թրջէ Նախջեւանի,
Խավանի եւ Գարապաղի հողերն ու Ճիվատէի մէջ Գիւր կամ
կուր գետին հետ միանալով կը մնայ Գիւշթասէֆի սահման-
ներուն մէջ ու կը թափի Կասպից ծովը Երեք բերաններով :

րուն խառնուած տեղին վրայ շինուած է հոյակապ կամուրջ մը՝ երկարաձիգ ու լայն։ Հասան Քալէ ունի 1500 տուն քիւրտ ու հայ, լերան վրայ բերդ մը Հասան Քալէ անուն։ պարսպապատ է և շուրջանակի խրամ։ Պարիսպը երկու դուռ ունի, որոնց առջեւ կամուրջներ շինուած են։ Լերան գլուխը ջրհոր մը կայ, որ տաճկաց ուխտատեղի է Հասան ձեռէ անունով, ուր կերթան նաև քրիստոնեայները։ Լերան արևելեան կողմը՝ Դրիգոր Մագիստրոսի շինած Տիրամօր վանքը կայ։ Քաղաքէս քառորդ մը հեռի հանքային ջուրերու դմբեթաւոր բաղնիքներ շինուած են։ Եազանէն մինչև կիւլիւ դաշտին մէջ ճամբանուս վրայ գտնուած գիւղերը հանդիպելով երեկոյեան հասանք կիւլիւ, ուր գիշեր կեցանք։

Կիւլիւ բլուրի մը վրայ շինուած փոքրիկ դիւղ մ'է Հայոց ու քրդաց։ ունի մէկ եկեղեցի, մէկ մզկիթ, բաղնիք մը, առողջ օդ ու աղէկ ջուր։

Հոս Քիւլու կը տիրէր։ ամեն մարդ սարսափի մէջ։ Խեղճ արարած, այս յուսահատ վիճակին մէջ ո՛չ բժիշկ կայ, ո՛չ դեղ և ո՛չ ողջպահիկ կանոնաց հրահանդներ։ Զեմ կրնար նկարագրել ինչ աղդեցութիւն որ ըրաւ վը-

Նրասիս կուր գետին չը խառնուած, իր մէջը կընդունի քանի մը մեծամեծ վտակներ, ինչպէս են, Հասան Ղալայի ջուր, Զէնկի գետակ, Աւիայ չայ, Զանկու եւայլն, եւայլն, Ընթացքը հիւսիսէն հարաւ է եւ սրբնից աց, մանաւանդ ձիւներուն հալած ժամանակ։ Զուրը շատ պատուական է։ ունի իր մէջը համով ձուկեր, մանաւանդ Բասենի կողմերը ձանառ անուն ձուկը երկայն մինչեւ Զ կանդուն եւ սպիտակ նըման Ախուշ-Հձկան, Լէօք երկայն ու բարակ, Դեղին պորտ, Մուրզ, Կորմրախսէտ։ Նրկայնութիւնն է 617 մզոն մինչեւ կուբ եւ 95 մզոն ալ անկէ մինչեւ կասպից ծովը։

բաս ամբողջ ժողովուրդի մը տեսիլը անոք և անխնամ
իրեն զԵնի ձգուած այս յանկարծահաս համաճարակ
հիւանդութեան առջեւ . այն ազգեցութիւնը միշտ կը
նորոգի երբ ու կերպ ձայնը լսեմ : Անկէ ՚ի վեր և մանա-
ւանդ մասնաւորապէս 1865 թուին Պօլիս պատահած
+ ացրոյն ժամանակի իբրև բժիշկի և անդամ ողջպահական
յանձնաժողովին բաւական մեծ դեր մը խաղացած ըւ-
լալով , և ՚ի մօտոյ ուսած ու կշռած այս զարհուրելի
հիւանդութեան վերաբերեալ զանազան պարագայները
այս ուղևորութեանս նկարագրութեան վերջը կը կցեմ,
սոյն հիւանդութեան նկարագրութիւն մը հանդերձ
ախտաբանութեամբն ու բուժաբանութեամբը՝ որ Եւրո-
պայի ամենէն վարպետ բժիշկներուն փորձերովս ու վե-
րոյիշեալ թուականին Պօլսոյ մէջ գումարեալ բժշկական
ժողովին յառաջ բերած գիտական ու փորձական ար-
դիւնքներովը հաստատեալ ճշմարտութիւններ են : Վե-
րը ըսած ազգեցութեանս համար՝ ինծի անանկ եկաւ
թէ այս նկարագրութիւնը չէի կրնար ուղևորութեանս
նկարագրութենէն զատել : Բայց առ այժմ ձեռք առ-
նենք մեր պատմութեան թելը :

Սեպտեմբեր 14 , կիրակի կիւլիւէն ճամբայ Ելանք
էրզրում երթալու համար , 3 ժամ հեռի :

Կէս ժամու չափ Երթալով անցանք Ցէկ Պայու լեռ-
ները և իսկոյն տեսանք քաղաքն ընդարձակ դաշտի մը
մէջ , որ կը կոչուի Լուչան : Ուռու . իջանք սոյն դաշտին
մէջ և 4 $\frac{1}{2}$ ժամ ճամբայ առնելով մոտանք քաղաքը :

Ն Ա Հ Ա Ն Գ Ե Ր Զ Ր Ո Ւ Մ Ի :

Էրզրումի նահանդը Ասիհական թուրքաստանի մէկ
փաշայութիւնն է , որ Պարսից և Ռուսաց սահմաննե-

րուն ու Աւ ծովի և Մուսովի նահանգին մէջ՝ տեղը կիյնայ . լեռնային է , և երևելի լեռներն են՝ Պինկէօլի (բիւրակնեայ) միագ օտի լեռները , որոնցմէ կը բղխին Երասխ և ուրիշ գետեր . ընդարձակ դաշտեր ալ ունի :

Բւնի 400,000 ի չափ բնակիչ , որուն մեծ մասը քիւրտ ու տաճիկ' է և մնացածը Հայ . իսկ յոյն , հրեայ և պարսիկ քիչ կը դանուին :

Բնակիչներն ընդհանրապէս առողջ , կորովի , երկարակեաց , բայց անկիրթ , տգէտ ու աղքատ մարդիկ . ներ են , մանաւանդ քրդերը՝ որ գոլութեամբ մարդասպանութեամբ կապրին և բարբարոսական կեանք կը վարեն : Հայերն ու տաճիկները և գիւղաբնակ քըրդերը հիւրասէր են . իր գտնուի տէրութեան մէկ բանակը և անկանոն զօրք : Այս սահմանին մէջն էր բարձր Հայք , Չորրորդ Հայք , Այրարատ , Աղձնիք , և լն : Ունի շատ մը գետակներ , զոր օրինակ . Սարչամու գետ , Գարասու : Վտակներ . զօր օրինակ , Քուրու չայ , Գայլ գետ , Խնուս , Թորդում , Կեզի , Դըզըլ ըրմաք վտակները : Գետեր . ինչպէս են , Եփրատ , Ճորոխ և Երասխ , որ կոռոգեն Նահանգիս դաշտերն ու ձորերը :

Նահանգիս գետինը բարձր է և բարձրագագաթ լեռնով ծածկուած . ունի գեղեցիկ գիրք մը , բարերերեր հող և հանքային ջուրեր : Կլիման կամ օդը ցուրտ՝ բայց առողջ . դաշտերն ու լեռները ձիւնով կը պատին սեպտեմբերի սկիզբէն մինչև ապրիլի վերջը . Գլխաւոր բերքերն են՝ ընտիր ցորեն , դարի , հաճար (չավոար), կտաւատ , գետնախնձոր , բանջարեղէններ , աղ , ծիրանի , տանձ , մեղր , այծի թիֆթիկ , ոչխարի մորթ , բանդուռն հայութ , գայլի , կղի և կատուի մորթ . սեկ , տան կտաւ , խամ մանուսայ , ընտիր կաշի , կտաւի մանած , բուրդէ շալ , բուրդէ գուլպայ , կտաւատի իւղ ,

տեսակ մը փսխաթ , օղի և հանգային ածուխ , որ Տէ՛ք
Պօնոս և Փալու Տէ՛ք լեռներուն դօնիներուն մէջ կը
գտնուի , բայց անգործածելի մնացեր է : կը գտնուի
ծիծեռնիկ , կաքաւ , լու (պլոշքձին) , բադ ,
կռունի (թուռնա) , կիվիվ , ճնճղուկ , կարապ , արա-
գիլ , սոխակ , ձկնկուլ (սախա գուշ) , ագուաւ , թու-
թակ , սարեկ (սըզըրճըխ) , աղաւնի , ուրաւր , (չայ-
լախ) արծիւ , զուղու (սագի նման կենդանի մը) ,
յուլ , դոմէշ , կուլ , եղ , մատակ ոչխար , այծ , արջ ,
դայլ , սղուէս . ջրշուն (սուխթի) , նատաստակ , վայ-
րենի այծ , վայրի ոչխար , ջրի ոչխար (գունտուգ) ,
կատու , կուզ (սամնար) , ձի . չուշու , վայրենի խող ,
ուշ ուշը ըսուած ձուկ մը՝ թորդումի վատկին և ուրիշ
վտակներու մէջ .

Վաճառականութիւնը ծաղկեալ է , մանաւանդ կր-
ղրում քաղաքին մէջ որ կեդրոն է , և ընդհանրապէս
Պարսկաստանի , Ռուսիոյ , կոստանդնուպօլսոյ , Գամաս-
կոսի ևն վրայ է :

Այս նահանդը 13 գաւառներու բաժնուած է .
Կըզրում , խնուս , թէքման , բասեն . Թորդում , Ապեր .
Պայազիտ , Բաքերդ , Դերճան , Երդուկայ , Քէլքիթ , Կեղի ,
Գուղիջան :

ԵՐՋՐՈՒԹԻՒՆ

Կըզրում 0վասը ըսուած գաշտին արևելեան հա-
րաւային կողմը՝ լերան ստորոտն և Եփրատէն քիչ հե-
ռի պարսպապատ քաղաք մ'է , ուր կը նստի Նահան-
գին կառավարիչ փաշան .

Ոշխարհագրական երկայնութիւնն է 39°26' , և լայ-
նութիւնը 35°5' : Կըզրում կը գտնուէր 'ի հնումն Բար-

Ճըր Հայոց (4) աշխարհին մէջ :

Աւնի 65,400 ի չափ բնակիչ , եւ 14,060 տուն , ու
լոնց :

57,100 մահմէտական և մէկ քանի Պարիկ .	9350 տուն .
6,950 Հայ .	1300 "
300 " հռովմէական	290 "
200 յոյն	35 "
450 Հայ բողոքական	25 "
400 Փոշայ	60 "
<hr/>	
65,400	14,060 "

(4) Գիտնութ պէտք է որ Հայաստան ՚ի հնումն երկու գլխաւոր մասերու կը բամսուէր Փոքր Հայք եւ Մեծ Հայք : Մեծ Հայք ալ 15 աշխարհներու կամ Նահանդներու (Նախարարութեան երկիր) բաժնուած էր , որ էին Բարձր Հայք , Ջորբորդ Հայք , Աղձնիք , Տուրուբերան , Մոկք , Պարսկահայք , Կորճայք , Վասպուրական , Արձախ , Արծնիք , Փայտակարան , Ուտիք , Գուգարք , Տայք , Այրարատ , որոնց աման մէկն ալ զանազան գաւառներու բաժնուած էին : Արդ՝ Բարձր Հայոց գաւառներուն մէկը կը կոչուէր Կարին , որ այն կող երուն մէջ շինուած Կարին քաղաքին անունէն առնուած էր . բայց վ'րջը մեր Նախնի մատենազիրները՝ ինչպէս Խորենացին , եւ այլն . ոչ միայն գաւառին ևարին անունը դորձածել սկսան . այլ նաեւ ընդհանուր Նահանդին ալ . եւ սովորաբար Բարձր Հայոց աշխարհ ըսելու տեղ ըսկըսան յաճախակի Կարնոյ Նահանդ ըսել : Ասանկ Կարին անուն քղաքք մը թէ եւ հին եւ շատ դարերէ ՚ի վեր շինուած բլլալը մեր ազգային Նախնի պատմագրաց յիշատակարաններէն ու սառագրութիւններէն յայտնի կերեւի , բայց չը դիտցուիր թէ ո՞վ շինած է եւ ո՞ւր , եւ ո՞րի անունով այսպէս կոչուեր է . միայն Պլէնիուս պատմագիրը կըսէ , ինչպէս նաեւ Սդրապոն ալ կը վկիայէ՝ թէ Մեծին Հայոց Նա-

կան նաև եւրոպացի պանդուխաներ ; անգղիացի , գաղղիացի , Ռուսիայ և պարսից հիւպատոսներ . իրզրում պարսպապատ է մոխրագոյն սրբատաշ քարերէ շինուած կրկին պարիսպներով , որոնց մէջ տեղի միջոցը Հիւոր պէլն կը կոչուի , որ 10 կանդուն լայնութիւն ունի . Արտաքին պարսպին շուրջն ալ խրամ (հէնտէկ) փորտած է , որուն շրջապատը մէկ ժամ կը տեէ . ասոր ալ շուրջը ցած պատ մը քաշուած է . խրամին արտաքին կողմը շուրջանակի քաղաքին արուարձանն է , ուր բազմաթիւ տուներ ու շէնքեր կան , և քաղաքացւոց մեծագոյն մասը հոս է , նաև քաղաքին շուկայներուն , իջևաններուն և վաճառանոցներուն շատը . վասն որոյ քաղաքացիք արուարձան չեն ըսեր ասոր , այլ իրզրումի քաղաքը :

Այս արուարձանին ալ շուրջը ուրիշ խրամ մը փորտած է , որուն շրջապատը 3 ժամ կը տեէ և որուն քու-

խարարութենէն Գարանագիտէս անունով մէկը այս կողմերը երթալով Նվիրատ գետին ակը գտեր եւ օդին ու տեղին գըրից վայելչութեանը հաւանելով՝ իրեն տեղի բնակութեան որոշեր ու պարիսպ մը շիներ է . Ասոր պատմութեանը նայելով կը հետեւի որ Կարին անունը՝ Գարանագիտէս անունէն ելած ըլլայ , զոր գուցէ վերջը յոյներն իրենց յարմարունելու համար կրծատելով կարին ըսած են , Բայց դարձեալ չը հասկցուիր՝ թէ Գարանագիտէս ուր տեղ հաստատած էր իր բնակութեան տեղը . ուստի չենք կրնար ըսել՝ թէ հիմակուան Երզրում քաղաքին տեղն եղած ըլլայ , վասն զի Խորենացին կը գրէ (Գ հատ . Ծթ Գլ .) որ չորրորդ գարուն վերջը (386 թուական Քրիստոսի) յունաց թէոդոս կայսրն Հայոց Ավրայ թագաւոր կարգեց Արշակ եւ Վաղարշակ (Պապ թագաւորին զաւակները) երկուքը մէկէն , որպէս զի թէ որ մէկը ապատամբի , միւսը գոնէ հաւատարիմ մնայ , որոնցմէ առաջինը Դուքին քաղաքին մէջ հաստատեց

վերը ամրոցներ շինուածէն , և ունի 10 դուռ , որ կը կոշուին ձեզէ՞ւ տօքսուսը : Այս դուռերուն կողմերը էօլուներ կը բնակին 50 կամ 60 տրուն , որոնք հայերէն կը խօսին , բայց ունին իրենց սեփական լեզու մ'ալ : Ասոնց գըտնուած տեղը Փօշոյ Տահիւուն կը կոչուի : Քաղաքին պարըստ պապատ մասին կեղրոնքը բլուրի մը վրայ միջնաբերդ (իջ գալէ) մը կայ ամուր պատերով և 12 բարձր աշտարակներով , որուն դիրքը քաղաքէն շատ բարձր է և ունի մէկ դուռ մը՝ որուն առջև պահապան զօրք կը պասէ : Միջնաբերդին մէջ կան քանի մը տուներ , ճէպ-

իր աթոռը . իսկ Վաղարշակ Էրիզա քաղաքին մէջ , եւ այս երկրորդը հազիւ հոն տարի մը թագաւորելէն ետեւ մեռաւ : Այն ատեն նախարարաց սրտին մէջ արմատացեալ յանմիարանութիւնն ու թագաւորներուն թուլութիւնը տեղի տուած էին թշնամեաց Հայաստանի վրայ բռնանալու , որ թշուառոցեալ յանմարինս կը նեղուէր . ուստի Արշակունեաց թագաւորութիւնն ալ բոլորովին տկարացեալ սպառսապուռ կործանման վտանգի մէջ էր : Ան ատեն յոյներն ու պարսիկները տիրապետեցին Հայաստանի եւ երկու մասի բաժնեցին . յունաց բաժինն էր Հայաստանի արեւմտեան կողմէն սկսելով Փոքր Հայք , Միջագետք Հայոց մինչեւ Տարօնի սահմանը . իսկ պարսից՝ անոր արեւելեան կողմն Արարատէն սկսելով այն ընդարձակ ու արգաւանդահող աշխարհները :

Արշակ այնուհետեւ չը կրնալով նստիլ պարսից բաժնին մէջ , ձգեց գնաց բնակեցաւ յէրիզա : Այսպէս ահա կործանեցաւ Արշակունեաց թագաւորութիւնը եւ տակնուվրայ հռդաւ Հայաստան՝ որ բաժին էր պարսից . վասն զի պարսիկները օրի զօրանալով ամեն ճիդ կը թափէին կրակապաշտ ընելու հայերը եւ անհնարին կը նեղէին ծանր հարկեր առնելով . ասանկ մինչեւ հինգերորդ դարուն սկիզբը կը նեղուէր խղճալին Հայաստան թշնամույն բռնակալ լուծին տակ հեծելով : Այն ատեն մեծն Սահակ Կաթուղիկոս ընդ-

խանէ , միւհիմմաթխանէ , հին զարպխանէ , մեծամեծ և փոքր ռումբեր , ճերմակ մարմարիոնէ շինուած ռումբեր . Հարաւային կողմի որմին կից՝ չորս որմասիւներու վրայ կառուցեալ սե ու կարմիր քարէ շինուած բարձր գմբեթ մը , որուն ծայրը ձուլածոյ փոքրիկ խաչ մը կայ . Հարաւային և արևմտեան որմերուն անկիւնին վլրայ շինուած բարձր կոթող մը ժնաբէջ ձեռով և ծայրը բաւիղածև (թէփսիի ձե) , որուն վրայ երկայն ձող մը դըրուած է , ուրիէ տէրութեան դրօշակը կը բանան ուրբաթ և ուրիշ տօնական օրերը . այս կոթողը իր ձեռոյն

հանուր աշխարհին հայոց , որ կը բնակէր պարսից բաժնին մէջ , եւ որուն սիրտը անդադար կը տանջուէր տեսնելով հայոց կրած անտանելի վիշտերը , ելաւ գնաց յունաց բաժնին վրայ հետն առնելով Սուրբն Մեսրոպ եւ իր երեք թոռները՝ Վարդան , Հմայեակ , Համազապետ , եւ խորհեցաւ ազատել ազգը յունաց կայսեր օգնութեամբ . վասն որոյ զըրկեց Սուրբն Մեսրոպ եւ Վարդան կոստանդնուպօլիս յունաց թէոդոս թաղաւորին , եւ օգնութիւն խնդրեց աղաչելով որ յունաց բաժինն եղած Հայաստանի մէջ ամրապարիսապ քաղաք մը շինել տայ՝ որպէս զի հայերը ապահով մնան թշնամնաց արշաւանքներէն պահպանուելով : Թագաւորն ընդունելով Սուրբ Հայրապետին խնդրը իսկոյն հրաման ըրաւ Անատօլիոս զօրավարին որ երթայ նոյն բաժնին մէջ յարմարագոյն տեղի մը վրայ ամուր քաղաք մը շինէ հզօր պարիսպներով Հայոց ապաստանարան ըլլալու համար :

Անատօլիոս երթալով Հայաստան ժողվոց իշխանները , նախարարները , եպիսկոպոսներն ու յունաց գործակալները , եւ ամեն կողմ շուրջ զալէ ետեւ հաւնեցաւ արդի Էրդրում քաղաքին դրիցը , ուր բնաւ շէնք մը չըկար , եւ սկսաւ անմիջապէս հիմնարկել ու շինել քաղաքը Քրիստոսի 421 թուականին ; եւ անուանեց թէոդոլով կամ թէոդոպօլիս յանուն

համար նէւոչէ հնարքէ կը կոչուի : Կրկին պարփազներուն ներքինը գրեթէ մինչև հիմա ամբողջ կը կենայ և բարձր է . իսկ արտաքինը ցած է , բայց խոր և շատ տեղերը կործանած : Այս երկու պարփազները՝ իրենց որմերէն դուրս ձգուած և քառակուսի ձեռվլ 72 աշտարակներ ունեին , որոնց մէկ քանին կիսակործան են հիմա . ասոնց որմերուն վրայ մէկ կանդուն հեռաւարութեամբ մարդաշափ բարձր դարձր շինուած էն : Կրկին պարփազները ունին չորս մեծամեծիդուածեր , որոնք ի-

Բագաւ որին :

Ահա Խորենացւոյն այս պատմութենէն կը հասկցուի որ բուն կարին քաղաքը հիմակուան Երզրում քաղաքը չէ : բայց եւ այնպէս Երզրում ալ կարին ըսուեցաւ : Եւ վերջը տասն եւ մէկերորդ դարուն մէջ երբ Սելճուկիները նուաճելով առին քաղաքը յունաց ձեռքէն՝ անուանեցին Արծրում , նոյն ատեն քաղաքին մօտ գանուած Արծն անուն բազմամարդ ու երեւելի քաղաքին անունէն առնելով . բայց վերջը փոխուելով Արզրում կամ Երզրում (երկիր յունաց) եղեր է : Ինչպէս որ մեր ազգային պատմութիւնները ցոյց կուտան՝ թէ հայոց թագաւորութեան ժամանակ երեւելի եւ բազմամարդ շատ քաղաքներ կային՝ որ թագաւորութեան բարձմանէ ետեւ կամ թշնամեաց ձեռօք կործանուեր եւ կամ Հայերուն՝ բռնակալաց ձեռքէն կրած նեղութիւններուն ու չափազանց հարստահարութեանց չը կրնալ զիմանալով հետզիետէ ուրիշ երկիրներ գաղթելուն պատճառաւ երեսի վրայ ամայի մնացեր ու աւրուեր են : Աղդ , այս կարգէն է նաև Արծն քաղաքը՝ որ շատ բազմամարդ էր հոյակապ եւ հոչակաւոր , եւ աւնէր երեք հարիւր հազարէն աւելի բնակիչ , 800 եկեղեցի , 150 վիճակաւոր քահանացներով , որ կը գտնուէր կարնոյ դաշտին մէջ քաղաքէն Յ ժամ հետի եւ անոր արեւմտեան հրափասային կողմը , որ այժմ 70 տուն չայ եւ 20 տուն տանիկ պարունա-

բարու գեմշինուած են քիչ մը շեղ, և կը կոչուին՝ 1. թէ էջու տօբուսու, արևելեան կողմը. 2. Երշկու տօբուսու, արևմտեան կողմը. 3. Ենէ տօբու, հարաւային կողմը. 4. Կէրճի տօբուսու, հիւսիսային կողմը. Ներքին պարապին թէվրիզ քաբուսիին վրայ երկու փոքրիկ պատուհաններ կան, որոնց երկու կողմերուն վրայ ձեռքերնին վեր բարձրացուցած երկու մարդիկներ քանդակուած են. Երշնկա քաբուսիին քով ներքին պարապին արտաքին կողմին վրայ մարդաչափ մեծութեամբ կարմիր միծ քար մը կար, որուն վրայ խաչ քանդակուած էր և կը

Կող փոքրիկ գիւղ մ'է Դարարանունով.

1048 Թուականին Գրիստոսի գետադարձ Պետրոս կաթուղիկոսը այս Արծն քաղաքին մէջ նստեցաւ Մոնոմախոս յունաց կայսեր հրամանաւը. վամն զի Անի քաղաքին կառավարիչ Կամեննաս անուն յոյն իշխանը Հայոց կաթուղիկոսութիւնը վերցրնելու համար սուտ զրապարտութեամբ բողոքած էր կայսեր սոյն կաթուղիկոսին համար, ինչպէս կըսէ Արիստակէս Լաստիվերացին. «Հրամայեալ է քեզ 'ի թագաւորէ դնալ 'ի գաւառն Կարնոյ եւ նստել 'ի մնան քաղաքն Արծնոյ» :

1049 Թուականին Գրիստոսի, պարտիկներն ու ակիւթացիները (թաթար) անթիւ բազմութեամբ զօրաց հեղեղանման յարձակելով քաղաքին վրայ, որ ո՛չ բերդ ունէր եւ ո՛չ պարիսպ, մեծ կոտորած հասուցին ժողովրդին վրայ եւ հրոյ ճարակ ըրին քաղաքը, մինչեւ աւերակաց հետքն անդամ չերեւնար այսօր, ինչպէս կըսէ Արիստակէս Լաստիվերացի ականատես պատմագիրը՝ Ժի Գև ԵՅ Համար. ինչպէս նաեւ Հայոց պատմութեան Բ. Հար. • 948 Երես :

Արծն քաղաքին տեղին վրայ, ուր հիմա կը գտնուի Դարարդ գիւղը, ոչ աւերակներու մնացուած կերեւնայ եւ ոչ ալ հնութեանց նշան մը. միայն գիւղին մօտ փոքրիկ բլուր մը կայ՝ որուն վրայ մեծ հիմեր կը տեսնուին ու գիւղացիք փո-

կոչուէր կարմիր խաչ, զոր միւֆթի Ապտիւլ բահման փաշան 1216 (տաճկաց) թուականին աւրել տուած է; և 1859 թուականին պատահած երկրաշարժէն որմը փըլելով՝ քարն ալ վար ինկած է։ Արտաքին պարսպին Եէնի քաբուի կողմը կարծանած ըլլալուն նոյն դրան ձեւ միայն կը կենայ հիմա։ Ներքին պարսպին կիւրճի քարուսիի բարաւորին վրայ քարաշէն մարդ մը շինուած է ձի հեծած, որուն երկու կողմերուն վրայ ալ առիւծներ։ և տցն դրան մնտ դարձեալ նոյն պարսպին արտաքին երեսը մէկ քանի քարերու վրայ յունարէն գըրուածներ կան։ կան նաև հայերէն գիրեր և շատ մը քանդակեալ խաչեր։ Այս չորս գուներուն առջևէն խըրամին վրայ մէյ մէկ կամուրջ շինուած է դիմաց անցնելու համար։ Աւանդութեամբ կրսեն որ պարսպին մէջէն գետնափոր երկու ծածուկ ճամբաներ կային պատերազմի ժամանակ փախուստ տալու կամ ներս պաշար բերելու համար, ինչպէս որ Հայաստանի ուրիշ քաղաքներու մէջ ալ կը գտնուէր։ Այս ճամբաներուն մէկը քաղաքին հարաւային լեռներուն քովը կը հանէր, և միւսը հիւսիսային կողմը դէպ ՚ի շամբը։ բայց հիմա ասոնց ո՛չ գուները կերևնան և ո՛չ հետքը կը նշմարուի։ Էրզրում զանազան թաղերու բաժնուած է, որոնց

բելով հնութեան փոշիներ կը հանեն, ինչպէս նաեւ գիւղին սահմանէն ուկորներու կոյտեր, եւ խեցեղէններ, պղնձի կըտորվանքներ, պղնձի դրամներ, Դշխոյն Հեղինէի ոոկիններէն, եւ հիմեր։ Հաւանական է որ կան հնութիւններ, բայց հողով ծածկուած են։ ուստի պէտք է հետամուտ ըլլալ։ Արծնոյ դաշտին մէջ էին Լասքիվերտ գիւղը, Մարագաց գիւղը, Խաղտոյ Առինձ բերդը, որոնք բոլորովին աւերակ եղած են հիմա։ —

քարայտակ փողոցները նեղ ու խոտորնակ կամլայն ուղղաձիգ են . տուները քաղաքին մօտակայ լեռներէն բերուած քարերով կամ եփեալ աղիւսով (թուղլա) և կամ անեփ աղիւսով (քէրպիճ) շինուած են , կրկնայարկ , ընդհանրապէս տձե անզարդ . եռայարկ և միայարկ և փայտաշէն տուներ քիչ կը գ տնուին . տուներուն շատը մեծ կամ փոքրիկ պարտէղներ ունին , որոնց մէջ ուռենիի , բարտի և վարդենիի ծառեր կան . կան նաև մրգեղինաց ծառեր , որ չեն պտղիր և միայն ծաղիկ կը բանան : Տուներուն պատուհանները փոքրիկ և ընդհանրապէս թղթով դոցուած են . տանիքներուն վրայ հող է . ամեն տան մէջ թանտր կայ , որուն մէջ քակոր կը վառեն փայտի տեղ , և հացն ու կերակուրը հոն կեփեն :

Ունի փառաւոր պալատներ , հարուստ վաճառանոցներ , հրապարակներ , իշեվաններ , հին շինութիւններ , զինուորանոցներ , հիւանդանոց , բաղնիքներ , մըղկիթներ , եկեղեցիներ , գեղեցիկ տուններ , դպրոցներ :

Քաղաքիս պարսպապատ մասին մէջ կը գ տնուին ընդհանրապէս տածկաց տուներ , ինչպէս նաև կուսակալին կրկնայարկ ու գեղեցկաշէն պալատն ընդարձակ պարտէզի մէջ , ուր քարաշէն փոքր սենեակ մ' ալ կայ , որուն մէջ կը պահեն գիշերները կառավարութեան ամեն տումարները : Քարաշէն կամարակապ երկար պէտք մը , առաստաղը փայտով ծածկած շուկայներ :

Թէվրիզ քարուսիին հարաւային կողմը պարոպին կից կան ջէֆնէ ժնարէ կոչուած երկու նոյնաձե աշտարակներ իրարմէ 20 ոտք հեռի , կապուտ յախճապակիներով (շինի) շինուած և ներքին կողմը գետնէն մինչեւ 3 կանգուն վեր սրբատաշ սեագոյն քարերով , որոնց վրայ գեղեցիկ ծաղիկներ , երկգլխեան արծիւներ և ուրիշ ձեւեր քանդակուած են . այս ճարտարարուեստ շէն-

քերուն տեսքըցոյց կուտայ՝ որ իրենց նախկին գաղաթները կործանած են, և հիմա արևելեան յաշտարակին միայն գլուխը փայտէ ձող մը դրուած է ծայրը մագնիսեայ երկաթով։ Այս աշտարակներուն քովը գմբեթաւոր շէնք մը կայ, որ ’ի հնումն եկեղեցի էր, որուն մէջ շատ հնութիւններ պահուած էին, զոր ուստերը վերուցած են 1830 ին՝ երբ արշաւեցին քաղաքին վրայ։ Այս շէնքը հիմա զինարան (ճէպիսանէ) եղած է, որուն գրանն առջև պահապան զօրք կըսպասէ։ Այս գմբեթաւոր շէնքէն զատ վերոյիշեալ Զիֆթէ մինարէնէրուն քով կը գտնուի նաև Ուլու հայ ըստած երևելի մզկիթը, ’ի հնումն գիւանատունն, որ 28 որմասիւներու վրայ հաստատուած է չորս կարգ կամարներով։ ունի 7 գուռ, որոնց երեքը որմով գոցուած են։ Դարձեալ թէփրիզ քարուսիին մօտ կը գտնուի նէտիէ հայութ ըստած մզկիթը։ Միջնաբերդին հիւսիսային կողմը և որմին կից ու երկայնութեամբը շէնք մը կայ, ուր կարգով թնդանօթններ շարուած են ուրբաթ և տօնի օրերը նետելու համար։ Երզնկա քարուսիի հիւսիսային կողմը կայ Մայրու սուրյը ըստած քարաշէն ընդարձակ շէնքը, որուն մէջ գէպ ’ի արևելեան կողմը մատուռ մը կայ 4 փոքրիկ գմբեթներով, որուն փակեալ գուան ճակատն ու մնարքները քարերուն վրայ արծիւներ և կերպ կերպ ծաղիկներ քանդակուած են։ մատուռին վրայ արձանագրութիւն մը դրուած է։

Մոնկրովին արեւելեան կողմը բարձր գմբեթով քարաշէն գեղեցիկ շինուածներ կան՝ որ կը կոչուին Եաշունեան։ ասոնց գիմացը կը գտնուին կառավարութեան գործարանները։ Մոնկրովի մատուռին մօտ ու հարաւային կողմը յախճապակիով շինուած կոթող մը կայ մինարէի ձեւով, որ կը կոչուի Զէնէլ մատուր, որ Զիֆթէ մինարէններէն աւելի բարձր է։ ասոր ալ գաղաթը փլած

է , որուն վրայ ձող մը դրուած է դրօշակ բանալու համար . ասոր չորս կողմն են զօրաց բնակարաններն ու քաղաքին երեւելի զօրանոցը : Պարսպէն դուրս ենի քափուին դրսի կողմը արուարձանին Սուլթան Մէլիքը ըստած թաղին մէջ կան երեք մեծաշէն գմբեթներ , որոնց մէկը աւելի մեծ եւ գեղեցկաշէն է , եւ որուն պատուհաններուն վրայ թռչուն , ցուլի գլուխ , իրերապատ վիշապաձեւ օձեր եւ ծաղիկներ քանդակուած են . ունի մէկ դուռ և մէջը գերեզման մը : Աւանդութեամբ կրասոի որ ասոնք Սուլթան Մէլիք անունով իշխաններու գերեզմաններ էին : այս գմբեթներուն շուրջը տաճկաց գերեզմաննոց է : Աւրիշ փողոցներու մէջ ալ կան շատ մը գմբեթներ , որոնց մեծ մասը կիսաւեր են կամ բոլորովին կործանած :

Կիւ Ահաբար թաղին մէջ ալ գմբեթ մը կայ , որուն յատակը գետնափոր է և դուռը իր քովի տանը մէջէն է . ասոր մէջ 8 աստիճան սանդխով կիջնուի , ուր դադաղաձև գերեզման մը կայ , ուխտատեղի՝ տաճկաց : Այս գմբեթին կից փոքրիկ գերեզմաննոց մը կայ տաճկաց : Նոյնպէս պարսպէն դուրս երգնկա քաբուսիին արտաքին կողմը արուարձանին մէջ ֆաշա Մէջարլըլը անունով տաճկաց գերեզմաննոց մը կայ , որուն մէջ կը գըտնուին հինգ նահատակներու գերեզմաններ , որոնց արձանները քիսատոնէից գերեզմաններուն ձևովը շինուած են . Աւանդութիւն մը կայ որ ասոնք 7 եղբայրներ էին : որ քրիստոնէութեան համար նահատակուեր են . թէ պէտ և հիմայ հինգ գերեզման միայն կը գտնուի , անոնք ալ առանց արձանագրութեան , բայց բնակիչները մինչեւ հիմայ Եօնա Երբուրց գերեզման կը կոչեն : Քաղաքիս արուարձանէն ալ դուրս ձեռէւ դրան կողմը 2 գմբեթներ կան՝ որ կը կոչուին կիւ Գւշան գմբեթներ , իրարմէ 3 վայրկեան հեռի , որոնց մէկը աւելի մեծ է

և բարձր և որուն քովը աղբիւր մը կայ . իսկ միւսը փո-
քը ու կիսաւեր . կարելի է որ ասոնք ալ երևելի ան-
ձանց գերեզմաններ եղած ըլլան : Հոս ալ ընդարձակ
գերեզմանատուն մը կայ տաճկաց : Բաղաքիս մզկիթ-
ներուն թիւը 200 էն աւելի է թէ՛ պարսպին և թէ ա-
րուարձանին մէջ . գլխաւորները հետևեալներն են , ի-
րենց դպրոցներովն ու գտնուած թաղերուն անուննե-
րով .

Մզկիթ	Դպրոց	Թաղ
1 Մուրատ փաշա ճամիսի	5 Երգնկայի դուռը	
2 Կէօմրիւկ	5 Կէօմրիւկ	
3 Զէյնալ	2 Բերդին մէջ	
4 Ապտիւլլահման	1 Հէօլիւկ մահէսի	
5 Կատանա	2 " "	
6 Մոլ օղլու	2 Ալի փաշա "	
7 Ճէտիտ	3 Գասրմփաշա "	
8 Այաս փաշա	2 Գասրմփաշա մահալլէսի	
9 Խօնտախնի (1)	0 Իչ մէյտանը	
10 Քըրք չէշմէ (2)	12 Քըրք չէշմէ մահէլլէսի	
11 Ճափէր աղա	3 " "	"
12 Խոլրահիմ փաշա	11 " "	"
13 Ճէննէթ զատէ	4 Եէնի քարու	"

(1) Ասոր քով փոքր փայտաշէն սենեակ մը կայ , որուն
մէջն է սուրբ Թորոս անուն նահատակին գերեզմանը , որ
ուխտաւեղի է եւ տաճկաց ձեռքն է :

(2) Այս մզկիթը քաղաքին պատուարին մէջ եւ միշնա-
բերդին հիւսիսային կողմը Քըրք չէշմէ ըսուած թաղին մէջ է :
Երդը արճինով պատած . ունի ընդարձակ պարտէզ մը , որուն
մէջ մեծամեծ անձանց գերեզմաններ կան : Ի հնումն սուրբ
Ստեփանոսի եկեղեցի էր .

Մգկիթ	Դպրոց	Թաղ
14 Կիւրծի քարու ճամփակի	3	Եէնի քարու մահալլէսի
15 Քարա քուլուքնը "	3	" " "
16 Նարման օղլու	4	Թէվրիզ քարուսը "
17 Մէթի	2	" " "
18 Լաստ փաշա	13	Միջնաբերդին քով
19 Ուլու	3	Զիֆթէ մինարէի "
20 Լէլէ փաշա	8	Իչ մէյտան
21 Հաճի սալիճ	14	Եէկէն աղա մահալլէսի
22 Տէվրիշ փաշա	2	" " "
23 Եէկէն աղա	0	" " "
24 Շէյխէր	12	" " "
25 Քէլ հաճի	3	" " "
26 Փէրվիշ օղլու	6	Քալէ իչի "
27 Հիւմնի էօմէր	2	Նէզիք չարշ
28 Հէպէ էֆէնտի	2	" " "
29 Հաճի ճումա	2	" " "
30 Քաման ճամփակի	4	" " "
31 Թարաքնը	0	" " "
32 Մահլէ պաշը	2	" " "
33 Մումճու մահալլէն "	1	" " "
34 Շէտի	2	" " "
35 Քավաք	1	" " "
36 Ճէտիտ	2	" " "
37 Ղրմաճը	1	" " "
38 Ալի էֆէնտի	1	Եօնճալլք "
39 Զըրչըր	0	" " "
40 Կէղա մահալլէ	1	" " "
Շուկայներուն անունները .		
1 Վարայ քափուսու չարսըր.	2	Իչ մէյտան չարսըր
3 Քույտումճու	"	4 Քափափ "
5 Քալէ իչի	"	6 Կիւրծի քափուսու "

- | | | | |
|--|---|--------------------------------|---|
| 7 Ք Ք Ե Օ Փ Ի Ւ Ա Պ Ա Հ Ր Հ Ա Ր Ա Ը Ր . | 8 Ք Լ Ի Խ Ա Ե Ք Ա Վ Ո Ւ Հ Ա Ր Ա Ր Ա Ը Ր . | | |
| 9 Ն Ե Ղ Ի Ք | " | 10 Կ Է Ծ Ո Լ Ա Պ Ա Հ Ր | " |
| 11 Կ Ա Ր Ա Մ Ջ Ի Գ Լ Մ Ա Խ | " | 12 Մ Ա Հ Ի Ե Ա Պ Ա Հ Ր | " |
| 13 Կ Ի Ւ Լ Ա Հ Ա Մ Ե Մ | " | 14 Ե Ր Պ Ն Կ Ա Ք Ա Բ Ո Ւ Ս Ո Ւ | " |
| 15 Թ Ե Վ Ր Ի Ջ | " | 16 Պ Ա Ք Ր Ը Ր Ը Լ Ա Ր | " |
| 17 Ա Ժ Ժ Ե Մ Ա Ն , ո ր հ ր ա պ ա ր ա կ մ է է , ո ւ ր կ ը ծ ա խ ո ւ ի ն ձ ի ե ր , կ ո վ ե ր , ո չ խ ա ր ն ե ր , և լ ն : Ա յ ս հ ր ա պ ա ր ա կ ի ն մ է ջ ս ր բ ա տ ա շ ք ա ր ե ր ո վ շ ի ն ո ւ ա ծ փ ո ք ր ի կ տ ե ղ մ ը կ ա յ , ո ւ ր հ ի ն ժ ա մ ա ն ա կ է մ ն ա ց ա ծ դ ե ր ե զ մ ա ն մ ը կ ը գ տ ն ո ւ ի ք ո վ ը ե ր կ ո ւ ո ւ ր ի շ դ ե ր ե զ մ ա ն ն ե ր ա լ կ ա ն ։ Ա լ ի փ ա շ ա յ ի ն ո ւ չ է պ ի ա զ պ ա պ ա ա ն ո ւ ն դ ե ն ա պ ե տ ի ն , ո ւ ր ջ ե ր մ ե ռ ա ն դ ո ւ թ ե ա մ ի բ ո ւ խ ո ւ ի կ ե ր ի մ ա ն տ ա ծ կ լ ն ե ր ը : | | | |

Ի ջ ե վ ա ն ն ե ր ն ա լ մ ե ծ և փ ո ք ը շ ո ւ կ ա ն ե ր ո ւ ն մ է ջ ն ե ն , ո ր ո ն ց ա ն ո ւ ն ն ե ր ը հ ե տ կ ե ա լ ն ե ր ն ե ն .

1 Խ ա տ ը օ ղ լ ո ւ	Խ ա ն ը	{ Պ ա ր ս ի կ վ ա ճ ա ռ ա ւ կ ա ն ն ե ր կ ը ն ս տ ի ն :	{ գ է օ լ ի ն կ ը լ ո ւ խ ն ե ն :
2 կ ա մ պ ո ւ ր	"		
3 Մ ա վ ո յ	"	{ վ ա ճ ա ռ ա կ ա ն ն ե ր կ ը ն ս տ ի ն :	{ մ է ջ ն ե ն :
4 Տ է վ ր ի շ ա ղ ա	"		
5 Թ ի ւ թ ի ն ն	"	{ հ ի ւ ա ն դ կ ը պ ա ռ կ ի .	{ լ ո ւ խ ն ե ն :
6 Ճ ե ն ն է ժ զ ա տ է	"		
7 Մ ա ն ս ո ւ ր օ ղ լ ո ւ	"	{ վ ա ճ ա ռ ա կ ա ն ն ե ր կ ը ն ս տ ի ն :	{ ն է զ ի ք
8 Ճ ա պ օ ղ լ ո ւ	"		
9 Ք ի ւ չ ի ւ կ	"	{ պ ա ն դ ո ւ խ ա ն ն ե ր ո ւ ի ջ ե ւ ա ն :	{ չ ա ր ա ս ի ի մ է ջ ն ե ն :
10 Ա է ր ս է ր	"		
11 Կ է ն ն ա ղ ա	"	{ հ ա յ ո ց ե կ ե ղ ե ց ւ ո յ ն է	{ չ ա յ ո ց ե .
12 Ք ի լ ի ս է	"		
13 Ե է ն ի	"	{ վ ա ճ ա ռ ա կ ա ն ն ե ր կ ը ն ս տ ի ն :	{ կ ե ղ ե ց ւ ո յ դ ո ւ ո ն ե ն :
14 Ի ւ թ ի ւ թ մ է ղ	"		
15 Ք ի ւ չ ի ւ կ	"		

16 Աչըք	խանը	զինուոր կը նստի	կամուր-
17 Փէրվէզ օղլու	"		ջին գը-
18 Հաճ Ահմէտ	"		լուխն են.
19 Մօլ օղլի	"	{ վաճառանոց են	{ Մօլ օղլի
20 Քօմէսլու	"		{ փողոցը :
21 Մինէն օղլու	"	{ վաճառանոց են	{ Ոթ մէ յ-
22 Մազլում	"		տանին
23 Ղօռ. օղլու	"	{ վաճառանոց են	{ մէջն են:
24 Կիւլ Ահմէտ	"		
25 Մէմիշ աղա	"	{ պանդուխտ վա-	
26 Ապտէրլիէր	"	{ ճառականաց բը-	{ Պարսպին
27 Ղազէզ օղլու	"	{ նակութեան տե-	ներսն են:
28 Տիքինիէր	"	{ զեր են.	
29 Թօրհանէլի	"	գերձակները կը բնակին 100 ի չափ կրպակներու մէջ, եւ քրթերն ալ առ հասարակ ասոր մէջ առուտուր կընեն, եւ թէվրիզ քարուսիին կողմն է :	
30 Թաշ խան .	պարսպէն ներս քարաշէն մեծ իջեվան մ'է կրկնայարկ, որուն վերի յարկին մէջ կը պահեն դորաց հանդերձներ, և ստորին յարկը կառավարու- թեան բանտն է : Ասոր 4 անկիւնները 4 գետնայարկ խոռոչներ կան, որ Զընտան կըսուին : Ուրիշ շատ մը ի- ջեվաններ ալ կը գտնուին զանազան փողոցներու մէջ, որոնց մէջ ձիեր կը կապեն և կարավաններ կը կենան :		

ԵՐԱԵԼԻ բաղնիքներն են .

- | | |
|---------------------|---------------------|
| 1 Կէօմիւլք համամթ . | Կէօմիւլկի քով : |
| 2 Իքի կէօպէք " | Նաղիք չարսիին մէջ : |
| 3 Քիւչիւք " | Կիւրճի քարուսիին : |
| 4 Զէօվլիւք " | Թէվրիզ քարուսիին : |
| 5 Թահտա | Մահէ պաշը թաղը : |
| 6 Քըրք չէշմէ | " " " |

7 Հանրմ	համամը՝	Մահլէ	պաշը	թաղն
8 Այսա փաշա	"	"	"	"
9 Ճահվարիէ	"	Ուլու ճամիկի	քովը	
10 Սէրայ	"	"	"	"
11 Գօեախանէ	"	"	"	"
12 Քարա քուլուքնու համամը	Զայդարա	թաղը		
13 Մուրասա փաշա "		"	"	"
14 Շէյխէր	"	"	"	"
15 Մէոմէռ	"	Եէնի քաբուսի	թաղը	.

կիսաւեր է եւ կանանց բանտ :

Կայ իրարու մօտ 2 եկեղեցի Հայոց յանուն սուրբ Աստուածածնի, որոնց մէկը վերի և միւսը՝ վարի եկեղեցի կըսուի, և կը գտնուին արուարձանին Խոչ-թաղին մէջ. առաջինը Մայր եկեղեցի սուրբ Աստուածածնայ, որ 20 միաքար գլանաձև սիւներու վրայ հաստատուած երկայն քառակուսի ձեռվլ քարաշէն մեծ ունոր եկեղեցի մ'է : Երկրորդը՝ Տաճար միաբան սուրբ Աստուածածնայ, որ վերոյգրեալ եկեղեցւոյն որմին քով կակուզ մոխրագոյն սրբատաշ քարերով շինուած կամարակապ հին մատուռ մ'է : Տաճարին դռան երկու կողմերը 2-3 գերեզմաններ կան : Այս եկեղեցիներուն մէկ կողմը Հայոց դպրոց մը շինուած է և մէկ կողմն ալ Հայոց Առաջնորդարանը եռայարկ շքեղ ձեռվլ, ուր կը նըստի կարնոյ վիճակի Արքեպիսկոպոսը : Այս շինութեանց ամէնն ալ բարտի, ուռենիի և վարդենիի ծառերով զարդարուած պարտէղի մէջ են, և ասոնց հիւսիսակողմն է Հայոց ընդարձակ գերեզմանատունը որմափակ, ուր յոյներն ու ուրիշ քրիստոնեայ ազգերն ալ կը թաղեն իրենց մեռեները Հայոց մարդասիրական յնորհիւն ու թոյլառութեամբը : Այս գերեզմանատան մէջն են վարվառեայ կուսին և իր եզրօրը Գասպարին և Մարիամին գերեզմանները, որ մինչև հիմայ կը կոչուին

Նահարանի էեւելոն : Կայ յունաց քարաշէն եկեղեցի մը յանուն սուրբ Գէորգաց կառուցեալ չորս սիւներու վրայ , որ կը գտնուի Հայոց դերեղմանատան մօտ կառաւ : Յու ըսուած թաղին մէջ . եկեղեցւոյն չորս կողմը պարտէզ է , որուն մէջ շինուած է դպրոցն ու Սուածնորդարանը կայ նաև մէկ եկեղեցի ալ հոյ հուվմէականաց յանուն Տիրամօր :

Քաղաքիս ջուրը առատ և երկու տեսակ է . մէկը՝ մէջէն կը բղխէ կամ հոր փորելրվ կը հանեն . այս վերջինը անհամէ և խմելու չի դորժածուիր և կըսուի Եւլուսոյուն : Միւսը՝ քաղաքին հարաւային կողմի մօտակայ լեռներէն խողովակով բերուած է որ աւելի աղէկ է և կըսուի Տաշ առյուն : Այս ջուրերը քաղաքիս ամէն կողմը տարածուած և զանազան թաղերու բաժնուած են . ուստի ամէն փողոցներուն ու հրապարակներուն մէջ 3—4 էն աւելի հասարակաց աղբիւրներ են , որ անդադար կը վազնէն , նոյնպէս և մասնաւորաց տուներուն մէջ , անանկ որ քաղաքին մէջ 500 էն աւելի մշտահոս աղբիւրներ կը գտնուին , որոնց գլխաւորներն են .

1. Քըրք չշմէ . որ բաղնիքին մօտ է , և ջուրը քաղաքին մէջէն կը բղխէ . նախնիք շինած են այս աղբիւրը՝ որուն ջուրը այն տուեն 40 աղբիւրներու բաժնած էին , վասն որոյ Քաղաքաւուան աղբէոր կը կոչուի :

2. Նահատակի Աղբիւր , որ Թէվրիզ քարուսիէն քիչ մը հեռի արուարձանին մէջ թապախիսանէին կամուրջին մօտ է , որուն ջուրը նոյն տեղը գտնուած տաճկի մը տունէ կը բղխէ : Կըսուի թէ այս տունը՝ սուրբն Սահակ և Յովսէի (1) նահատակաց տունն էր , վասն որոյ

(1) Ասոնք երեք եղայրներ էին բնիկ Կարնոյ քաղաքէն , որոնց հայրը ատաճիկ եւ մայրը հայ էր , եւ քաղաքին մէջ երիւելի

ուխտի կերթան տենդոտները շաբաթ օրերը և ջրովը կը լուացուին բժշկուելու համար :

3. Կաթն Աղբիւր , որուն ջուրը տեղէն կը բղիս . այս աղբիւրը Երզնկա քաբուսիէն քիչ հեռի արուարձանին մէջ Զայզարայ ըսուած գետակին վրայ շնուած կամուրջին մօտ է , Այս աղբիւրին ետեր սենեկի մը մէջ գերեզման մը կայ , ուր կանացք ուխտի կերթան կաթերնին շատնալու համար .

4. Զէթէճի փաշայի աղբիւրներ . ասոնց ջուրը 1164 Տաճկաց թուականին Զէթէճի Ապտուլլահ փաշան Փալա Տէւունէն բերել տուած է : Այս պատուական ջուրը քարով և կրով շնուած սոորերկրեայ ճամբայի մը մէջ շարուած լայն խողովակներու մէջէ կուգայ քաղաքը , և մէկ քանի աղբիւրներու կը բաժնուի , որոնց զլիսաւորն է կուսակալի պալատին աղբիւրը .

5. Թօրհանէյի աղբիւրներ , որ ամենէն առատ ու ամենէն պատուական է , և Գոհանամ լերան սաորոտէն խողովակներով կուգայ քաղաքը :

ու անուանի անձինքներ էին , եւ գաղանապէս քրիստոնէութիւն կը վարէին . օր մը ուղեցին փախչիլ մօրերնուն հետ 'ի կոստանդնուպոլիս յայտնապէս քրիստոնեայ ըլլալու համար , թէ եւ մայրերնին ու մէկ եղբայրնին յաջողեցան , իսկ այս երկուքը ձերբակալ ըլլալով 'ի մահ դատապարտուեցան 808 Քրիստոսի թուականին . Հայոց պատմութեան Գ. հատոր . 418 երես : Իրենց դադաղաձեւ գերեզմանները հիւա կը գըտնուին պարսպէս ներս Ուլու ճամփին մօտ անել փողոցի մը մէջ քարաշէն կամարակապ սենեկի մը մէջ իրարու քով , ուր կոյնաեւ ուրիշ դադաղաձեւ գերեզման մ'ալ անոնցմէ քիչ մը հեռի , ուր ուխտի կերթան սաճիկ եւ քրիստոնեայ : Այս սենեկին դրախ կողմէ զարտէզին մէջ կան ուրիշ գերեզմաններ տանկաց :

6. Տէվրիշ աղայի աղբիւր . որոյ ջուրն ես լեռնէն կուգայ խողովակներով և Տէվրիշ աղա անուն անձ մը բերել տուած է :

Քաղաքէն կէս ժամ հեռի Քիրէմիտիք ըսուած տեղէն ալ ջուր կուգայ՝ որ Երզնկայ ու Եէնի քարուներուն մէջ տեղէն անցնելով կը մտնէ պարսպէն ներս քաղաքին մէջ և կը բաժնուի զանազան աղբիւրներու . այս ջրին ճանապարհը Քիրէմիտիքէն մինչև քաղաքին մէջ դետնին տակէն է , որուն մէջէն մարդ կրնայ Երթալ :

7. Հայոց Եկեղեցւոյ աղբիւրներ . ասոնց ջուրը քաղաքին հարաւային կողմի Երան մօտ այլ և այլ տեղերու մէջ գտնուած ջուրերը միացնելով և խորագոյն ականներ փորելով մինչև Ճէպիու դրան կողմը տաճկաց գերեզմանատան վերի ծայրը , անկէ ալ քաղաքը բերած են 24 աղբիւրներու բաժնած :

Քաղաքիս այս ամէն աղբիւրներուն ջրերը , որ փողոցներուն մէջէն կը վագեն , ժողվրվելով փոքրիկ վտակ մը կը ձևացնեն , որ կը կոչուի Մուրադը և քաղաքին մէջէն կանցնի . հոն քաղաքացիք կը լուան լաթերնին ու ամեն բաներնին :

Քաղաքիս արուարձանին մէջէն ու Երզնկայ քարուսիին մօտէն Զայզարա անուն վտակը կանցնի , որ Փուն Տէտէն և Լուսէ Երուներուն մէջ տեղէն դալով ու այսպէս Երզրումի մէջէն անցնելով կերթայ և 50-60 շաղացներ դարձունելէ ետև կը խառնուի Շամբին մէջ :

Այս Երկու առուարձանին վրայ տեղ տեղ փայտէ կամ քարէ կամուրջներ շինուած են :

Գարնան ժամանակ երբ մէկ կողմէն անձրևները կառատանան և միւս կողմէն ձիւները կը հալին , այս Երկու վտակները հեղեղանման կը յորդեն և շատ անգամ շրջակոյ տուներուն մնաս կը հասցնեն :

Քաղաքս՝ կոստանդնուպօլսոյ և աօիական Տաճկաստա-

նի զանազան քաղաքներուն, Պարսկաստանի և Ռուսիոյ մէկմէկու հետ ունեցած առևտրական յարաբերութեանց կեդրոնն է ու մեծ վաճառատեղի և վաճառականութիւնն ընդհանրապէս Հայոց ձեռքն է.

Պարսկաստանէն կուդայ խամ իփէկ, ճառ շալ, տօնլուկ շալ, խութնի, խալփախի մորթ, եէզու ալաճասի, բամպակ, մուշտակ :

Յաճկաստանի սահմաններէն՝ խալայ, նշատրը, չիվիտ, երկաթ, պախր, կէօն, կտաւեղէն, բամպակ, խութնի, խատիփէ, աթլազ, չուխայ, խահուէ, չէքէր, իւղ, պանիր, և. տեսակ տեսակ եւրոպական տարազագործներ :

Մերձակայ գաւառներէն՝ իւղ (7 զուրուշ), պանիր (2 զուրուշ) :

Թորդումէն և Սպերէն՝ ամէն տեսակ մրգեղէններ, որ ո՞չ քաղաքին և ո՞չ շրջակայններուն մէջ կը գտնուին :

Նարմաննէն, Շողանու ձորէն, Բասեննէն և Օլթիէն՝ վառելու փայտ և ածուխ, որ քաղաքին մօտերը չեն գտնուիր, ասոր համար բաղնիքներուն +իւնաները, փուռերը և տունները՝ մանաւանդ կերակուրի համար առհասարակ քակոր կը գործածեն փայտի ու ածուխի տեղ:

Քաղաքին մէջէն կելլէ տան, կտաւ, տեսակ մը աճու, գոյնզգոյն սեկ, ընտիր կաշի, բրդէ շալ, բրդէ գուլզայ, կտաւի մանած, կօշիկներ, տեսակ մը փսիաթ, տրեխ, ապուխտ, օղի :

Բերքն է ցորեն, գարի, հաճար, կտաւատ :

Գլխաւոր արհեստաներն են, գարբնութիւն, հիւսնութիւն, ոսկերչութիւն, գերձակութիւն, զինարարութիւն, երկաթագործութիւն, պղնձագործութիւն, ձուլագործութիւն, և այլն :

Օդն առողջ է և բարեխառն . ձմեռը ցուրտ և ընդհանրապէս արևելեան և հիւսիսային հովեր կը փչեն,

բայց մարտ՝ ամիսէն մինչև մայիս հարաւային հով :

Քաղաքը բարերեր արտերով շրջապատած է, որոնց մէջ կը բուսնին ցորեն, գարի և բանջարեղջններ, շողդամ, կաղամբ, վարունք, ձմերուկ, կարմիր բանջար, գետնախնձոր, և այլն :

Քաղաքին արևմտեան և հիւսիսային կողմերն ընդարձակ դաշտ մ'է ցորենի, գարիի և ընտիր ընդեղէններու արտերով ծածկուած և բարձրագագաթ բարելիր և ջրաբուղին լեռներով շրջապատած, որոնց առատաջուր վտակները կ'ուռողեն անոր գետինը : Այս գաշտին երկայնութիւնը արևելքէն արևմուտք 14 ժամէ, և լայնութիւնը հիւսիսէն հարաւ 8 ժամ:

Քաղաքիս հարաւային կողմը և $1\frac{1}{2}$ ժամու չափ հեռի է Շուշը կամ Գոհոնաց ջրառատ լեռը, որ նահանգին բարձր լեռներէն մէկն է . Հազիւ $1\frac{1}{2}$ ժամէն կելլուի գագաթը և կը տեսնուին Սև ծովն և Մասիս : Այս լեռնէն խողովակով ջուր բերած են քաղաքը :

Մէկ ժամ հեռի և Գոհոնաց լեռան արևելեան կողմն է Տէլէ Պէտու լեռը :

Դարձեալ 1 ժամ հեռի և Գոհանամին արևմտեան կողմն է Փալան Տէօքէն ուղղաբարձ լեռը, ուրկէ կը բըղիսեն առատ ջրեր, զոր խողովակներով քաղաքը բերած են . մնացած ջուրերը կիջնան դէպ 'ի քաղաքը և կոռոգեն շրջակայ արտերն ու ջրաղացներ կը դարձունեն. Ետքը Զարուհ, թաղէն անցնելով և դարձեալ ջրաղացներ դարձունելով կերթան կան գիւղին առջևէն կը թափին եփրատ գետը :

Մէկ ժամ հեռի և Փալան Տէօքէնի կից է Եւրէն անուն բարձր լեռը :

Հինգ ժամ հեռի և արևմտեան հիւսիսային կողմը՝ Ղուղու շայ կամ Թէւէ ուրէւէ ապառաժուտ լեռը կից կարմ լեռան :

14 Ժամ հեռի և արևմտեան կողմը Շողանու ձորին
մէջ Պուլս Փերիկ և Տուշւէ Զոյէր գիւղերուն մօտ է Մէ.
Էթ Տուշ ըսուած առատաջուր բարձր լեռը , որուն
գագաթը գերեզման մը կայ Ս'նցէմ հեռու , որուն քովիչն
առատ ջուր մը կը բղխէ և ուր ուխտի կերթան մօտա-
կայ գիւղերէն :

15 Ժամ հեռի և արևմտեան կողմը Սէրջէմի ձորին
քով Պուլս ուղարկուած քարակոտուր սեպացեալ լեռը ,
ուր վայրի մեղուները ժայռերուն վրայ բուներ հաստա-
տելով առատ մեղր կը շինեն :

9 Ժամ հեռի և հիւսիսային կողմը Շեղջիկ անուն
կոնոնաձև լեռը , որուն գլուխը ջրով լեցուն բաժակ մը
կայ և ատորոտը ախորժահամ առատ ջրի ակ մը : կը
կարծուի որ այս լեռը շիշեալ հրաբուդի մ'է :

10 Ժամ հեռի Սպերու ճամբուն վրայ Առևն շոյս ը-
սուած ապառաժուտ բարձր լեռ :

6 Ժամ հեռի և հիւսիսային կողմը Տուշի ուղարկ կամ
խաչափայտի լեռը , որուն վրայէն պազ ջուր մը կը բլղ-
խէ , որ ոլորուն ընթացքով խոխոջածայն կիջնայ կարնոյ
գաշտը . այս ջուրը Եփրատ գետին մէկ թերին սկիզբն
է . կըսուի Տուշի ուղարկ կամ խաչափայտի ջուր : Հեշտակի
և շատ զուարճալի են գարնան եղանակ այս վայրերը , ուր
բարեխատոն քաղցր հովեր մեղմիկ կը փշեն և գետինը
խոտարդոյս մարդերով կը զարդարուի , ամէն կողմ բիւրա-
զըն անուշահոտ ծաղիկներ կը բացուին : Մօտակայ գիւ-
ղերէն ու քաղաքէն տաճիկ և քրիստոնեայ վարդավա-
ռի երկրորդ կիրակի օրը՝ այս լեռը ուխտի կը դիմեն
և Զ օրի չափ կը մնան :

Աւանդութիւն մը կայ որ յունաց Հերակլ կայսրը
պարսից ձեռքէն առնելով Քրիստոսի խաչափայտը՝ այս
կողմերս եկեր է , և ետքը երբ պարաիկները վրան ար-
շաւեր են՝ պարտաւորեր է կրկին . պատերազմիլ . անոնց

հետ . այն ատեն այս լերան վրայ պրահեր է խաչափայտը . թէև պատմութեանց մէջ ասանկ յիշառակութիւն մը չկայ , բայց սա՝ միայն յաւտնի է որ այն ատենները իրա՞ւ Հերակլ այս կողմերս կը գտնուէր : Մեր մատենագիրները այլ և այլ եղանակաւ կաւանդեն խաչափայտին դարձին պատմութիւնը , որ Հերակլ կայսեր ձեռոքքըն եղած է . ինչպէս Յովիաննէս կամթուղիկոս երես 53 : Զամշեան Հ. Միքայէլ վարդապետ՝ Ճառընտիրէն քաղելով իր Հայոց պատմութեան Բ. հատոր . Երես 532:

Ործաթի գիւղէն կէս ժամ հեռի և հիւսիսային կողմն է Եւրածան առջև ըսուած բլրակը , ուր շատ օձեր կը գտնուին :

Երզրումէն 3 ժամ հեռի և հիւսիսային կողմն է Քարշայր ըսուած ապառաժուտ լեռը , որուն վրայ քարայր մը կայ . աւանդութեամբ կըսեն՝ որ Ֆէհրատ և Շիրիմ Պարսկաստանէն հոս եկեր , այս քարայրը շիներ ու մէջը բնակեր են :

3 ժամ հեռի և արևելեան հիւսիսային կողմը Ղարաբաղ ըսուած լեռները .

2 ½ ժամ հեռի և արևելեան կողմը Զւուն ուրի անուն լեռը , որուն գլուխը պաղ ջրի ակ մը կայ , ուր քաղաքէն ու գիւղերէն ջերմասները կը դիմեն՝ ջրովը կը լուացուին 'ի բժշկութիւն .

20 վայրկեանի շափ հեռի և արևելեան կողմը Թուքան կամ Օրուն Ֆրան անուն լեռը , որուն կից է սուրբ Նշան (4) ըսուած լեռը , որուն վրայ քարակոյտ մը կայ ,

(1) Աւանդութիւն մը կայ որ մեծն Ներսէս Կեսարիացէն հոս դարձած ժամանակ քարէ իսաչ մը օձեր ու լերանը վրայ դրեր է իրը պահապան քաղաքին . բայց ըստ ուսանցակ այն քարակոյտը յունաց եկեղեցւոյ տեղ ըլլալ կը կարծուի .

ուր յաճախ ուխտառորներ կերթան մանաւանդ կիրակի օրեր :

Այս լեռներէն բնաւ ջուր չը բղխէր . վրայնին մարտ կոցներ շինուած են : Այս թօփ տաղիի հարաւային կողմը ստորոտին վրայ 1860 ին մեծ այր (մաղարա) մը գըտնուեր է , դէպ ՚ի լերան տակը շատ խորունկ ու ընդարձակապէս տարածուած , որուն մէջ մանել ու քննել մարդ չը համարձակելով , տեղական կառավարութեան հրամանաւ գուռը փակուած է մինչեւ հիմայ :

Քաղաքիս խիստ մօտ և արևմտեան հարաւային կողմը Քէրէմուլս+ լեռը . ասոր վրայ ալ մարտկոցներ շինուած են :

Կարնոյ ընդարձակ դաշտավայրը ուլողող գետակները են .

1. Սէրջէմու ջուր . կը բղխի Սպերի լեռներէն և անցնելով կարնոյ սահմանին մէջ Զուանց բերդաքաղաքէն կիջնայ Աշխալա և Շողանու ձորին մէջ և կը խառնուի Եփրատ :

2. Բլըրայ գետ . Հայտարու և Թէքէ տէրէի լեռներէն անցնելով թլուր դիւղին քովէն կը թափի Եփրատ Խիճէ դիւղին քովէ :

3. Քըզըլ կէչիտ կամ Քըզըլ ըրմաք . Փաւա ու Եսաւ լերան արևմտեան կողմէն անցնելով կերթայ կիղիի սահմանին մէջ կը խառնուի յԵփրատ :

4. Սև ջուր (Քարա սու) . սկիզբ կուտայ Եփրատ գետին մէկ թևին , կը բղխի Խաչափայտի լերան բարձր կողմերէն , և կարկաջահոս կիջնայ ձորերուն մէջ և հասնելով կիրակոսակ դիւղին առջև կը խառնուի Քիլիխէ

վասն որոյ յոյները Ապրիլ ամսոյ 23 ին սուրբ Գէորգայ տօնին եկեղեցական դգեստներով կերթան աղօթք կընեն .

գիւղին քովի լեռնէն բղիսող գետակի մը հետ , և անկէ ետքը ընդունելով իր մէջ ուրիշ շատ մը մասնաւոր ջրեր՝ կերթայ կարնոյ դաշտին մէջ լճակ մը կը ձևանայ , և անկէ ալ կը քալէ դէպ 'ի արևմուտք : Այս լիճը քաղաքին հիւսիսային կողմը և մէկ ու կէս ժամ հեռի կարնոյ ընդարձակ դաշտին մէջ կ'իյնայ . Երկայնութիւնն է արեւելքէն դէպ 'ի արևմուտք երկու ժամ և լայնութիւնը մէկ ժամ : Սև ջուր կ'ըսուի ջուրին սևութեանը համար . կ'ըսուի նաև Սազլրի կամ Սազլը կէօլ , 'ի հնումն Շամբ , ինչպէս նաև ըստ Խորենացւոյն ծով կամ ծովակ (1) . Սազլը կէօլ կամ Շամբ ըսուելուն պատճառն է որ լճին եղերքը կը բուսնին եղէգ և ուրիշ խոտեր . Զմեռը կը սառի և գարնան սկիզբը ապրիլ և մայիս ամիսներուն մէջ ամէն կողմէն վտակներ կուդան մէջը կը թափին , որով ջուրը կ'առատանայ ու կ'ողողէ դաշտավայրը . բայց ամառը ջուրը հետղիետէ նուազելով՝ տեղը ճահիճ և տղմուտ կը մնայ : Այս միջոցին եղերքի եղէգն ու ուրիշ խոտերը գիւղացիք կը քայլեն : Այս վայրը գարնան մէջ սիրալի տեսարան մը կը ներկայացնէ , ականակիտ վտակները կարկաջասահ յառաջ կ'ընթանան ու դալար խոտերուն մէջ հոտաւէտ ծաղիկներ գոյնզգոյն կը բացուին և բազմերամ թռչուններ լճակին եղերքին վրայ բոյներնին հաստատած ասդին անդին կը ճախրեն ու իրենց գեղգեղաձայն դայլայլիկները զեփիւռներուն հետ կը խառնեն :

Ասոր մէջ կը գտնուի առատ ձուկ , որ գիւղացիք հանելով կը տանին քաղաքը :

(1) «Եւ զօրավարն Հայոց Վահան մամիկոննեան երթայր լնդ կողմն արեւելից ծովուն կարնոյ , եւ գունդ զօրավարացն պարսից զկնի նորա երթալին անհասութեամբ : » Նաեւ տե՛ս Խորեն . Գ. Գիրք . Ծթ . Գւ .

Աճակիս վրայ մէկ քանի քարաշէն ու փայտաշէն կամուրջներ կան, որոնց գլխաւորներն են. Ղոբրէն կամուրջն որ նոյն գիւղին ճանապարհին վրայ սրբատաշ կարմրագոյն քարերով շինուած է 8 մեծամեծ կամարակապ աչքերով։ Դաստիարակութիւնը, որ սրբատաշ սև քարերով կառուցեալ է հինգ կամարակապ աչքերով։ Ոչո՞ւ էլու համարձակ, փայտաշէն և նոյն գիւղի ճամբուն վրայ ժիշտուած է կամուրջն ու փայտաշէն։ և այն։

Լրդումի արևելեան կողմը մէկ ու կէս ժամ հեռի խորածորի մը բարձր լանջքին վրայ կը գտնուի ոուրբ Գրիգոր Լուսաւորչի վանքը պարսպապատ, որ Մարգիկու վանք ալ կըսուի մօտակայ Մուտուրկա գիւղին անունով։

Այս վանքին արևմտեան կողմի խոր ձորին մէջէն կանցնի Պուէւան անուն վտակը, որ հարաւէն հիւսիս երթալով կանցնի Մուտուրկա գիւղին քովին, կերթայ կը թափի Եփրատ։ Այս վանքն ունի 30 սենեակ, մէկ փոքրիկ կամարակապ եկեղեցի մը քարաշէն՝ յանուն Լուսաւորչի, որուն մէջ գետնափոր գուր մը կայ Խոր Հիւոր անուն։ Աւանդութիւն մը կայ որ Երբ Տըրդատ հրաման ըրաւ որ տանին Լուսաւորիչ Արտաշատ քաղաքը Խոր վիրապը ծգելը համար, Լուսաւորիչ ճամբան մէկ քանի օր հիւր եղած է այս վանքին մէջ, որ ան ատեն մեծասառն իշխանի մը ամարանոց էր։ Այս աւանդութիւնը հաւանական կերեկ, վասն զիս այն ատեն Տըրդատ Երզնկա էր և Արտաշատու ճանապարհը այս կողմէն շատ գիւղին էր։ Եկեղեցւոյն դրան գրսի աջ կողմը որմին տակ մեծ գերեզմանաքար մը կայ, որուն տակն է Ահագին Սահակ կաթուղիկոս (Հայոց Պատմ. Գ Հայ. 866 Եւե)։ Վանքին պարսպին մէջ Լուսաւորչի եկեղեցւոյն հարաւային կողմը կարմիր սրբատաշ քարերով հնաշէն մատուռ մը կայ յանուն սուրբ.

Սարգսի : Վանքին պարապէն դուրս մշտահոս աղբիւր մը կայ Բաքենաց անուն ։ Քաղաքին արևելեան հիւսիսային կողմը Յ ժամ հեռի կը գտնուի կարմիր վանք կամ Հնձուց վանք , իր մօտակայ Հինձք գիւղին անունով՝ պարսպապատ , ունի 20 ի չափ սենեակ և քարաշէն կամարակապ մեծ եկեղեցի մը : Աւանդութեամբ կըսուի՝ որ Մեծն Ներսէս շինած է այս վանքը Կեսարիայէն դառնալէն ետքը : Վանքս մէկ ժամու չափ հեռի դէպ ՚ի արևելեան հարաւային կողմը ձորի մը մէջ կան քանի մը քարայրներ , որ Հռիփսիմէի տեղ կը կոչուին :

Աւանդութեամբ կըսուի՝ որ Հռիփսիմեանք Հայաստան փախած ատեն ասոնց մէջ պահուեր են թշնամեաց ձեռքէն ազատուելու համար : Այս տեղ կայ պատուական պաղ ջուրի աղբիւր մը՝ որ ուխտատեղի է : Քաղաքին հիւսիսային կողմը երեք ու կէս ժամ հեռի Խաչափայտ լերան ստորոտը՝ Խաչավանք գիւղին կեդրոնը կայ Խաչավանք անուն պարսպապատ վանքը , որ ունի քարաշէն եկեղեցի մը : Խակ հարաւային կողմը մէկ ժամ հեռի Գոհանոս լերան տակը կայ տաճկաց ուխտատեղի մը Աղոթի-բահոն կողչ անունով , ուր շինուած է մզկիթ մը , որուն մէջ դէպ ՚ի արևելք գերեզման մը կայ :

Աւանդութեամբ կըսուի՝ որ առաջ այս տեղ Հայոց վանք էր , ուր թաղուած էր և Սարգիս անուն հայ զօրավարը՝ որ երբեմն օգնեց յունաց՝ պարսկց գէմը ըրած պատերազմի մը մէջ :

Կարին գաւառուին մէջ կը գտնուին իրարու մօտքաղմաթիւ գիւղեր , որոնց մէջ ընդհանրապէս տաճիկու հայ խառն կը բնակին :

Օվաճըն ըսուած տեղն եղած գիւղերուն անուններն եւ էրզրումէն ունեցած հեռաւորութիւննին .

Համ հետք		Համ հետք	
1 Արապ քէց	9	2 Զաթաղ քէց	10
3 Զլրքը	8	4 Քզրք քալէ	11
5 Զիթահանք	10	6 Պաշ օվաճը	11
7 Աղըը աշք	10	8 Այնալը քալէ	9
9 Քուղկուն	9	10 Չութունկեր	9
11 Աղտաշ	10	12 Քարա քալէ	10
13 Ղաւաղ թեփէ	10	14 Խւչ քիլիսէ	9
15 Թօփրաք քալէ	8	16 Աղջագէն	11
17 Պաշկէնստ	10	18 Ախոռնուկ	10
19 Պղտիկանց	8	20 Մէրլի	9
21 Քափուլի	9	22 Էրիզա	8

Սէրչէմի եւ Շողանլու ձորոյն մէջ եղած գիւղերուն
անուններն եւ Երզրումէն ունեցած հեռաւորութիւննին.

Համ հետք		Համ հետք	
23 Գուրտ մահմուտ	18	24 Զըմնուտ	14
25 Լիճ	11	26 Սլթուն տաշ	11
27 Սօս	14	28 Պալեն բերթեկ	13
29 Թօփալ չավուշ	12	30 Սաբդորան	14
31 Շողիկ	17	32 Տաշլը չայիր	16
33 Պաճավուտ	15	34 Պոնակապան	15
35 Տանձուտ	13	36 Զաթօրան	12
37 Եօնճալը	9	38 Գալուտառիճ	10
39 Մերչէմի	9	40 Մուանց	9
41 Կեօլեօրէն	9	42 Գառվըր	8
43 Քարա հասան	12	44 Աշքալէ	11
45 Երկանմանսուր	9	46 Զերեվանք (1)	8
47 Միզրէ	11	48 Քօթանէս	12

(1) Ասոր քով աւրուած վանք մը կայ Միրանավանք անուն.

Համ հերթ		Համ հերթ	
49 Խուրտ տերէ	12	50 Ճեկինտուր	12
51 Սղբոտան	12	52 Փաշաքի	11
53 Պաշքիւր տերէ	12	54 Կէյիք	18
55 Կենէփէ	12	56 Մեծճանեօրէն	5
57 Ցէնչիք	13	58 Անէքէթ	5
59 Մուշաթանլման	12	60 Տաշաղըլ	9
61 Փոքը գաֆթառին	11	62 Քերձոր	12
63 Սարը պապա	11	64 Քիւքիւրփիլիւ	12
65 Շեխերէն	8	66 Թէզէկիւլ	7
67 Ալաճա	6	68 Աղաւեր	4
69 Էվրէնլի	5	70 Ճինիս	6

Հայտարու փոքրիկ դաշտին մէջ եղած գիւղերուն անուններն և էրզրումէն ունեցած հեռաւորութիւննին .

Համ հերթ		Համ հերթ	
71 Տուսմի	1	72 Թեփէ քէօյ	1
73 Մախանտա	2	74 Թեփէ տէրէսի	3
75 Քէպկիրի	4	76 Կիւմազէտ	5
77 Եաղմիջուկ	5	78 Հայտարի	5
79 Թամրա	5	80 Էօպպէք	4

Ընդարձակ դաշտին մէջ գտնուած գիւղերուն անուններն եւ էրզրումէն ունեցած հեռաւորութիւննին .

Համ հերթ		Համ հերթ	
81 Մէկ մանսուր	9	82 Քարապէկ	7
83 Մէօրտիւլիւկ	2	84 Աընկառին	3
85 Բլուր	2	86 Խայաբա	3
87 Մէօկիւրթիւ (4)	3	88 Առնքար	4

(1) Այս գիւղիս քով ցուրտ ջուրի մեծ աւաղան մը կայ

	Ժամ հետք		Ժամ հետք
89 Դիդկիր	5	90 Ըլլճա (1)	3
91 Լալէնտի	4	92 Եմրաճուկ	5
93 Փօչիկ	4	94 Տէվրէղճիւկ	4
95 Եէնի քէցյ	9	96 Բրդոնք	5
97 Լոշիկ	6	98 Եարըմճա	9
99 Մուտուրկան (2)	4	100 Սովուք ջերմուկ(3)	1
101 Շինոց	1	102 Կան	0 $\frac{1}{2}$
103 Զիֆթիկ	2 $\frac{1}{2}$	104 Կէս	2 $\frac{1}{2}$
105 Թասմաձոր	2	106 Քէօսէ մէհմէտ	4
107 Զիրաղ	5	108 Կիրակոսակ	5
109 Կիւն կէօրմէզ	6	110 Քարակէօպէկ	4 $\frac{1}{2}$
111 Քըզըլ քիլիսէ	6	112 Ծալկի	6
113 Քեօշկ	5	114 Հինձք	3
115 Թուանջ	2 $\frac{1}{2}$	116 Աղտաղ	4
117 Դաւթա	4	118 Կամպեր (4)	4
119 Տինարիդոմ	5	120 Զիթահող	5
121 Սրծըթի (5)	3	122 Ումուտում	4
123 Գեղախօր	3	124 Գրիչք	3 $\frac{1}{2}$
125 Երկնիստ	3 $\frac{1}{2}$	126 Խայկավանք	4
127 Ըղտաձոր	4	128 Օրթիզի	5
129 Թոսիկ	4	130 Գարարդ	3

Պալքուց անուն, որուն մէջ շատ ձուկեր կան, գորոնք բնակիչները
մեղք կը համարին բռնիլը :

(1) Տաք ջերմուկներ կան :

(2) Ասոր մօտ է Լուսաւորչայ վանքը :

(3) Պաղ ջուրի աւաղան մը կայ, որուն մէջ ախտացեալ-
ներ կերթան կը լուացուին :

(4) Ասոր քովի լեռնէն կարմիր քար մը կելնէ :

(5) Տաք ջուրի աւաղան կայ :

Համար	Անուն	Համար	Անուն	
131	Օձնի (1)	2 1/2	132 Պատիշէն	2 1/2
133	Դունիկ	3	134 Թարդունի	3 1/2
135	Էսէվանք	3 1/2	136 Սալածոր	4
137	Բաղկառիճ	4	138 Գոմեր	4
139	Արջունի		140 Աղօրէն	
141	Թորդան		142 Խանակեէ	
143	Խուշճի քէօյ		144 Կրճնկոցք	
145	Լոտաւերանք		146 Հասան մանսուր	
147	Միւլք		148 Նէրտիվէն	
149	Շակաւ		150 Շահմանսուր	
151	Քարւոր		152 Աղա Խաչըղը պէրիվէր	

Էրզրում քաղաքը շինուեցաւ 421 թուին գրիստոսի, յունաց թէոդոս թագաւորին օրովը՝ Անատոլիոս անուն իր զօրավարին ձեռօք, երբ Հայոց թագաւորութիւնը բարձած ըլլալով՝ այս կողմերը յունաց բաժին եղած էր։ Յօն թուականին պարսկց կաւատարքայն նուաճեց քաղաքն ու իր իշխանութեան տակն առաւ այս կողմերը յունաց կոստանդիիանոս զօրավարին մատնութեամբը՝ որ կարնոյ հրամանատար էր, և տարի մը շարունակ աիրեց։ Յօն ին, դարձեալ յունաց

(1) Այս գիւղին գերեզմանատան մէջ վանքի մը աւերակներ կը գտնուին, ուրիէ հինցած որմերու վրայ բեւեռեալ 3 կանգուն երկայնութեամբ եւ Զ կանգուն լայնութեամբ խաչքար մը ելած է, զոր գիւղին եկեղեցւոյ մատուքին մէջ փոխադրած են, ուր անթիւ ուխտաւորներ կը դիմեն։

Աւանդութեամբ կըսին՝ որ Թադէոս Առաքեալ օծեր է այս խաչը եւ վերջը Յօնան խմաստամէր Յձնեցին ալ վանք մը շիներ է նոյն խաչին տեղը։ Վասն որոյ վանքը իր անունովը սուրբ Յովհաննէս կոչուեր է եւ գիւղն ալ Յձնի։

ձեռքն անցաւ : 805 ին պարսից խոսրով երկրորդ թագաւորը նուաճեց յունաց շատ քաղաքներն ու յաղթանակաւ եկաւ առաւ նաև կարին այնուհետև 10000 զօրքով զրկեց իր քեռորդին Միհրանը՝ ի Տարօն, հրամայելով աւերել քանդել բոլոր գաւառներն և կենդանուցն բռնել զլյուչեղ ու իրեն զրկել . և ինքն ալդարձաւ Տիգրոն իր թագաւորանիստ քաղաքը , իր տեղը ձգելով՝ ի կարին Աշոտ անուն զօրապետը . Երկու տարի ետքը Աշոտ՝ խոսրովի հրամանաւը՝ գերի տարաւ կարնոյ բոլոր բնակիչները՝ ի Համատան քաղաք , որոնց մէջն էր նաև Բագրեանցի Յովհաննէս կաթուղիկոսը . ինչպէս կը գրէ Յովհաննէս կաթուղիկոս , իշխան Յակ Սշոտ ոմն հրամանաւ խոսրովայ հասեալ՝ ի Հայու և դիմեալ՝ իկերայ խորտակէր զօրմն յունաց , զի ոչ լինէր թիւսպանելոցն՝ ի դաշտին , և ինքն կալեալ դործ պատերազմին ընդ կարնոյ քաղաքի առնոյր զնա , և յետ երկեամ մի ամաց զբնակիչս քաղաքին՝ ի Համատան փոխէ , և վասն զի ծերունի կաթուղիկոսն Յօհան կայր՝ ի փախստականութեան՝ ի նմա , ընդ նոսին և նա ևս ըմբռնեալ վարեալ՝ ի գերութիւն և անդէն վախճանեալ բերաւ՝ ի գիւղն Աւան , կալեալ զաթոռ հայրապետութեան ամս քսան և վեց :

Բայց քանի մը տարիէն ետքը նորէն յունաց ձեռքըն անցաւ : 628 ին՝ յունաց Հերակլ կայսրը եկաւ էր զրում և շատ ինամքը ըրաւ Հայոց , և Մժէժ գնունին իր տեղն իշխան գնելով դարձաւ իր աթոռը : « Յառաջնում ամի անդ կաթուղիկոսութեան սորին Եզրի , յորում ժամանակի ամի լեալ դարձի խաչին , եկն Հերակլ կայսր՝ ի քաղաքն կարնոյ , այն է Թէոդուլոջիս , ուր և Եցոյց բազում ինամք և սէր առ հայս եղեալս՝ ի մասն բաժնի յունաց և կացոյց՝ ի վերայ նոցա զօրավար և իշխան զլյուժէժ գնունի : » Հայոց Պատմ. Բ Հոդ. 328 եր :

629 ին՝ Եղի կաթուղիկոսի օրովու ու իր նախագահ հութեամբը՝ Քաղկեդոնի ժողովոյն համար եկեղեցական մեծ ժողով մը գումարուեցաւ քաղաքիս մէջ Հերակլ կայսեր հրամանաւ . վասն զի յոյներն ընդունած էին Քաղկեդոնի ժողովը և անոնց հետ մասնաւոր հայեր ալ ընդունած ըլլալով Ազգին մէջ մեծ խոսվութիւն մը ծագեր եր : « Սմին իրի հրամայեաց կայսրն գումարել գաւառական ժողով եպիսկոպոսաց ևս և յունաց՝ ի քաղաքն իարին » : Հ. Պ. Պատմ. Բ. Հ. Պ. 328 Երեւան Աւանդութեամբ կըսուի՝ որ այս ժողովը քաղաքիս միաբան Սուրբ Աստուածածնայ կոչուած տաճարին մէջ եղած է :

647 ին՝ Հափարացիք, այսինքն, Սարակինոսք առին կարին քաղաքը և աւերեցին շատ տեղերը : 755 ին՝ կոպրոնիմոս կոստանդին՝ յունաց կայսրը առաւ քաղաքը Հագարացւոց ձեռքէն՝ կործանելով աշտարակը : 756 ին՝ Թերատ առաւ քաղաքը յունաց ձեռքէն և բընակեցուց ուրիշ տաճիկներ, ինչպէս կը գրէ կիրակոս պատմի: 807 ին՝ ընդհանուր սով մը սաստկաբար տիրեց բոլոր նահանգին մէջ, որ օրը՝ երեք հազարի չափ մարդ կը մեռնէր . անօմութենէ : 950 ին՝ կոստանդին Պէրփերութէն յունաց թագաւորը՝ իր երկրորդ անդամ թագաւորութեան ժամանակ զրկեց Զմշկիք անուն հայ զօրապետը անթիւ զօրքով կարնոյ վրայ, որ արշաւելով առաւ քաղաքը Հագարացւոց ձեռքէն կործանելով աշտարակները : Վերջը պարսիկները նարէն նուաճելով առին քաղաքը յունաց ձեռքէն . Տասներորդ դարուն վերջերն ու տասն և մէկերորդ դարուն սկիզբները՝ վասիլյունաց կայսրը առաւ քաղաքը պարսից ձեռքէն և անմիջապէս զրկեց Նիկոմիդացի իշխան մը՝ որ նորէն շինեց բոլոր վիճակները 1019 ին :

1231 ին՝ Խորազմ թագաւորը առաւ կարին մեծ

պատերազմ մ' ընելէ ետքը :

Երեքտասաներորդ դարուն մէջ իւանէ և Զաքարիա հայաղզի երկու եղբայրներ՝ որ վրաց թամար թագուհին զօրավարներն էին, հարկատու ըրին իրենց քաջագործութեամբը կարնոյ Սուլթանը, ինչպէս կը դրէ կիրակոս պատմի :

1241 ին՝ թաթարաց Մուղալ կամ Մողալ ցեղագետին Բաղադրուցի զօրավարը դեսպան եկաւ քաղաքացւոց որ անձնատուր ըլլան բայց բնակիչները անարդա՞նօք ետ դարձուցին զանի, և պարսպին վրայ ելնելով սկսան նախատել Մուղալը : Ան ալ սաստիկ բարկանալով՝ կատաղաբար արշաւեց քաղաքին վրայ և մեծամեծ գործիքներով կործանեց պարխապը և կոտորեց 'ի սուր սուսերի բնակչաց մեծ մասը տաճիկ և քրիստոնեայ, մնացածն ալ գերի ըրբաւ, ու քաղաքին մեծ մասը սյրեց : Ճամանակէ մը ետքը կանչելով Սարդիս եպիսկոպոսը՝ որ նոյն ատեն առաջնորդ էր, հըրաման և թոյլութիւն ըրբաւ որ բնակիչները ժողվուին ու տուներնին շինեն . ան ատեն ցրուած բնակիչներն և պահվուած քաղաքացիները ժողովեցան ու քաղաքը շինեցին . — « Բազու զօրավար թաթարաց դումարեաց զայլ ևս բազում զօրս յայլ և այլ ազգաց որ ընդ ձեռամբ թաթարաց էին, 'ի հայոց, 'ի վրաց և յասորւոց, և խաղաց 'ի կարնոյ դաւառ, որ էր ընդիշխանութեամբ ամիրային իկոնիոյ, որ և ասիւր Սուլթան հուսոմոյ խիթային անուն, և պաշարեալ զքաղաքըն թէոդուպօլիս, առաքեաց պատդամս առ քաղաքապետն, դալ 'ի հնաղանդութիւն իւր . իսկ նա անարդանօք դարձոյց զպատգամաւորմն . քաղաքացիքն ելեալ 'ի վերայ պարսպին կսկծեցուցիչ բանիւք նախատեին զթաթարս յուսացեալ յամբութիւն բերդին », և լն : (Հայ. Պատմ. Դ. Հայ. 216 Ելեմ) :

1517 ին՝ կարին Օսմանեան տէրութեան ձեռքն անցաւ Սուլթան Սէլիմ առաջինին ատենը, որ Զըլտըրդ դաւառին մէջ պատերազմելով Պարսից Խսմայիլ շահին հետ՝ յաղթեց ու իր իշխանութեան տակն առաւ կարին բոլոր դաւառներովը :

1600 ին՝ անձրեաց պակասութենէն երկիրը այն աստիճան երաշտացաւ՝ որ ամեննեին բոյս մը չըդոյացաւ. ուսափի կորուսիչ տով մը տարածեցաւ Տուրուքերան և Բարձր Հայոց գաւառները և մանաւանդ կարինէն մինչև Երզնկա, ուր մէկ քոռ ցորենը 8 դահեկանի կը ծախուէր և դրամ ալ չէր գտնուեր. որով շատերը սովամահ եղան, ինչպէս կը գըէ Գրիգոր Արեղայ ականատես պատմիչը. « Բաղդամք խոտաբուտ եղեն, սևացան և մեռան » :

1829 ին՝ Ոտուսերը արշաւելով առին կարինը և մէկ տարի եռքը ձգեցին գային : Այս ժամանակէն ՚ի վեր կարին կորսնցուց իր բազմամարդութիւնը . այսօր հազիւ իր բնակչաց չորրորդ մասը մնացեր է, վասն զիհայերուն ամենամեծ մասը ՚ի Ոտուսատան դաղթեց :

1859 ին՝ մեծ ու սարսափելի երկրաշարժ մը 30 օր տևելով քաղաքին բաւական վսաս հասուց և բնակիչները ահու դողի մէջ ձգեց, որ քաղաքէն դուրս վրաններու մէջ բնակեցան երեք ամիսի չափ :

Էրզրում կեցանք 12 օր ձէննէթ Զատէ կոչուած երեւելի անձին ընդարձակ տունը, որ ունէր գեղեցիկ պարտէղ մը, ուր 12 պատուհաններով գեղեցիկ պատշտամբ մը (քէօշկ) կար և մէջը ֆէուէլէ աւազան մը :

Մէկ քանի օր հիւպատոսներուն ու երեւելի անձանց փոխադարձ այցելութիւններ եղան. և գիշերները թէ՛ կուսակալը և թէ՛ քաղաքին երեւելի պաշտօնատարներն ու ազնուական և հարուստ բնակիչները հացկերոյթ տուին. կերակուրները Պօլսոյ Նման էին, թէպէտ և քաղաքին աղքատ բնակիչները քրդական կերակուրնե-

լող կը սնանին :

Քուէրո, հիւանդութիւնը քաղաքիս մէջ յամագանի 10 էն 'ի վեր կը տիրէր թեթև կերպով և օրը 10 կամ 11 հոգի կը մեռնէր . բայց շրջակայ գիւղերուն մէջ մեծ կոտորած ընելուն համար քաղաքացւոց վրայ ալ մեծ սարսափ կը տիրէր . վասն որոյ շատերը քաղաքը ձգեր ու հիւանդութիւն չեղած գիւղերու մէջ փախեր էին : Քաղաքին բժիշկները՝ մանաւանդ Քաղաքին բժիշկը և դեղագործները անընդհատ կաշխատէին գիշեր ցորեկ : Ես ալ իսկոյն հաղորդեցի հասարակութեան ողջպահիկ կանոնաց համեմատ պէտք եղած հրահանդները : Մեր ճանապարհորդակից ընկերներէն՝ որոնց թիւը 40 ի կը համնէր , միայն մէկ հոգի մը , Մուստաֆա Զավուշ , հիւանդութեան զոհ եղաւ :

Սեպտ . 22 երկուշաբթի ժամ 3 ին , քաղաքին բոլոր երևելիները մէկտեղ շքեղ հանդէսով մեկնեցանք քաղաքէն , ու կէս ժամ հեռի իջանք պատրաստուած վրաններու տակ , ուր քաղաքացւոց մեծ մասն ու զինուորաց գունդեր կսպասէին : Մէկ ժամ շարունակ զօրահանդէս (թալիմ) մը եղաւ , և վերջը հրաժարական ողջյոն տալով ճամբայ ելանք ցորենի արտերով ծածկեալ կարնոյ այն ընդարձակ դաշտին մէջ , և 2 ժամ երթալով ճամբուն վրայ հանդիպեցանք կէս անուն հայու գիւղը , ուր հանքային տաք ջուր կը բղխէր . ուրկէ ալ ժամ մը հեռի մտանք լլըճայ գիւղը՝ որ ունէր տաք ջերմուկ . ասկէ ալ ժամ մը հեռի անցանք Քարուն ըստած գետը՝ որուն եզերքին վրայ էր Աղաւէր գիւղը . և մէկ ժամու չափ ալ երթալով իջանք Դիդիկիր , որ փոքրիկ բլուրի մը զառ 'ի վայրին վրայ շինուած տաճկի գիւղ մ'է 100 տունով ճիշդ 5 ժամ հեռի կը ըստումէն , ունէր աղէկ ջուր մը . ասկէ կը տեսնուէր

Էրզրում քաղաքը : Հոս կեցանք գիշեր , ուր Քամբեան դադրեր էր : Մինչև հոս ճամբան ծառ չըկար :

Սեպտ. 23 երեքշաբթի ճամբայ ելանք Թու Արև գիւղն երթալու համար վեց ու կէս ժամ հեռի :

Դիդկիրէն՝ նախ երեք քառորդ ժամ հեռի ճամբուն աջ կողմը տեսանք Ալէն՝ գիւղը , ասկէ երկուք ու կէս ժամ հեռի հանդիպեցանք Երևան ճամբ դիւղը Սարչամու գետին եղերքին վրայ . անցանք այս ջուրը և 1 2/3 ժամ հեռի եկանք Քամբան գիւղը . ասկէ 2/3 ժամ հեռի Չանքան գիւղը , վերջը և ժամ մ'ալ երթալով իշանք Թու Արև տաճկաց գիւղը ձորին մէջ , որ ունէր 40 տուն բնակիչ , աղէկ ջուր ու սօյսոյն ծառեր . հոս գիշեր կեցանք : Ճամբանիս տեղ տեղ հարթ էր , բայց ըստ մեծի մասին փոքրիկ բլուրներ էին մերկ ու առանց անտառի . տեղ տեղ ալ ջուրեր ու գետակներ կանցնէին :

Սեպտ. 24 չորեքշաբթի ճամբայ ելանք ԼՇէէն երթալու համար 6 1/2 ժամ հեռի : Ճամբանիս միշտ լեռնային էր , լեռները փոքրիկ ու յանցառ (աէլլրէկ) անտառներով ծածկեալ էին , ձորերն ալ ծառերով զարդարուած : Ամէն ձորի մէջէ և ճամբուն ամէն կողմերուն վրայ ջուրեր կերթային , բայց գիւղ չէր երևար :

Էլլրէկ՝ ձորի մէջ հարթավայրի մը վրայ շինուած 50 տունով ծառազարդ գիւղ մ'է տաճկաց ու հայոց , ուրիէ ջուր մ'ալ կանցնի :

Սեպտ. 25 հինգշաբթի ճամբայ ելանք Պայպուրտ երթալու համար 5 ժամ հեռի : Նախ 2 ժամու չափ անցանք լեռներու վրայէ ու ձորերու մէջէ : Պայպուրտի 3 ժամ մնացած՝ ձորի մը մէջ , ուրիէ ջուր կանցնէր , գետնէն թթու ջուր մը կը բղաէր խառ , ուր ուխտա-

ւորներ ու հիւանդներ կերթային լրւացուելու համար ։ վերջը՝ 3 ժամ ալ շարունակ դաշտի մէջէ գացինք մինչև չե Պայպուրտ : Այս դաշտին մէջէն կանցնէր ձու լուխ(1) անուն ընդարձակ դետը, որ կերթար դէպ ՚ի քաղաքը, որ մէջէն անցնելով երկուքի կը բաժնէր . Քաղաքին $\frac{1}{4}$ ժամ մնալով դետին աշ կողմը պարտէզներ էին . ասոնց տակէն դոգյսես անտառներու մէջէ անցնելով մնանք Պայպուրտ

Պ Ա Յ Պ Ո Ւ Ր Տ (Բ Ա Բ Ե Ր Դ)

Արևելեան, արեւմտեան ու հիւսիսային կողմերէն լեռներով պատած ձորի մէջ կանաչաղարդ գեղեցիկ տեսարանով բերդաքաղաք մ'է, իսկ հարաւային կողմը դաշտավայր է, ուրկէ մտանք քաղաքը : Բերդը՝ որ կանուանի վնասաւունքն ու լուսաւունք, քաղաքին հիւսիսային կողմի ապառաժուտ բլուրին վրայ շինուած է, երկայն ու բարձը բայց հին ու քայլքայեալ տասոր մէջ եկեղեցւոյ շէնք մը կայ՝ որուն որմերուն վրայ մինչև հիմա որբոց նկարներ կը նշմարուին :

Պայպուրտ ունի 1060 տուն, 900 ը տաճկաց, 150 չայոց, 10 ն ալ յունաց . ընդ ամենը 5000 բնակիչ . թոյները ծրապիղօնի վիճակէն գաղթած են :

Քաղաքին մէջ տեղէն կանցնի ձորոխ գետը հարա-

(1) Ձուրուխ սու, Զօրուք սու . ՚ի հնումն Ծորոխ կամ ձորոխ գետ, որ Բաբերդի արեւմտեան կողմի լեռներէն բղխելով կիջնէ ու կանցնի Բաբերդին մէջէն, Ապերէն, Եւլն . եւ վերջը կիւնէ ու Պաֆում քաղաքներուն մէջէն անցնելով կերթայ Սեւ ծովը կը թափի : Շատ մը վտակներ կը նդունի իր մէջը . շատ մը կամուրջներ շինուած են վրան, եւ եղերքներըն ալ տեղ տեղ գիւղեր կը գտնուին :

ւէն դէպ 'ի հիւսիս սրընթաց խոխոջմամի . գետին եր՝ կու կողմը բաւական ընդարձակութեամբ ծառազարդ պարտէզներ կան և եղերքներուն վրայ կարգաւ ծառեր տնկուած են : Տուները այս պարտէզներէն անդին լերան ստորոտներէն սկսելով դէպ 'ի վեր շինուած՝ ընդհանրապէս քարաշէն են , տանիքն երը քուաւոր , և պատուհանները ապակիով : Քաղաքին մէջ կը գտնուի 5 մղկիթ , որոնց մէջ երեւելի է Ուլու համար լուսուածը , 8 փոքրը մէսճիս . 1 Հայոց քարաշէն եկեղեցի , 1 ալ յունաց փոքրիկ եկեղեցի Կուլք լսուած թաղին մէջ . նախակրթական դպրոցներ , 2 բաղնիք , մէկ ունչուէն , մէկ ունչուէն , սրճարաններ , 1 վաճառանոց , խաներ , ջորեպանաց օթևաններ : Վաճառանոցին մէջ գտնուած արհեստաւորներն են՝ պայտառ , երկաթագործ , գերձակ , մետաքսագործ , Բէլլիքնէ , ուրուն , մրդավաճառներ՝ որ կը ծախեն տանձ , սեխս , ձմերուկ , սալոր , չոր ծիրան , թութ , շաքար , խահվէ ելն . աժան գիներով : Քաղաքին գլխաւոր վաճառքն է մետաքսէ և ուկիթել գորդ (սէտճատէ) : Կառավարութեան բնակարանները , նոյնպէս վերոյիշեալ խաները , սրճարանները , շուկաները՝ ձորին մէջ տեղը գտնուած դաշտավայրին վրայ շինուած են :

Հայոց թաղը զատ է , գետին ձախ կողմը , և կը կոչուի Շի՞նէ Տանիչով : Գետին ձախ կողմը քաղաքին գիւղը կը համարուի Գետին մէկ կողմէն միւս կողմը անյնելու համար երկու քարաշէն գեղեցիկ ու հաստատուն կամուրջներ շինուած են . ասոնց մէկը քաղաքին մէկ ծոյրն է և երկրորդը միւս ծայրը : Բնակիչները խստակրօն , անկիթթ և մարդատեաց . Օդը առողջ , ձմեռը երկար ու բաւական ցուլտ : Ջուրը շատ լաւ չէ , բայց կէրէ և գուլք լսուած երկու աղբիւրներուն ջուրը քաղցր ու առողջարար է : Պայպուրտ ունի 150 գիւղ , 423 ը տաճ-

կաբճնակ է, և ը հայաբճնակ, 45 ը խառն հայ ու տաճիկ և 6 ը խառն յոյն ու տաճիկ :

Բարերդ՝ Մեծ Հայոց Բարձր Հայք անուանեալ նա հանդին մէջ գտնուած Սպեր գաւառին՝ որ էր Բագրատունեաց ցեղին երկիրը, գլխաւոր քաղաքն էր. Հասքանի մը օր կեցանք :

Մեպտեմբեր 28 կիրակի առոտու ճամբայ ելանք Քըրզի գիւղը երթալու համար $4\frac{1}{2}$ ժամ կեռի : Պայպուրտէն Տրապիզոն երթալու համար երեք ճամբայ կար . մէկը ձմեռնային, Զըշնա - Եւլու, որ 36 ժամ կը տե՛է . միւս ճանապարհը ամառնային, Ղուլնի Եւլու, որ 28 ժամ կը տե՛է . և երրորդն ալ ամառնային, լեռնային ու կարճ Ղուլու - Եւլու, որ 24 ժամ կը տե՛է .

4° Զըշնա ճանապարհ .

Ա. օր Բարերդէն՝ Պալախօու .

Բ. " Պալախօուէն՝ Մուրատ խան .

Գ. " Մուրատ խանէն՝ Արտասա .

Դ. " Մրտասաէն՝ Զըշնա .

Ե. " Զըշնաէն՝ Եէր—Քէօփրիւ .

Զ. " Եէր—Քէօփրիւէն՝ Ճէվիզլիկ .

Է. " Ճէվիզլիկէն՝ Տրապիզոն :

2° Ղուլաթ ճանապարհ .

Ա. օր Բարերդէն՝ Վէսէնի .

Բ. " Վէսէնիէն՝ Մէշէլիկին գլուխ պէքճիլէր .

Գ. " Մէշէլիկին գլուխ պէքճիլէրէն՝ Ճէվիզլիկ .

Դ. " Ճէվիզլիկէն՝ Տրապիզոն :

3° Ղաղթը ճանապարհ .

Ա. օր Բարերդէն՝ Էրկինուս .

Բ. " Էրկինուսէն՝ կամկիւմիւշիւ կամ Թաշ—Քէօփրիւ .

Գ. " Կիւմիւշիէն կամ Թաշ—Քէօփրիւէն՝ կամ

Քէօփրիւ—պաշը կամ Զայլըլար .
Դ. օր Քէօփրիւ—պաշըն կամ Զայլըլարէն Տրա-
պիզօն :

Վերոյիշեալ գիւղերէն կամ խաներէն զատ՝ կրդըտ-
նուին ճամբաներուն վրայ ուրիշ գիւղեր ու խաներ ալ,
ուր ճանապարհորդները կրնան իջելանիլ . բայց հասա-
րակօրէն վերոյգրեալները կը բանին : Մենք ալ այս վեր-
ջին կարծ ճամբովն երթալյարմար դատեցինք . ուստի
Պայպուրտէն 2 $\frac{1}{2}$ ժամ՝ շարունակ դաշտային վայրերէ,
ուր տեղ տեղ ջուրը պակաս չէր , յառաջ երթալով՝
հանդիպեցանք ճամբուն վրայ վարզահան անունով հա-
յոց գիւղը . ասոր գերեզմանատանը մէջ գեղեցկանկար
քանդակուած քարերով ճարտարակերտ բարձր քարա-
շէն եկեղեցիի մը աւերակը կը տեսնուէր . Ասկէ ելանք
ու 2 ժամ ալ դաշտային ճանապարհը շարունակելով մը
տանք Քըրզի անուն տաճկաց ու հայոց գիւղը ձորոխի
մօտ , ուր կեցանք գիշերը :

Սեպտ. 29 Երկուշաբթի ճամբայ ելանք Թուլ—Ք՛: Ժրէ-
երթալու համար 10 ժամ հեռի : Ճամբայ ելած ատեն-
նիս անձրև կուգար , ասատիկ ցուրտ կընէր . այսպէս
1 ժամ դաշտային ու ձորային ճամբաներէ երթալով
անցանք կամուրջի մը վրայէ և կէս ժամ ալ շարունա-
կելով դաշտավայրը , հանդիպեցանք ճամբուն ձախ կող-
մը մէկ գիւղ մը , ուրկէ ալ ելլելով կէս ժամյառաջ դա-
ցինք դաշտին մէջ ու մոտանք խան մը . այս խանէն ան-
դին 1 ժամ երթալով հանդիպեցանք լեռան վրայ գիւղ
մը , և այնուհետև 3 ժամ շարունակ երկնաբերձ լեռ-
ներ ելանք ու իջանք . ցուրտը կը սաստկանար և ա-
նլնդհատ ձիւն կը տեղար . վերջը մոտանք մէկ խան մը ,
ուրկէ ալ 1 $\frac{1}{2}$ ժամ ձորերու մէջէ ճամբայ առնելով ըս-
կըսանք դարձեալ 2 ժամի չափ լեռներ ելնել ու իջնել .

վերջը հասանք ձորի մէջ թուշ—բէօէլիւ ըսուած տեղը շինուած խանը, ուր գիշերը օժեւան ըրինք այն զգաց- մամբ, իրեւ թէ թագաւորական պալատի մը մէջ կը գըտ- նուէինք, վասն զի այս պանդոկը մեղի ապաստանարան եղաւ. այն անտանելի ցուրտին դէմ։

Սեպտ. 30, երեքշաբթի ճամբայ ելնելով, սկսանք նախ բարձր լեռնէ մը վեր ենել շարունակ մէկ ժամ ու հազիւ հասանք անոր կէս մէջքին կողմերը. այս լեռը կարծես թէ բարձր լեռներու գագաթներուն վրայ դը- րուած էր. վասն զի լերան ստորոտը շուրջանակի բարձր լեռներու գագաթմներով պաշարուած էր, որոնք ամ- պերու մէջ ծածկուած էին. իսկ մեր լեռը իր չոր ու ապառաժուտ գագաթը ամպերէն ալ վեր բարձրա- ցուցեր էր. մեր հասած տեղէն շատ բարձր էր լերան գագաթը, բայց մենք ալ երկինքներուն մէջ ամպերուն վրայէն կը քալէինք անձրևներու ու ձիւներու մէջէ. այսպէս լերան կէս մէջքն ենելնէս վերջը՝ սկսանք այ- նուհետեւ միշտ դէպ ՚ի վար իջնել Պոնտոսի ծովին հա- ւասարութիւնը գտնելու համար. եկանք ոտքերնուտ տակը գտնուած այն լեռներուն վրայ, ու մտանք ամ- պերուն մէջ, որոնք մերթ անձրևով կը թրջէին ու մերթ ձիւնով կը սառեցունէին, և մենք այս լեռներուն մերթ գագաթմներուն վրայէն՝ մերթ դառ ՚ի վայրին կողմէն, գահավէմներու վրայէ միշտ վար կիջնէինք մինչև 2 ժամ; մտանք պանդոկ մը (ճամբան տեղ տեղ պանդոկ կը գտնուէր). հոս քիչ մը հանդստանալնէս վերջը ելանք ու սկսանք շարունակել. ճամբայնիս ժամ ու կէս, և մտանք բարձր ու ձիւնազարդ. ճառերու անտառներով ծածկուած լեռներու մէջ, որոնց մէկին ստորոտէն միւ- սին գագաթին վրայ կիջնէինք սանդղոց նման. ժամ մ’ալ այսպէս երթալով, վերջապէս՝ վերջնագոյն լերան

գ.ագ.աթէն ալ ճիշդ Զ ժամէն իջանք ստորոտը՝ Մայծուցած կոչուած ձորին մէջ մէկ պանդոկ մը, ուր գիշեր կեցանք և 7 ժամ հեռի էր թաշ—Գէօփրիւէն։ Այս վերջին լեռան կէս մէջքին վրայ գիւղ մը կար, և ձորին մէջ ալ կամուրջ մը։ Անտառուտ լեռներուն բարձր ծառերուն որ ֆէնտըն, շընորի, ընշառութիւն և հիշքին էին, ձիւնապատ բուները՝ որ մինչև իրենց ծայրը առանց ճիւղերու կը բարձրանային, ճերմակ մարմարինին բարձրաբերձ կոթողներու և միւներու կը նմանէին, Գիշերը մինչև լոյս անձրև կուգար, և ձորին մէջէն վազող ջրին ձայնը՝ մերթ մրափել կուտար մերթ կ'արթնցունէր։

Հոկտեմբեր 1 չորեքշաբթի օր ճամբայ ելանք Տրապիզոն երթալու համար Յ ժամ հեռու . ճամբան ձորային էր մինչև քաղաք, բայց մենք 3½ ժամ միայն այս ձորերուն մէջէն երթալով միշտ գետանման վաղող ջուրերուն ընթացքին շարունակութեամբը, մերթ ջուրին մէկ կողմէն, մերթ ալ կամուրջէ անցնելով՝ անոր միւս կողմէն, և մերթ ալ ձորին լեռներուն զառ ՚ի վայրերուն վրայէն հասանք փայտաշէն կամուրջի մը գլուխ, ուր Տրապիզոնի կառավարիչ Խանայիլ փաշային որդին, Հայուննեայք և բարեկանէն վերատեսուչները բազմաթիւ էտէնէներու գիմաւորութեան եկած էին։

Այս ձորերուն մէջ՝ ճամբուն վրայ՝ իրարմէ քիչ հեռի փայտաշէն իջևաններ պակաս չէին անցորդաց համար շինուած։

Այսօր երկինք պատուէր ու շարունակ տեղատարափ անձրև կուգար . գետինը ճախճախուտ ճահիճ գարձեր էր և շատ տեղ ալ լիճեր ձևացեր էին։

Վերջը զարկինք գէպ ՚ի լեռը, բայց շատ գժուարութիւն կրեցինք . վասն զի լեռներուն վրայ՝ տեղ խորտուբորտ ու ծուռ ապառաժներու վրայէ անցնելու

պարտաւորեցանք, որոնց ներքեսի գահավէժները իրաւցընէ վախ ու սարսափ կ'աղբէին : Այս լեռները մինչև ծովեղերքը՝ և 3 ‰, ժամ անցած ձորելնիս՝ անտառախիտ գեղեցիկ ծառերով ծածկած էին հարուստ արտերով զարդարուած :

Լեռներուն վրայ շատ տեղ 50 կամ 60 ի չափ փայտաշէն տուներով գիւղեր պակաս չէին, և շատ տեղերու վրայ ալ իրարմէ քիչ հեռի 4 տունով բնակութիւններ կը գտնուէին :

Տրապիզոնի մէջ +15րա, հիւանդութիւնը ամիսի մը չափ սարսափելի կոտորած ընելէն վերջը՝ չորս օր յառաջ դադրած էր, և բնակչաց շատերն՝ որ հիւանդութեան կատաղի ժամանակը քաղաքը ձգելով շրջակայ գիւղերն ու լեռները փախած էին, հետզհետէ քաղաքը դառնալ սկսեր էին, բայց Կ.Պօլսոյ նաւերը տակաւին չէին հանդիպեր, և հանդիպող շոգենաւներն ալ միայն բեռերնին կը պարպէին ու ճանապարհորդներ կը ձգէին, բայց ո՛չ ճամբորդ կառնէին և ո՛չ բեռ : Մենք ալ մի և նոյն պատճառով չըմուանք քաղաքէն ներս, և մէկ ժամ հեռոի լերան գագաթը շինուած Յսման բաշաքէօշիւ ըսուած տունը իջանք :

Յսման բաշայի քէօշկը լերան վրայ բաւական ընդարձակ չէնք մ'էր, ուրկէ կ'երևար Սև ծովմինչև հորիզոնը : Հոս կեցանք 9 օր . այս միջոցին քաղաքացւոց երևելիներն այցելութեան կուդային և մենք ալ ամեն օր լեռը կելնէինք ու կը շրջէինք :

Հոկտեմբեր 9 քէօշկէն ելանք, հանդէսով մոտանք քաղաքն ու իջանք կառավարչին ապարանքը :

ՏՐԱՎԻԴՈՆ :

Տրավիդոն Աև ծովու հարաւային եղերքին վրայ երկարանիստ բերդաւոր քաղաք մ'է գրեթէ ձուաձև , Քրիստոսէ 800 տարի յառաջ շինուած : Երկայնութիւնը ծովեղերքն ՚ի վեր է արևելքէն արևմուաք , Չեմէկի՞ ըստուած թաղէն սկսեալ մինչև Այս Սօնիս անուն ճամփին , և Յ քառորդ ժամէն աւելի : Լայնութիւնը հիւսիսէն հարաւ , Մասնաւ իսէկէսէ էն մինչև եւսէ նուած ըստուած թաղին վերի ծայրը , և կէս ժամ , և շրջապատը Զ ժամէն աւելի : Հիւսիսային կողմը ծովապատ . արևելեան և հարաւային կողմերը՝ Պու—Թէկէ և ուրիշ ցածուն լեռներ ու բլուրներ : Դիրքն ընդհանրապէս հարթ , բայց ծովեղերքէն դէպ ՚ի հարաւ մեղմ զառիվեր ձևացուցած ըլլալով՝ քաղաքին հարաւային ծայրը ծովին երեսէն 300 ոտք բարձր է : Արևելեան ու արևմտեան կողմի հորիզոնները բաց ու արձակ , անանկ որ լազիստանի սահման Սթինայի մեծ հրուանդանէն ու Շամշէն գաւառի արևմտեան բարձրաբերձ ու ձիւնադէղ լեռներէն մինչև եօուող հրուանդանը , 40 ժամ տեղ , մէկ նայուածքով կերևնայ . իսկ հարաւային կողմի հորիզոնը մերձակայ լեռներուն պատճառաւ կարճ է ու ամփոխած : Տրավիդոն երկու մասերու կը բաժնուի . բերդ և արուարձաններ : Բերդը՝ երկու խորածորներու մէջ գտնուած տափարակ ու բարձր բլուրի մը վըրայ շինուած է , քաղաքին մէջ տեղէն կ'անցնի և երկու արուարձաններու կը բաժնէ զանի . ձեւ սեղանաձև երկայն քառակուսի է հիւսիսէն դէպ ՚ի հարաւ , ուրիշ քաղաքն առած է իր յունական անունը Տրավիդոն . երկայնութիւնը՝ կէս ժամ է և շրջապատը 4 ժամէն աւելի . պարիսպները լայն ու բարձր , ըստ մեծի մասին բաղ-

մապտոյս ու կրկին . շատ տեղ բարձր ու ամուր ապա-
ռամներու վրայ հաստատեալ , անկիւնի , քառանկիւ-
նի , միայարկ ու կրկնայարկ բազմաթիւ բուրդերով ու աշ-
տարակներով ալ ամրացեալ . Ունի զոյդ գուռներ՝ որոնք
ամուր աշտարակներով պատապարած են : Այս բերդը 3
մասի բաժնուած է . հարաւէն սկսելով՝ վերնաբերդ ,
միջնաբերդ և ներքնաբերդ . ասոնց դերքը հարթ է և
իրարմէ աստիճանանարար բարձր , ամուր պարիսպներով
զատուած իրարմէ : Վերնաբերդը բովանդակ բերդին հա-
րաւային ծայրն է , միւս երկու բերդերէն բարձր ու ամուր ,
բայց անոնցմէ փոքր բարձրութիւնը ծովէն 300 ոտք է .
իր հարաւային կողմի պարիսպները շատ հաստատ ու
բարձր և կրկնայարկ բուրդերով ու քառակուսի աշ-
տարակներով ամրացեալ են : Ունի այս կողմը զոյդ գուռ-
մը՝ որ կըսուի Գուլէ +աբուսը , ուրկէ կիջնեն Ղազար-
ուրէ : Արևմտեան ու արևելեան կողմերուն խորածո-
րերն ու ժայռերը անմատչելի ըրած են վերնաբերդը .
այս բերդը կը զատուի միջնաբերդէն՝ իր հիւսիսային
կողմը արևելքէն արևմտաք ձգուած ամուր ու լայն պա-
րիսպով . այս պարիսպը դուռ մը ունի՝ որ կը բա-
ցուի միջնաբերդը : Յունաց արևելեան կայսերաց գտ-
հը՝ երբեմն հոս էր , երբեմն ալ միջնաբերդին մէջ :
Այս բերդին մէջ մէկ քանի տուն կայ հիմա : Միջնա-
բերդին դիրքը ներքնաբերդէն բարձր է և հարթ ,
ձեւ քառակուսիի մօտ . իսկ իր չորս կողմի պարիսպները
ապառաժներու վրայ հաստատեալ . ասոր երկու կողմի
ձորերը շատ խոր ըլլարուն պատճառաւ՝ պարիսպները
շատ տեղ միակարդ են , բայց ամուր և լայն : Որևէ
լեան կողմը ունի երկու գուռներ . Զեղեւէնի +աբուսը
և Թաղահանէ +աբուսը , որ կը բացուին արուարձանին
վրայ , երկու գուռն ալ հիւսիսային ու արևմտեան կող-
մերը , որ կիջեցունեն ներքնաբերդը . դուռ մ'ալ հա-

բաւային կողմը, որ կը բացուի վերնաբերդը։ Հոսէ կու-
 սսկալին նորաշէն պալատը, յանցաւորաց ու մահա-
 պարտից բանտերը։ կան մեծամեծ զէնքեր երկելի
 տաճկաց, ճամփներ, բաղնիքներ, խանութներ, աղբիւր-
 ներ։ Ներքնաբերդը ծովին կսկսի ու ջէֆիէ համաներուն
 մօս միջնաբերդին կը միանայ։ Դիերքը հարթ, միայն
 վերին կողմը քիչ մը զառ ՚ի վեր, վերոյիշեալ երկու
 բերդերէն աւելի մեծ ու ընդարձակ։ Որևէ ելեան
 կողմը ծովին մօտ ունի դուռ մը՝ Պատմակ կամ Մատու-
 տուն, որ կը հանէ արևելեան արուարձանը. հիւսիսային
 կողմը Մատուն ծովահայեաց. արևմտեան հիւսի-
 սային կողմը Սունց, արևմտեան հարաւային
 կողմն ալ ինքէն կամ Զիւնոս ուզ առաջ, որոնք կը
 բացուին արևմտեան արուարձանը. դուռ մ'ալ հարա-
 ւային կողմը միջնաբերդն անցնելու համար։ Այս բեր-
 դին մէջ կան բաղմաթիւ տուներ, շուկայներ, մղկիթ-
 ներ, բաղնիքներ, աղբիւրներ, են են։ Ասոր արև-
 մտեան կողմը կը տանուի իւնի գուհանէ ըստուած երկելի շէն-
 քը՝ որ կը կարծուի թէ կուալաշուտութեան ատենէ մնացած
 ըլլայ. ճիշդ հարաւային ծայրն ալ, այսինքն, միջնաբեր-
 դի արևմտեան հիւսիսային կողմը, իւնիւս ուշ խորածորին
 եղերքին վրայ՝ ինքէն առաջանակն քով Սլէքսիոսի բարձր ու
 ամուր աշտարակը. այս տեղէն կսկսի 100 ոտնաշափ բար-
 ձը կամուրջ մը՝ որ ինքէն կամ Զիւնոս ուզ առաջանակն միջնա-
 բերդը կը հանէ։ Այս կամուրջին երկու կողմը վարէն ՚ի վեր
 հաստատ պարիսպներ շինուած են, որոնց մէջ տեղի
 նեղ ճամբայէն գետակը կանցնի։ այս անցքը ներքնա-
 բերդին հարաւային դուռն ալ կը նայ ըլլալ։ Այս ձեռիլ
 կամուրջ մ'ալ միջնաբերդին արեւելեան կողմը կայ,
 թաղաւանէ առ ջեր՝ դուզան ուրէնի վրայ շի-
 նուած։ Այս երկու կամուրջներուն վրայ ջրանցքներ կան
 բերդին ու քաղաքին մէջ ջուր առնելու համար։

Ալեքսոսի աշտարակէն կամ ինպէն ժամանակ էն դէպ 'ի հիւսիսային կողմն, այսինքն, դէպ 'ի ծով մինչև Առն ժամանակ, ներքնաբերդին արևմտեան պարիսպը կը ներկայացունէ մեծամեծ աշտարակներ կրկնայարկ ու քառակուսի . և Մօլողի արևմտեան ծայրն ալ մեծ ու բարձր չէնքի մը ամբարտակ, որ պարիսպէն զատուելով ծռած ու աւաղին վրայ ամրապինդ կեցած է : Ի հնումն այս պարիսպը մլոնի մը չափ ծովին մէջ երկնցած, անկէ ալ շրջանակաձև դառնալով դարձեալ յամաքի պարսպին հասած, և այս շրջանակին արևելեան հարաւային կողմէն ալ նաւերու համար մուտ մը ձգուած էր, որով կը ձևացունէր 300 քայլէն աւելի լայնութեամբ ամուր ու սքանչելի նաւահանգիստ մը՝ որ երբեմն Պոնտոսի մէկ հատիկ պարծանքն էր : Բայց հիմայ անոր պատերուն դիրքը միայն կը տեսնուի ջուրին երեսը տեղ տեղ ժայռի նման :

Մօլողի կողմն՝ ներքնաբերդին հիւսիսային կողմի պարիսպը 300 քայլէն աւելի է . ունի մեծ ու հաստատ պատնէշ մը Մօլողի դուռը բաւական թնդանօթներով զինեալ թշնամի նաւերու յարձակմանց դէմ : Այս կողմի պարսպին բարձրութիւնը տկարացած է ծովի զերքը լցուած քարերուն պատճառաւ . Մօլողի արևելեան ծայրը բերդին պարիսպը ծովը մնած է և ծայրն ալ մեծ, բարձր ու հաստատ աշտարակ մը կայ : Ոյս պարիսպը վերէն 'ի վայր կտրուած ըլլալով ճամբայ բայցուած է դէպ 'ի Մուհամեդ — Ենէ-արուարձանը . ասոր առջեր՝ ծովին մէջ լայն պարիսպներու մեծամեծ կտորներ կան . կերևայ որ հոս ալ երբեմն մեծ չէնք մը կը գտնուէր :

Բերդը շրջապատող խորաձորերը ներքնաբերդը հասած ատեն, արևմտեանը ներքնաբերդի մէջէն կանցնի լայն ու խոր ձևով մը, որուն երկու կողմը ա-

մուր ու հաստատ պատեր շինուած են : Արևելեանն ալ պարսպին արսաքին կողմէն կանցնի , և իր լոյն ու խոր ձեռ բերդին ամուսինը կաւելցունէ . այս ձորին եր՝ կու կողմը սրբատաշ քարերով պատեր շինուած են : Պազար քարուսիին առջև այս խրամին վրայ կամուրջ ու խանութներ շինուած են : Այս բերդը 'ի հնումն շատ հոչակեալ էր իր ձեին ու շենքին համար . բայց հիմա անպէտ , և շատ կողմերն ալ խարիսխած են :

Քաղաքին արուարձաններուն մէկը բերդին արևելեան կողմն է , և միւսը արևմտեան :

Արևելեան արուարձանը աւելի մեծ ու գեղեցիկ է և աւելի պատուաւոր . հոս կը դանուին քաղաքին մեծ շուկայներն ու խաները . երևելի թաղերն ու մեծամեծ տուները , հոս կը բնակին բնդհանրապէս քրիստոնեայ աղղերն ու եւրոպացի վաճառականները , հիւպատոսները . ուստի այս արուարձանը բուն քաղաքը կը համարուի :

Իր դիրքին նայելով երեք մասի բաժնուածի պէս է .

Ա. Ծովեղերքի մերձակայ թաղերը կամ յունաց թաղերը .

Բ. Միջավայր թաղեր կամ կեւլուր Մելունաց .

Գ. Վերին կամ հարաւային թաղերը կամ թէրէն և

Պէտ – թէրէն :

Այս թաղերը ծովեղերքէն սկսեալ իրարմէ աստիւ . ճանաբար կը բարձրանան 'ի Պօւ – թէրէն կուսանաց վանքը Երևեղերքին դիրքը զառ 'ի վեր է . հոս ընդհանրապէս յոյները կը բնակին . միջավայրը կամ կեւլուր Մելունացն իր շրջակայ թաղերովը մէկ տեղ տափարակ . հոս կը բնակին հայերը . վերին կողմին կամ թէրէն և Պօւ – թէրէն անուն հարաւային թաղերունն ալ տափարակ . ասոնք ալ տաճկաց բնակութիւն են . Ծովեղերեայ տուները աւելի խիս են . միջավայրինները իրարմէ չափաւոր հե-

ուաւորութեամիք . իսկ հարաւայիններն ընդարձակ ու գեղեցիկ ծառաղարդ պարտէզներու մէջ ցիրուցան շինուած : Արևեմուեան արուարձանի ընդարձակութիւնը թէպէտ միւսէն վար չը մնար , բայց բնակութիւնը նուազէ . դիրքը դաշտամեն , տուններն ըստ մեծի մասին անշուք ու ցրուած , մանաւանդ արուարձանի արևեմը-տեան կողմինները . ունի փոքր շուկայ մը : Այս արուարձանը Այիա Սօթիա և իմարէնի ճանեներն զատ երևելի ձեռակերտ մը չկրնար ներկայացունել , բայց կրնայ պարծիլիր պտղաբեր ծառերով զարդարուած զուարձալի ու մեծամեծ պարտէզներուն չքեցութեամբը : Տրապիզոնի արուարձաններն ու բերդը մէկ տեղ իրարուկից 30 թաղերու բաժնուած են . ասոնցմէ՝ Պատրիարքի , Գուլի—Պատրիարքի , Եհանի—Մատուածական թէրէւէ թաղերուն դիրքը ամենէն բարձր է , տեսարանը պատուական , օդը դեղեցիկ , պտղաւէտ պարտէզներով զարդարած : Տրապիզոն ունի 33000 բնակիչ , տաճիկ , հայ ու յոյն . 5000 էն աւելի տուն . 3000 տաճիկ , 1000 յունաց , 588 հայ , 140 հռովմէական և 9 բողոքական հայոց : Ասոնցմէ զատ կան նաև եւրոպացի և պարսիկ օտարականներու մէկ քանի տուններ . Ռուսի , Հելլենացւոց , Պարսից , Անդղիացւոց , Աւստրիոյ , Գաղղիոյ , Խոտանիոյ , Պելճիգայի և Բրիւսիոյ հիւպատոսարաններ . Հայոց թիւը 3987 ընդայր և ընդ կին , սրոնց 1648 ը այր . տուններն ընդհանրապէս քարաշէն սպատերով և կրկնայարկ , սենեակները սրտաբաց լուսամասներով զարդարուած . Փայտաշէն միայարկ տուններ ալ պակաս չեն . կան նաև բազմայարկ դեղեցիկ հաստատուն ու ձեւաւոր տուններ , մանաւանդ նորաշէններուն մէջ . ամենուն վրայ կղմինտր , և շատ տուն քուաւոր , ընդհանրապէս իրարու կից . բայց քաղաքին հարաւային կողմի և արևեմուեան եղերքի տաճկաբնակ թաղերուն տունները գիւղի տուններուն ման ընդարձակ ու զուար-

ճալի պարտէզներու մէջ ցիզուցան : Փողոցները նեղ ու բազմապոյտ . հիմա մէկ կողմէն քանի որ առիթ պատահի՝ կը լայնցնեն փողոցները : Բերդին մէջ 1000 տունէն աւելի կայ , ամենն այ տաճկի : ասոր մէջ քրիստոնեայները ոչ տուն ունին և ոչ եկեղեցի : Բերդի արևմտեան կողմի արուարձանին ամէն թաղերն ալ տաճկաբնակեն . միայն Սօմբա և Յարօղ ըստած ծալեղերեայ թաղերուն մէջ 200 ի չափ ալյունաց տուն կը գտնուի :

Բերդի հարաւային կողմի՝ խորէն , գուշւ—Պայը թաղերն ու Ենի—ձումայի հարաւային մասը , արևելեան պարսպին կից ուրեմն մասունքով և նապատ—հանէ թաղերը , հանունք և քաղաքին հարաւային կողմին մօտ նէրէն թաղը և Պու—թէրէ ամբողջ տաճկաց բնակութիւն են :

Արևելեան արուարձանի ծովեղերեայ մասը ամբողջ յունաց թաղեր են . այս թաղերը արևելքէն սկսելով հետևեաններն են . վեհինքն է , գուշւուն , ֆընուն մասունքով , նուշւ—վշւնք , ուշւ—ուրէն և ուրէր—ույու : Հարաւային կողմի այի ֆէլու , և Պու նէրէն արևելեան մասը , զենքնին և նէրինքն թաղերը տաճկաց ու Հայոց խառն բնակութեան թաղեր են : Ծովեղերքին ու հարաւային կողմի մէջ տեղը գըտնուած հըյուն , էմինուրէ—էմուն , ուրուրէ—օշլու , ոյ—լուին թաղերն ու հանունքուն ու ենի—նուն թաղերուն հիւտիսա . յին մասերը հայոց , հոռվմէականաց , յունաց և փոքրաթիւ տաճկաց խառն բնակութեան թաղեր են :

Քրապիզօն ունի ճամփներ , որոնց երևելիները հետևալիներն են .

Արևմտեան արուարձանին մէջ .

Այ Սօֆիա ճամփի երևելի շէնք մ'է .

Ֆարօղ Այ Սօֆիայի արևելեան կողմը .

Թէօփիւր շայըր Ֆարօղի հարաւային կողմը .

Իմարէթ Թէօփիւր շայիրին արևելեան

կողմը երեւելի շէնք մը .

Միջնաբերդին մէջ .

Օրթա հիսար ճամի Բերդին արեւելեան պարսպին
մօտ երեւելի շէնք մ՞է .

Մէկ մը " վերնաբերդի սահմանին մօտ .

Միւս մ' ալ " թապաքիսանէլ դռնէն վար :

Ներքնաբերդին մէջ .

Մէկ մը ճամի Պազար քափուի արևմտեան կողմը .

միւս մը " Սանտրքներուն մօտ .

Շուկայի մէջ .

Կէօմրիւկ կամ խքտար ճամի

Չարչը ճամի

Ալաճա խան "

Մուսլուքլար "

Միւֆտի "

Թապաքհանէ "

Հաճը գասըմ "

Եէնի ճումա "

Թաւանլը "

Թէքքէ "

Մէյտան "

Սարմաշրքը "

Մումհանէ եօնի "

Համանուն թաղին մէջ .

Համանուն թաղին մէջ .

Պօզ թէփէ թաղին մէջ .

Համանուն թաղին մէջ .

Համանուն թաղին մէջ .

24 Եկեղեցի յունաց , այլ և այլ թաղերու մէջ . մեծ
մասին շէնքը հին ու անշուք . տասն և մէկը շարունակ
բաց , տասներեքը ամիսներով փակեալ . ասոնց գլխա-
ւորները հետևեաններն են .

Ա.յ—Պանտի . ընդարձակ բարձր կամարակապ նո-
րակառոյց . Դէմէ—Դայս թաղին մէջ .

Ա.յ—Ղորդու , եպիսկոպոսական եկեղեցի . Թուղթը—
չէշմէ թաղին մէջ , առաջինէն աւելի մեծ ու գեղեցիկ .
Դերքը շատ բարձր , ծովահայեաց , ապառաժի վրայ

հաստատեալ. ասոր շինութիւնը դեռ աւարտած չէ։ Հոս
է յունաց եպիսկոպոսարանը։

Այ—Ղասիլ, համանուն թաղին մէջ։ Յուստիանոս
կայսեր ժամանակը շինուած։

Սուրբ Աննա, նոյն թաղին մէջ։ շատ հին ու խար-
խուլ վիճակի մէջ։ ասոր բարձր ու ծովահայեաց դիր-
քը շատ զաւարճալի է։

Սուրբ Աստուածածին։ ապառաժէ փորած մեծ ե-
կեղեցի։ քաղաքին հարաւային ծայրը Պու—Աքէ լերան
գագաթը՝ կուսանաց վանքին մէջ։

Այս վանքը 150 քայլ երկայնութեամբ և 50 քայլ
լայնութեամբ պարիսպով շրջապատեալ է։ ունի շատ մը
փոքր աենեակներ կուսանաց համար։ գեղեցիկ տեսա-
րան մը, պատուական ջուր մը՝ որ մէջէն կը բդիսէ։ Ա-
ւանդութեամբ կըսեն՝ թէ յունաց կայսերութեան ժա-
մանակ ջրապիղօնի մէջ 360 եկեղեցի կար։ քաղաքը
տաճկաց ձեռքն անցնելին ետև անոնցմէ շատը ճամի,
բաղնիքի և ուրիշ բաներու վիտնուած են։ մէկ մասն
ալ քակերով տուներու ու պատերու շինութեանց գոր-
ծածեր են։ հիմա անոնց աւերակաց նշխարները միայն
կերևին ցիրուցան։

Երեք եկեղեցի ջայոց, հին և փոքր, և կառուցեալ յու-
նաց վերջին թագաւորաց ատեն, այսինքն, 500 տարի
յառաջ։ որք են Ա. Սուրբ-Օքսէնտ կամ Առաջնորդարանի
եկեղեցի։ Մէշտանի մօտ հիւսիսային կողմը, պարսպա-
պատ, ունի գերեզմանատուն մը, որուն մահարձանները
ձիթենիներով ծածկուած են։ Բ. Սուրբ Ստեփանոս
կամ Զարխափան։ պարտպապատ, ունի ընդարձակ գե-
րեզմանատուն մը ձիթենիի ծառերով։ այս կողմերը հին
սովորութիւն է գերեզմանատան մէջ ձիթենիի ծառ-
տնկելը։ Գ. Սուրբ Յովհաննէս։ Զարխափանի արևմտեան
կողմէ 250 քայլ հեռի։ մեծ շուկայի արևելեան ծայրը

Պէրպէտ օղու ըստած տեղը . ունի վտքը գերեզմանաւուն մը շրջապատի մէջ :

Մէկ եկեղեցի հռովմէականաց Սուրբ Աստուածածին անուն , հին ու հաստատ չէնք , հինդ կամարաշէն խարաններով , կիու—Ալէքսի ժամանակը շինուած . ունի գերեզմանասուն մը :

Մէկ եկեղեցի լատինաց ֆրէնէ—ճահակէուի թաղը :

Մէկ գեղեցկադիր առաջնորդարան հայոց , եռայրկ և ծովահայեաց . մէկ առաջնորդարան հռովմէականաց , եկեղեցոյ մօտ ուղարկութեան մէջ փողոցին հիւսիսային կողմը : Մէկ դպրոց հայոց քարաշէն , մեծ , քառայարկ , քառակուսի ձեռով . հոս երկու սեռէ 600 ի չափ աշակերտներ կը կրթուին զանազան ուամանց ու լեզուագիտութեան մէջ . մէկ ուսումնարան յունաց , մեծ ու ծովահայեաց , ուր կը կրթուին 400 ի չափ աշակերտներ՝ ուսմամբ ու լեզուագիտութեամբ : Երկու ալնախակըթական դպրոցներ ՀՅՀ կը և ԱՌՀ թաղերուն մէջ : Մէկ աղջկանց դպրոց լատինաց , Բարչւը—Վշտ թաղը , ուր հայոց ալ բազմաթիւ ազգայք ու աղջիկներ կ'ուսանին : Մէկ արքունի դպրոց՝ որ ժամանակէ մը 'ի վեր փակեալէ : Մէկ քանի նախակըթական դպրոցներ տաճկաց : Տասն եւ երկու հատ բաղնիք .

Սրեւելեան արուարձանին մէջ՝ որք են .

Քէհեա օղու , Փաշա , Ալանա , Զուքուր , Քեաւուր :

Ներքին բերդին մէջ՝ որք են .

Մօլոզ , Ռւզուն—օղու , Մէյտան , Եօքիւզ—օղու :

Միջին բերդին մէջ՝ որք են .

Զիգստէ , Գուլէլի :

Զիղանսոի դռնէն դուրս մէկ մ'ալ՝ որ է իմարէթհամամը :

Մէյտան , Փաշա , և Զիգստէ բաղնիքները զոյտ են . մէկ արանց յատկացեալ , և միւսը կանանց . միւս

բազնիքները մինչև կէս օր պրանց յատկացեալ են, և կէս օրէն մինչեւ իրկուն կանանց ։ Արանց համար աղջաց խարութիւն չըկայ . բայց քրիստոնեայ կանոյք եւ բեքշարթի և շաբաթ օրերը միայն կրնդունուին, վասն զի միւս օրերը մահմէտական կանանց յատկացեալ են :

Վաճառականաց պանդոկներ ու քարաշէն կամարակապ բաշունէր, խանութներ, պեղենին մը. Պէտք ։ Անուն շուկայ մը, մաքսատուն, գործնէնիւն մը, մը թերանոցներ ։ Ասոնց ամէնն ալ արեւելեան արուարձանին մէջ կը գտնուին, և ծովեղերքէն անմիջապէս սկըսելով դէպ ՚ի արեւելք ու հարաւ տարածուած են, և օր բատ օրէ ալ աւելնալու վրայ են :

Խաներուն անունները արեւելքէն սկսելով հետևեալներն են .

1 Մէյտան խանը

2 Քէհեա օղլու կամ Ոճէմ "

3 Հաճի եահեա օղլու "

4 Սուլու "

5 Թարաշկէվա "

6 Տաշ "

7 Ալաճա "

8 Կիրիղին "

9 Փաշաեան օղլու "

10 Եալը "

11 Կէօմիիւք "

12 Կըի քարուլը "

13 Հաճի քասոր օղլու "

14 Միւլֆիթի "

15 Կէօմիիւք "

Մէյտան, Գարաշկէվա, Տաշ, Ալաճա և Փաշաեան օղլու պանդոկներուն մէջ կը նստին քաղաքին մեծ վաճառականները ։ Պէտքնէն ը՝ քառակունի ձեռով հին շէնք

մ'է Զորից հանուին քով. մէջը դերձակներու ու բամպակ ծախողներու խանութներ կան : Պարիսպները բարձր ու ամուր, քարերը հրկիղութեանց պատճառաւ հին ցած : Ունի երկաթեայ չորս դուռ իր չորս կտղմերուն վրայ դէմ առ դէմ . մէջ տեղն ալ հոր մը անուշ ջուրիւ կը կարծուի : թէ այս շէնքը՝ ի հնումն քաղաքացւոց ապաստանարանն եղած ըլլայ ծովասպատակաց երեսէն՝ Մաքսատունը հին ու հաստատ շէնք մ'է կրկնայարկի և ծովահայեայ : Քարանթինան՝ որ կըսուի կիւռչւ— ուրայ, երելի շէնք մ'է կրկնայարկ, եռայարկ և պարսպապատ, զոր 1740 թուականին իւչիւննիւ օղու Ահմէտ փաշայն շինել տուած է նաւահանդստին արևմտեան կողմը՝ կլէուսաի գագաթին վրայ : կլէուսա՝ հրուանդանի պէս ծովը մտած, և քառակուսի դիրքով ուղղաբերձ կանգուն ապառաժ սար մ'է, երեք կողմերը՝ ծովին երեսէն 60 որնաշափին աւելի բարձր, և գագաթը հարթ . այս հարթ գագաթին վրայ հին ատենի կամարակապ ամուր շէնքերու և եկեղեցիի մնացորդներ մինչև հիմա կը գտնուին . Քարանթինան ալ ասոր վրայ շինուած է :

Այս սարը՝ հարաւային կողմէն՝ պարանոցի պէս նեղցամաքով մը ցամաքին կյուած է : Նոր ճամբան այս ապառաժին տակէն կանցնի և կիրճի մը ձեւ ունի, ներքին կողմը ծով, և վերի կողմը անմատչելի ապառաժ . սյս ճանապարհը փորած ժամանակ երկու մեծ դատարկ քարայրներ դտնուեցան . Քարանթինային պարիսպները շուրջանակի բարձր ու ամուր են, ունին ցած ու փոքր դուռ մը հիւսիսային կողմը՝ ուրկէ քարակը տուր աստիճաններով լիտանգաւոր ճամբէ մը ծովը կիջնան . և մեծ դուռ մ'ալ հարաւային կողմը, ուրկէ նաւամատոյցը կիջնեն : Այս շէնքը ողջ զահիկ առուն ըլլալէն զատ մեծամեծ թնդանօթներով զինեալ ըլլալուն

պատճառաւ , նաւահանգստին ու արևելեան արուարձանին պահպանութեանը համար բերդ մը կամ մարտիրօց մը կը համարուի . նաև քաղաքին պատերազմական զինուց մթերանոցներէն մէկն է : Սրեւելեան արուարձանի ծայրը կամ նաւահանգստին արևելեան ծովեղերքին վրայ ալ քարաշէն փոքր մարտկոց մը կայ թէւէ — թողէս անուն . որ կը պահպանէ քաղաքն ու նաւահանգիստը թշնամի նաւերու յարձակումէն , և պատերազմական զինուց ալ մթերանոց է :

Քաղաքիս մէջ կան երկու հրապարակներ . կեան վուր Մէյտան և Գապաք — Մէյտան : Առաջինը արևելեան արուարձանին մէջ քրիստոնէից թաղերուն մէջ է . ասոր չորս կողմերուն վրայ օրէ օր նոր շինութիւններ աւելնալով իր՝ նախկին ընդարձակութիւնը կորսուած է . և հիմա ունի միայն 280 քայլ երկայնութիւն և 150 քայլ լայնութիւն . ասոր կեդրոն սեղը Շառընուան մը կայ , չորս հին մարմարիոն սիւներու վրայ հաստատած լայն կամարակապ չէնք մը , որուն չուրը դադրած է հիմա . Երկրորդն ալ՝ արևմտեան արուարձանին մէջ՝ Այս Ս: ֆէնչ մօտ է , և առաջինէն վեց անդամ աւելի ընդարձակ . Պայրամի օրեր այս հրապարակները . կը լեցուին պարսղաց խուռան բազմութիւն : Կան պտղալից ծառերով զուարճալի . ընդարձակ զբօսավայրեր , ուր քաղաքայիք միշտ կը յաճախեն մանաւանդ կիրակի օրերը : Արևմտեան արուարձանին մէջ՝ Այս — Ս: ֆէնչ , Գուշաւ — Մէյտան և Թէւէիւր — Զոյքը թաղերուն պարտէզները . Գուլէ պոյը , Ենչ — հոսմա և պօզ — թէիի թաղերուն պարտէզները արևելեան արուարձանի՝ Տէյէրէն — ուրէն քէօվրիւսիին շրջակայ վսյրերը՝ որ թէպէտ ծառազարդ չեն , բայց մէջէն հոսող գետին խորոշաւոր ընթացքովը զուարճալի զրօսավայր եղած են : Տրապիզոն Մօլոզէն մինչև կլէուսա ունի եօթն նաւ-

ւահանգիստ . որք են , Մալու , Մոռահան — Եռէւ , Քէմէր
— Քաշ , Թաղ — Թէրէւ , Թաղաւը — Հէլմէ , Գանիլու — Հէլէիմէ .
այս վերջինը արևելեան կողմն է և միւսներէն ընդար-
ծակ ու ապահով , բայց ծանծաղ և արև մտեան հիւսի-
սային սաստիկ հովերուն առջև գտնուելով՝ նաւերը
չեն կրնար հոս ձմերել . ուստի կը պարտաւորին երթալ
Սիւրմէնէ կամ Փլամանա ձմեռն անյունել . Ամենէն
բանուկ նաւահանգիստներն են Մոռահան — Եռէւ և Մօ-
լոլ : Մովեզերքներուն վրայ տեղ տեղ բնական ապա-
ռաժներ կան . Քաղաքին մէջէն կանցնի երկու ձորակ
և երկու դետակ : Երկու գետակները կանցնին բեր-
դին երկու կողմի խորաձորներուն մէջէն . երկու ջորակ-
ներն ալ արևելյան արուարձանին մէջէն . ձորակին մէ-
կը քաղաքին արևելեան ծայրն է , և 1000 քայլ ճամ-
բայ կընէ . ասի զառ ՚ի վայր հեղեղաս մ'է , որ կըս-
կըսի Պօլ — Աէտէ լերան արևեմտեան հիւսիսային կողմէն
և համանուն թաղէն անցնելով կիջնէ Զէօնցէն թաղը , և
շատ տեղ տուներու ու ճամիներու տակէ անցնելով կը
թափի ծովը : Միւս ձորակն ալ Պօլ — Աէտէ լերան ա-
րևեմտեան կողմէն կ'սկսի և Ենի — ճանա թաղին հա-
մանուն մզկիթին հիւսիսային կողմէն և շատ տեղ ալ
չէնքերու տակէ անցնելով կը հասնի Զօնտուք : համամ ,
անիէ ալ նոյն ձևով կիջնէ թաղաւու — հանէ ու կը խառ-
նուի Պօնցւան — Դէքէ : Երկու ձորակներն ալ տակաւա-
ջուր են , և ընթացքնին կարճ : Գետակին մէկը՝ քա-
ղաքին ճիշդ միջավայրէն կանցնի , և կը կոչուի Պօնցւան
— Դէքէ : այս գետակը Պօլ — Աէտէ լերան արևեմտեան
հարաւային կողմէն , ըսել է քաղաքին արևելեան հա-
րաւային սահմանէն կէս ժամ հեռուէն կ'սկսի , և Ենի
— ճանա թաղին ու բերդին մէջ տեղէն անցնելով կը
ձեւացունէ բերդին արևելեան խորաձորը . դէպ ՚ի
հիւսիս մէկ ժամու շափ ճամբայ առնելով կը հասնի

քիչ ջուրով Մուհան — Եօնէ նաւահանդստի առջևի ծովը : Միւս գետակն ալ կը կոչուի Իւիւէ — Պու. կ'սկսի Տրապիզոնին մէկ ժամ՝ հեռի հարաւային կողմէն, և քաղաքին մօտենալով կը մեծնայ ու կը ձեւացունէ բերդին արեմաեան խորածորը, և վերջը բաւական ջուրով կանցնի ներքնաբերդին մէջէն ու ծովը կը թափի Մօլոզի գուռնէն :

Տրապիզոնի ամէն կողմի վողոյներուն մէջ կը գըտնուին աղբիւրներ այլ և այլ ջուրերու, մանաւանդ Ցէմէնքն՝ արէն ու Զիւրմէրայի ջուրերուն։ Ամենէն առատ և քաղաքացւոց առ հասարակ գործածած ջուրը Ցէմէնքն՝ ուրէն գետինն է։ Այս ջուրը՝ քաղաքէն Յժամ հեռի Խօսւ ողլու ըստուած տեղէն՝ լայն ու ամրածածուկ ջրանցքով մը դարսով կը թափի նախ կեակուր — Մէյրաէ արեւելան ծայրը մեծ ու հաստաշէն ջըրարաշխի մը մէջ, անկէ ալ իր մեծ մասը Գոււէ — Պայտէն բարձր կամուրջի մը վրայէն կանցնի բերդին մէջ։ մասցածն ալ քաղաքին այլ և այլ թաղերուն փողոյներուն և սուներուն կը բաժնուի։ Այս ջուրը՝ 23 տարի առաջ Խաղնատաք ողլու Օսման փաշա անուն անձը բերել տուած է իր ծախքովը, որուն ջրանցքներուն նորոգութեանը պէտքին համար ալ կալուածները յատկացուցած է։ անկէ առաջ քաղաքացիք շատ նեղութիւն կը կրէին։ հիմա ալ երբեմն այս ջուրին կտրած ատեն դարձեալ կը նեղուին։ Այս ջուրը բարձրը թաղերուն մէջ դացած շըլալուն համար՝ նոյն թաղցցիք միշա ջուրի նեղութիւնները աղէկ չեն։ անձրէի ատեն մէկ քանի օր հետը կարմիր տիղմ մը կը բերէ՝ որ աղբիւրները կը լեցունէ։

Զիւրմէրայի ջուրը՝ 2 ժամ հեռի համանուն դիւղէն խողովակներով բերած և աղբիւրներու բաշխած

են, որուն վերջին ծայրը Ուռան — Սօհուկ վողոցին հին աղբիւրը հասած է . այս ջուրը պղէկ՝ բայց քիչ է, միայն եւնէ — ձուճոչ աղբիւրներուն ու տուներուն կը բաւէ :

Երևելի աղբիւրներն են . Խուճոր, Այ, — Ֆէլեղո աղբիւրը՝ յոյն եպիսկոպոսի մը աղջիկ շինել տուած է . ասոր վրայ 1500 տարւոյ յիշատակարան կայ . Թէրովէ Պաշտին աղբիւրներ և Հաճի Օսման Գույուսը ջրհորը որ Զէօմէլէկնի և Այ-Ֆէլիոթաղերուն մէջ են : Թագաւոր հոգէ բարեհամ աղբիւրը՝ Պու — Էւէի թաղին մէջ : Գուողան — ուրէի աղբիւրը . Գուուէի դրան դէմ ձորին մէջ : Այս — Աւագին հարաւային կողմի պարտէղներուն մէջ՝ ճամբարուն վրայ գտնուած երկու աղբիւրները : Կիման բարեխառն . է . օդն ընդհանրապէս լաւ . երկինքը մառախլապատ, ծովեղերեայ թաղերուն օդը խոնաւ ու վատառողջ . բարձր թաղերունը խոնաւ՝ բայց առողջ : Օդին այսպէս խոնաւութիւնն ու երկինքին մառախլապատութիւնը մինչև Պոնտական լեռներուն կատարները կը հասնին . լեռներուն միւս երեսի, այսինքն, հարաւակողմի օդը միշտ չոր է դրեթէ, և երկինքը բաց . վասն զի հեռի են ծովէն ու անտառներէն : Տիրող հովերն են արեւելեան, հիւսիսային, արևմաեան և հարաւային հովերը . օդոստուխն ետքը գիշեր ցորեկ լեռներուն հարաւային հովերը կը փաւն : Զմեռը մէկ քանի օրէն աւելի ձիւն չը նստիր :

Տրապիդօնի բնակիչներն ընդհանրապէս քաղաքավար, բարեբարոյ, աշարուրծ, աշխոյժ և աշխատասէր մարդիկ են . ո՛չ զդեստի համար զեղսութիւն ունին, և ո՛չ ուտելիքի և ըմպելիքի շուայլութիւն . Յոյներն աւելի ուսումնասէր, դործունեայ և արթուն, բայց սնապանծ, հպարտ ու արհամարհու են : Հայերն ուսումնասէր, աշխատասէր, գործունեայ, լեզուագիտու-

թեան փափաքող։ Տաճկաց մեծ մասը՝ առաջին, շնչար, առընդի, էւժնչնի, դաժաւ, ժայռնի, էնդին, բնապետ են աղքատ վիճակի մէջ։ Փոքր մասն ալ դազազ, էքտար, չուհաճի և վաճառական։ Յունաց արհեստաւորներն են բրուտ, ատաղձադործ, նաւակերտ, որմնադիր ու քարհատ։ Հայոց արհեստաներն են պղնձագործութիւն, ամեն տեսակ սատայնանկութիւն բամզակի ու մետաքսի, հողադործութիւն, հիւմնութիւն, սափրչութիւն, կերկարարութիւն։ Յունաց և Հայոց խառն արհեստաներն են ոսկերչութիւն, ասիական ու եւրոպական հագուստներու դերձակութիւն, սօլկարութիւն, դունտուրաճութիւն, դարբնութիւն, մայիֆաթուրաճութիւն և նաւաստութիւն։ Վաճառականութիւնը յունաց և տաճկաց ձեռքն է։ Քաղաքիս առևտուրը Ան ծովի ամէն կողմերուն հետ է, և իր յարաբերութեան գլխաւոր տեղերն են Կ. Պօլիս։ ուրկէ կուգայ եւրոպական ամէն տեսակ ապրանքներ, հագնելիք, զէնք, երկաթեղէններ, առաջաստի կոտա, չուան, շաքար և լին և լին։

Իումելի և Թունայ։ ուրկէ կ'առնէ ցորեն, հաճար, լազուտ, մեղր, դառան և ուլի և արջառաց մորթ, թումելիի երկաթ, երկաթեղէն ապրանք, ապա, և լին։

Կէրճ և Ո.աստով։ ուրկէ պատուական ցորեն, այիւր, մաքարօն, ղալեթա, բուրդ, հաստ տախտակ, կաշի, աղ, ձող, երկաթ և լին։

Չէրքէզ և Վրաստան։ ուրկէ լազուտ, ցորեն, իւղ, մեղր, մոմ, և լին։

Սօխում և Պաթում։ ուրկէ թիրսի ձուկ։

Թրիազօլի և շրջակայները։ ուրկէ առատ գինի, բրինձ, ամեն տեսակ պտուղ և ատաղձ։

Ճէնիկ, Օրտու և Ասմաօն։ ուրկէ ցորեն, ալիւր, բրինձ և շատ թիւթիւն։

Սինապ · ուրկէ՝ տախտակ , ատաղձ և շագանակ ·
կղղիները · ուրկէ՝ սապօն , ձեթ , ձիթուն , դինի ,
լիմոն ևն :

Պոնտոսի ծովեղերքները · ուրկէ՝ ամեն տեսակ ու-
տեղիք և պտուղներ :

Յամաքի կողմէն ալ գլխաւոր յարաբերութեանց
երկիրներն են .

Բաբերդ , Երզնկա , Դերչան և Կարին · ուրկէ
կուգայ ցորեն , դարի , ալիւր , ամէն տեսակ պտղեղէն
և կթեղէն :

Կիւմիւշխանէ · ուրկէ՝ պատուական տանձ , Խըն-
ձոր , չոր թութ և ուրիշ պտուղներ :

Հալէպ , Շամ , Տիարպէքիր · ուրկէ՝ կապուտ կը-
տաւ , ամէն տեսակ կէղի , զութնի , և թարապուլու-
սի գոտի :

Մուսուլ · ուրկէ՝ սաւան բամպակէ :

Պարսկաստան · ուրկէ՝ ամէն տեսակ բրդեղէն ,
շալ , մետաքսեայ գործուած , սաւան , հրձուկ , ձկան իւղ ,
գինի , խնձոր , փորթուքալ , լիմօն , սոխ , փաթաթէս ,
փալամուտ , լոր , ձու , մանած , կանեփ , ձեթ , ձի-
թուն :

Թիւթիւնը կը զրկեն թիֆլիդ , կերճ , Երզնկա ,
Կարին , Պօլիս : Կաղինն ու լուբիան՝ Պօլիս , Ո.ուսիս ,
Հայաստան · իւղ , խնձոր , մոմ , լոր , ձու 'ի Պօլիս . լի-
մօն , սոխ , փաթաթէս , փալամուտ 'ի Ո.ուսիս . քթա-
նը 'ի Հալէպ , 'ի Շամ , 'ի Պարսկաստան :

Տրապիզոնի բերդերուն ու մթերանոցներուն պահ-
պանութիւնն և հսկողութիւնը մէկ քանի հարիւր թօփ-
ճի ըսուած երկրացի զօրաց յանձնուած է . ասոնք փո-

փոխակի գիւղերէն կուդան և շատ տարիներ կը վարեն այս պաշտօնը քաղաքացւոց ընկերութեամբն և վերջը ազատ կըլլան : Տրապիզոնի անմիջապէս արևելքան հարաւային կողմը կայ Պօլ—Շեհէ անուն ուղղարերձ լեռը՝ Պոնտական լերանց (1) վերջին ծայրը, ծովին երեսէն 1000 ոտնաչափ բարձր . Այս լեռն ելնելու համար միայն մէկ ճանապարհ մը կայ արևմտեան կողմէն, ուրիշ կողմերէն անհնար է ելնել :

Պօլ—Շեհէ հիւսիսային դիերքին արևմտեան կողմը զուարճալի տեսարան մը կը ներկայացունէ իր դալարագեղ վայելզութեամբը . իսկ արևելքան կողմը , այս սինքն , էլէուսայի հանդէպ տիսուր ու ահարկու պատկեր մը , Ղը—Պ-Ռ-Լ կոչուած իր երկորածիդ ապառաժներուն պատճառառաւ . այս ապառաժներուն վրայ կան վիմափոր բարձր մատուդներ և այաղմա : Լերանը դադամբը լեռնալաշտակ մ' է կանաչաղարդ , որուն կեդրոնը կիսաւեր վանք մը կայ յունայ , ընդարձակ

(1) Պոնտական լերինք՝ կըսուին այն լերանց գօտինել՝ որ Աւեւ ծովի եղերքէն սկսեալ ևւ հետզհետաէ բարձրանալով կանջրագետուն հին Պոնտոսի ևւ խաղուեաց ահարկու սահմանները , եւ Պոնտոսի արեւելքան հարաւային մասը պարսպելով կը հասնին Աթինա ըսուած ծովկերեայ աւանը , որ կը կարծուի՝ թէ հին Պոնտոսի արեւելքան սահմանալուին եղած ըլլայ . եւ արեւմտեան կողմէն ալ կը ձգին մինչեւ հանիկ նահանդը : Այս լեռներուն բարձր կատարներն են Չաղը — էեօւ ևւ Դարքան կոչուածները , Տրապիզոնին 42 ժամ հետի : Պոնտական լերանց հիւսիսային երեսն ընդհանրապէս անտառային է , իսկ հարաւային երեսի խիստ բարձր կողմերուն վրայ միայն ընդհանրապէս խիստ քիչ ծառ կը զըտնուի :

շրջապարիսապներով, որոնց հիմայ հիմերը միայն կերեւին . Այս վանքին մօտ ջրհոր մը կայ և կիսով չափ լեցուած ու խանգարած . գետնափոր ճանապարհ մը՝ որ լերան արևելեան կողմի Ղըռ . — Պաթալի վիմափոր եկեղեցին կը հանէր : Վանքին մօտ ու արևելեան հիւսիսային կողմը՝ կայ Անդրէան — Տերեւէ գերեզմանն ու Տերէններու Մէկընէ մը շինուած 1863 ին, որուն չորս կողմի վայրերը անտառանման զարդարած են պտղաւէտ ծառերով :

Գաղըրլը և Զիղանայ լեռներէն երկու վտակ կիջնէ . որոնք Գալիեան ու Մաչկա ձորերէն անցնելով կուգան Միւհերծի ըսուած տեղը՝ Տրաղիղօնէ 4 ժամ հեռի, և իրարու հետ միանալով կը շինեն Տեյքէն ու էւէսէ անուն գետը : Այս գետը քաղաքիս արևելեան կողմէն կէս ժամ հեռիէն կանցնի ու կը թափի ծովը, ծովեղերքին մօտ երկու կարգ բազմաթիւ ջրաղացներ գարձունելով ։ Մովիէն կէս մըն հեռի, ջրաղացներուն արևելեան կողմին մօտ գետին վրայ հաստատ ու գեղեցիկ կամուրջ մը շինուած է չորս բարձր կամարով : Կամուրջին շրջակայ վայրերը դաշտաձեւ գեղեցիկ հովտի մը վայելուչ տեսարանն ունին . ասոնց դալարագեղ ճոխ անդաստանները, ջրաղացներուն առուներուն եղերքները բուսած վարսաւոր ուռիներն ու երերուն հսկայ կադամախները, առուներուն ու գետին խոխոջաւոր ձայները գուարճալի զրոսավայր մը կը ներկայացունեն, ուր ամէն կիրակի խուռն բազմութիւն մը կը գիմէ : Տրապիղօնէ 1 ժամ հեռի արևելեան հարաւային կողմը՝ բլուրի մը վրայ վանք մը կայ Հայոց, ամենափրկիչ անուն . տաճկերէն շէմսէտլէ հաւատը, որուն հողը Ստեփաննոս Շէմսէտլեան անուն հայ իշխան մը՝ 1424 թուականին (պհգ հայոց) կիւ Ոլէքսի օրովլ՝ երբ հայերը սկսեր էին շատնալ քաղաքին մէջ, յոյներէն ծախսու առնելով, կա-

ռուցեր էր այս վանքը : Եւ հաստատած էր միաբանութիւն մը՝ որուն յանձնած էր վանքն ու անդաստանները : Այս վանքը ունի մեծ ակառոյց քարաշէն եկեղեցի մը երեք մատուռներով , բարձր ու քարաշէն զանդակատուն մը . հիմայ մէջը միայն մէկ պահապան և մէկ ալ քահանայ կայ : Այս վանքը հին ատեն շատ ճոխ , հարուստ և ընդարձակ էր և ըստ մեծի մասին քարաշէն , ամուր պարիսպներով շրջապատեալ :

Վանքին արևմտեան հարաւային կողմը և քիչ հեռի երկու աղբիւր կայ . կաթնաղբիւր և լուսաղբիւր . ջուրը կորած և ճամբայները խանդարած : Վանքին անդաստանաց արևմտեան հիւսիսային սահմանին վրայ բլրի մը ծայր կերեին սուրբ Մամաս անուն եկեղեցիի մը չորս կողմի պատերուն մնացորդները , դոր հիմայ շիւլ +իւն+ կանուանեն . Հայերը՝ Անիէն և Շամշինէն ծրապիգօն գաղթած ատեն՝ կերեսի որ նախ հոս հաստատած են իրենց բնակութիւնն և երկար ժամանակ անցնելէ վերջը մտած են քաղաքը :

Ցամաքի կողմէն Տրապիզոն երթևեկելու համար երեք ճանապարհ հայ. արևելեան , արևմտեան , հարաւային : Արևելեան ճանապարհը Սիւրմէնէ կը հանէ . արևմտեանը՝ Բլաթանա . հարաւայինը՝ որ կըսուի Խըւրուսու Եօլը , ՚ի կարին : Այս վերջին ճամբան՝ քաղաքին հարաւային կողմի Պուրեւէ թաղէն՝ համանուն լերան վրայ ենելով դէպ առաջ կերթար . բայց հիմայ չը բանիր : վասն զի կառավարութիւնը անցորդաց դիւրութիւն ըլլալու համար մէկ քանի տարի առաջ նոր կառուղի ճանապարհ մը շինել տուաւ : Այս նոր ճանապարհը՝ Ա.յ— Ֆիլիպօ թաղէն սկսելով՝ կանցնի Էլքուսոյն կիրճը , անկէ կը դառնայ դէպ ՚ի հարաւ և կիջնէ Տէյքմէ ուրէնէ ձորն ու գետին ձախ եղերքն ՚ի վեր երթալով կը համնի Խու— օլուն և մինչեւ Միւհիւնի ճի ըստած տեղը 4 ժամ հեռի քաղաքէն , ուր կը նըս-

տին անցագրերու ու մաքսի քննիչները . այս տեղը կը միանան գետի արևելյան ու արեմտեան ճիւղերը , ինչպէս նաև կարնոյ ամառնային ու ձմեռնային ճանապարհները . կարնոյ ձմեռնային ճանապարհը՝ որ կէ-մ-շ-ն-ե-ւ էր կըսուի , արևմտեան կամ Մաշկայ ըսուած ձորէն կը բանի : Ամառնայինը՝ կամ +աշտր—Շուլը՝ արևելեան կամ դալիեան ձորէն : Այս երկու ճանապարհներն ալ դժուարուտ տեղեր ունին անցնելու :

Զմեռնային ճանապարհ կարնոյ.

Մէ-հէ-բէն Մ-ու-ն-ոյ ձորով 2 ժամ ճամբայ առնելով կերթաս ձեռիւլվէ . անկէ 4 ժամյառաջ երթալով Եւր—ուստիշ . ասկէ ալ 2 ժամ դէպ 'ի հարաւ՝ Ձիղանայ լերան ներքեւ՝ Պէքճիւլէր ըսուած տեղը , ուր անտառները կը վերջանան . Պէքճիւլէրէն ալ լերան միւս երեսն անյնելով 2 ժամու մէջ կը հասնիս Մ-ու-ն-ի-ա-ն-ը . ասկէ 4 ժամ դէպ 'ի հարաւ Տօռալ դաւառի Արդարա աւանը . Արտասաէն դարձեալ դէպ 'ի հարաւ 6 ժամ կիւմիւշ խանէ քաղաքը . անկէ միշտ դէպ 'ի հարաւ ճամբայ շարունակելով 5 ժամէն ջին կամ Մ-ու-ն-ոյ ուլը դիւղը և մէկ ժամ հեռի ձնիւլիւ կամ կողանց դալէսի գիւղը . ասկէ անդին ժակուտ բար լեռն անցնելով 4 ժամէն Պալախօռ և 2 ժամ անդին լուն , ուրկէ 2 ժամ հեռի Բարերդ . Տրապիզոնէ Բարերդ այս ճամբան ճիշդ 38 ժամէ :

Կարնոյ ամառնային ճանապարհ .

Միւհիւրճիէն 2 ժամ երթալով կը հասնիս Գալլէան Զայիլները . ասկէ 4 ժամէն կէ-մ-շ-ն-ե-ւ լեռնագադաթը , 2 ժամէն Գաղըքը լերան կեդրոնը . ասկէ ալ 2 ժամու մէջ վար կիջնես Դու—+էօֆէնէ գլուխը : Տու—+էօֆէնէ 2 ժամ դէպ 'ի հարաւ կը մոնես Զորաճի ձորն ու իջեվաններն , և 1 ժամ հեռի Քէլիւ—+էօն ու իջեվանը . անկէ 5 ժամ շարունակ քալելով Քըն օկ ըսուած ընդարձակ դաշտավայրը կը հասնիս Թորոսանց դիւղն ու իջեվան .

ներն . ասկէ անդին կսկսի Բարերդու արևելեան դաշտը , որուն մէջ 2 ժամյառաջ երթալով կը հանդպիս կը զէ . անկէ 2 ժամ ալ հեռի Վարչական հայոց գիւղերը , և 2 ժամ ալ հեռի Բարերդ . Տրապիզոնէ Բարերդ այս ճամբան ճիշդ . 28 ժամ կը տեէ :

Երկու ուրիշ ամառնային ճամբայ ալ կայ . մէկը՝ Ռւզ գաւառի գլուխէն անցնելով կը խառնուի կէտէւշ մէ միւս ճամբան . միւսը՝ Սիւրմէնէն ու Գործութէւն ուղղակի ՚ի Բարերդ .

Տրապիզոնէն 6 ժամ հեռի է ձէվիզիկ ըսուած տեղը : Այս անունով կը կոչուի նաև գաւառը , որ Գաւաթա գաւառի հարաւային կողմի կիյնայ ու կը բաժնուի Մաշկայ , Գալիեան , Վագրֆ , Զիկանոյ և Ռւզի մէջը գլունուած երեւելի՞ ձորերուն ու գիւղերուն անուններովը : Մաշկայի մէջ երեւելի է Լիսլէրա գիւղը . այս գիւղը կը գտնուի 10 ժամ հեռի Տրապիզոնէն . ունի 3 վանք Մէյրէմ—Անա , Այ—Եանի , Այ—Եօրկի :

Ճէվիզիկի ահմանը՝ հարաւային կողմէն Պոնտական լերանց բարձրաբերձ կտտարն է , արևելեան կողմէն՝ Գաղըքը Գարակապան , արևմտեան կողմէն՝ Զիզանա լեռը , ուրկէ կը բանի կարնոյ ձմեռնային ճամբան :

Այս գաւառին բնակչաց մեծագոյն մասը յոյն է , մանաւանդ լեռներու կողմերը : Կէս կէս անուանեալ բազմաթիւ կեղծ տաճիկներ ալ կը գտնուէին երթեմն , որոնք ժամանակէ մը ՚ի վեր քրիստոնէութիւննին յայտնելով յոյն եղած են : Գաւառիս հիւսիսակողմի Զիկանոյ գիւղին բնակչաց խոռվասիրութիւնն ու աւազակութիւնը հոչակեալ են : Բերքերն են՝ պատուական իւղ , պանիր , քթան , մոմ : Տրապիզոնէն 10 ժամ հեռի՝ Մաշկայի մէջ ու ճամբուն վրայ կը գտնուի Եւրոպէ-Հայք-ըսուած տեղը . կամուրջին գտնուած տեղը խաներ ու խանութներ շի-

նուռած են . հոս հանքային ջուրեր կը բդիխին : Տրապի-
գօնէն 12 ժամ հեռի՝ Զիղանա լերան ստորոտն է Պէտ-
չէլու ըսուած տեղը , ուր միշտ պահապաններ կապասեն
աւազակաց ու ձեան հիւսի վտանգին համար : Լերան
վրայ ալ պարիսպներ շինուած են ձեան հիւսի առաջքն
առնելու համար . այս լերան միւս երեսն է Մարտի Խաչը ,
Պէքճիլէրէն 2 ժամ հեռի և կրոմ անուն մեծ գիւղին
մօտ . այս կողմերը կան առատ հանքեր պղնձի և այլն,
ամէնն ալ երեսի վրայ մնացած : Մարտի Խաչըն 4 ժամ
հեռի կը գտնուի Արտասա անուն Տօռուլ գաւառի ա-
ւանը . Արտասայի առջևէն կանցնի կէ-մւշ-խոնէի գետը՝
որ կը կոչուի Խարշութ , և Թրիպոլիի մօտ կը թափի ծովը :
Տօռուլ գաւառը կը գտնուի Մաշկայի ու Պոնտական
լեռներուն հարաւային կողմը . արևելքէն ու հարաւէն
սահմանակից է կէ-մւշ-խոնէ : ասոր հարաւային ու ա-
րևմտեան կողմերէն կանցնին Գայլ-Քեռ ու Շէլքրան : Այս
գաւառին երևելի գիւղը՝ կրոմէ , որուն բնակիչներն որմ-
նադիր են և 400 տարիէ՝ ի վեր շարունակ գտնանի քը-
րիստոնեայ մնալով մէկ քանի տարի յառաջ կրօնից ազա-
տութեան շնորհիւ յայտնի քրիստոնեաց եղած են : Ար-
տասայի հարաւային կողմը 6 ժամ հեռի կը գտնուի
կիւմիւշ խանէ քաղաքը *

ԿիՒՄԻՒՇ ԽԱՆԷ

Այս քաղաքը լերան մը կողին վրայ շինուած է .
բնակիչները տաճիկ , յոյն և 239 տուն ալ հայ . ու-
նի ճամիներ , խաներ , բաղնիքներ , եկեղեցիներ յունաց
և մէկ ալ հայոց յանուն սուրբ Աստուածածնի , կամա-
րակապ հնաշէն ու հակուատ : Դպրոցներ իւրաքանչիւր
ազգաց . հայոց դպրոցին մէջ 150 ի չափ աշակերտ կը
կըթուի հասարակ ընթերցանութեամբ ու հայկաբա-

նութեամբ : Քաղաքին ատորոտէն հիւսիսային կողմէն
 կ'անցնի Ասմա— կամկիւտ- իւնէ գետը : Այս գետը
 Մերևնէ կամ Ղ- լու- ըսուած տեղի լեռնէն կուգայ . գե-
 տին երկու կողմը՝ հարաւէն հիւսիս , Աւագ- պահէսէն
 մինչեւ Խօս- լեռը և ժամ շարունակ կան գեղեցիկ պար-
 տէզներ պտղաւէտ . ծառերով զարդարուած , որոնց
 խնձորն ու տանձը , մանաւանդ հանի— համար ըսուած տան-
 ձը և ուրիշ պատուական պտուղները քաղաքին տաճիկ
 բնակչաց միակ ապրուստներն են : Քաղաքէն մէկ ժամ
 հեռի արեւմտեան հիւսիսային կողմը հայոց վանք մը
 կայ գեղեցկաշէն , ամենափրկիշ անուն , որուն մէջ հի-
 մայ միայն պահապան մը կայ : Քաղաքին շրջակայները
 կան առաւտ հանքեր արծաթի երեսի վրայ ձգած . կի-
 տ- իւնէն Յ ժամ հեռի հարաւային կողմը դէպ 'ի ձո-
 րագլուխը կը գտնուի Զիմնն կամ Մասրու իւն— օչու գիւ-
 ղը , որուն մօտէն կանցնի երգնկու ճամբան : Մուրատ
 խան օղուէն մէկ Ժամ հեռի կը գտնուի Ճինիվիզ կամ
 Կուշա- Գուլ- է , գիւղը , որուն լերան վրայ ահագին
 բերդ մը կայ հին ժամանակէ մնացած : Այս կողմերուն
 բնակիչները Խալու կը կոչուին հին Խաղուեաց անունովը ,
 և ըստ մեծի մասին յոյն են , մնացածը տաճիկ : Յոյնե-
 րը՝ արհեստաւոր են անագօծող (ղալայցի) ելն . գը-
 րեթէ ամէնն ալ օտարաշրջիկ . տաճիկները ջորեպան ,
 վասն զի երկիրը ապառ աժուտ է , ուրիշ կերպով չեն
 կրնար հոդալ ապրուստնին : Վերջին տարիներս բազմա-
 թիւյոյն գերդաստաններ Ռուսաստան գաղթեցին : Այս
 կողմերուն ջուրերը կի- տ- իւնէ գետը կը խառնուին . կո-
 ղանցէն անդին է Գուլ- տ- ուղը լեռը , ճիշդ 4 ժամ հեռի
 ալ Պալախօս գիւղը . ասկէ 2 ժամ հեռի կը կիւղը
 կայ՝ որ Բաբերդէն ալ 2 ժամ հեռաւորութիւն ունի : Տը-
 րապիզոնէն 10 ժամ հեռի է Կիմիշկի լեռը Գուլեան ային
 ծայրը . ասկէ 2 ժամ հեռի գաղթեցի լեռը , որուն միւս

երեափ ձորին մէջն է Տ-ւ—+էօէիւ ըսուած շէն գիւղը .
հոս Սանդացիք եկած բնակութիւն հաստատած են , և
ունին եկեղեցի մը : Գալիքանի ձորերուն մէջ և կիմիշ-
կի ու Բ-ւ—+էօէիւ շատ մը խաներ ու խանութներ կան .
Գաղղքլը արևմտեան կողմն է Զոր—է:լ անուն երկ-
նաբերձ լեռը . այս լեռան գագաթին մօտ՝ մաքուր ու
մնայուն ջուրով լիճ մը կայ բաւական ընդարձակ , և
ուրիշ պատուական պաղ ջուրերու աղբիւրներ , գագա-
թըն ալ յունաց ուխտատեղի մը ու աղբիւր մը : Տ-ւ—
+էօէիւ մէկ ժամ հեռի է արևելեան կողմն Սանդաի
ձորը բարձր լեռներով շրջապատեալ . այս ձորին մէջ
8000 տունէ աւելի յունաց բնակութիւն կայ Դ թաղի
բաժանեալ . գիւղին երկայնութիւնը մէկ ժամէն աւելի
է . ամէն թաղի մէջ զատ եկեղեցի կայ : Տ-ւ—+էօէիւ 2
ժամ հեռի հարաւային կողմը կը գտնուի Զորաքի
ձորն ու խաներ . ասկէ ալ մէկ ժամ հեռի Քէշիւ—էօէիւ
ու խանը . և ասկէ 3 ժամ հեռի Թորոսանց գիւղն ու
խաներ ճանապարհի վրայ . Քէշիւ—էօէիւ ին ու Թորոսանցի
մէջ տեղն է Գըն—օւ ըսուած ընդարձակ լեռնադաշտը:
Այս դաշտին մէջ կայ երեք գերեզման Քըր—այտ անու-
նով 40 ոտք երկայնութեամբ . վրանին ալ քար շարած .
յայտնի չէ ասոնց ինչ գերեզմաններ ըլլալը . բայց ուխ-
տատեղի է ամէն ազգաց և մանաւանդ տաճկաց : Այս
կողմի ջուրերը Սիւրմէնէի կողմը կը վաղեն : Թորոսան-
ցէն կ'սկսի Բարերդու արևելեան դաշտը և 6 ժամ կը
տեէ : Այս դաշտին մէջ Բարերդ երթալու ճամբուն
վրայ իրարմէ 2 ժամ հեռի կը գտնուին նախ կըուզի և
ետքը վարզահան անուն հայոց գիւղերը :

Տրապիզոնի արևելեան կողմը՝ Տէէրմէն պէտէն էն ըս-
կսեալ մինչև Եամ—Պօլը գետի մէջ տեղը գտնուած
երկիրը , որ 7 ժամ երկայնութիւն ունի , գովաթա կամ
Եօմուքա անուն ծովեղերեայ գաւառն է . Այս գաւա-

Աը հարաւային՝ կողմէն սահմանակից է ձէվիզիք գաւառին ։ Ունի 6000 տուն բնակիչ ։ տաճիկ, յոյն ։ մեծագոյն մասը տաճիկ, գիւղերուն շատը տաճկարնակ ։ Հայոց թիւը 2340, և 310 տուն ։ Ամառնային նաւահանգիստ մըր, բարձր լեռներ, գետեր, Շառա — ուրեմն, որուն գլուխը՝ Սամարաքսա և ձօլարա գիւղերուն հարաւային կողմն է ծովէն օժամ հեռի ։ Տոօնայի գեար Ուզ գաւառակի գլուխէն Այ — Եր լեռնէն ըսկիզր առնելով՝ կիջնէ ։ Աւզի ձորին մէջէն կալաֆկա և ցունա, ու կը թափի ծովը 40 ժամ ճամբայ. ընելով՝ Տոօնայի գետէն մինչև Եաս — Պուշ գետին մէջ տեղը գտնուած երկիրը սոյն դաւառին բուն իօմնւրա կոչուած մասն է ։ Ծովեղերքի օդը շատ գէշ ու վատառողջ հողը տեղ տեղ բարերեր ։ զիխաւոր բերքերն կաղին, ամէն տեսակ պատուղներ, մանաւանդ ինձոր ։ Եօնորա էլուս, որ հեռի երկիրներ կը զրկեն ։ Բնակիչներն ընդ հանրապէս դառն աղքատութեան մատնուած ։ մշակութեան նոր ու գիւրին կերպերուն չը հետևելով իրենց հին անօդուտ ու գժուարին եղանակը կը գործածեն ։ Մշակութիւննին ու մնունդնին միայն լազուէ, մշակելու հողերնին ալ քիչ ։ Ամառ ասուն իրենց ոչխարներն ու կողերը մէկաեղ Եալ կերթան բարձր լեռներու գադախը հիւղերու մէջ կը բնակին ։ գիւղերուն տուները իրարմէ շատ հեռի ու ցիրուցան շնուած ըլլալուն, և մանաւանդ բնակչադ աղքատութեան պատճառաւ տղայոց կը թութեան համար դըպեցոց ալ չունին գրեթէ ։ Պէտք է գիտնալ որ ո՛չ միայն այս գաւառը, այլ Պոնտական գաւառներուն մեծագոյն մասը մշակութեան յարմարութիւն չունի, վասն զի երկիրն ըստ մեծի մասին քարոտ ու անգործելի հողով կամ անտառներով ծածկած է ։ Նոյնպէս և գիւղերուն տուներն ալ ցիրուցան շինուած են, անանկ որ

շատ գիւղի երկայնութիւն Յ ժամէն աւելի կը տեէ ,
և մի և նոյն գիւղը՝ լեռներով շրջապատեալ այլ և այլ
ձորերու մէջ շինուած ըլլալով՝ գաւառակ մը դար-
ձած է : Գիւղերուն թաղերը՝ ձորերով ու լեռներով
իրարմէ բաժնուած , տուներն անգամ իրարմէ հարիւ-
րաւոր քայլ հեռի ու անտառներով շրջապատեալ են :
Հոն իւրաքանչիւր ընտանիք՝ իր բնակարանը իր ըն-
դարձակ ժայռուտ ու անտառախիտ կալուածին կեդ-
րոն տեղը և կամյարմար եղերքին վրայ հաստատած ,
կը տիրէ անոր մէջ իրրեւ իշխան առանձին երկրի մը .
ասկէ յառաջ եկած է Պոնտացւոց առանձնասիրու-
թեան ողին , աւազակաբարոյութիւնն ու խոր ու թան-
ձըր տղիտութիւնը :

Գօվաթայ դաւառին դլխաւոր տեղն է Գօվաթա ,
ուր կը նստի միւտիւրը : Եւ հայոց երեւելի գիւղերն են
Ստեփանոս , Շանա , Սամարուքսա , Լալաֆիկա և Ուղ :

Ստեփանոս քաղաքէն 2 ժամ հեռի արևելեան հա-
րաւային կողմը . ունի 42 տուն , 489 բնակիչ , որուն
255 ը այր . մէկ եկեղեցի կամարաշէն նոր ու գեղեցիկ
սուրբ Թէոդորոս անուն : Սամարուքսա . Ստեփանոսէն
2 ժամ հեռի արևելեան հարաւային կողմը . ունի 78
տուն և 416 բնակիչ , որուն 250 ը այր . մէկ եկեղեցի
նորաշէն Ոուրբ Լուսաւորիչ անուն , գիւղին հարաւային
ծայրը Ըսկաֆիկա թաղին մէջ :

Շանա , ունի 74 տուն , 633 բնակիչ , որուն 316 ը
այր , երեք եկեղեցի , որոնց դլխաւորն է Սուրբ Սար-
գիս . մեծ , կամարաշէն 4 սիւներու վրայ հաստատած :
կալաֆիկա , Շանաի սահմանակից արևելեան հարաւէն ,
ունի մէկ նորաշէն եկեղեցի Սուրբ Գէորգ : Ուղ , կա-
լաֆկայի հարաւային կողմը . ունի մէկ կիսաշէն եկե-
ղեցի մը , Սուրբ Լուսաւորիչ անուն : կալաֆկայի և Ու-
ղի մէջ 85 տուն կայ և բնակչաց թիւն է 538 , ո-

բուն 289 ը այր է :

Տրապիզոնի գիւղերը՝ ինչպէս որ նկարագրեցի, խիստ տարածուած են, և եկեղեցիներն ալ անոնց կեդրոնը շինուած են. ուստի ջերմեռանդ գիւղացիները եկեղեցի երթալու համար՝ կը պարտաւորին ժամերով ճամբայ քալել պաշարնեն ալ հետ կրելով. Գօվալթայի արևելեան կողմը Գայլ գետէն սկսելով մինչեւ Մահոնա գետը, որ Յ ժամ կը տեէ, կը գտնուի Սիւրմէնէ ըսուած ծովեղերեսյ գաւառողը՝ Օֆի սահմանաւ կից. Ալս գաւառող Յե ծովին, այսինքն, հիւսիսէն գէպ՚ի հարաւ Բաբերդի Թորոսանց լերան մինչեւ հիւսիսային երեսը կը հասնի, և 16 ժամէ տարածութիւնը։ Սիւրմէնէ ունի գժուարամատոյց լեռներու գօտիներ՝ ուր կապաստանին լեռնախոյսներն ու յանդուդն հրոսակները. Երեք ալ գետ, որք են. 1. Եամ պօղը՝ որ Զուր — Էւուք բարձր լեռնէն՝ Տաշ — քէօփրիւի ու Սանթայի մէջէն անցնէլով կիջնէ Սիւրմէն ձորը, անկէ կը թափի ծովը 17 ժամ ճամբայ ընելէ ետքը։ 2. Գորու — Դէք՝ որ սկիզբ կառնէ Ե-Նուր — Դէքէն ու Ե-Գուրուլով լեռներէն, և իր մէջը մէկ քանի վտակներ ընդունելով կանցնի Գորու — Դէք՝ գաւառակէն ու Սիւրմէնէ աւանին արևմտեան կողմէն կը թափի ծովը 16 ժամ ճամբայ ընելէն ետքը։ 3. Քիւնէն — Դէք՝ որ բարձրակատար Մ-Պուր — Դուչէն սկսելով կիջնէ Զուրուլ կամ Ք-Նուր — Դէքէ, և իր մէջը շատ վտակներ ընդունելով, կը թափի ծովը Խուճ-Հուճէն աւանի արևմտեան կողմէն 10 ժամ ճամբայ առնելէն ետքը։ Սիւրմէնէ Երևելի տեղերն են Սիւրմար, Գարա — տէրէ, Սիւրմէնէ, Գիւշւուք — տէրէ, Խումուրկէն. և դլխաւոր տեղն է Սիւրմէնէ բուռը Գօվաթայի արևելեան կողմը Յ ժամ հեռի. ասոր արևմտեան կողմը կէս ժամ հեռի Մրակի ըսուած գիւղը կը նստի միւտիւրը։ Սիւրմէնէ աւանը

ունի ասլահով ու ընդարձակ նաւահանգիստ մը , բայց դժբաղդաբար տեսակ մը զսասակար փոքրիկ որդեր կը գտնուին մէջը՝ որ կապականեն նաւերը : Սիւրմէնէի պազարը հիդշաբիթի օրերը կը բացուի . և կը վաճառեն առատ ու պատուական իւղ , զոր կը դրկեն հեռի երկիրներ մանաւանդ կ. Պօլիս ընծայի համար , քըթան , մանած , դերձան . թել , առատ ձկան իւղ , զոր կը դրկեն կարին և երբեմն ալ կ. Պօլիս ճրագի գործածելու համար :

Այս գաւառուր ունի 60 գիւղ , 8000 տուն բնակիչ , 6970 տուն տաճկաց , 1000 յունաց և 30 առն հայոց . Դաւառիս արդի տաճիկները՝ յառաջադոյն քրիստոնեայ էին , և մեծագոյն մասը ազդաւ հայ . 1715 թուականին ձգելով իրենց հաւատքն ընդունեցին տաճկական կրօնքը : Ասոնց կէսէն աւելին մաքուր հայերէն կը խօսին մինչեւ հիմա . մանաւանդ կանսցք , որ տաճկերէն ալ չեն հառկնար . Եռքա քրիստոնէից հաւատքը կը յարդէին , քահանայները կը սիրէին ու ակնածութիւն կընէին . և 1859 թուականին ասոնց մէկ մասը՝ Տավշշեան ծէր կարապետ քահանայի ձեռօք Բ. Դըրան աղերսագիր տալով ձեռք բերաւ կրօնական աղատութիւնը . Ան ատեն երկրին երևելի հոլոնէրը սրտմտելով անոնց դէմ՝ սկսան տեսակ տեսակ հալածանքներ տալ ժողովրդեան . վանքերը քակեցին , հնաշէն եկեղեցիները հիմնայատակ կործանեցին , հայերէն խօսիլն ու հայոց սովորութիւնները խստիւ արգիլեցին . Հաստատեցին տաճկական դպրոցներ տղայոց կըթութեան համար . բայց ժողովուրդը չը կընալով հանդուրժել անոնց խստութեանցն ու հրամաններուն , խռովութիւն յալուց ու հալածեց հուշանշանք . մէկ երկու տարի անցնելէն վերջն ալ խանգարեցան գոյցուեցան տաճկական նորահաստատ դպրոցները :

Այս ժողովրդեան կրօնափոխութեանը սկզբնաւ պատճառ եղած են Ղուռուֆ Մէհէմմէտ և Պէքեար անուն երկու մահմէտականներ՝ ասոնք այս երկիրն ու մանաւանդ հայերը անտէր գտնելով, վասն զի հայերը ան ատեն Համչէն գաւառի հալածանքէն ճողովրելով՝ խեղճ ու անդէն այս կողմերն ապաստանած էին, բըռնացան երկրին վրայ ու սաստիկ հարկապահանջութիւններ ու չարաշար սպանութիւններ ընելով ժողովուրդը ահու սարսափի մէջ ձգեցին. ասանկով ժողովուրդը կեանքը ազատելու համար պարտաւորեցաւ կրօնափոխութեան գիմելու հետզհետէ. Այս երկու անձինք՝ վերջը կրօնական ժողով մը հաստատեցին և զօրաց գունդեր կազմելով կարգաւ գիւղերը շուրջ եկան համարձակ. քրիստոնեայները բռնաբար թլփատեցին, և հաւատք շրնծայողները կողոպտեցին ու ըսպաննեցին. այն հայերէն ոմանք գիշերանց մօրեմերկ փախուստ տալով Տրապիզոնի շրջակայ գիւղերը, անկէ ծանիկ, Սինապ, և մինչև Ատաբազար ցրուեցան, որոնք հիմայ հայ մնացին:

Տեղւոյս ծերերը կը պատմեն՝ թէ Ղուռուֆ Մէհէմմէտ 40 գեղեցկահասակ ու զօրեղ քրիստոնեայ երիտասարդներ ընտրեր ու վերջին անգամ թլփատութեան չքեղ հանդէս մը կատարէր է Ծիմա ըսուած գիւղին մէջ: Այն միջոցին գիւղին գետը երեք օր շարունակ կարմրաներկ հոսեր է: իսկ այս գէպքը Ղուռուֆի մահուան պատճառ եղեր է: վասն զի կրսեն որ ընդհանուր գաւառին մահմէտականները Ղուռուֆի այս ըրած բռնութիւնը՝ մահմէտական կրօնքին հակառակ և հետեւաբար այս տարօրինակ երևոյթին պատճառ համարելով իսկոյն անոր սպանմանը վճիռ տուած են. մէկ քանի օր ետքը՝ երբ Ղուռուֆ կը պատրաստուէր երթալ տաճկացունել հայոց վերջին

մնացորդ Փէրվանա գիւղին բնակիչներն ալ, մահմէտականք անմիջապէս 30 ի չափ սպառազինեալ քաջդարանամուտներ զրկեցին ծիմաէն քառորդ մը հեռիկրծի մը գլուխ անոր անցնելիք ճամբուն վրայ զայն սպաննելու համար . չարաչար վիրաւորեցին Ղուռուֆը, մարմինն ալ հոն գետինը ձգեցին անթաղ .

Ծիւրմէնէի արևելեան կողմն է 0ֆ անուն ընդարձակ գաւառը . արևելեան կողմէն Երիզէի և հարաւային կողմէն Սպիրի սահմանակից . այս վերջինէն Պոնտական լերանց գօտիովը զատուած : 0ֆի ծովեզերեայ երկայնութիւնը 3 ժամ է, ծովեզերքէն խորութիւնը 18 ժամ : Ունի անտառախիտ գժուարին լեռներ . 3 գետ . 0ֆ տէրէսի, Գալոս և Գարա — տէրէ . գլխաւոր տեղն է 0ֆ — պաղարին՝ ուր առևտուր կըլլայ կիրակի օրեր : Գլխաւոր բերքերն են քթան, մանած և իւղ : Կայ 11,000 տաճիկ քնակիչ, կարդացող ու կախարդմարդիկ . լեզունին յունարէն : Ասոնք ֆաթիի ժամանակ բունութեամբ մահմէտական եղած են : 0ֆի աղէկ նաւահանգիստ մը չունի : Մրևելեան կողմը կը գտնուի Իրիզէ կամ Ռիզէ գաւառը . արևելեան կողմէն Աթինայի, հարաւէն Համչէն գաւառի արևմտեան լեռներուն սահմանակից : Ունի 15 ժամու չափ ծովեզերեայ երկայնութիւն մինչև Քէմէր . նոյն չափ ալ խորութիւն մինչև Համչէնի լեռը : Կան բարձրաբերձ անառիկ լեռներ . մէկ քանի գետ, ունի 42,000 տուն քնակիչ . 11,000 էն աւելի տաճիկ՝ մնացածը յոյն . ամէնն ալ աւաղակաբարոյ, ոխակալ ու խորամանկ : Գըլլիսաւոր գիւղաքաղաքն է Ռիզէ, Տրապիզոնէն 20 ժամ հեռի . քնակչաց մեծագոյն մասը տաճիկ, մնացածը յոյն . ընդհանրապէս երկրագործ և աղքատ . մէկ փոքր մասն ալ սանտալճի և վաճառական . առաջ հոս հայեր ալ կը գտնուէին, որոնք վերջը Տրապիզոն գաղ-

թած են : Իիզէ ունի կանոնաւոր շուկայ և տօնավաճառի օր : Բերքերն են առաստ ու պատուական քըթան , մանած , կանեփ , առաստ ձկան իւղ և փայտ , լիմոն ու փորթուքալ :

Իիզէի ու Աթինայի մէջ տեղն է գէմէր Տրապիզոնի սահմանադլուխը : Իիզէին 10 ժամ հեռի է Աթինա աւանը . ասոր ալ հարաւային կողմը 12 ժամ հեռի կը գտնուի Համչէն դաւառը : Աթինա ուրբաթ օրեր մեծ բար կրյայ , ուր բազմաթիւ մարդիկ Համչէնէն կը դիմեն առետուրի համար : Աթինայի բերքն է ձկան իւղ . մանած , ուռկան , մոմ , որ գլխաւորապէս Համչէնէն կը բերեն : Այս կողմի բնակիչները լու կը կոչուին . ամէնն ալ տաճիկ , ու քաջ , առեւտուրի յարմար ու յաջողակ . Մնկուէլի լեզուաւ կը խօսին , տաճկերէն ալ գիտեն . ասոնցմէ շատերը օտար երկիրներու մէջ վաճառականութիւն ընելու կերթան : Այս գաւառը ունի երկնաբերձ , դժուարամատչելի և անտառախիտ լեռներ . մէկ ալ գետ Ֆուբունուն — ուրէէսէ անուն :

Համչէն՝ բարձրաբերձ ու անմատչելի լեռներով շըրջապատեալ գաւառ մ'է . ունի 70 էն աւելի դիւղ և 6000 տուն բնակիչ մահմէտական : Բնակիչները հայերէն կը խօսին , մանաւանդ կանայք , որոնց շատը տաճկերէն ալ չեն հասկնարու Ասոնց տաճկանալլ՝ Սիւրմէնէի ու Գուրու ուրէէսէ բնակչաց տաճկութենէն շատ առաջ է : Գաւառուս մէջ հիմա միայն կէհովիտ գիւղին մէջ մէկ քանի տուն հայ և մէկ քանի տուն ալ կէսը հայ և կէսը տաճկի գերդաստաններ մնացեր են : Գաւառիս բնակչաց շատը օտար երկիրներու մէջ հացագործութիւն կընեն :

Տրապիզոնի շըրջապատը Տէւէքն—ուրէէ գետին ձախ եղերքը Աղճապատ գաւառը կը կոչուի : Ունի շատ գիւղեր , 5000 տան չափ բնակիչ տաճկիկ , յոյն , գրեթէ հաւասար թուռվ , և 312 տուն հայ . կան ամուր լեռներ ,

և 2 գետ . Սէրա և կալանիմա : Սէրա գետին ջուրը շատ աղէի է . այս գետին ընթացքը 10 ժամ է . կը թափի Սև ծով Տրապիզոնէն 2 ժամ հեռի արևմտեան կողմէն . կալանիմա գետը Սէրաի ու Փլաթանայի մէջ տեղն է . 9 ժամ է ընթացքը . կը թափի Սև ծով : Գլխաւոր բերքերն են առատ ծխախոտ , որ Թիֆլիդ կը դրկեն : Գատուական ձէթ և ձիթապտուղ . սպիտակ լուսիա , իւղ , հաւ , հաւկիթ , տախատակ : Աղճապատի շահաւոր վաճառատեղին ու գլխաւոր աւանն է Փլաթանա , Տրապիզոնի արևմտեան կողմը 3 ժամ հեռի : Փլաթանա ունի զուարճալի դիրք , ըստ օդ , 500 տուն բնակիչ , մեծ մասը յոյն , մեծ շուկայ , շաբաթ ու կիրակի օրերը մեծ տօնավաճառ . ընդարձակ և ձմեռուան մէջ ապահով նաւահանգիստ : Այս գաւառին մէջ գտնուած հայոց երեկի գիւղերն են . Սաթարիա , կալանիմա ձորին վրայ 48 տուն , և 600 բնակիչ . Մալա . Սէրաի ձորին վրայ 140 տուն , 1400 բնակիչ մէկ եկեղեցի Սուրբ Լուսաւորիչ անուն : Անիքա . Տէյլրմէն—տէրէի ձորին վրայ , 51 տուն , 670 բնակիչ , 1 եկեղեցի Սուրբ Գէորգ անուն : Վէրանա . Տէյլրմէն տէրէի ձորին վրայ 93 տուն , 693 բնակիչ , 1 եկեղեցի Սուրբ Սարգիս անուն :

Փլաթանայի արևմտեան կողմը 15 ժամ հեռի , այսինքն , Տրապիզոնէն 18 ժամ հեռի կը գանուի էլէու գիւղը . այս գիւղին մէջ բաւական առևտուր կը լլայ , ունի շուկայ մը . հոս ալ մէկ քանի տուն հայ կայ . Փլաթանայի և էլէուի մէջ տեղ կը գտնուին Ագճէ—Գալէ , Պէօյիւք —Լիման և Ֆոլ ըսուած ծովեղերեայ երեկի տօնավաճառի տեղերը՝ որ ունին առևտուրի համար յատուկ օրեր : Ֆոլի մէջ մէկ քանի տուն հայ բնակիչ կայ Թամւզարայէն գաղթած : Ֆոլ Տրապիզոնի արևմտեան կողմն է 11 ժամ հեռի և էլէուին արևելեան կողմը 7 ժամ հեռի : Օդը դէշ . ամառ ատեն բնակիչները լեռը կել

նեն : կլէուին արևմտեան կողմը 6 ժամ հեռի կը գըտ-
նուի թիրիպօլի բարձրադիր ու ընդարձակ քաղաքը բը-
նակիչները տաճիկ , յոյն և 40 տուն ալ հայ՝ որ ունին
քարշէն եկեղեցի մը , կրկնայարկ դպրոց մը , և կըդ-
բաղին առևտորով . Օդը գէշ չէ . ունի շուկայ մը , 3 հին
բերդ . փոքրիկ նաւահանդիստ մը . պղնձի հանք . բեր-
քերն են առատ կաղին , գինի , բրինձ , ատաղձ :

Թիրիպօլիկ արևմտեան կողմը 12 ժամ հեռի կը գըտ-
նուի կիրասոն քաղաքը . աս թիրիպօլիկն աւելի մեծ է ,
և իր դիրքն ալ շատ գեղեցիկ է . ունի հին բերդ մը
ապառաժի վրայ և մէկ ալ նաւահանդիստ : Բնակիչնե-
րը տաճիկ , յոյն և հայ : Հայոց թիւը 584 և 89 տուն .
հայերը թամշարայէն գաղթած են հոս , կ'զբաղին առ-
սետորով և ունին 2 եկեղեցի և մէկ դպրոց :

Տրապիզոն կեցանք 13 օր . այս միջոցին հիւպա-
տոսներն ու քաղաքին երևելի անձինք այցելութեան ե-
կան , և վոխադարձ այցելութիւններ եղան :

Հոկտեմբեր 22 ին մեծ ու շքեղ հանդէսով իշանք
նաւահանդիստն ու մտանք նէմցէին լուր ընկերութեան
շոգենաւն . և ժամը 6 ին պարզ ու գեղեցիկ օդով մը
քաղաքէն մեկնելով , 72 ժամնաւարկելէն ետև հազանք
ու մտանք կ.Պոլիս հոկտեմբեր 23 , ժամը 6 ին :



ՅԱԻԵԼՈՒԱԾ

Տեղեկութիւնք Եփրատ Եւ Տիգրիս գետերուն վրայ.



Ա.

Ե Փ Բ Ա Տ Կ Ա Մ Մ Ո Ւ Ր Ա Տ

Ասիական Տաճկաստանի ամենէն մեծ գետն է՝ որ կը շինուի Հայաստանի այլ և այլ կողմերէն բղխեալ մեծ վտակներէ. Առաջին վտակը կը բղիսի Պայազիտ գաւառուն մէջ, Տիատին գիւղաքաղաքին մօտ Ալատաղի ոսկի լեռներէն (Կորդուաց լեռ). այս վտակը Եփրատի արեւելեան թեւն է, որ յատկապէս Մուրատ կը կոչուի. Այս թեւը սկիզբները Զաղմուր կըսուի, որ կը քալէ. գեղի Ալաշկերտ և կ'ընդունի շատ մը վտակներ. առաջին Շեռեան. անկէ կիջնէ Խամու, կը քալէ չգեղի 'ի Մէլաղկերտ, անկէ ալ ուղղակի Մուշի դաշտին հիւսիսային կողմը. մինչև հոս կընդունի աջ կողմէն Դուզլա, Գալէ սու, Զարպուհուր, և ձախ կողմէն Բատիշանք կամ Մէլաղկերտի ջուրը. Ետքը Զարպուհուրէն վար կը դառնայ կընդունի Մուշի մեղադետը. կիջնէ կուրկուրէն և քիչ մը վար կընդունի կինճ սու. և Ետքը լեռնադաշտերու մէջէ անցնելով կերթայ Կապան Մատէնի մօտ. մինչև հոս կընդունի աջ կողմէն Ճապըզլուր սու և լէլլիկ (միւս Պայլ գետ. ըստ նախնեաց) և շատ մը ուրիշ վտակներ, և ձախ կողմէն Խարբերդի գաւառին վտակները. այս առաջին թեւը հոս կապան Մատէնի մօտ կը խառնուի Եփրատի միւս վտակին հետ. իսկ երկրորդ-

վտակը կրզրումի արևելքան հիւսիսային կողմի լեռներէն բղխեալ քանի մը գետակներէ կը շինուի, որոց մէկը՝ որ Սեաւ ջուր (քարա սու) կը սուի, Տումիու լեռնէն կիջնէ . միւսը Սարչամու ջուր՝ որ Սպիրոյ լեռներէն կը բղխէ . այս երկու գետակները կուդան էրզրումի դաշտին մէջ իրարու հետ կը միանան . այս միաւորութենէ ետքը՝ գետը մէկ անունով Աև ջուր կը կոչուի ու կիջնէ 'ի Դերջան, որուն ձախ կողմէն իր մէջը կընդունի Դերջանի դետը . անկէ ետքը Եփրատ տաճկերէն Ֆրան—անունը կառնէ, կընթանայ մինչև Երզնկա, անկէ ալ մինչև Կապան Մատէն, անյներով Լամախէն, Լիկնէն և Արարկերէն . աջ կողմէն կընդունի իր մէջը Գայլ գետը՝ որ Երզնկայի քովին կանցնի, Քէօմիւր—սու, Գուրուչայ, Գարաբունար, Գուրմա, Ուկիգետակ Մրաբկերի քովին, և ուրիշ փոքրիկ գետակներ . իսկ ձախ կողմէն Պինկիոլ—սու իր գլխաւոր օժանդակը և Կապան Մատէնէն քիչ մը վեր կը միանայ միւս թելն հետ, այսինքն Մուրատի հետ :

Եփրատ՝ այս երկու բազուկներուն միաւորութեամբը ստուարացեալ կոռոգէ էրզրումի նահանդը, կը զատէ Տիարպէքիրի փաշայութիւնը Արվազի ու Մարաշիններէն . կընթանայ բովանդակ Միջադետի մէջ Բսորեստան և Բաբելոն . կը թրջէ Սէմիզաթ, Պիր, Պէլէս, Ռաքքա, Քերքիղէն, Աննա, Հիթ, Հիլլա, Տալանիէս, Սամալա քաղաքները : Երկու թեւերուն միաւորութենէն ետքը Եփրատ կընդունի արևմուեան կողմէն Գարայ—սու և արևելքան կողմէն Քապուր .

Գաղլուատէն ութ աւուր ճամբայ վար Գուրնսյի առջև միանալով Տիգրիսի հետ կը շինէ Շաթ—Իւլ—Արապ, (գետ արարացւոց) որ Գալրաէն մէկ ու կէս օր վար՝ կը թափի Գալրսկաց ծոցը հինգ գտարերաններով : Շաթ—Իւլ—Արապի մէջ կը բացուի Քերքահ գետը :

Եփրատ ունի 1,850,000 մէթրօ երկայնութիւն :

Եփրատ և Տիգրիս գետերուն մէջ տեղը գտնուած ընդարձակ երկիրը կըսուի Սլ Ճէզիրէհ , այսինքն , կըդզի , որ 'ի հնումն Միջագետք կամ Մէզօրօթամի կանուանէր : Միջագետի մէջ կան շատ մը առաջներ կամ ջրանցքներ , որոնց մէկ քանին պարսից և այլոց ձեռագործներն են . կան՝ որ ինքնիրեննուն գոյացեր են : Այս առաջները զիփրատի ջուրը Տիգրիսի հետ կը հաղորդեն : Եփրատ Գասրայի առջև միրնի մը չափ լայնութիւն ունի , որ մակընթացութեան ժամանակ կ'աւելնայ : Ընթացքը վերի կողմերուն մէջ արագ է , իսկ վարի կողմերուն մէջ նուազ : Դարնան մէջ գետին ջուրը կառատանայ և արաբացւոց դաշտավայրին մէջ եղէգնուտ ճահճներ ու ընդարձակ լճակներ կը ձեացունէ , որ Գասրայի և նոյն կողմերուն օդը կապականեն : Գետին Տիատինի բազուկին ջուրը խիստ յստակ է . իսկ լըզըրումի թեկինը վերի կողմերուն մէջ պղտոր է Սև ջուրին պատճառու . այս երկու թեկերուն ջուրերը իրարու հետ խառնուելէն ետքը՝ վերի կողմերուն մէջ յստակ է , բայց անապատին մէջ պղտոր և դեղին : Գետին մէջ +էլիւծ և յատակը տափակ նաւակներով կը նաւարկեն . առագաստով փոքրիկ նաւեր և շոգենաւանդամ կը բանին Հիլլէն մինչև Պատրա :

Այս գետին մէջ կան համով ձուկեր , թեփուկ , գեղիկ , մոխ , կետ ելն , ելն :

Բ.

ՏԻԳՐԻՍ , ՇԱԴ , ՏԻՁԼԵ , ԴԿԱՎԹ .

Հայաստանի այլ և այլ կողմերէն բղխած ասիական Տաճկաստանի մէկ գետն է , որ կսկսի մէկ կողմէն Տիարպէքիրի հիւսիսային կողմի Պինկէօլ լեռներուն շարունակութիւնն եղող էկիլ Սանճախի լեռներէն , հոն աւերակ բերդի մը ստորոտը այրի մը մէջէ բղխելով : Եւ միւս կողմէն Արղընի լեռներէն , ուրկէ կը բղխի դանազան առուակներ , որ հաւաքուելով երկու մեծ վըտակներ կը չինեն , որոնց մէկը կանցնի Արղըն քաղաքին լերանն առջևէն և միւսն ալ նոյն լերան ետևի կողմէն , և Արղընի վարի կողմերուն մէջ իրարու հետ միանալնէն ետքը կերթան կը խառնուին առաջինին հետ : Էկիլի և Արղընի այս երկու գետակները իրարու հետ խառնուելով կը չինեն Տիգրիս գետը , որ կ'անցնի Տիարպէքիրի առջևէն և անոր ուրիշ երկիրներուն մէջէն ու ձէզիրէի առջևէն :

Այս վտակին վրայ Տիարպէքիրի մօտ քարաշէն կամուրջ մը չինուած է . ասոր մէջ կը թափին ձախ կողմէն Քարա - սու՝ Քարա - Ահմէտ գիւղէն վար . Զարողի - սու՝ Հէօնէթի գիւղէն վար . Անպար - սու՝ Խւվաճըխէն վար . Կէօք - սու՝ Քերինէն վար . Պարավան - սու՝ Քէօսսէլիէն վար . Պաթման - սու՝ Պիտիմէն վար . Ծըթվան - սու՝ Պիսմիէն վար . Թիլ - սու՝ Հասան Քէֆ գիւղէն վար . Բաղէշի ջուրը՝ որ վանայ Նէմրուտ լեռներէն կիցնէ : Եւ Սերտ կամ Սղերտ գետը , որ կանուանի նաև Պօհդան - սու՝ որ կուգայ

վանայ նահանգին Շատախ գաւառէն, ուր բնակիչք Շատախու գետ կանուանեն զանի. շատ հաւանական է՝ որ Տիգրիսի Շաղ անոնը ասկէ առնուած ըլլայ, մանաւանդ որ այս գետը Տիգրիսի արևելեան թևը կը համարուի : Ճէզիրէի առջև Տիգրիսի վրայ փայտաշէն կամուրջ մը կայ :

Այս ամէն վտակներով Տիգրիս կ'ստուարանայ ու կը զօրանայ և կանցնի Մուսուլի, Ալի — Համմամի, Թօփրաք — Քալէի, Թիկրեթի : Պաղտատի, Ճէվազէրի, Վասիգի, Համարայի առջևէն . Պաղտատէն 8 օր վար Քուրնայի առջև կը միանայ Եփրատի հետ աջ կողմէն, և անկէ ետքը Շոշ — Խուլ — Աւազ կրառի, ու կերթայ կը թափի Պարսկաց ծոցը :

Տիգրիս 1,240,000 մէթրո երկայնութիւն ունի :

Ճէզիրէէն վար Շաղի մէջ կը թափին եօթն երեսի վտակներ բաց 'ի մանր վտակներէն, որոնց անուններն են .

Ճէյդէլ կամ Ճերմաս ջուր :

Ջապ — սու, Թօփրաք — Քալէի առջև :

Ալթուն — սու, կամ Ալթուն — Քէօփրիւ, Թօփրաք Քալէէն վար :

Ցէյեալէ — սու, Պաղտատէն վար :

Եփրատի արուեստական առաջներ Ճէվազիսի առջեւ .

Խիւրքէմապատ — սու, Ճեմասի առջև :

Սեր — սու, Յեհվազի առջև :

Այս վտակներուն գրեթէ ամէնն ալ Շադի արևելեան կողմէն կը թափին բաց 'ի առաջներէն :

Գետին ընթացքը վերի կողմերուն մէջ՝ մանաւանդ Մուսուլին ու Պաղտատին մէջ արագ է, բայց Պաղտատէն վար այնչափ արագ չէ : Մուսուլէն մէկ ու կես օր վար Տէվ — Աղուս — +էջէլուի ըսուած մեծ կամուր-

ջին աւերակը՝ կայ գետին մէջ։ Տիարպէքիրէն մինչև
Պաղտաստ + Ելիուն նաւարկութիւն կըլլայ, և Պաղտատէն
մինչև Պասրա փոքրիկ նաւեր (թէքնէ) և շոգենաւ
կը բանին։

Պարսկային ծոցին մակընթացութիւնը մինչև Քուր-
նա և մինչև Եղրասայ գերեզմանը կը համար։

Շագի ջուրը յստակ է, մանաւանդ վերի կողմերուն
մէջ։

Գետեզերքներուն վրայ շատ տեղ սպիտակ կեռ
(albastrum) կը գտնուի, և տեղ տեղ ալ աղ ու բորակ։
Մուսուլի առջև և անկէ վար գետեզրին վրայ նաւթի
ակեր կը գտնուին։ Նաւթը ջուրին երեսը կը մնայ, զոր
բնակիչները կը ժողովնեն ու կը վառեն։ Գետին մէջ
կը գտնուին տեսակ տեսակ ձուկեր։

Կարծիք մը կայ՝ թէ Տիգրիս Եփրատի հետ խառ-
նուած չէր՝ ի հնումն, և յատուկ բերանով մը ծովը կը
թափէր։

ՎԵՐՋ

ԽԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Հեղինակը՝ գրքիս 173 երեսը խոստացած է + Ելիու, հիւան-
գութեան նկարագրութիւնն ընել, հանդերձ ախտաբանու-
թեամբն ու բուժաբանութեամբը։ Սակայն, գժբաղդաբար,
ձեռագիրը ձեռքերնիս հասած չըլլալով՝ չը հրատարակեցինք։